
Վ. ՊԱՐՏԻԶՈՒՆԻ

ԽԱՉՔԱՏՈՒՐ ՍԲՈՎՅԱՆ



891.99(08)[Արուխան] 2|715
Պ-36 Պապրիկյան Հ. Ա.
Խաչապուր Արուխան։
Տպ.654։

9/IV		166
IV	26/IV	197
	7/V	900
	2/V	314
		381



Ludwig Uhland

891.99.092[Ահովյան]
Ղ-36

ՄՇՈՒՓՎԱԾ Է 1961 Թ.

Ա 3152

Վ. ՊԱՐՏԻԶՈՒՆԻ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

(կյանքը եվ ստեղծագործությունը)

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ 1952 ԵՐԵՎԱՆ

В. ПАРТИЗУНИ

ХАЧАТУР АБОВЯН

(Жизнь и творчество)

(На армянском языке)

Айпетрат, Ереван, 1952

Ռուսաց քաջ հոգին էր, որ մեզ ազատեց

Խ. Աբովյան

Ծանր է եղել Աբովյանի ապրած ողբերգությունը։ Դա ժողովրդի շահերի անձնուրաց պաշտպանի, խավարի ու բռնության դեմ խիզախ մարտնչողի ողբերգությունն էր նիկոլաևյան դաժան ռեժիմի պայմաններում։ Դա պայքար էր տակավին նոր ձևավորվող հայ դեմոկրատական ինտելիգենցիայի առաջին մեծ ներկայացուցչի և շահագործողական դասակարգերի ու նրանց պաշտպան ցարական բյուրոկրատիայի միջև։ Աբովյանն ընկավ ժողովրդին դեպի լուսավորություն առաջնորդելու պայծառ ու դժվարին ճանապարհին։

Մեծ է ողբերգական մահվամբ ընկած Աբովյանի գործը։ Նա տվեց խորը գաղափարականությամբ ու բարձր արվեստով գրված երկեր, որոնց մեջ արծարծեց իր ժամանակաշրջանի քաղաքական, հասարակական ու կուլտուրական կյանքի ամենանշանակալից ու հրատապ հարցերը, արտահայտեց ժողովրդի ամենանվիրական

երազանքներն ու ձգտումները։ Գրականությունը պետք է ծառայի ժողովրդին, նրան դաստիարակի հումանիզմի, ազատասիրության, հայրենասիրության ոգով, ամբողջ աշխարհի բոլոր ժողովուրդների նկատմամբ։ Գրականությունը պետք է դրված լինի ժողովրդին հասկանալի լեզվով, պատկերի նրա կյանքը, խանդավառի, ոգևորի, կռվի կոչի ամեն կարգի բռնության ու անարդարության դեմ՝ սկսած աշխարհիկ ու հոգևոր տեղերից մինչև պարսկական ու թուրքական վայրագ բռնակալություններ, մինչև եվրոպական ավազակ դաղութարարները՝ «ապիտակ տեսլեամբ Քշնամին դաժան»։ Այսպես էր հասկանում Աբովյանը գրականության դերը, այդ սկզբունքները մարմնացրեց նա իր ստեղծագործությունների մեջ և դարձավ հայ նոր գրականության մեծ հիմնադիրը։

Աննախընթաց կերպով մեծ եղավ Աբովյանի ստեղծագործության ազդեցությունը իր ժամանակակից և հետագա սերունդների վրա։ Այդ ստեղծագործությամբ հանդավառվել ու այն բարձր են գնահատել 19-րդ դարի դրեթե բոլոր հայ առաջավոր գրողներն ու գործիչները, սկսած ռևոլուցիոներ-դեմոկրատ՝ Չերնիշևսկու և Գերցենի գինակից Մ. Նալբանդյանից մինչև հայ ազգային մեծ բանաստեղծ Հ. Թումանյանը։ Բնորոշ է, որ Աբովյանի ստեղծագործությունը բարձր է գնահատել նաև Ս. Շահումյանը. «Բայց ինչո՞ւ այսքան երկար կանդ առա այս գրքի («Վերք Հայաստանի» վեպի— Վ. Պ.) վրա...— գրում է նա,— երևի որովհետև այս վերջին օրերս շատ եմ ներշնչված նրանով։ Որքան հրաշալի բան է... որքան սրբազան ոգևորությամբ է լցվում կարդացողի սիրտը. ահա ձեզ մի գրվածք, որ ամբողջովին «հեղինակի արյունով է» շաղախված, ամ-

ժողովին բանաստեղծություն և անկեղծ ոգևորության արտադրություն է»[1]:

Լենինիզմը սովորեցնում է բարձր գնահատել և քննադատորեն յուրացնել անցյալի կուլտուրայի անմեռ արժեքները. «Յուրաքանչյուր ազգային կուլտուրայում կան, թեկուզ չզարգացած, դեմոկրատական և սոցիալիստական կուլտուրայի տարրեր,— գրում է Լենինը,— որովհետև յուրաքանչյուր ազգի մեջ կա աշխատավոր և շահագործվող մասսա, որի կյանքի պայմաններն անխուսափելիորեն ծնունդ են տալիս դեմոկրատական և սոցիալիստական իդեոլոգիայի: Բայց յուրաքանչյուր ազգի մեջ կա նաև բուրժուական (իսկ մեծ մասամբ նաև ֆեոդալական ու կղերական) կուլտուրա — և այն էլ ոչ թե «տարրերի» միայն, այլ տիրապետող կուլտուրայի ձևով»[2]:

Արովյանի ստեղծագործությունը հայ կուլտուրայի դեմոկրատական հոսանքի փայլուն արտահայտություններից է, այդ պատճառով էլ բուրժուական դրականագիտությունը ջանք չի խնայել աղավաղելու համար մեծ գրողի ստեղծագործական դիմանկարը: Արովյանի դրական հարուստ ժառանգության, նրա դրական-մանկավարժական գործունեության ճիշտ գնահատությունը հնարավոր է միայն Մարքս-Լենինյան դրականագիտության դիրքերից:

Հայ նոր դրականության մեծ հիմնադրի ստեղծագործության գիտական ուսումնասիրության ու արժևորման գործը եղել է ու մնում է սովետական

---

1 Ստ. Շահումյան, *Գրականության մասին, 1948, էջ 190:*

2 Լենին. *Երկեր, հատ. 20, էջ 9—10: Ընդգծումները մերն են:*

գրականագիտության պատվավոր ու անհետաձգելի խնդիրներից։

Մեծ լուսավորիչ դեմոկրատի արծարծած շատ հարցեր այսօր էլ պահում են իրենց այժմեականությունն ու նշանակությունը. այդպես են անցյալի կուլտուրայի նշանավոր ներկայացուցիչները։ Նրանք պատկանում են բոլոր ժամանակների աշխատավոր մարդկությանը։ Անցյալի այդպիսի գրողներից է նաև հայ լուսավորիչ դեմոկրատ Խ. Աբովյանը, որի հարուստ ու մեծարժեք ստեղծագործությունը դարձել է սովետական ժողովրդի անկապտելի սեփականությունը։

Գլուխ I

ԱԲՈՎՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ–ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Աբովյանը ծնվել է 1805 թվին Երևանից յոթը կիլոմետր հեռու գտնվող Քանաքեռում, գյուղացու ընտանիքում։ Մանկությունն անց է կացրել հայրենի գյուղում։ Տասնամյա երեխային, կրթության տալու նպատակով, հայրը տարել է Էջմիածին, ուր մինչ այդ ազատ և անհոգ մեծացող երեխան դարձել է վանքի «խցի փոքրավոր աշակերտ»։

Վանական խավար և դաժան պայմաններում Աբովյանը միայն ծեծ ու պատիժ է ճաշակել։ Փախուստի փորձերն ավելի են ծանրացրել նրա վիճակը։ Ժամանակակիցներից մեկի վկայությամբ Էջմիածնի վանքում Աբովյանը «մեծացավ լացի, աղոթքի և պահքի մեջ, մի վայրենի, ամեն աղնիվ բանի համար բթացած, անբնական հեշտությանց մեջ ապականված մի շրջապատում, ավելի օգուտ չստանալով, քան այն, որ նա մի փոքր գրաբար սովորեց այնտեղ»[1]։ Էջմիածնում հինգ

1 «Լումա», 1902, № 4։

տարի անցկացնելուց հետո՝ 1821 թվին Աբովյանը դնացել է Թիֆլիս, ուր մինչև 1822—23 թվականները սովորել է այդ ժամանակ իբրև ուսուցիչ հռչակված Պողոս վարդապետի մոտ. վերջինս, ինչպես գրել է նրա աշակերտ Ստ. Նազարյանցը, «ավելի ծեծ, քան ուսում է տվել իր աշակերտներին»։ Ժամանակակիցների վկայությամբ Աբովյանը այդ դպրոցում աչքի է ընկել իր արտակարգ ընդունակություններով։ 1823 թվին Աբովյանը գնում է Սանահին (ուր գտնվում էր նրա խնամակալ Անտոն եպիսկոպոսը) և մի քանի ամիս ուսուցչություն է անում։

1824 թվին Թիֆլիսում բացվեց հայկական դպրոց (որը հետո կոչվեց Ներսիսյան) և Աբովյանը նորից գնում է Թիֆլիս ու ընդունվում այնտեղ։ Այդ դպրոցում իբրև տեսուչ հրավիրված էր Մոսկվայի Լազարյան ճեմարանի դասախոս, բանաստեղծ Հ. Ալամդարյանը, որը հայտնի էր իբրև առաջնակարգ մանկավարժ, ռուսական կուլտուրային լավատեղյակ անձնավորություն և ռուսական օրիենտացիայի ջերմ պաշտպան։ Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ռուսական հարձակվող զորքին օգնելու համար կազմակերպված «Հայոց կամավոր գնդի զինվորության երդվեցնելուց» և ռազմաճակատ ուղարկելու օրը նա հանդես է եկել ռուսասիրական և հայրենասիրական ջերմ ճառով։

Վերջերս հայտնաբերված մի քանի փաստաթղթեր ցույց են տալիս, որ Հ. Ալամդարյանը ծանոթ ու մոտ է եղել Անդրկովկասում գտնվող մի քանի ռուս գործիչների ու նշանավոր մարդկանց, այդ թվում նաև Ա. Ս. Գրիբոեդովին։ Վերջինս, որ մեծ դեր է խաղացել Կովկասի հայությանը պարսկական լծից ազատելու գործում, մի քանի անգամ այցելել է նորաբաց հայկական

դպրոցը, ուր սովորում էր նաև Աբովյանը։ Մի փաստաթղթից պարզվում է նաև, որ Ալամդարյանը ճանաչել է Սիբիր աքսորված, ապա ռուս-պարսկական պատերազմի մասնակից դեկաբրիստ Միխայիլ Իվանովիչ Պուշչինին։ Ալամդարյանը դիմել և միջնորդել է, որ այդ «հանճարեղ երիտասարդին» դրամական օգնություն տրվի։

Մի այդպիսի մարդու տեսչության հանձնված դպրոցում սովորելը քիչ բան չէր նշանակում, մանավանդ, երբ նկատի ունենանք, որ Աբովյանը ջերմորեն սիրել է Ալամդարյանին և կապվել նրա հետ։ Այդ կապը շարունակվեց և հետագայում վերածվեց սրտառուչ բարեկամության։

Աբովյանն Ալամդարյանի միջոցով ավելի մոտիկից ծանոթացավ ռուս գրականությանն ու կուլտուրային, դպրոցում ավանդվող բազմաթիվ առարկաների հետ միասին ամենի հիմնավորապես սովորեց ռուսաց լեզուն, խորացավ հայերենագիտության մեջ, ինչպես և ծանոթացավ պարսկերեն ու ֆրանսերեն լեզուներին։

Թիֆլիսում եղած տարիներին Աբովյանը դրսևորեց նաև իր գրամատաղծական հակումները։ Ալամդարյանը ամենայն հավանականությամբ դեկավարել է իր բանաստեղծ աշակերտի առաջին փորձերը։ Այդ շրջանում գրած մի քանի բանաստեղծություններին մեջ Աբովյանը երգում է հայրենիքի անցյալ փառքն ու ժամանակակից ծշվառ վիճակը՝ ջերմ ցանկություն հայտնելով հայրենիքը նորից տեսնել օտար բռնակալության լծից։ Այդ ժամանակ է նաև, որ Աբովյանը ռուս գրականությունից թարգմանություններ անելու փորձեր է կատարում։

1826 թվին ավարտելով դպրոցի երրորդ դասարա-

նը և չցանկանալով սովորել աստիճանաբար բացվող չորրորդ և հինգերորդ դասարաններում, Աբովյանը ուզում է կրթությունը շարունակելու համար գնալ Վենետիկ։ «Էս ժամանակին,— գրում է Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպում,— վարժատանիցը դուս էկա ու Թիֆլիզուցը գնացի Հախպատ Սիրեմ կաթողիկոսի մոտ, որ թուղթ առնիմ, գնամ, իմ ծնողացը հասնիմ, նրանց հետ քոչիմ ու գնամ Վենետիկ։ Ամեն բանս հաղիր էր. Օսմանլվիցն էլ մեկ տերտեր էր նկել իր որդուվը, ուզում էր եդ դառնար։ Սրանց հետ էի ուզում համփու ընկնիմ, բայց գերձիկը դեռ շորս չէ՛ր հասցրել։ Որքան նեղացա՝ որ նրանք գնացին, ես մնացի։ Երկու օրից հետո հենց մտա Ղարաքիլիսան, Խղարաքիլիսու եարներն էկան։ Ողորմելի տերտերն իր որդովն էնտեղ էր ապանվել»[1]։

Սկսվել էր ռուս-պարսկական պատերազմը։ Իրականանում էր Աբովյանի և ողջ ժողովրդի երազանքը՝ ազատություն պարսկական բռնակալության լծից։ Աբովյանը, որ մանկությունը և պատանեկությունը անց էր կացրել պարսկական բռնակալության անասելի ծանր լծի տակ գտնվող Հայաստանում, տեսել պարսկական բռնակալության վայրագությունները, ցնծությամբ է ողջունել Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելը։

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, 1948, էջ 111։ Աբովյանի գրվածքներից բոլոր մեջբերումները անում ենք անփոփոխ պահելով նրա ուղղագրությունը (նույնիսկ միևնույն բառի տարբեր ուղղագրությունները)։ Հեղինակի ռուսերեն և գերմաներեն գրվածքների թարգմանությունից մեջբերումները կատարում ենք նոր ուղղագրությամբ։

Հայրենիք վերադառնալով, Աբովյանը գնացել է Էջմիածին, ուր մնացել է երեք տարի՝ մինչև 1829 թվի վերջերը։

Թիֆլիսից վերադարձած Աբովյանն արդեն շատ բանով նման չէր Էջմիածնի վանքի իր նախկին փոքրավոր աշակերտին։ Հինգ տարի Թիֆլիսում, Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող և համեմատաբար ավելի ազատ ու լուսավոր միջավայրում կրթված Աբովյանն ինչ խոսք, որ անհամեմատ բարձր էր կանգնած Էջմիածնի վանքի հոգևոր պետերից։ Վանական անհրապույր միջավայրը և վանականների դավերն ու որոգայթները վաղուց էին զզվեցրել նրան։ Աբովյանի ուսումնատենչ հոգին անունդ չստանալով, սպառնում էր «շիջանել» Էջմիածնի «խեղդանյութեա ատմոսֆերայի» մեջ։ Աբովյանը ցանկանում էր շարունակել կրթությունը ռուսական կամ եվրոպական որևէ համալսարանում։ 1829 թվի դեկտեմբերի 4-ին Աբովյանին տրված Սիրեմ կաթողիկոսի կոդակ-վկայականի մեջ ասված է, որ վաղուց է ինչ Աբովյանը մեծ ձգտում և բուռն ցանկություն ունի կատարելագործվել ռուսերեն լեզվի իմացության մեջ։

Տակավին մինչև Ֆրիդրիխ Պարրոտի Հայաստան գալը Աբովյանը դիմել է Էջմիածնի հոգևոր պետերին, ինչպես և կաթողիկոսին, խնդրելով իրեն ուղարկել Ռուսաստան սովորելու։ Նրա դիմումները, սակայն, ուշադրության չեն առնվել։ Տարիներ անց՝ 1834 թվին, Դորպատյան օրագրերում Աբովյանն այդ մասին գրել է. «Ասելիք հոգևորականաց մերոց ծանրացեալ էին ի խընդրատուութեանց իմոց առաքել զիս անդ (Ռուսաստան — վ. Պ.), ուր և յուսայի գտանել սակաւ ինչ օգնութիւն առ ո՛ևիցէ, առ Հայս և առ Ռուս և յայլ ազգս, դիմէի

ան անահ, աներկիւղ, խնդրելով զմիջոց միմիայն գնալոյ ի Ռուսաստան»[1]։

Պահպանված մի քանի փաստաթղթեր ցույց են տալիս, որ Աբովյանը 1828—1829 թ. թ. դիմել է նաև ծանոթների և ընկերների՝ խնդրելով օգնել իրեն Մոսկվայում ապրելու։ Աբովյանի այդ դիմումները նա մնացել են անհետևանք։

1829 թ. սեպտեմբերի 7-ին Արարատ լեռն ուսումնասիրելու նպատակով էջմիածին եկավ Դորպատի (այժմ Տարտու, Էստոնական ՍՍՌ) համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը։ Նա պետք է բարձրանար Արարատի գագաթը։ Աբովյանը, որ մինչ ռուսաստան էր վանքում, իրրև թարգմանիչ և «ձեռնտու գործունէութեանց իւրեանց» մասնակցում է Պարրոտի էքսպեդիցիային։ Շատ մեծ դժվարություններ հաղթահարելուց հետո, սեպտեմբերի 27-ին, էքսպեդիցիայի մասնակիցներից վեց հոգու, այդ թվում և Աբովյանին, հաջողվում է բարձրանալ Արարատի գագաթը։ Էքսպեդիցիայի աշխատանքների ժամանակ Պարրոտը, տեսնելով երիտասարդ Աբովյանի տոկունությունն ու խիզախությունը և միաժամանակ իմանալով սովորելու նրա բուռն ցանկության մասին, խոստանում է օգնել. «Պարրոտը գընաց,—գրում է Աբովյանը,—դեմքի տոկ սառը արտահայտութեամբ ու սառը տոնով միայն ասելով, «կաշ-

---

[1] Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 16 ա։ Հետագայում՝ ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ։

խատեմ, բայց որևէ հաստատ բան ձեզ խոստանալ չեմ կարող»»[1]։

Անցնում են ամիսներ, Աբովյանը, որի Արարատ բարձրանալը (Արարատը համարվում էր սուրբ լեռ և մահկանացուների համար անմատչելի) հոգևորականների կողմից դիտվում էր իբրև սրբապղծություն և հերետիկոսություն, կրելով խավարամոլ վանականների հարվածները, սպասում էր Պարրոտի նամակին, որը սակայն ուշանում էր և բամբասանքների ու չարախոսությունների տեղիք տալիս։ «Ուր որ միայն գնում եմ, վիշտը և խռովությունն սովերի նման գալիս են իմ հետևից»[2], գրում է նա մի նամակում։ Աբովյանի այդ ժամանակվա հոգեկան ծանր ապրումների ու տրամադրությունների մասին կարելի է իմանալ նաև Թագավորին գրած նրա խնդրագրի պահված սևագրությունից։ Հայտնելով, որ ինքը «վառեալ ի սէր հայրենեաց» վաղուց է, ինչ տոչորվում է հայրենիքին ծառայելու, հայրենակիցների կրթության ու լուսավորության գործին օգնելու ցանկությամբ, Աբովյանը բողոքում է, որ էջմիածնի Սինոդը հրաժարվում է նրան Պետերբուրգ սովորելու ուղարկել։ Այդ խնդրագիրը (հայտնի չէ այն ուղարկված է Թագավորին, թե ոչ) նույնպես հաստատում է, որ Աբովյանը դեռ մինչև Պարրոտին ծանոթանալը ցանկացել է սովորել Ռուսաստանի նշանավոր քաղաքների համալսարաններից որևէ մեկում, սակայն էջմիածնի հոգևոր պետերը լույսի ու գիտության թշնամի լինելով և հանձին Աբովյանի տեսնելով ապագա

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 23։

2 «Դիվաե Խ. Աբովյանի», հատ. 1, 1940, էջ 72։

վտանգավոր թշնամու, միշտ փակել են նրա ճանապարհը։

«Ջօրս զամենայն հառաչանօք անցուցանեմ,— գրում է Աբովյանը — առ որ եղի ի մահ այժմ կամ հասանել բաղձանաց իմոց, կամ տալ զանձն իմ ի վտանգ կորստեան»[1]։


Աբովյանի կյանքի այդ շրջանի մասին հետաքրքրական տեղեկություններ կան վերջին տարիներս հայտնաբերված «Поездка к развалинам Ани» ուղեգրական ակնարկում։ Այդտեղ Աբովյանն ասում է, որ բաժանվելով Պարրոտից նա դժկամությամբ է վերադարձել վանք, ծանր ապրումներ ու մտատանջություններ է ունեցել. «Արյունալվիկ սրտով նորից հանդիպեցի էջմիածնի սև պատերին, որոնք երբեք ինձ այնքան սարսափելի տեսքով չէին երևացել, ինչպես այժմ,— գրում է Աբովյանը,— մի ամբողջ շաբաթ ինձ համար անցավ անասելի տանջանքներով։ Գրեթե ամեն օր ես կանչվում էի այն ժամանակ տակավին հզոր Սինոդի սոսկալի դատաստանը, Սինոդ, որ ուներ անսահմանափակ իշխանություն ամբողջ եկեղեցու և անգամ ազգի վրա։ Հանդիմանություններ, սպառնալիքներ, խրատներ մեկի կողմից, այդ օրվանից հինգ տարի հետո եպիսկոպոսական աստիճան ու պաշտոն տալու խոստում մյուսի կողմից — ոչինչ չսարսափեցրեց, չհրապուրեց ինձ»[2]։

Սինոդի ազդեցիկ անդամները երկար ժամանակ աշխատում են հրապուրել Աբովյանին ապագա կարիերայի հեռանկարով— թե Աբովյանը իրեև ռուսերեն և

---

1 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 200։

2 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 23։



Ե. Աբովյանի տունը Քանաքեռում։

Դրծ՝ Դ. Բաշինջաղյանի

A II 3152

դրաբար լավ իմացող (մի բան, որ հաղվագյուտ էր վանքում) կարող է շատ առաջ գնալ և դառնալ Վրաստանի կամ Ռուսաստանի թեմակալ արքեպիսկոպոս։ Հոգևորական տերերի խոստումները չեն հրապուրում Աբովյանին։ Վերջապես նրանք խոստանում են Աբովյանին ուղարկել Մոսկվա Լազարյան ճեմարանում սովորելու, միայն թե նա ետ կանգնի Պարրոտին հետևելուց։ Աբովյանը հանգստանում է, համաձայնվում։ Շուտով, սակայն, պարզվում է, որ այդ միայն դատարկ խոստում է և պետք չէ հույսեր կապել դրա հետ. «Հուսահատության սարսափը պատեց ինձ ժոխային ուժով,— գրում է Աբովյանը,— ես ներկայացա արդեն հաստատ վճռականությամբ՝ թողնել իմ հոգևոր կոչումը հենց որ նրանք բաց չթողնեն ինձ»[1]։

Աբովյանի այս անօրինակ հանդուգն հայտարարությունը խիստ զայրացնում է հոգևոր հայրերին և նրանք նզովում ու հեռացնում են նրան վանքից։ Չբավականանալով դրանով, նրանք հարձակվում են Աբովյանի վրա, խլում նրա բոլոր ունեցվածքը (Աբովյանն ասում է՝ մինչև վերջին թևը), «Վայ նրան,— գրում է Աբովյանը,— ով այդ րոպեից սկսած կհամարձակվեր ինձ նույնիսկ բարևել»[2]։

Այդ օրը դիշերելով վաղարշապատում՝ իր մի բարեկամի տանը, Աբովյանը, ինչպես ինքն է գրում, «1829 թ. դեկտեմբերի 5-ին, դաժան ձմռանը (մառախլապատ ու ձնառատ) բղկտված հոդով», թողնում է և՛ հայրենիք, և՛ էջմիածնից յոթ կիլոմետր հեռու բնակվող

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 23։

2 Նույն տեղում։

ծնողներին ու հեռանում վանքից։ Մնողներին նա տեսության չի գնում, որպեսզի ականատես չլինի նրանց տանջանքներին ու արցունքներին։ Վախենում էի,—գրում է Աբովյանը,—որ ծնողներիս նկատմամբ ունեցած որդիական ջերմ սերը, «որ այժմ էլ այնպես ուժով եռում է իմ մեջ, ետ պահի մի անգամ արդեն ընտրածս ճանապարհից, Արարատը և Ալագյոզը, մեր նախահայրերի սրբությունները, վկա են իմ այն ժամանակվա արցունքներին ու հառաչանքներին»[1]։

Հաղթահարելով մի շարք դժվարություններ, Աբովյանը հասնում է Թիֆլիս։ Նա փախչում էր վանականների սպառնալիքներից, այն ամենից, ինչ կարող էր նրան ետ պահել սովորելու գնալուց։ Աբովյանը շտապում էր հասնել Թիֆլիս, որպեսզի հնարավորություն ունենար իր դիմումներով արագացնել սովորելու գնալու հետ կապված հարցերի լուծումը, ինչպես և օր առաջ ստանալ Պարրոտից սպասվող պատասխանը։

Թիֆլիսում Աբովյանը ստիպված է լինում մի քանի անհույս ամիսներ անցկացնել նյութական ամենածանր պայմաններում, կարոտ օրական հացի։

Տեսնելով որ ուշանում են իր խնդիրների պատասխանները, 1830 թվի մարտի 31-ին նա դիմում է վրաստանի կառավարչապետ գեն. Պասկևիչին։ «Խնդրի» մեջ Աբովյանը հայտնում է, որ ինքը ցանկություն է հայտնել Պարրոտի և նրա ընկերների հետ գնալ սովորելու Մոսկվայի կամ Պետերբուրգի համալսարանում. Պարրոտը խոստացել է բարեխոսել, սակայն, տակավին «ես չեմ արժանացել այն բախտին, որ ես ակնկալում էի,—գրում է Աբովյանը։—Այս պատճառով վստահանում եմ...

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 23։

խոնարհաբար աղերսել, որ ես ուղարկվեմ Մոսկվայի կամ Ս. Պետերբուրգի համալսարանը ուսանելու ռուս լեզուն և այլ գիտություններ»[1]։

Վերջապես 1830 թվի ապրիլին ստացվեց Պարրոտի նամակը. «Որոշված է Ձեր վիճակը,— գրում էր նա,— կատարվել է, ինչ ցանկանում էիք»[2]։

Որոշված էր պետական թոշակով Աբովյանին ուղարկել Դորպատ սովորելու։

Աբովյանին մեծ դժվարությամբ է հաջողվում կոտրել որդեսեր ծնողների համառությունը։ Վերջիններս չէին ուզում, որ իրենց որդին հեռանար տնից։ «Անհնարին է ինձ նկարագրել զեսարանն, ուր նպելի ծնօղք փարեալ ոլս ասելի ես մահ իւրեանց ցանկային, քան զհեռանալն իմ նոցանէ»,— գրել է Աբովյանը[3]։ Մեծ դժվարությամբ ստացվում է նաև կաթողիկոսի թույլտվությունը։

---

1 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 2, 1948, էջ 211։

2 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 263։

3 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 16։ Սովորելու մեկնելուց առաջմեկ տարի անց՝ 1841 թվին Անդրկովկասի գլխավոր վերատեսչի պաշտոնակատար Ի. Վ. Ռոսկովշենկոյին գրած թղթում, վերհիշելով սովորելու մեկնելու հետ կապված հանգամանքները, Աբովյանը գրել է. «Իմ համառության դեմ ջարդուփշուր եղան այն բոլոր միջոցները, որ գործադրում էին էջմիածնի Սյունհոդոսը և պատրիարքը, որոնք այն ժամանակ իմ իշխանավորներն էին և ցանկանում էին հետ պահել ինձ այդ քայլն անելուց։ Ո՛չ սպառնալիքը, ո՛չ ամենագրավիչ խոստումները, ո՛չ ծնողներիս արտասուքը, որոնք ընտել չէին այդպիսի հեռավոր և երկարամյա անջատման իրենց զավակներից, հետագայում գուցե միշտահար իմ հեռանալու պատճառով, գերեզման մտած, չկարողացան կասեցնել ինձ» («Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 214—215)։

* * *

1830 թվի հուլիսի 11-ին Աբովյանը ճանապարհ է ընկնում դեպի Դորպատ քաղաքը, ուր և հասնում է նույն թվականի սեպտեմբերի 3-ին։

Աբովյանի համար նախատեսված չէր բարձրագույն մասնագիտական կրթություն. առանձին, հատկապես նրա համար կազմված ծրագրով նա պատրաստվում էր ուսուցչական կոչման։ Այդ նպատակով նա լսում էր համալսարանի մի քանի առարկաների դասախոսություններ, իսկ տանը նրա հետ առանձին պարապում էին Պարրոտը և մի քանի ուրիշ պրոֆեսորներ։ Սկսած 1831 թվականից Աբովյանը դիտելիքների պակասը լրացնելու համար հաճախում է տեղի ուսուցչական սեմինարիան։ 1832 թվի սկզբից Աբովյանը դժգոհել է, որ ուսուցիչները իրեն բարձրագույն դիտելիքներ չեն հաղորդում, նա այդ մասին բացատրվում է Պարրոտի հետ, վերջինս, սակայն, նրան խորհուրդ չի տալիս «զմեծամեծ դիտութիւնս» անցնել։ Համակերպվելով, սակայն չհամոզվելով, Աբովյանը սկսում է համառ կերպով զբաղվել ինքնակրթությամբ, նրան աստիճանաբար մաուշելի են դառնում բարձրագույն դիտությունները։ 1834 թվին Ներսես Աշտարակեցուն գրած նամակում Աբովյանը ասում է. «Այժմ են բացվում իմ աչքերը հրճվանքով ուսանելու դիտութիւններն ու մակացութիւնները»[1]։ Այդ ժամանակ նա նորից դիմում է Պարրոտին, սակայն վերջինս կրկին արգելք է հանդիսանում Աբովյանի ցանկությանը, նրա համար բավարար համարելով տարրական դիտելիքները։

1834 թվին լրանում է Աբովյանի ուման համար

[1] «Թիվան Խ. Աբովյանի», հատ. 2, էջ 21։

սահմանված չորս տարին. իր խնայած դամարներով նա Դորպատում մնում է նաև հինգերորդ տարին՝ ուսումնասիրելով իր ցանկացած գիտությունները և մանավանդ ռուսաց լեզուն:

Աբովյանը Դորպատում սովորել է պատմություն, բնագիտություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, երգ-երաժշտություն, երկրագործություն, սրամտաբանություն, հոդեբանություն և մի քանի այլ առարկաներ: Նա մասնավորապես արտակարգ ընդունակություն է ցուցաբերել լեզուներ սովորելու առաջարելում: Նրան ճանաչող ժամանակակիցները զարմանքով վկայում են, որ Աբովյանը կարճ ժամանակամիջոցում գերմաներեն լեզվին տիրապետել է գերմանացու պես: Դորպատում Աբովյանն ավելի է խորացնում իր ուսանքն լեզվի գիտությունը, շարունակում է ուսումնասիրել ֆրանսերեն և լատիներեն լեզուները, անտիկ և եվրոպական գրականությունը: Այսանդ նա մոտիկից շփվում է ռուս գրականության ու կուլտուրային: Դորպատում սովորելու ժամանակ Աբովյանը հետաքրքրվել է Մերձբալթյան երկրների, մասնավորապես Էստոնիայի, ժողովուրդների կյանքով ու կենցաղով: Նա ճանապարհորդել է Էստոնիայի և Լատվիայի քաղաքներն ու գյուղերը, ուսումնասիրել և այդ բոլորը գրի առել իր օրագրերում:

Դորպատյան տարիներին Աբովյանը մեծ ուշադրությամբ հետևել է Անդրկովկասում և Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Ընկերներին, ծանոթներին և ժամանակի բարձրաստիճան հոգևորականներից մի քանիսին գրած նամակներով Աբովյանը մշտական կապ էր պահպանում հայրենիքի հետ, միջամըտում, յուրովի արձագանքում այս կամ այն դեպքին ու իրադարձությանը: Այդ, ինչպես և Աբովյանին

իրև բաղաքացու բնութագրելու տեսակետից հետաքրքրական փաստ է նրա ընդհարումը Գորպատում ռուսերեն լեզվով հրատարակվող «Северная пчела» թերթի խմբագիր, իրև լրտես ախտուր հռչակ հանած Ֆադեյ Բուլգարինի հետ։ Այդ ընդհարման առիթը եղել է հետևյալը.

1834 թ. նոյեմբերին Աբովյանն իր բազմերախտ ուսուցիչ և բանաստեղծ Հարություն Ալամդարյանի «հանկարծահաս մահվան դառն խարարն» է ստանում։ Այդ բոթն «այնպես տրամեցույց, շփոթյաց իմ սիրտ,— գրում է Աբովյանը,— որ ես անհանդիստ դոլով մէկ բանի էլա չէի կարողանում ձեռք տալ։ Ա՜խ, նրանով մեր աղգի շատ երիտասարդք կորցրին իրանց բախտը։ Նա շատին կարեր լուսավորիչ լիներ»[1]։

Ալամդարյանի մասին գերմաներեն լեզվով Մ. Մաերյանի հոդվածի տպագրությունը հաջողեցնելուց բացի, ցանկանալով ռուս հասարակությանը ևս Ալամդարյանի կյանքի ու գործունեության հետ ծանոթացնել, Աբովյանը գրում է մի հոդված «Северная пчела» թերթում տպագրելու համար։

«Աղգին հասած անբախտությունը», սիրելի ուսուցչի մահը հպարտ ու ինքնասեր Աբովյանին Բուլգարինի մոտ են տանում, թեև նա մինչև այդ էլ գիտեր, որ Բուլգարինին «տեսած ու ճանաչածին պես, ամեն մարդի դահլեն գնում ա։ Քաղաքում կամ փողոցում նրան տեսնելիս, ո՛չ որ չի կարծիլ, թե նա գիտնական ումն է, այլ շինական և արբեցող։ Նրա երեսի դրությունը և փորի հաստությունը այնքան այլանդակ է, որ գրեթե կոպտությունը և դինովությունը նրա աչքերից թափում ա»։

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 16ա։

Աբովյանն առաջին անգամ Բուլգարինի տանը մեկ ժամ ներքևում սպասելով, ականատես է լինում այդտեղ կատարվող որոշ դեպքերի, որից հետո այդ տունը նրա վրա անառականոցի տպավորություն է թողնում։ Այդ օրը Աբովյանը տեսնում է Բուլգարինին, վերջինս, սակայն, ասում է, որ հյուրեր ունի և չի կարող նրան ընդունել։ Հաջորդ օրը նա նորից ստիպված է լինում տեսակցության համար Բուլգարինի տուն գնալ, ուր նրան կրկին երկար սպասեցնում են։ Վերջապես, Աբովյանը տեսակցություն է ունենում Բուլգարինի հետ, որը անմիջապես կռվի է փոխվում։ Այդ մասին Աբովյանը բավական մանրամասն կերպով տեղեկություններ է հաղորդում իր տակավին անտիպ օրագրերում. «12 սհաթին գնամ նրա մոտ,— գրում է Աբովյանը,— ծառայն ասիպէ ղիս երկար սպասել. երիցս առաքեմ ղնա ի ներքս և նա դայ և պատասխանէ «թէ Տէր իմ իսկոյն ելանէ»։ Վիրավորված Աբովյանը ծառային պատվիրում է հայտնել Բուլգարինին, որ եթե նա ժամանակ չունի ընդունելու, ինքը կվերադառնա տուն. «Չեմ ես ծառայ նորա, ղի անդ սպասեցից,— ասում է նա,— հազիւ մտեալ ծառային ի սենեակն, լսեմ զաղաղակ կանացի ձայնի, ետ որոյ ելանէ և պարոն Բուլգարին ի քնահանդերձս և ղիմէ առ իս ասպռ իմն ղիմօք։ Ես մեղադրեմ ղնա վասն այնպէս վարելոց նորա ընդ իս, առեալով վասն է՞ր նրա այնպէս երկար ետ սպասել. նա մեղադրէ զծառայ իւր, այլ ո՛չինչ ասէ նմա, առ այս արտնեղեալ, ասեմ. «ես յայն սակս միայն մնացի աստ ղի ասացից Ձեզ, թէ վարոմն ձեր էր ամբաղաքավարի յոյժ». և կամիմ ելանել. այլ նա դիմեալ առ իս, ո՛չ տա թոյլ. «ո՞ւր կամիք, ղի՞նչ պատահեցաւ Ձեզ»։ Ապա Բուլգարինը խոսքով վիրավորում է Աբովյանին և նա (Աբովյանը) զայրացած սպառնում

է վրեժխնդիր լինել իրեն հասցված վիրավորանքի համար. «Ես ամիացի եմ և թէ նա ոչ արձակէ զիս,— ասում է Աբովյանը,— ես ինքնին ցուցից նմա զամարդութիւն իւր»[1]: Աբովյանն այդ միջադեպի մասին պատմում է Պարրոտին և Բարտելսին, որոնք հորդորում են նրան հեռու մնալ Բուլգարինից, որովհետև նա ամարդի է և ինչ որ ինքն է արել՝ կուրանա:

Պուշկինի սպանիչ էպիգրամին արժանացած ցարական լրտեսը գրում է համալսարանի ռեկտորին, թե Աբովյանը սպառնացել է սպանել իրեն կամ իր կնոջը, կամ էլ իր տունը հրդեհել: Աբովյանը դժվարությամբ է կարողանում ազատվել այդ իր համար սպառնալի պատմությունից: Անհավանական չէ, սակայն, որ ցարական լրտեսի հետ տեղի ունեցած այդ ընդհարումը կարող էր Աբովյանի վրա հրավիրել երրորդ բաժանմունքի ուշադրությունը և կապ ունենալ ցարական չինովնիկների և Աբովյանի միջև հետագայում ստեղծված խիստ թշնամական հարաբերությունների հետ:

Բուլգարինների հետ մշտական կոնֆլիկտի մեջ գտնվող Աբովյանը, սակայն, սիրով և երախտագիտությամբ է խոսել ռուս կուլտուրայի և նրա ներկայացուցիչների մասին: Նույն Դորպատում 1833 թվին ծանոթանալով ռուս բանաստեղծ Ժուկովսկու հետ, Աբովյանը անջնջելի տպավորություն է ստացել այդ հանդիպումից և մանրամասն նկարագրել իր օրագրում: Հանդիպման նկարագրությունը ևս ցույց է տալիս, որ Աբովյանը Դորպատում հետաքրքրվել է ռուս գրականությամբ, զրույցներ ունեցել այդ գրականության մասին և ի դեմս

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական Թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 16ա:

Ժուկովսկու իր սերն ու հիացմունքն է արտահայտել ռուս մեծ ու հարուստ գրականության նկատմամբ։ Հանդիպումը բնորոշ է նաև մի այլ տեսակետից։ Արովյանին հիացմունք է պատճառել այն հանգամանքը, որ Ժուկովսկին գովելով հանդերձ Իտալիայի տեսարժան վայրերը (Ժուկովսկին վերադառնում էր Իտալիայից) բարձր է գնահատում իր հայրենիքի գեղեցկությունները. «Հոգի նորա բանաստեղծական և հայրենասիրությունն ո՛չ կամէին ստորացուցանել և զարտօնութիւն կողմանցն հիւսիսոյ, որում թէև բազում հակառակ էին պրոֆեսոր Բարտելս և կին իւր, այլ նա ամենայնի կամէր հաստատել թէ «խրճիթ մի բնակեալ ի մանկութենէ, քաղցր է ամէք, քան պհրաշալի կողմանս Իտալիոյ»[1]։ Արովյանին, որի մոտ շատ զարգացած էր ազգային արժանապատվության զգացումը, բնական է, որ պետք է հիացնեին Ժուկովսկու խոսքերը։

Մինչև 1836 թվականը մնալով Դորպատում, Արովյանը ձեռք բերեց բազմակողմանի դիտողություններ։ Նրա հայացքների մեջ փոփոխություններ տեղի էին ունեցել, ինչպես նշել ենք, տակավին Թիֆլիսում սովորելիս և այնուհետև էջմիածնում եղած տարիներին։ Դորպատում ուսումնասիրելով եվրոպական առաջավոր մտածողների գործերը և մանավանդ ծանոթանալով ռուս գրականության, ռուսական հասարակական-առաջավոր մտքի հետ, Արովյանի հայացքների մեջ տեղի է ունենում ավելի խորը բեկում, որը զարդանում է մանավանդ նրա՝ հայրենիք վերադառնալուց և Անդրկովկասի ու Հայաստանի իրականությունը ավելի մոտիկից ուսում-

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Արովյանի Ֆոնդ, գործ № 16ա։

նասիրելուց հետո։ Դրանք են այն ակունքները, որոնցից սնվելով Աբովյանը ձևավորվեց իբրև լուսավորիչ դեմոկրատ։ Անկասկած է, որ առանց ռուս կուլտուրայի, ռուսական առաջավոր մտքի բարերար ազդեցության չէին կարող ձևավորվել Աբովյանի լուսավորական դեմոկրատական հայացքները։

Ավարտելով կրթությունը և մերժելով տեղի համալսարանում արևելյան լեզուների դասախոսի պաշտոնն ստանձնելու առաջարկությունը, Աբովյանը, հայրենիքի նկատմամբ անսահման սերը սրտում, 1836 թվի հունվարին ճանապարհ ընկավ դեպի Հայաստան, ուր հասավ նույն թվի հունիսին։

* * *

Դեռ Հայաստան չհասած, Թիֆլիսում, Աբովյանը ներկայանում է գործով այդտեղ եկած Հովհաննես Կարբեցի կաթողիկոսին։ Աբովյանն իր հետ ուներ օտար դավանությունների հոգևոր գործերի նախարարի կաթողիկոսին գրած հանձնարարականը, որով նա խնդրում էր օգնել Աբովյանի մանկավարժական գործունեությանը։ Կարբեցին, որ Դորպատից իրեն գրած 1832 թվի նամակից մասամբ ծանոթ էր Աբովյանի հայացքներին և նրա մասին թշնամիների տարածած չարախոսություններին հիման վրա նրան համարում էր մի լութերական, դավանափոխ, գոռում է Աբովյանի վրա. «Հրամանա՛ գաս ի վերայ իմ, վտարանդեալդ հաւատոյ, դու չես խմորել կարես զմիտս անմեղաց, այլ կրթել զնոսա չէ քո գործ»։

Խիստ ծանր էր Աբովյանի հիասթափությունը. հայրենակիցներին օգնելու համար մանկավարժական առաջավոր սկզբունքներով ղեկավարվող դպրոց հիմնելու նրա

առաջին իսկ քայլը խոշընդոտի է հանդիպում, մերժվում է ռեակցիայի ներկայացուցչի կողմից։ Արովյանի վիճակն առավել ծանր էր մանավանդ այն պատճառով, որ նա պաշտոնապես տակավին հոգևորական էր (նա հեռացվել էր ոչ թե «եղբայրակիցների ցուցակից» այլ միայն «ծառայությունից») և անմիջականորեն ենթարկվում էր կաթողիկոսին։ Շուրջ ինն ամիս* Արովյանն անց է կացնում Թիֆլիսում, ամենածանր պայմաններում՝ «կարօտ եւ աւուրն պարէնի»։ Արովյանը Թիֆլիսում ծանր ապրումներ է ունեցել։ «Ճառ Թիֆլիսի ուսումնարանի մասին» դրծում նա ասում է, որ միայն ազգի նկատմամբ ունեցած ջերմ սերն է իրեն հայրենիք բերել։ Նշելով, որ ինքը Դորպատում, բարեկամներից և

---

* Արովյանագիտության մեջ տրադիցիոն կարգով հայտնվել է այն կարծիքը, թե Արովյանը Դորպատից վերադառնալուց տարի ու կես հետո է նշանակվել գավառական դպրոցի տեսուչ։ Նրած բազմաթիվ վավերագրերը, սակայն, հերքում են այդ տարօրինակորեն անհիմն կարծիքը։ 1836 թվի փետրվարի 7-ին Արովյանը Մոսկվայից Ֆրենին գրել է. «Շուտով մի ամիս կլինի, որ ես մեկնել եմ Դորպատից»։ Հաստատ է նաև, որ դրանից 47 օր հետո՝ մարտի 26-ին Արովյանը նույնպես եղել է Մոսկվայում (կա այդտեղից նրա գրած նամակը)։ Մայիսի կեսերին նա եղել է Նոր Նախիջևանում, այցելել է Ալամդարյանի գերեզմանին, այնուհետև ճանապարհին կանգ է առել Պյատիգորսկում։ Ուրեմն Արովյանը կարող էր Թիֆլիս հասած լինել մայիսի վերջերին կամ հունիսի առաջին կեսին։ Արդ, քանի որ հայտնի է Արովյանի՝ Թիֆլիսի գավառական դպրոցի հաստիքավոր տեսչի պաշտոնակատար նշանակվելու ժամանակը (1837 թվի փետրվարի 12), պարզ է դառնում, որ Արովյանը գալով Թիֆլիս 9 ամիս (1836 թվի մայիսից կամ հունիսից մինչև փետրվար) հետո է նշանակվել գավառական դպրոցի տեսուչ և ուսուցիչ։ Ըստ որում մի քանի փաստաթղթեր թույլ են տալիս պնդել, որ Արովյանը 1836—37 թվերի ընթացքում մի կարճ ժամանակով ուսուցիչ է եղել Ներսիսյան դպրոցում։

յուպայիններից հետու վիճակում, սովորել է միայն հայրենիքին պիտանի լինելու համար, Աբովյանն ավելացնում է, որ, ապրուստի ոչ մի աղբյուր չունենալով հանդերձ, մերժել է «արքունական» ծառայության մտնելու բոլոր առաջարկները, քանի որ իրեն առաջարկված պաշտոնները ստանալու համար ուրիշները հաղար ու մի միջոցի են դիմում։ Ցանկանում եմ այնպիսի պաշտոն,— ասում է Աբովյանը,— որ հնարավորություն ունենամ առավել օգտակար լինել հայրենակիցներիս։ Մի՞թե կարող եմ լռությամբ տանել այն վիճակը, որի մեջ գտնվում են իմ թաղգր հայրենիքի որդիները։

Եվ այդ բոլորի դիմաց ծանր ու արտամաղձ հիասթափություն. «Այժմ՝ ի սեննիկի իմում՝ ի մէջ աղջին և ո՛չ նախածանօթ ընկերք և բարեկամք իսկ ազգին համարին տեսանել դիս։ Եւ եթէ լռութեամբ ելից ասեի, ամենևին ո՛չ ոք իմանայ, եթէ սուտ ևս մեռայց, ամենևին ո՛չ ոք ցաւի»[1]։

1836 թվին ակադեմիկոս Խրիստիան Ֆրեհնին գրած նամակներից մեկում հայտնելով, որ իր հայրենիք վերադառնալը, հակառակ իր կամքի, ինչ-ինչ տհաճությունների պատճառ է դարձել, Աբովյանն ավելացնում է. «Այսպես է Ռուսաստանում, եթե մարդ աստիճան չունի և օժտված չէ մի առանձին պաշտպանությամբ»[2]... իսկ չին ունենալ, դառնալ չինովնիկ, Աբովյանը չի ուզել բնավ։

Գրպանով աղքատ, բայց հոգով հպարտ ու բարձ-

---

1 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 5, 1950, էջ 461։

2 «Թիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 108։

գոգնա Աբովյանն ի վերջո տեղի է տալիս և 1837 թվի փետրվարի 12-ին «ամուսնալ ի չքավորութենէ,— գրում է նա,— մտի ի պաշտօն արքունական, զոր ո՛չն երբէք կամէի»։ «Պետք է, որ ես ըստ այնմ պետական ծառայութեամբ իմ ապրուստս հոգամ — ո՞րպէսի ապագա ինձ համար»[1],— սրտի խորին ցավով գրել է Աբովյանը։

Աբովյանը պետական ծառայության է մտնում, երբ մյուս բոլոր ճանապարհները փակվում են նրա առաջ։ Նա նշանակվում է Թիֆլիսի գավառական դպրոցի հաստիքավոր տեսչի պաշտոնակատար։ Այդ աշխատանքը, սակայն, նրա համար ուներ նաև իր հրապուրիչ կողմը։ Իբրև հոդով, էությամբ մանկավարժ, Աբովյանը երջանիկ էր զգում իրեն, որ կարողանում էր, ճիշտ է, ոչ իր ուզած ձևով ու չափով, ծառայել ժողովրդի կրթության ու լուսավորության գործին. «Մանկական աշխարհը վազուց ի վեր բոլոր երկրային սրտահաճ բախտավորութիւններից ինձ համար ամենաբարձրն է եղել,— գրում է Աբովյանը։— Մանուկներին կրթելն աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար և դեռ ավելին, քանի որ սրանց մեծագույն մասն իմ աղգակիցներից են, իսկ մյուսները՝ վրացի ու թաթար իմ երկրացիները»[2]։

Թիֆլիսում, գավառական դպրոցում պաշտոնավարելուց դատ, Աբովյանը իր տանը կազմակերպել էր պանսիոն, ուր սովորում էին հայ, վրացի, ադրբեջանցի և այլ ազգի երեխաներ։ Պանսիոնում աղատ մնալով ցարական չինովնիկների միջամտություններից ու ամեն տեսակի հրահանգներից, ինչպես և նոր մանկավարժության հակառակորդ ուսուցիչների ինտրիգներից, Աբով-

---

1 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 109։

2 Նույն տեղում, էջ 111։

յանը ավելի հնարավորություն ուներ իր ցանկացած ձևով ու մեթոդներով դաստիարակել ու կրթել երեխաներին։ Անշուշտ պատահական չէ, որ Աբովյանի պանսիոնը պաշտոնապես միայն մի քանի ամիս է հանաչվել։ Բազմաթիվ փաստաթղթեր, սակայն, ցույց են տալիս, որ Աբովյանը ունեցել է պանսիոն ինչպես մինչև պաշտոնապես ճանաչվելը, այնպես էլ պաշտոնապես փակվելուց հետո։

Թիֆլիսում Աբովյանը պաշտոնավարեց մինչև 1843 թիվը։ Այդտեղ նա կապեր է հաստատել հարևան ժողովուրդների կուլտուրայի գործիչների հետ։ Հայտնի են նրա կապերը վրաց հասարակական և կուլտուրական գործիչ Զուբալաշվիլու հետ։ Գավառական դպրոցում նա բարեկամական հարաբերություններ հաստատեց դպրոցի դաստատուններ, ադրբեջանական դրականության խոշոր ներկայացուցիչներ Միրզա Ջաֆարի Ախունդովի և ապա վերջինիս փոխարինած Միրզա-Շաֆիի հետ։ Աբովյանին և մեր հարևան եղբայրական ժողովրդի կուլտուրայի այդ երկու խոշոր դեմքերին միացնողը նրանց հայացքների ու գործունեության նպատակների միջև եղած ընդհանրությունն էր։ Երևքն էլ նվիրված էին իրենց ժողովուրդների կրթության ու լուսավորության գործին։ Չհաշված Ախունդովին, Միրզա-Շաֆիին ու մի քանի ուրիշ առաջավոր ուսուցիչների և գործիչների, Աբովյանը գործ ուներ գերազանցապես տգետ, հետամնաց, իրենց հայացքներով պահպանողական ուսուցիչների և ցարական բանսարկու ու բյուրոկրատ չինովնիկների հետ, որոնք իրենց չարակամությամբ և դավերով խանգարում էին նրա մանկավարժական գործունեությանը։ Աբովյանին զղվեցրել էր այդ միջավայրը, նա մտածում է հեռանալ որևէ տեղ։ Կարճ ժամանակով նա

հույսեր է կապում Կազանի համալսարանի հետ, ուր բացվել էր հայոց լեզվի և գրականության պրոֆեսորի տեղ։ Արովյանի ծանոթ ակադեմիկոս Ֆրեհնն այդ պաշտոնի համար առաջադրել էր նրա թեկնածությունը։ Արովյանը խանդավառվում է, մտածում է Կազանի համալսարանի հայագիտական ամբիոնի միջոցով մանկավարժներ պատրաստել Հայաստանում գործելու համար։ Ամբիոնը գրավելու համար առաջարկված պայմանների մասին Արովյանը թյուրիմացության թե խարդավանքի պատճառով իմանում է երեք ամիս ուշացումով։ Խիստ ծանրաբեռնված լինելով դպրոցում ու պանսիոնում և կարճ ժամանակում նոր աշխատություն գրելու հնարավորություն չունենալով, նա 1839 թվին, իրրև դիսերտացիա, Կազան է ուղարկում իր արդեն պատրաստ «Տարերք արդի հայերէնի» («Նախաշավիղ կրթութեան ի պէտս նորավարժից») և «Նոր տեսական և գործնական քերականութիւն» աշխատությունները։ «Նախաշավիղ»-ի աշխարհաբար լեզուն, Արովյանի առաջարկած առաջավոր մանկավարժական մեթոդները, և մանավանդ նրա դեմոկրատական հայացքները, սակայն, գրախոսների սրտովը չէին։ Արովյանի աշխատությունները 1841 թվականին վերադարձվեցին՝ իրրև առաջադրվող պահանջներին չբավարարող և անհամապատասխան գործեր։ «Նախաշավիղի» մասին բացասական կարծիք էր հայտնել նաև Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհուրդը։ «Նախաշավիղ»-ը հորինված է «Երևանի ռամկական բարբառով,— գրված է խորհրդի 1841 թվի հուլիսի 5-ի արձանագրության մեջ,— որ խառն է մյուս դրացի լեզուների հետ և զուրկ է գրոց լեզվի բոլոր արժանավորություններից և կանոններից, նրա կարճորեն հրահանգները գրված են չոր ու ցամաք ու անկապ. ռամկական

Ձրգերը և ղեկարճախոսությունները տպեղացնում են շատրադրությունը». մի խոսքով, այդ աշխատությունը «տհաս մտածողությանց պտուղ է»[1]։

«Նախաշավիղի» հետ կապված պատմությունը բնորոշում է Աբովյանին և նրա հակառակորդներին։ Աբովյանը դիտեր Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհրդի կազմիքի «արժեքը»։ Գիմնազիայի բարձր դասարաններում իրեև ավագ դասատուներ նշանակվում էին որևէ համալսարան ավարտած մարդիկ, որոնց խորհրդով էլ ղեկավարվում էին Անդրկովկասյան ուսումնական հաստատությունները։ Սակայն այդ ուսուցիչները, ասում է Աբովյանը, «խորթ են և՛ տեղական պայմաններին, և՛ բարքերին, և՛ լեզուներին, և՛ բնիկների երեխաների մտածելակերպին ու հասկացողություններին, և, որ ամենից վատն է, այդ մարդիկ, ըստ մեծի մասին, իրենց դաստիարակության վրա պետական գանձարանի կողմից արված ծախքի դիմաց պարտավորված են որոշ տարիներ ծառայել ուսումնական հաստատություններում,— որտեղ էլ որ լինի— հետևապար, նրանք կամ բնավ շահադրդռված չեն, կամ չափազանց քիչ են շահադրդռված իրենց առաջիկա պարտականությունները կատարելու գործով, այնպես որ, նրանցից շատերն իրենց ծառայության համար օրերով ու րոպեներով հաշված ժամկետից ավելի չեն պարապում, քան նրանց առարկաների ավանդման համար որոշված փորքաթիվ ժամերն են»[2]։

Մեծ հայրենասերն ու ժողովրդասերը, հոգով, էությամբ մանկավարժը հակադրվում է իրենց պարտակա-

---

1 «Արծագանք», 1896, № 102։

2 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, էջ 187—188։

նությունների վրա չինովնիկական անտարբերությամբ նայող վարձկան ուսուցիչներին, որոնք պատրաստ են Աբովյանի նմաններին «ուղղակի խեղդել»*։

Մի առիթով խոսելով «Նախաշավիղի» մասին (որը տպագրվել, սակայն մինչև լույս տեսնելը արգելվել էր) Աբովյանը գրում է, որ այն դպրոցներում չի թույլատրված օգտագործել, որովհետև «Թիֆլիսի գիմնազիայի խորհուրդը, մեր ամենից մոտ գտնվող իշխանությունը, չհամանալով հայկական ո՛չ լեզուն, ո՛չ ժողովրդին, և հիմնվելով մի քանի հայերի կարծիքների վրա, որոնք իրենց դիտնական են համարում, բայց որոնք, հանդիմանության համար չեմ ասում, նոր մանկավարժությունից» անգետ են, «այն («Նախաշավիղ»-ը — Վ. Պ.) գործածելու թույլտվություն չեն տալիս հատկապես այն պատճառով, որ նա գրված է հասարակ ժողովրդի, ընդհանուրին հասկանալի լեզվով»[1]։

---

* Աբովյանն ասում է, որ իշխանությամբ իրենից բարձր կանգնած մարդկանց մասին իր «այդպիսի չափազանց խիստ դատողությունները» հիմնված են փաստերի վրա։ Իմ կազմած «նոր տնտեսական և գործնական քերականությունը» Թիֆլիսի գիմնազիայի խորհրդի կողմից «որպես անօգուտ դիրք դատապարտված է փոշիների ու փտման հավիտենական զոհ դառնալու,— գրում է Աբովյանը,— այլևս չխոսելով իմ մյուս գրքերի մասին, որոնք նրանց կողմից արժանացել են նույն բախտին» (Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, էջ 188)։

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրակ. թանգարան, Աբովյանի ֆոնդ, գործ № 23։ Ընդգծումը բնագրումն է։

Աբովյանի մանկավարժական երկերի ճակատագիրը բնորոշ է նրա ողջ ստեղծագործության համար առհասարակ։ Հայտնի է, որ նա և՛ Թիֆլիսում, և՛ Երևանում անօրինակ եռանդով զբաղվել է նաև գրական գործունեությամբ։ «Վերք Հայաստանի» և «Պատմություն Տիգրանի» վեպերը, «Թուրքի աղջիկը» պատմվածքը,

Տեղական պայմաններին ու լեզուներին, բնիկների երեխաների «մտածելակերպին ու հասկացողություններին» խորթ, իրենց սովորելու ժամանակ պետական գանձարանից արված ծախսերի դիմաց պաշտոնավարել պարտավորված այդ ուսուցիչները, ինչպես և տեղական լեզուներին ու պայմաններին ծանոթ, սակայն հետադեմ հայացքների տեր ուսուցիչները, իրրև ցարական կարգերի հլու սպասավորներ, սարսափում էին Աբովյանի լուսավորական-դեմոկրատական հայացքներից, նրա հանդուգն ու խիզախ ձեռնարկումներից։ Այդ տեսակետից հետաքրքրական փաստ է Աբովյանի՝ 1838 թվի հոկտեմբերի 14-ի զեկուցագիրը անդրկովկասյան դպրոցների վերատեսուչ Հեսսեն Մյուլլերին, որով նա թույլտվություն է խնդրում իր զեկավարած դպրոցում առաջին իսկ դասարանից հայերեն և վրացերեն անցնել։

«Ինձ հանձնված դպրոցի աշակերտների ծնողներից շատերը և նույնիսկ, ընդհանրապես, ամենքը,— գրում է Աբովյանը,— խնդրում են ինձ, որ առաջին դասարանում դասավանդվի իրենց զավակներին տեղական՝ հայ և վրաց լեզուները։ Նրանց ցանկությանը բավարարություն տալու համար, ցանկություն, որ բարի նպատակ ունի, քանի որ բարձր դասարան փոխադրված երեխաները հետագայում դժվարանում են հաջողությամբ սովորել իրենց լեզուն, որ չի ավանդվել առաջին դասարանում։

առակները, բանաստեղծությունների մեծ մասը և շատ այլ գործեր Աբովյանը գրել է այդ շրջանում, սակայն դրանցից և ոչ մեկը նա չի կարողացել տպագրել տալ։ Աբովյանը խորին կսկիծով նշում է, որ իր գրած գրքերը, «ինչպես և ... բոլոր ցանկությունները ու իղձերը փտում են փոշու մեջ» (նույն տեղում)։

ես, համաձայնվելով հասարակության ցանկության-ը, նամանավանդ որ տեղիս գավառական դպրոցի երեխաները մեծ մասամբ հայեր են, հարկավոր եմ համարում այդ մասին հարգանոք զեկուցել Ձերդ բարձր բարեծննդության ու խոնարհաբար խնդրել թույլ տալ և տեղիս գավառական դպրոցում առաջին դասարանում դասավանդել աշակերտներին հայ և վրաց լեզուներ, ինչպես որ այդ կատարվում է մյուս գավառական դպրոցներում»[1]։

Շատ բնորոշ է, որ անձնական խոսակցության ժամանակ Թիֆլիսի գիմնազիայի խորհրդի անդամներից մեկը Աբովյանին ասել է. «Կառավարությունը ցանկանում է բնաջնջել տեղական լեզուները, իսկ դուք ուզում եք այդ լեզուները նորից կենդանացնել ու հաստատել»[2]։

Իբրև ուսուցիչ, ինչպես և իբրև տեսաբան-մանկավարժ, Աբովյանը եղել է այն ժամանակվա ամենառառաջավորներից մեկը Անդրկովկասում և ամենառառաջավորը՝ Հայաստանում։ Ստեղծագործորեն օգտագործելով եվրոպական և մանավանդ ռուս ու հայ առաջավոր մանկավարժության նվաճումները, դրանց միացնելով իր մանկավարժական պրակտիկայից հանած եզրակացությունները, Աբովյանը ստեղծեց մանկավարժական ամբողջական սիստեմ և դարձավ նոր մանկավարժության հիմնադիրը հայ իրականության մեջ։ Բուրժուական

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1948, № 9, էջ 22—23։

2 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 23։

տրովյանադիտությունը չափազանցնելով եվրոպական մանկավարժական մտքի՝ Աբովյանի մանկավարժական հայացքների վրա թողած ազդեցության հանդամանքը, անտեսել կամ խիստ թերագնահատել է ռուսական և հայ մանկավարժության բարերար ազդեցությունը Աբովյանի վրա, դրանով իսկ ցանկանալով նրան զրկել ինքնուրույնությունից և ներկայացնել իբրև արևմտա-եվրոպական մանկավարժության սոսկական հետևորդ։

Աբովյանի մանկավարժական հայացքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա անպայմանորեն ծանոթ է եղել ռուս առաջավոր մանկավարժների մանկավարժական հայացքներին և կրել է դրանց որոշակի ազդեցությունը։

Անկասկած է, որ Աբովյանը օգտագործել է նաև հայ մանկավարժական մտքի նվաճումները, մասնավորաբար այնպիսի մանկավարժների փորձը և հայացքները, ինչպիսիք են Հ. Ալամդարյանը և Մ. Թաղիադյանը։ Հայտնի է, որ Հ. Ալամդարյանի տեսչության ենթակայության դպրոցում նա սովորել է, իսկ Թաղիադյանի գրած և կազմած մանկավարժական աշխատությունները նրա ժամանակ հրատարակված էին և անհնար է, որ Աբովյանը ծանոթ չլիներ դրանց։ Աբովյանն իր մանկավարժական հայացքների ակունքներից մեկը համարել է երկարատև փորձը և Անդրկովկասի «ուսումնական դործին» վերաբերող «ամեն ինչի» ուշադիր ու բազմակողմանի ուսումնասիրությունը։

Աբովյանը եղել է առաջավոր մանկավարժ-տեսաբան և պրակտիկ։ Նրա դպրոցը և պանսիոնը հաճախող գիտնական ճանապարհորդները արտակարգ հիացմունքով են արտահայտվել Աբովյան-մանկավարժի մասին։ Նրա աշակերտների վկայությունները ևս այդ են

ապացուցում. «Նրա մոտ պատրաստված աշակերտները,— գրում է Աբովյանի պանսիոնում սովորած Գ. Սունդուկյանը,— Մոսկվայում, Պետերբուրգում էլ անվանի էին, ինչ ես Թիֆլիսում»[1]:

Աբովյանը մանկավարժ է եղել այդ բառի ամենալավագույն իմաստով, ոչ միայն գիտելիքներով, մանկավարժական դիտումյանը շատ լավ ծանոթ լինելով, այլև դպրոցին և աշակերտների կրթության ու դաստիարակության գործին իր անսահման նվիրվածությամբ:

Հայտնի է ես նա որպիսի ջերմությամբ է կապված եղել իր աշակերտներին, կարծեք սիրտգորով հայրն է խոսում իր երեխաների մասին. «Բալքի ես գերեզմանում էս ձեր սերը մտքից գնա՝ ա՛յ իմ սիրելի, իմ աղնի՛վ բարեկամք, ես չէ, որքան էս կապուտ երկինքը գլխիս ա, շունչս բերնումս, ձե՛զ, ձե՛զ սուրբ պետք է համարիմ ինձ համար, ձեր արևի՛ն մեռնիմ»[2]:

Կռվելով ծեծի ու մարմնական պատիժների դեմ, Աբովյանը, դրանք բոլորովին արգելելու իրավունք չունենալով, չինովնիկ ուսուցիչների կատաղի դիմադրության պայմաններում, խստորեն սահմանափակել էր մարմնական պատիժները:

Աբովյանի արտակարգ ջերմ վերաբերմունքը աշակերտների նկատմամբ պետք է բացատրել ոչ միայն նրա մանկավարժական հայացքներով, այլ նաև այն բանով, որ նա աշակերտներին դիտել է իրրև իր լուսավորական գործունեության օգնականներ և աջակիցներ, իր սկսած գործի շարունակողներ: «Թիֆլիսի

---

1 «Սովետական գրականություն», 1940, № 8—9, էջ 32:

2 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ 3, էջ 3—4:

հայոց հանգստարանը» գործում, ավելի որոշակի ու լրիվ, քան որևէ այլ տեղ, Աբովյանը շարադրել է իր «մուրազը». «Էս ա տանըհինգ տարի ա,— գրում է նա,— որ տանից, տեղից, սիրելուց, բարեկամից, պատվից, փառքից ձեռք եմ վերցրել, հեռացել, աշխարքն աշխար ընկել, գլուխս քարն քար տվել, որ իմ ազգին պետքը գամ, մեկ հարիր աղքատ երեխայի ձեռից բռնեմ, ինչ գիտեմ, նրանց սովորցնեմ, նրանց սիրտն ու հոգին բանամ, իմ սրտիս դարդերը բոլոր մեջն ածեմ, ազգին ինչ դեղ ա հարկավոր, նրանց տամ, գեղեր, քաղաքներ ուղարկեմ, որ գնան իրանց բարի սերմը մեր բարի ազգի բարի երեխեքանց սրտումը ցանեն, նրանց էրված սիրտը հովացնեն, բերաններըը լեզու դնեն, սրտներումը զվարթ, որ հասնողը նրանց գլխին շուռ, ինչպես մինչև էս օր տվել են, ու հետո, ախ՝ հետո գերեզմանը մտնեմ, հետո աչքս խփեմ, հոգիս հովանա, մարմինս դինջանա։

Էս ա իմ մուրազը... էրեխա էի, է՛ստուր ցանկացա, գերեզմանը մտնեմ՝ էս կդառնա իմ մարմնի ցեցը, իմ հոգու դժոխքն ու տանջանքը»[1]։

Աբովյանի մանկավարժական հայացքներում ևս արտահայտվել են նրա վառ հայրենասիրությունը, դեմոկրատիզմն ու հումանիզմը։ Նա կրթության ամենահիմնական նպատակը համարել է հայրենիքին նվիրված, աշխատասեր ժողովրդի համար կյանքը գոհելու պատրաստակամ մարդկանց դաստիարակելը, «հասարակության օգտավետ անդամ» պատրաստելը։

Հակադրվելով կրթության ու դաստիարակության

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 45։ Ընդգծումը բնագրումն է։

մի կողմից միջնադարյան սխոլաստիկական սկզբունքներին, մյուս կողմից պետական դպրոցների չինովնիկ ուսուցիչներին, Աբովյանը առաջադրել է բազմաթիվ մանկավարժական հարցեր, որոնց մի մասը այսօր էլ պահում է իր նշանակությունը։ Դպրոցը,— ասում է Աբովյանը,— պետք է երեխայի մեջ դաստիարակի մարդկային լավագույն գծեր՝ ազնվություն, անձնազոհություն, արիություն, տոկունություն, հաստատակամություն, աշխատասիրություն, համեստություն, մեծահոգություն, հարգանք մեծերի և ծնողների նկատմամբ։ Միաժամանակ երեխայի մեջ պետք է զգվանք առաջացնել դեպի մարդկային վատ գծերը՝ մեծամտությունը, փառասիրությունը, ամբարտավանությունը, ծուլությունը։ Այս կարևոր հարցերը լուծելու համար մանկավարժը պետք է իր մեջ մարմնացնի նշված լավագույն գծերը, որովհետև երեխան ինչ տեսնի այն կսովորի,— ասում է Աբովյանը.— «Հազար անգամ թուք ու մուր, մեկ անգամ օրինակ տո՛ւր. էս մեկը շատ բան կտեսնի, քանց մեկ կարաս խրատ, մեկ ջվալ դարըհաթ»[1]։

Ուսուցիչները, մանկավարժի ծանր և պատվավոր գործը հաջողությամբ կատարելու համար, իրենց ավանդած գիտություններից բացի պետք է տիրապետեն «բավականաչափ դիտելիքների, փորձի, լավ մեթոդի և, մանավանդ, սիրեն այն գիտությունները, որ սովորում է իրենց վստահված պատանեկությունը»[2]։

Մեր կարծիքով առնվազն սխալ է աբովյանագետ-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 22։

2 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, էջ 387։ Ընդգծումները բնագրում են։

ներից մի քանիսի այն կարծիքը, թե Աբովյանը կողմնակից է եղել Ռուսոյի առաջադրած ազատ, բնական դաստիարակության սկզբունքին: Աբովյանը ազատ դաստիարակության տարերայնության տեսությանը հակադրել է կրթության և դաստիարակության կազմակերպվածության տեսակետը, հատկապես ընդգծելով ուսուցչի դերը երեխայի դաստիարակության գործում: Այս տեսակետից նայելով հարցին, պարզ է դառնում, որ սխալ է նաև Աբովյանի «Պատմություն Տիգրանի» վեպը Ռուսոյի «Էմիլի» երկվորյակը համարելը: «Պատմություն Տիգրանի» վեպը երեխայի բարոյական դաստիարակության սկզբունքների ու պրակտիկայի մասին գրված ամբողջական և խորապես ինքնատիպ գործ է:

«Պատմություն Տիգրանի» վեպում և մանկավարժական բնույթի մի շարք այլ գործերում Աբովյանը առաջադրել է նաև աշխատանքային դաստիարակության հարցը: Դպրոցը,—ասում է Աբովյանը,—պետք է աշխատանքային հմտություններ տա աշակերտին, սեր արմատացնի դեպի աշխատանքն ու աշխատավորը: «Պատմություն Տիգրանի» վեպում ուսուցիչ Կարապետը երեխաներին վարժեցնում է տանը և բանջարանոցում աշխատելուն: Աշխատանքային դաստիարակության մասին իր առաջադրած սկզբունքները Աբովյանն աշխատում էր իրականացնել պրակտիկ մանկավարժական աշխատանքներում: Հայտնի է, որ նա Երևանում գավառական դպրոցին կից հիմնել էր բանջարանոց և աշակերտներին ծանոթացնում էր գյուղատնտեսական աշխատանքների որոշ պրոցեսների հետ: Երբ երեխան սիրի աշխատանքը, ձեռք բերի աշխատելու հմտություն, նա կլինի հասարակության պիտանի անդամ. «Մեկ երկրում քանի մարդիք աշխատավոր լինի, իրանց հա-

մար հաց ունենան, էնքան ամենին էլ խեր ա,— ասված է «Պատմություն Տիգրանի» վեպում։— Քանի էսպես (գպրոց չհաճախող, փողոցներում աննպատակ թրևող— վ. պ.) հայվարա մարդիկը շատանան, էնքան խեր ու բարաքյաթ կպակսի»[1]։

Ցանկանալով կրթությունը կապել գյուղատնտեսության հետ, Աբովյանը հարց էր դնում մի շարք քաղաքների (որոնց բնակիչների գլխավոր զբաղմունքը գյուղատնտեսությունն է) գպրոցներում ունենալ մեկական լավ գյուղատնտես, որը սովորեցնի հողի մշակման նորագույն եղանակները, ինչպես և գյուղատնտեսական գործիքների գործածությունը, «որոնց (գործիքների— վ. պ.) մասին ոչինչ չգիտեն ամբողջ Անդր(կովկասյան) երկրամասում»։ Ըստ Աբովյանի այդ նպատակին պետք է ծառային նաև բարձրագույն դպրոցները։ Նա առաջարկում էր տեխնիկական և գյուղատնտեսական բարձրագույն դպրոցների միջոցով պատրաստել այնպիսի մասնագետներ, որոնք ի վիճակի լինեն «երկրի արդյունաբերությունն իր նահապետական վիճակից» դուրս հանել։ Այսպիսով, Աբովյանը կրթության հարցը կապում էր կյանքի հետ, աշխատանքային դաստիարակության հարցը՝ ժողովրդական տնտեսության պահանջների ու բարգավաճման հետ։

Քննադատելով սերտելու, «մեքենայաբար ամեն բան բերան անելու» մեթոդը, Աբովյանը առաջադրում է հասկանալով յուրացնելու, երեխայի ինքնուրույն մտածողությունը զարգացնելու սկզբունքը, զննական ուսուցման մեթոդը։ «Պատմություն Տիգրանի» վեպում

---

1 Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 205։

Աբովյանը հատուկ ուշադրություն է դարձրել այդ հարցերի վրա։

Շատ բարձր դնահատելով ռուսերեն լեզուն, այն համարելով լավագույն միջոցը ռուսական հարուստ կուլտուրային հաղորդակից դառնալու և ռուս ու հայ ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար, Աբովյանը միաժամանակ դրել է տեղական լեզուների (հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն) հիմնավոր ուսուցման հարցը։ Ուսուցման հիմքը,— ասում է Աբովյանը,— լեզուն է, առանց որի «...ոչ անհատը, ոչ էլ մանավանդ ժողովուրդը ի վիճակի չէ մտքերն ու զգացմունքները հաղորդելու ուրիշներին, մանավանդ ավանդելու հաջորդ սերունդներին։ Լեզվի մեջ, ինչպես մտքում հայելու մեջ ցոլանում է մի ազգի առանձնահատկությունը, նրա կուլտուրան, մինչև անգամ նրա քաղաքական վիճակը»[1]։ Այսպիսի կարևորություն տալով մայրենի լեզվին, բնական է, որ Աբովյանը հարց է դրել և կրքոտ կերպով պայքարել է, որպեսզի ավելացվի հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն լեզուների դասավանդմանը հատկացված ժամերի քանակը։

Մեծ է Աբովյանի դերը նաև լեզուների մեթոդիկաների հարցերը մշակելու գործում։ Կռվելով լեզվի ուսուցման ասպարեզում գոյություն ունեցող ֆորմալիզմի ու սխոլաստիկայի դեմ, նա հատուկ ուսումնասիրության օբեկտ է դարձրել լեզուների, մասնավորաբար հայոց լեզվի ուսուցման հարցերը։ Աբովյանը հետապնդել է մի հիմնական նպատակ՝ հեշտացնել ուսուցման պրոցեսը, այն դարձնել ժողովրդին մատչելի, որ-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, էջ 45։

պետի «...ոչ միայն ուսանել վարժապետ ոք, այլ և ամենայն համբակ (աշակերտ — Վ. Պ.) և հայր կարէ... հնչուտիւնամբ ուսուցանել զերեխայն»[1]: Պայքարելով տառերը անուններով կոչելու մեթոդի դեմ, որը խիստ դժվարեցնում էր լեզվի ուսուցումը (այդ մեթոդը ծաղրված է «Խաղարկութիւն մանկանց» դեղարվեստական գործում), Աբովյանը պաշտպանում է հնչական մեթոդը, որը Ռուսաստանում ևս նոր էր միայն գոյության իրավունք նվաճում: Աբովյանը ցանկանալով տարածել հնչական մեթոդը, այդ մեթոդով հայերեն լեզվի դասագրքեր կազմեց («Նախաշաւիղ»): Անհրաժեշտ է «ի բաց թողուլ զյիմար անուանակոչութիւն տառից այբ, բեն, գիմ, ըթ և այլն,— գրում է Աբովյանը,— զամենայն տառս պա՛րտ է ըստ բնական հնչմանն արտասանել»[2]:

Աբովյանը ոչ միայն եղել է պրակտիկ մանկավարժ և մանկավարժական աշխատությունների (դասագրքեր, ձեռնարկներ, հոդվածներ և այլն) հեղինակ, այլև գրող-մանկավարժ: Նա իր մանկավարժական հայացքները արծարծել ու պրոպագանդել է նաև իր գեղարվեստական երկերում: Մենք մասնավորաբար նկատի ունենք նրա «Պատմութիւն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկներին» վեպը, որի մեջ մի շարք այլ հարցերի հետ միասին, Աբովյանն արտահայտել է իր մանկավարժական հայացքները բարոյական դաստիարակության հարցերի մասին և իր դեմս ուսուցիչ Կարապետի ցույց է տվել իր պատկերացրած մանկավարժի կերպարը: Աբովյանը հայ գրականության մեջ առաջին մանկագիրն է: «Նախաշաւիղ»-ում և «Պարապ վախտի

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, էջ 12:
2 Նույն տեղում, էջ 11:

խաղալիք» ժողովածուում զետեղված նրա մանկական-լավագույն ստեղծագործությունները դարձել են մանուկ սերնդի ընթերցանության սիրելի գործեր և մտել են 19-րդ դարի ինչպես և սովետական շրջանի մայրենի լեզվի բաղմաթիվ դասագրքերում։

Առաջարկելով իր առաջավոր, դեմոկրատական մանկավարժության սիստեմը, Աբովյանը հանդիսել է կրթության և դաստիարակության հին սկզբունքների պաշտպաններին կատաղի դիմադրությանը։ Այդ տեսակետից նայելով հարցին, հասկանալի է դառնում թե ինչու և՛ Թիֆլիսում, և՛ Երևանում նա իր դեմ հանեց ինչպես դավառական դպրոցների, այնպես էլ Թիֆլիսի գիմնազիայի և Անդրկովկասյան ուսումնական հիմնարկների շատ աշխատողների։

Առնվազն սխալ է հայ գրականության պատմության մեջ հայտնված այն կարծիքը, թե Աբովյանը եղել է «հին հնազանդ սիրող օրենքներին և գոյություն ունեցող կառավարության ձևին», որի համար էլ, որպես թե, ցարական կառավարությունն «ըստ արժանվույն գնահատում էր նրան»։ Աբովյանի գրական և մանկավարժական գործունեությունից պարզ երևում է, որ նա շարունակական կոնֆլիկտի մեջ է եղել ցարական չինովնիկության հետ։ Իր գործունեության ընթացքում Աբովյանը, հայ խավարամոլների հալածանքների հետ միասին, ստիպված էր նաև կապույտ մունդիրավորների հարվածները կրել։ 1839 թվի փետրվարի 23-ին Ֆրենին գրած նամակում Աբովյանն ասում է, որ ինքը, նվիրված լինելով ժողովրդի դաստիարակության գործին, գրեթե ամենուրեք հանդիպում է արգելքների։ Նրան, մանավանդ, խոր վիշտ է պատճառել, որ անդրկովկասյան դպրոցների վերատեսչի պաշտոնը պետք է

որվի «հայոց ոխերիմ թշնամի» Դեմենտևին. «Սա (Դեմենտև—Վ. Պ.) ինձ բավականաչափ վիրավորանքներ է պատճառել, որ, բնականաբար, մեր հարաբերության մեջ կարող էին տեղի ունենալ,— գրում է Արովյանը։— Մեր բոլոր աշակերտները նրա ձեռքի տակ պիտի տանջվեն, բայց գլխավորապես՝ հայերը և առանձնապես ես, ինչպես որ բոլոր նշաններից ես նկատում եմ... Սրան արդեն ներկայացրել են այդ տեղի համար, ուրեմն ես կորած եմ։ Ես բնավ չեմ կարող սրա խծբծանքը տանել։ Կարողություն ես չունեմ, ստիճան՝ նույնպես»[1]։ Նույն թվի հոկտեմբերի 9-ի նամակում Արովյանը նորից ստիպված է խոսել ցարական չինովնիկից իրեն սպառնացող վտանգի մասին. «Իմ նախորդ նամակի մեջ մի քանի դժգոհություններ էի հայտնել Հեսսեն Մյուլլերի հաջորդ մեր վերատեսչի մասին, որ այժմ հեռացված է պաշտոնից։ Այս հանդամանքն այժմ նրա ականջն է հասել; թե ինչպե՛ս, չեմ կարող բացատրել։ Նա այժմ սատանի դառնացած է իմ դեմ։ Նրան պատմել են, թե ես Զեղանից խնդրել եմ, որ նրա մասին խոսեք նախարարի հետ։ Խնդրում եմ՝ նամակը բոլորովին անհետ ոչնչացնեք։ Մինչև որ ինձ օգնություն հասնի, այս հեռավորության մեջ շատ չարագուշակ բաներ կարող են պատահել։ Անշուշտ, ես անհիմն չէի գրել։ Վերջերս ինձ հետ շատ լավ էր։ Այժմ թեպետ պաշտոնանկ, սակայն կարող է վնասել»[2]։

Արովյանի շուրջն ստեղծված հալածանքների, զրպարտությունների ու բամբասանքների մթնոլորտը այնքան է շիկանում, որ 1843 թվին նա, որպես «անբա-

1 «Դիվան Խ. Արովյանի», հատ. 1, էջ 113։

2. Նույն տեղում, էջ 117։

վարար հատկությանց տեր» տեսուչ, ազատվում է Թիֆլիսի գավառական դպրոցի հաստիքավոր տեսչի պաշտոնակատարի պաշտոնից և նշանակվում է Երևանի գավառական դպրոցի հաստիքավոր տեսչի պաշտոնակատար: Պարզ էր, որ Աբովյանին չէին վստահում, նրա գործունեությունը կասկածներ էր հարուցում: Դա վատորեն նշանակում էր Աբովյանին հեռացնել Թիֆլիսի, Կովկասի վարչական կենտրոնի, միջավայրից, իսկ նրա վարչական թուլության մասին եղած խոսակցությունը ցարական չինովնիկական ապարատի հաղար ու մի խարդախությունների տիպական օրինակ էր:

Աբովյանը Երևանում ևս ստիպված էր գործել ծանր պայմաններում: Դպրոցը կիսապրազետ, անհոգի, մանկավարժական գործունեության համար ոչ պիտանի ուսուցիչներից ազատելու, դպրոցում առաջավոր մանկավարժական մեթոդներ մտցնելու նրա փորձերը անհաջողության են հանդիպում: 1848 թվին գրած նամակներից մեկում Աբովյանը ցավով ասում է. «...չորս տարի է, ինչ Երևանումն եմ: Նախանձը և բաղմատեսակ հալածանքները պաշտոնակիցներիս կողմից հարկադրեցին ինձ թողնելու ընդմիշտ Թիֆլիսը և իմ սիրելի հիմնարկությունը (պանսիոնը—վ. Պ.), որ ես բաց էի արել իբրև նախապատրաստական՝ ապագա ժողովրդական ուսուցիչների համար: Ա՜խ, եթե պարոն նախարարն իմանար, թե ի՛նչ վիճակի մեջ են այստեղ դպրոցները: Պետությունն անօգուտ ծախսում է իր դրամները և պատանեկությունը զուր վատնում իր ժամանակը... Եթե այդ մասին բարձր խոսես, հալածանքի կենթարկվես, իբրև հերետիկոս, իսկ եթե ձայն չհանես, չէ՞ որ այդ խայտառակություն է, ականատես լինել, թե ինչպես տարեցտարի ոսնատակ են տալիս պետության և ա-

փական հայրենիքի շահերը։ Ոչ թե ռոճիկներ ավելացնելով կարելի է այս դժբախտության առաջն առնել, այլ պատշաճ կարգադրություններով, գործի գլուխ դնելով հմուտ մարդկանց, և գերադասելով նրանց, որոնք պարապում են մասնագիտությամբ սիրով ու եռանդով»։ Ապա խոսելով այն մասին, որ ինքը «ամենասուրբ երդում» է տվել երբեք չթողնել մանկավարժական ասպարեզը, Աբովյանը շարունակում է. «Սակայն այժմ ես գրեթե հարկադրված եմ այդ քայլն անելու, որովհետև 11 տարի է իմ շուրջը տեսնում եմ հնավանդ սովորություններ և ոչինչ չեմ կարող անել։ Ես կդերադասեի մենակ ունենալ 500 աշակերտ, քան 50 աշակերտ կըրթել 5 ուսուցչի հետ, որոնք անպետք են»[1]։

Երևանում Աբովյանը հատկապես խիստ գժտվեց տեղական իշխանությունների հետ։ Գավառապետ Ն. Բլավատցկու թշնամությունն Աբովյանի նկատմամբ ծայրահեղ չափեր էր ընդունել։ Հայտնի է, որ նրա մեքենայությունների պատճառով էր, որ փոխարքան հրամայեց երեքօրյա կալանքի ենթարկել Աբովյանին, որպես թե Ներսես Աշտարակեցուն Երևանում դիմավորելու ժամանակ իրեն լավ չպահելու համար։ Վիրավորված Աբովյանը 1846 թվի հուլիսի 18-ին Անդրկովկասի դպրոցների վերատեսչին այդ մասին հետևյալն է գրել. «Ձերդ բարեծննդության տարվույս հունիսի 22-ի № 738 առաջադրության հետևանքով ես նորին պայծառափայլության Կովկասի կառավարչապետի կամքով կրեցի երեք օրվա կալանքիս պատիժը, բայց և այնպես ես ինքս ինձ մեղավոր չեմ ճանաչում. ես ցույց չեմ

---

1 «Վիլյան Խ. Աբովյանի», *հատ. 1, էջ 121։*

ավել ոչ մի տեղ վարմունք Ներսես կաթողիկոսի Երեվան մուտք գործելու ժամանակ։

Դրա պատճառն այն անախորժ դեպքն է, որ տեղի է ունեցել իմ և տեղիս գավառապետի միջև, մանավանդ անցյալ տարվա հանդիսավոր ակտի ժամանակ»[1]։

Պարզվում է, որ ըստ ցարական նենգ ու բանսարկու չինովնիկի, Աբովյանի «աններելի» հանցանքն այն է եղել, որ նա Ներսես Աշտարակեցուն դիմավորելու ժամանակ քաղաքացիական հագուստով է եղել և ոչ պաշտոնական համազգեստով։ Այդ առիթով Բլավատցկու արած դիտողությանը հպարտ ու ազնվամիտ Աբովյանը, Բլավատցկու որակումով, «հանդուգն» պատասխան է տվել։ Կովկասի փոխարքային այդ մասին Բլավատցկու ուղարկած դրության մատնության թուղթ հիշեցնող բնույթը և խիստ տենդենցիոզ տոնը ցույց են տալիս, որ դա եղել է ոչ թե պատահական միջադեպ, այլ կազմակերպված հալածանք Աբովյանի նկատմամբ։ Նշելով նաև այն հանգամանքը, որ ինքը դպրոցի պատվավոր վերատեսուչն է, իսկ Աբովյանը նրա ստորադրյալը, Բլավատցկին մատնանշում է, թե անհրաժեշտ է Աբովյանին Երևանից հեռացնել։ «Այդ աստիճանավորի այդ ծայրահեղ արարքը,— գրում է նա,—մյուսների համար՝ ծառայության մեջ ավագներին չհարգելու վատ օրինակ

---

1 «Դիվան Ե. Աբովյանի», հատ. 1, էջ 175։ Աբովյանը սովորաբար ուսումնական տարվա ընթացքում կազմակերպում էր հանդիսավոր ժողով աշակերտների ծնողների և քաղաքի նշանավոր պաշտոնյաների մասնակցությամբ, ուր նա հաշվետու էր լինում ուսումնական տարվա աշխատանքների մասին և ծանոթացնում էր հաջորդ ուսումնական տարվա համար նախատեսված ձեռնարկումներին։

կարող է ծառայել, դրա համար էլ նա չպետք է մնա Երևանում»[1]։

Աբովյանը մի քանի առիթներով ակնարկել է, որ իր մանկավարժական գործունեությունը խափանվում է ցարական չինովնիկների կողմից։

1847 թ. ապրիլի 25-ին Երևանի գավառի դատավոր Օրլովսկուն գրած թղթում Աբովյանն ասում է, որ իր ղեկավարած դպրոցում ուսման անբարեհաջող ընթացքի գլխավոր պատճառներից մեկն էլ «տեղական իշխանության աջակցության և ուշադրության պակասությունն է»։ Իբրև տեղական իշխանության «անբավարար» ուշադրության անհամար օրինակներից մեկը հիշենք Երևանի գավառական դպրոցի շենքի վերանորոգման հետ կապված պատմությունը, երբ հակառակ գործադրած եռանդուն ջանքերի Աբովյանը համարվեց անբարեհույս մարդ։ Անդրկովկասյան երկրի ուսումնական մասի կառավարիչ գեներալ-մայոր Անդրեյ-Շրամմ երկրորդը այդ առթիվ Աբովյանին գրել է. «Ձերդ բարեծննդությունը, ելնելով անձնական հաշիվներից, մոռացել եք Ձեզ հանձնված դպրոցի օգուտը և արքունի շահը և ցույց եք տվել Ձեզ իշխանության առաջ ամենավատթար կողմից, որով և համոզել եք նրան, որ դուք չունեք այն բոլոր հատկությունները, որոնք անհրաժեշտ հարկավոր են մի հաստիքավոր

1845 թվի նոյեմբերի 11-ին, այդպիսի մի հանդեսի ժամանակ, բոլոր չինովնիկները, Բլավատցկու գլխավորությամբ, հիվանդ ձևանալով, դեմոնստրատիվ կերպով բողնում հեռանում են։ Աբովյանը նկատի ունի այդ «անախորժ դեպքը», որի մասին նա 1845 թվի նոյեմբերի 24-ին հայտնել էր Անդրկովկասի դպրոցների վերատեսչին։

1 «Коммунист», от 31 марта, 1948 г.

տեսչի, որ դպրոցի գլուխ է կանգնած»[1]: Ապա Շրամմ երկրորդի սպառնալիքն ավելի կոնկրետ է դառնում, նա հայտնում է, թե Աբովյանի բռնած դիրքը կարող է նրան զրկել նաև պաշտոնից:

Աբովյանին հալածողների կողմումն էր նաև հայկական ռեակցիայի ու խավարամոլության միջնաբերդը՝ Էջմիածինը: Մեծ լուսավորականի և խավարի քուրմերի հարաբերությունները ժամանակի ընթացքում ավելի լարվեցին: Հեռավոր Դորպատում Աբովյանը չէր մոռացել այն ծանր վիրավորանքը, որ հասցրել էին նրան վանքի «պատվավոր հայրերը»: Դորպատից Հովհաննես Կարբեցի կաթողիկոսին գրած նամակում, հիշելով վանքից իրեն հեռացնելու մասին, Աբովյանը ասում է. «Դեռ սարսին ոսկերք իմ, յուշ ածելն իմ դժնդակ կատաղութիւն և ղայիշատակումն ընչից և հանդերձից իմոց պատուական Յովսեփի Տէր-Մարուքեան, սասանելի դէմք նորա ընդառաջ գալանեն ինձ յամենայն անկիւնս, նաև ի լայնածիդ հեռաւորութեանս»[2]:

Դորպատից գրած նամակներով Աբովյանը հատուցապես համոզել էր հոգևորականներին, որ իր հայացքներով թշնամի է նրանց: Աբովյանը տարբերում էր հոգևորականներին ժողովրդից և մեկի հանցանքը չէր վերագրում մյուսին: Դորպատից գրած մի նամակում, խոսելով այն մասին, որ հայրենիքը իրեն «անհաց և անջուր և անպաշար» տարագրել է,— նա անմիջապես ավելացնում է, որ հայրենիքը այդ բանում հանցանք չունի. «Ո՛հ մեղանչեմ, զինչ ասեմ ես, հայրենիքն իմ անպարտ է յայսմ ամենայնի, խստապարանոց որդիք

---

1 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 2, էջ 246:
2 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 39:

Նորա անցուցին ընդ իս զանցս զայս, որպի անուն Քրշնամիք նորա, յորոց ի ձեռս ստացայ և դժբախտ իմ հայրենի»[1]: Արովյանը գիտեր, որ իր այդ թշնամիները նաև հայրենիքի թշնամիներ են:

1838 թվի դեկտեմբերի 15-ին Արովյանը գիմում է էջմիածնի Սինոդին, խնդրելով իրեն ազատել հոգևոր կոչումից: Հայրենիք վերադառնալուց հետո, - ասում է Արովյանը, բազմաթիվ հանդամանքներից մղված և մանավանդ զգալով, որ իմ մտքերի և վարքի մեջ տեղի ունեցած փոփոխությունները չեն համապատասխանում հոգևորականի ծանր ու ժուժկալ վիճակին, մտա արքունական ծառայության:

Նամակներից մեկում, ուր կարելի էր ավելի ազատ արտահայտվել, քան դիմումի մեջ, Արովյանը գրում է, թե հոգևոր կոչումից հրաժարվելու պատճառը եղել է այն, որ այդ կոչումը ստատնացել է նա պահել նրան իր ձգտումից. հոգևոր կոչումը պարտավորեցնելով ենթարկվել խավարամոլ պետերի, կարբեցիների հրամաններին, խանգարել է նրա լուսավորական-մանկավարժական գործունեությանը. իսկ «իմ ձգտումն ինձ ավելի բարձր էր երևում»,— ասում է Արովյանը: Նվ Սինոդը, որ վաղուց գիտեր նրա «փոփոխության մտաց և վարուց»-ի մասին՝ 1839 թվի հունվարին ազատեց նրան հոգևոր կոչումից:

Նույն տարին Արովյանը ամուսնացավ գերմանուհի էմիլիա Լոոդեի հետ:

Իր մղած անհավասար կռվում Արովյանին ուժ ու եռանդ տվողն իր գործի արդարացիության մասին ու-

---

1 «Գիվան Խ. Արովյանի», հատ 1, էջ 32:

նեցած վառ հավատն էր, հայրենակիցների լուսավորության գործին ծառայելու նրա չերմ ցանկությունը։

Աբովյանը ժամանակի հայ իրականության ամենառաջավոր մտածողն էր, ամենազարգացած մարդը, որ հիանալի հասկանում էր կյանքի առաջադրած նոր ու մեծ խնդիրները և ողջ էությամբ նվիրված էր այդ խնդիրներին, ժողովրդի շահերին, սակայն չունենալով ուժեղ աջակիցներ և դինակիցներ, ստիպված էր գրեթե միայնակ դիմադրավել ռեակցիայի ու խավարամոլության ուժերին։ Դա մեծ ողբերգություն էր, դա էր, որ Աբովյանին երբեմն հասցնում էր հուսահատության։ Այդպիսի պահերին նա մտածել է ինքնասպանությամբ վերջ տալ կյանքին, կամ թողնել ընտանիք, պաշտոն և բաշվել մի հեռավոր մենաստան. «Ես վերջացուցի համարիա թէ՝ նպատակ կենացս,— գրում է Աբովյանը Մ. Էմինին, 1846 թվին,— բիւր ազգի սրտամաշուխիւնք փութով առադաստեալ զամենայն իղձ եւ դիտաւորութիւն իմ ի նպաստաւորութիւն ուսման մերազդի մանկանց՝ ստիպեն զիս հրաժարվել ի պաշտօնէ եւ որոնել անձին զվիճակ առանձնականաւ։ Անհնարին է ընդդէմ խթանի աքացել. յանշուքն Երևան լաւ է ունիլ զէշ մի կամ ջորի պատրաստական, քան զամենայն դիտութիւնս հրեշտակային»[1]։

Խորը հուսահատություն է արտահայտված այս նամակում։ Մանավանդ կյանքի վերջին շրջանում նման տրամադրություններ նա ավելի հաճախ է ունենում։ Սակայն նույնիսկ ծանր հուսահատության մեջ Աբովյանը չի կորցնում ողջախոհությունը, փորձում է ճիշտ բացատրություն տալ իր ողբերգության պատ-

---

1 «Գիվան Ե. Աբովյանի», հատ. 1, էջ 63։

ճառներին. ասելով, թե «ժամանակը և հանգամանքներն» են այդ անհաջողությունների պատճառը և ոչ երևանը կամ մի ուրիշ բան։ Սխալ է մեր ժողովրդին անուսումնասեր համարելը, պնդում է Աբովյանը, «ամենայն ուսումն և կարգադրութիւն պարտի համապատասխանել վիճակի և կարեաց ժողովրդեան»։

Նամակի վերջում Աբովյանը հաղորդում է, որ խղճի և սրտի անդորրության համար կամենում է «առանձնանալ եւ ի կամս բարձրելոյն թողուլ զամենայն, որ գալոցն է»[1]։

Այդ նույն տրամադրությունների արտահայտությունն է «Յունայնութիւն աշխարհի» բանաստեղծությունը, որի մեջ քննադատելով այն իրականությունը, ուր աղնիվ մարդը հալածվում է, իսկ հիմարն ու անբարիշտը փառքի արժանանում, Աբովյանը իսոր հուսահատության մեջ գրում է.

Անցաւոր այսպէս բոլոր՝ յաշխարհիս,
Փութով կարկեսցին յիմ՝ ո՞հ լսելիս.
Զայնք, որ մեղմէին գհոդի իմ քակ.
Սրինդ և քնար մնասցին ինձ փակ.
Սառեսցի արիւնն յերակունս տկար
Ի ցուրտ գառնաշունչ՝ մահուան հոգեսպառ։

Զքաւսցին ինձ բոլոր հրապոյրք աշխարհի.
Ո՛չ պարարեսցէ որբն Լիբանանի։
Կտրասցին թիկունք իմ յանուրս ամաց.
Կթուցեալ ոտիք ի գուբն ես դարձայց[2]։

Աբովյանին հուսահատեցնողը սեփական բարեկեցության ճանապարհին եղած խոչընդոտները չէին, այլ

---

1 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 64։

2 Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, 1948, էջ 232։

այն, որ իր կյանքի միակ նպատակը համարելով հայրենիքին ծառայելը, տեսնում էր, որ չի կարողանում իր ցանկացած չափով նպատակին հասնել։ Իսկ ապրել՝ հայրենիքի կրթության և լուսավորության գործին ամբողջովին նվիրվել չկարողանալով, Աբովյանի համար հավասար էր մահվան. տեսնում եմ հայրենիքիս սարսափելի վիճակը և հնարավորություն չունեմ նրան օգնել, որն իմ կյանքի առաջին և վերջին նպատակն է, ասում է Աբովյանը։ Դա է իմ սրտի անբուժելի ցավը «որ եւ պատճառ լիցի մահուան իմում, խափանեալ և խանդարեալ ունի զամենայն զօրութիւն իմ։ Աշխարհ ամենայն մեռեալ է յաչս իմ։ Ջիք իմ այլ կեանք, քան բարեբաղդութիւն հայրենեաց»[1], եթե անհրաժեշտ է պատրաստ եմ և կյանքս զոհել նրա համար։

Իր ողջ կյանքի ու գործունեության նպատակի, մանավանդ կյանքի վերջին շրջանում ունեցած ապրումների գեղարվեստական վառ արտահայտություն է «Աղջաներ մարդը իր մեռնելու վախտը» բանաստեղծությունը։ Մեռնելուց առաջ ասած իր «մնաք բարով»-ի մեջ Աբովյանը գրում է.

Էս ճամփեն մեկ օր մենք պետք է գնանք,
Մահով էն կենքին հասնինք, դինջանանք։
Բայց մեռնել ես որ շատ ուզում չէի.
Պետքը գամ ազդիս՝ ախ՝ ասում էի։

. . . . . .

Ո՛չ երկար ապրելն էր իմ ուզածը,
Ո՛չ լավ օր քաշելն՝ ա՛խ՝ իմ խնդրածը։
Իմ էն քաշած շունչն էլ մահ էր աչքիս,
Որ չէի կարում պետքը գալ ազդիս։

---

1 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 61—62։

Իշխանություն քե, կամ փառք ուզեցի,
Թագի, պսակի քե փափագեցի,
Էնտուր համար միայն, որ հազար մարդի
Աչքի արտասունքն սրբեմ, որ չցավի։

. . . . . .

Փա՛կ էր աշխարհն, սև՝ իմ քաշած օրն,
Որ ձեռս չհասավ, ինչ ուզեց սիրտս որ։
Արարի՛չ իմ տեր՝ քե մարդ չիմանա,
Իմ աղօթքն է՛ս էր, քնզ լավ հայտնի ա։

Մարդի՛ք, ա՛խ մարդիք՝ դուք ե՛րբ կզարթնիք,
Որ սիրտ սրտի տաք, միմյանց քոմակ ըլիք։
Իմանաք, մեր դրախտն ու կեանքն հենց է՛ն ա,
Ով խեղճ ազգի ցավը կիմանա։

Արովյանը հուսահատ վիճակի մեջ էր, երբ 1848 թվի փետրվարի 21-ին Թիֆլիսի հայկական (Ներսիսյան) դպրոցի վարչությունը պաշտոնապես հայտնեց, թե կաթողիկոսը նրան պաշտոնի է նշանակել այդ դպրոցում։ Արովյանը մարտ ամսին արդեն ազատվել էր Երևանում ունեցած իր պաշտոնից և նրա տեղը նշանակվել էր ոմն Տուրկեստանով։ Ապրիլի մեկին վերջինս գալիս է Երևան և սկսում է գավառական դպրոցի գործերն ընդունել։

Ապրիլի 2-ի առավոտյան, սակայն, դպրոցի գործերի հանձնումը դեռ չավարտած, Արովյանը դուրս է եկել տնից և այլևս չի վերադարձել։

Արովյանի «անհայտ բացակայության» լուրը ապրիլի 3-ին հայտնվել է Երևանի գավառապետ և գավառական դպրոցի պատվավոր տեսուչ Բլավատցկուն։ Վերջինս, ակնարկելով, թե Արովյանը որևէ գեղծարա-

---

1 Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 197—198։

րությունն արած ու անհետացած կարող է լինել, կարգադրում է ատիկանապետի մասնակցությամբ շարունակել դպրոցի գործերի ստուգումն ու ընդունումը։ Պարզվում է, որ դպրոցի բոլոր գործերը կանոնավոր վիճակումն են, զեղծարարության մասին խոսք անգամ չի կարող լինել։ Տապալվում է Աբովյանի ոխերիմ թշնամի՝ Բլավատցկու վերջին դավադրությունը՝ «հանդուգն» Աբովյանին վարկաբեկելու նրա ծրագիրը։

Աբովյանին որոնելու աշխատանքները կատարվել են տեղական իշխանությունների և գրողի ազգականների ու բարեկամների կողմից։ Տեղական իշխանությունների կողմից որոնումները կրել են ձևական, բյուրոկրատական բնույթ, առանց անհրաժեշտ եռանդի ու արտացավության և անցել են ապարդյուն։ Գավառապետ Բլավատցկին Աբովյանի անհետացման 24-րդ օրը, ապրիլի 26-ին, փոխարքա իշխան Վորոնցովին զեկուցել է, որ Երևանի գավառական դպրոցի տեսչությունից ազատված կոլեգիական ասեսոր Աբովյանն ապրիլի 2-ի լուսաբացին մեկնել է հայտնի չէ թե ուր և անհետ կորել է։ Ըստ նրա տեղեկությունների, նա, անհետանալուց երեք օր առաջ, մատանջության մեջ է ընկած եղել, գրեթե չի կերել, քիչ է խոսել, շորերը չի հանել և «իբրև թե անքնությունից տանջվելիս է եղել»։

Այդ նույն ժամանակ ազգականներն ու բարեկամները, շարունակելով որոնման աշխատանքները, Ջանդիբասարի գավառակում, Արաքսի ափին, խորվիրապ վանքից ոչ հեռու, գտել են մի կմախք և մի կոշիկ։ Բժշկական քննությամբ պարզվել է, որ կմախքը «կանացի սեռի է» և երկար ժամանակ հողի տակ է մնացած եղել։ Կոշիկը Աբովյանի կինը համարել է ամուս-

նունը, իսկ Աբովյանի կոշկակարն ասել է, որ իր կարածը չէ։

...Գավառապետը, սրտանց ուրախ իր թշնամու անհետացման համար, չինովնիկական անտարբերությամբ «որոնման» աշխատանքները համարել է ավարտված և 1848 թ. հուլիսի 31-ին նյութերը հանձնել է Երևանի գավառական դատարանին, որը օգոստոսի 17-ին* քննելով գործը, վճռել է. «Կոլեգիալ ասեսոր Աբովյանի անհայտ բացակայության խնդիրը հետաձգել մինչև այն ժամանակ, երբ Աբովյանը կա՛մ ինքը կհայտնվի, կա՛մ նրա բացակայության հարցը ինքն իրեն կպարզվի. 2) մահվան դեպքը այն կնոջ, որի կմախքը գտնված է Արաքս գետի մոտ, հանձնել աստծու կամքին. 3) այդ կմախքից ոչ հեռու գտնված ճակավոր կոշիկը, որի Աբովյանին պատկանելը նրա կինը հաստատեց, այդ ցուցմունքը հաստատող տվյալների անբավարար լինելու հետևանքով, վերադարձնել տիկին Էմիլիա Աբով-

---

* «Դիվան»-ի II հատորում (էջ 271) ասված է թե գավառապետը նյութերը դատարան է հանձնել մայիսի 31-ին, իսկ դատարանը հիշյալ վճիռը արձակել է օգոստոսի 9-ին։ Առաջին դատան պարզապես սխալ է, գավառապետի թղթի վրա գրած է № 4444, 31 հուլիսի։ Երկրորդը թյուրիմացության հետևանք է։ Երևանի գավառական դատարանը 1848 թվի օգոստոսի 9-ին ծանոթացել է Աբովյանի անհայտ բացակայության մասին գավառապետի ներկայացրած նյութերին և որոշել է կազմել քրեական գործ ու ներկայացնել քննության՝ հետագա նիստերից մեկում։ Գործը քննվել է օգոստոսի 17-ի նիստում, որի արձանագրությունից էլ արովյանագետ Ե. Շահազիզը բերում է «վճիռը»։ Այս սխալը կրկնված է Ե. Շահազիզի կազմած և գրած մյուս աշխատություններում («Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 16։ «Խ. Աբովյանի կենսագրությունը», էջ 175), ինչպես և այդ մասին խոսող մյուս արովյանագետների աշխատություններում։

յանին. 4) սույն գործի համար տեղի գավառային դատախազին և քաղաքային բժշկին բաց թողնված ուղեղրամը, ընդամենը ութ ռուբլի հիսուներկու կոպեկ արծաթ դրամով, ընդունել դանձարանի հաշվին։ Սակայն սույն եզրակացությունը առանց ի կատար ածելու, իսկական գործի և նրանից հանված քաղվածքի հետ միասին, ներկայացնել Թիֆլիսի զինվորական նահանգապետ և քաղաքացիական մասի կառավարիչ պարոն գեներալ մայոր և կավալեր Երմոլով 2-րդի հայեցողությանը»[1]։

Չինովնիկական անսրտությունն ու թշնամանքը Աբովյանի նկատմամբ անշուշտ եղել է մեծ լուսավորչի անհետացման հանգամանքները չպարզելու պատճառներից գլխավորը։ Ցարական չինովնիկությունը և հայկական ռեակցիայի պարագլուխները ոչ միայն մահվան հասցրին Աբովյանին, այլև փորձեցին ծածկել նրա անհետացման հետքերը։ Վերջերս պարզվել է, որ Անդրկովկասյան դպրոցների վարչության արխիվում եղել է Աբովյանի մասին մի «գործ» հետևյալ վերնագրով. «О без вести пропавшем штатном смотрителе Эриванского училища Абовьяне и о назначении к исправлению должности смотрителя Туркестанова и о постройке мебели для сего училища»[2]։

Այս «գործը», սակայն, ինչպես երևում է, իբրև անպետք թղթակույտ դիտվելով, հետագայում ոչնչացվել է։ Ցարական անհոգի չինովնիկությունը, որ Աբովյանի

---

1 ՀՍՍՌ Կենտրոնական Պետարխիվ, Ֆոնդ № 64, էջ 102—103։ Նկատի ունենալով, որ «Դիվաճ»-ում այս փաստաթուղթը աղավաղված է, անհրաժեշտ համարեցինք այն բերել նոր թարգմանությամբ։

2 ՀՍՍՌ Գիտ. ակ. «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ)։ 1948, № 9, էջ 33։

անհայտ բացակայության և դավառական դպրոցի կահ-կարասու մասին նյութերը պահում էր միևնույն «գործ»-ում, չէր էլ կարող այլ կերպ վարվել։

Արովյանի «անհայտ բացակայությունը» տեղիք է տվել բազմաթիվ ենթադրությունների ու կարծիքների։ Ամենից տարածված կարծիքներից մեկն այն է եղել, թե Արովյանը վերջին օրերը իմանալով, որ Աշտարակեցին դժվել է* իր խոսքը (Արովյանին Ներսիսյան դպրոցում պաշտոնի նշանակելու մասին) իսոր հուսահատության մեջ իր «անձը մահու է տվել»։ Հուսահատությունից (ոչ, անպայման Աշտարակեցու հետ կապված պատմության պատճառով) ինքնասպանություն գործելու մասին եղած ենթադրության առաջին հեղինակները եղել են Արովյանին անձամբ ճանաչող Ֆ. Բոդենշտետը և Ստ. Նազարյանցը։

Եղել է նաև ենթադրություն, թե Արովյանին «սև կառետով» փախցրել են և Սիբիր աքսորել։ Այս ենթադրությունը նույնպես բավական տարածվել է և շատ կողմնակիցներ է ունեցել։ Հետաքրքրական է, որ տարիներ հետո Սեդրակ Տեր Սարգսենցի «Շահենն ի Սիպիր» վեպում (1871 թ. գրված) ևս Արովյանի անհետացման մասին այդ կարծիքն է հայտնվել։

Ամենից շատ տարածված այս երկու ենթադրությունների համար էլ Արովյանի ստեղծագործությունը և անձնական թղթերը բավական հիմքեր են տալիս։ «Վերք»-ում և ուրիշ գործերում Արովյանը հաճախ է հիշում, որ չկարողանալով իր ցանկացած չափով օգնել հայրե-

---

* Տակավին չի գտնվել որևէ փաստաթուղթ, որ ցույց տար թե Աշտարակեցին իսկապես չեղյալ է համարել իր հրավերը, ուստի խոսքը դժվելու մասին եղած կարծիքը, որքան էլ հավանական, այնուամենայնիվ մնում է իբրև ենթադրություն։

նակիցների կրթության և լուսավորության գործին և ենթարկվելով շարունակական հալածանքների, «բարեկամացել, հաշտվել է» մեռնելու մտքի հետ և հաճախ է մտածել «պլուխը մահու տալու» մասին։ Սիբիր աքսորելու վերսիայի համար ևս Աբովյանի ստեղծագործությունը և նամակները բավականին հիմքեր են տալիս։ Հայտնի է, որ Աբովյանի մշտական կոնֆլիկտը ցարական չինովնիկության և էջմիածնականների հետ նրան շարունակ ահի ու սարսափի մեջ է պահել. «Որ լսում էի՝ թե մեկ մարդի պատիժ տվին, յա բանդը քցեցին,— ասում է Աբովյանը «Թուրքի աղչիկը» պատմվածքում,— որ ասում էին՝ թե Ռուսաստանիցը մեծ մարդ ա եկել, որ մեր երկրի ահվալն քննի, իմանա, որ կուսակալիցը, յա նախարարիցը (մինիստրիցը) մեկ թուղթ էր գալիս, որ կառավարությունիցը (գներնկցիիցը) սորսոժը գիրքը կոնատակին աչքիս չէ՛ր երևում, էնպես էի սարսափում, կարծում, թե էս ա, իմ վերջի օրը հասել, մոտացել ա, իմ արած չարությունը լիս ընկել, Պետերբուրգ, Մոսկով, Թիֆլիս ինձանից գանգատով լցվել են, իմ բարեկամքը ինձանից ձեռք վերցրել, իմ թշնամիքը ինձ մատնել, ինձ պետք է՝ տանեն սաղ սաղ թաղեն, յա կախ տան»[1]։

Որ մեծ լուսավորիչն ու հայրենասերն իր հայրենիքում ենթարկվել է ցարական չինովնիկության մշտական հալածանքներին երևում է նաև անհետացումից վեց ամիս առաջ՝ 1847 թվի հոկտեմբերի 19-ին իր աշակերտներից մեկին գրած նամակից. «Կարծում էի ամեն սհաթ, թե Սիբիրն է իմ վերջը.— գրում է նա,— Սիբի-

---

1 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 4, էջ. 20—21։

րը մարդ աչքի առաջին ունենալիս էլ սե՛ր կդա միտքը. յա սիրելի, յա որդի»[1]։

Մեծ լուսավորչի անհայտ բացակայությունը խորպես վշտացրել է ժողովրդին և նա փորձել է այդ մասին իր բացատրությունները տալ,— «ժողովրդոց մտածմունքը» հայտնել։ Ըստ որում այդ «մտածմունքը» արտահայտվել է ամենատարբեր ենթադրությունների ու զրույցների ձևով։ Տակավին Աբովյանի անհետացման տարին մի անհայտ անձնավորություն, նրա աշակերտ Գ. Աքիմյանին դրած նամակում, Աբովյանի անհետացման մասին ժողովրդի ենթադրությունները հաղորդելուց հետո ավելացնում է. «...ոմոտ ունենք աստուծո, որ նորա բան չի գա (նրան բան չկա) և շատ մարդ նորան քոմակ (օգնող) ունի, և շատ չալիշ են գալիս (աշխատում են)... աստված ողորմած է. ամեն դիմաց մեզ աստված չի գորցնի»[2]։

Այս մեջբերումը ցույց է տալիս, որ Աբովյանը, հալածվելով ռեակցիայի պարագլուխների, ցարական չինովնիկության կողմից, միաժամանակ սիրելի է եղել ժողովրդին տակավին իր կենդանության օրով, այդ զրույցից երևում է, որ ժողովուրդն Աբովյանի անհետացումը համարել է շատ ծանր կորուստ և լավատեսությամբ է համակված եղել, թե նրան կգտնեն։

Հետագա տարիներին, երբ ավելի է դիտակցվել Աբովյանի դերը, երբ տպագրվել ու մասսայականացվել են Աբովյանի երկերը, ժողովուրդը, ճանաչելով էր մեծ որդուն, ավելի դառնորեն է զգացել այդ կորուստը և հորանոր զրույցներ ու ավանդություններ հյուսել Աբով-

---

1 «Դիվան Ե. Աբովյանի», հատ. 2, էջ 56։

2 Նույն տեղում, էջ 267—268։

յանի անձնավորության, նրա անհետացման մասին։ Այդ գրույցներում Արովյանը օժտված է բանության, շնամոլ և ժողովրդի շահերի պաշտպանի, նրա աշխատասիրության համար աննկուն ու անձնուրաց կերպով պայքարողի գծերով։ Ժողովուրդը սիրելի գրողի հետ է կապել նաև ցարիզմից ազատվելու իր ակնկալությունները։ Այդ դեպքում ժողովրդի համար կարևոր չէ այն, որ Արովյանն այդ մասին չհասավ, նա հայրենասեր է, բռնության, շնամոլի, ուրիշն և ցարիզմի, շնամոլի, ահա ժողովրդի սրամտաբանությունը։ Գրույցներից մեկում պատմվում է, թե Արովյանը թագավորի հետ գրազ է եկել («բաս մտել»), որ նրա ինքը բարձրանա Արարատի գագաթը, թագավորը հայերին ազատություն կտա և Արովյանը չկարողանալով բարձրանալ, վախից չի վերադառնում։ Մի այլ գրույցի մեջ պատմվում է, թե մեծ հայրենասերը ժողովրդին գրգռել է թագավորի դեմ, որի պատճառով էլ թագավորը բռնել է նրան և աքսորել Սիբիր։ «Սիբիրի խորքերում տեսել են նրան, սաստիկ ծերացած, սպիտակ մորուքը մինչև գոտին, բայց գեռ կրակով ու կյանքով լի, թեև չի ասել իր ինքնության մասին, բայց ճանաչել են շատերը, և երբ հարց են տվել նրան, թե ե՞րբ պիտի դառնաս հայրենիք՝ նա պատասխանել է. թե դատապարտված եմ ցմահ մնալու Սիբիրում. թեև շատ ծերացել եմ, բայց մինչև չտեսնեմ Հայաստանի ազատությունը, չեմ մեռնելու»[1]։

Այժմ դժվար է ասել, թե Արովյանի անհետացման մասին եղած երկու ամենից հավանական ենթադրություններից (ինքնասպանության և աքսորի) հետագայում որը կճշտվի, բայց որն էլ որ ճշտվի, ինչ նոր

---


1 Ավ. Իսահակյան, *Երկերի ժողովածու*, հատ. 4, 1951, էջ 113։

փաստաթղթեր էլ հայտնաբերվեն, մի բան այժմ խոսք որոշ ու հաստատ է— Աբովյանը, ինչպես և նրա ռուս մեծ ժամանակակիցներ Պուշկինն ու Բելինսկին, դարձավ նիկոլաևյան դաժան ռեակցիայի զոհը։

Գլուխ II

ԱԲՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

Պարսկական բարբարոսական լծից ազատվելը և Ռուսաստանին միանալը հայ ժողովրդի ազգային զարթոնքի սկիզբն էր։ Ֆիզիկական լիակատար բնաջնջման վտանգից ազատված ժողովուրդը Ռուսաստանին միանալով դուրս էր գալիս պատմական զարգացման լայն ճանապարհ, բայց այդ ճանապարհն անցնելը կապված էր մեծ դժվարությունների հետ։ Կուլտուրական զարգացման ուղիով ընթացող մյուս ժողովուրդներից ետ չմնալու, նրանց հասնելու համար պետք էր վերացնել պարսկական տիրապետության ժամանակաշրջանից ժառանգություն մնացած թանձր խավարն ու տգիտությունը։ Հնագույն ժամանակներում կուլտուրական մեծ արժեքներ ստեղծած ժողովուրդն այժմ խարխափում էր տգիտության ու խավարի մեջ, ժողովուրդը, սակայն, ինչպես ճիշտ կերպով հասկացել էր Աբովյանը, դրա մեջ հանցանք չուներ։ Հանցավոր էին օտար և հայրենի բռնակալները, եկեղեցին և հոգևորականությունը։



«Վիպք Հայոց»-ի վերջի էջերից մեկի անվանաթերթը։

Ժողովրդին թմրությունից սթափեցնելու և մյուս ժողովուրդների կուլտուրական առաջընթացին հասցնելու հիմնական միջոցը Աբովյանը համարում է լուսավորությունը. «Ի լուսաւորութենէ կանգնի ազգ ինչ, ի լուսաւորութենէ ելանեն ամենայն բարեբախտութիւնք...»[1]. այսպես է գրել նա տակավին 1832 թվին՝ Դորպատից ուղարկած նամակներից մեկում։

Ժողովրդին լուսավորելու համար, սակայն, պետք էր ընկճել հակառակորդների դիմադրությունը, իսկ հակառակորդները՝ հոգևորականությունը, վերնախավերը, ցարական բյուրոկրատիան ուժեղ էին ու անողոք։ «Յիմարք իշխեն իմաստնոց... Հայրենատեացք՝ հայրենասիրաց, մարմնապարարք՝ ողջախոհից»[2], այսպես է արտահայտվել Աբովյանը իր ժամանակաշրջանի մասին։ Բնական է, որ այդ պայմաններում նա պետք է կատաղի ու անհաշտ պայքարի մեջ մտներ հասարակության ռեակցիոն ուժերի դեմ։

Աբովյանը ծանր հալածանքների պայմաններում ծավալեց իր լուսավորական գործունեությունը, գրեց իր անմահ ստեղծագործությունները։

Մեծ գրողը հիանալիորեն հասկացել է իր գործունեության նպատակը, զարմանալի նպատակասլաց է նրա գրական-մանկավարժական գործունեությունը։ Նրա բոլոր գործերը գրված են մի հիմնական նպատակով՝ լուսավորել ժողովրդին, դաստիարակել նրան, սովորեցնել ապրել նոր շահադրդռություններով։ Աբովյանը գրականությունը դիտել է իբրև իր լուսավորական գործունեության ու թշնամիների դեմ մղվող պայքարի զենք։ Այս

---

1 «Վիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 38։

2 Նույն տեղում, էջ 39։

հիմնական խնդիրներն են ընկած նրա գրականագիտական հայացքների ու գրական ստեղծագործության հիմքում: Այդ էր պատճառը, որ հայ գրականությունը մինչև Աբովյանը երբեք այնքան մոտ ու հարազատ չէր եղել ժողովրդին, այնքան ներգործող դեր չէր ունեցել, այնքան հզոր զենք չէր եղել թշնամիների դեմ մղվող կռվում, որքան Աբովյանի ժամանակ:

Բազմակողմանի է մեծ լուսավորչի գործունեությունը: Նա հանդես եկավ կուլտուրայի ու դիտության ամենատարբեր բնագավառներում, գրեթե ամեն տեղ իր հետ բերելով նորություններ: Նա մեծ գրող է, բանաստեղծ, առակագիր, հրապարակախոս, լեզվագետ, պատմաբան, դիտնական, մանկավարժ, բանահավաք: Հայ նոր գրականության հիմնադիրը գրել է գրեթե բոլոր ժանրերով՝ վեպ, պատմվածք, ակնարկ, նովել, դրամա, կոմեդիա, առակ, բանաստեղծություն, քառյակ, պոեմ, օրագրություն, նամականի, հրապարակախոսական հոդված, ճառ, ուղեգրական ակնարկ, դեղարվեստական ձևով շարադրված գիտական-պատմական դրույց և այլն: Դրանցից զատ Աբովյանը կազմել է դպրոցական դասագրքեր, հավաքել, մշակել ու օգտագործել է հայ և հարևան ժողովուրդների ֆոլկլորը, կատարել է թարգմանություններ ու փոխադրություններ ռուս, անտիկ և եվրոպական գրականությունից: Այս արտակարգ բեղունությունը զարմանք է շարժում մանավանդ այն պատճառով, որ կենդանության օրոք նա չի տեսել իր նշանավոր գործերից որևէ մեկը հրատարակված: Աբովյանի հարուստ ժառանգությունից հեղինակի կենդանության օրոք մամուլում տպվել են «Ադելաիդա» դրամայի իր կատարած թարգմանության մի մասը և մի երկու հոդված:

Աբովյանն իր գործադրած գրեթե բոլոր ժանրերի մեջ էլ նոր խոսք է ասել, նորություններ բերել, բայց դրանց մեջ իր խաղացած դերով ամենից նշանակալիցը, իհարկե, «Վերք Հայաստանի» (1840 թ.) դարագլուխ կազմող վեպն է: Դա հայ նոր գրականության մեջ առաջին վեպն է, մի արտակարգ մեծ ու բացառիկ երևույթ ըստ ամենայնի, և՛ բովանդակությամբ, և՛ լեզվով, և՛ ժանրով: Կյանքի լայն ու խորն ընդգրկումը, թեմատիկայի հրատապությունը և կենսականությունը, առաջավոր-դեմոկրատական հայացքներով հագեցած լինելն ու դեղարվեստական բարձր վարպետությունը «Վերք»-ի բնորոշ հատկանիշներն են: Դրանցով նա նոր ուղի հարթեց հայ գրականության զարգացման համար, լուսավորեց այդ ուղին: «Վերք»-ը մահացու հարված տվեց մխիթարյանական, կլասիցիստական գրականության կողմնակիցներին, գրաբարի պաշտպաններին՝ հանուն նոր, ժողովրդի համար ստեղծվող գրականության: Այս իմաստով հասկանալի է այն աճող հմայքը, որ ունեցել է ու շարունակում է ունենալ նա: Հայտնի է, որ «Վերք»-ը հեղինակի մահվանից հետո, 50-ական թվականներին, արտագրված ձեռքից ձեռք է անցել, հասել է մինչև Դորպատ: Հայ գրականության պատմության մեջ բացառիկ երևույթ է, երբ գիրքը կյանք է մտնում մինչև տպագրվելը: Ինչ խոսք, որ տպագրությունից (1858) հետո անհամեմատ բարձրացավ ու մեծացավ «Վերք»-ի նշանակությունը: Այս բոլորը նկատի ունենալով, հասկանալի է դառնում, թե ինչու 1908 թվին Հ. Թումանյանն առաջարկում էր տոնել «Վերք»-ի տպագրման — հայ նոր գրականության հիմնադրման հիանամյակը:

Մեծ հայրենասերին ու դեմոկրատին հուզել են հայ

ժողովրդի բախտի հետ կապված բոլոր հարցերը՝ քաղաքական, սոցիալական, կուլտուրական: «Վերք»-ում նկարագրելով պարսկական տիրապետության դժոխքը և ցնծությամբ ողջունելով Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Աբովյանը միաժամանակ (հատկապես առաջաբանում) քննում է հայ ժողովրդի կուլտուրայի ու լուսավորության հարցերը, որի խորին ցավով արձանագրում ժողովրդի կուլտուրական հետամնացության, զարդացման բնական ուղուց դուրս մղված լինելու փաստը և կռվի կոչում այդ ամենի դեմ: Իր այդ անմահընթաց արժանիքների համար «Վերք»-ի առաջաբանը դարձավ հայ նոր գրականության և աշխարհաբար գրական լեզվի մանիֆեստը: Այն միաժամանակ դեմոկրատական գրականագիտության սկզբունքների պաշտպանության առաջին համարձակ փորձն է հայ գրականության պատմության մեջ:

Աբովյանի ժամանակ պաշտոնական կղերա-ֆեոդալական մտայնության պայմաններում տպագրվում էին գրեթե միայն կրոնական-աստվածաբանական գրքեր, զանազան սրբերի կենսագրություններ: Ըստ որում գրականության լեզուն հարյուրամյակներ առաջ ժողովրդից կտրված, կենդանի լեզու լինելուց դադարած և միայն իբրև «գրոց լեզու» իր գոյությունը պահած անհասկանալի գրաբարն էր: Ժողովրդի և գրականության միջև կանգնեցված էր չինական պարիսպ:

Աբովյանը հասկացավ կյանքի պահանջը և խիզախ մարտահրավեր նետեց հակառակորդներին: Իր առաջադրած հիմնական սկզբունքների պաշտպանությանը նվիրված առաջին երկը Աբովյանը գրեց 30-ական թվականներին («Նախաշավիղ»-ը և սրան կցված «Դիտողություններ նոր հայերեն լեզվի տարրական գրքի նպա-

տակների մասին» բացատրականը)։ «Նախաշափղ»-ը ըստ էության Աբովյանի առաջին վճռական ելույթն էր, լուսավորական-դեմոկրատական աշխարհայացքի հզոր գրոհը կղերա-ֆեոդալական գաղափարախոսության, ժողովրդից կտրված, նրան խորթ գրականության ու գրաբար լեզվի դեմ։ Հայ հոգևորականությունը «ինչպես նրա դասակիցները մյուս ազգերի մոտ,— գրում է Աբովյանը «Դիտողություններ»-ում,— սկսել է այդ լեզուն (գրաբարը—Վ. Պ.) էգոիստորեն դարձնել եգիպտական գաղտնիք, որպեսզի ժողովրդի աչքում ավելի դիրք ու ակնածություն ձեռք բերի»։ Այդ նույն հոգևորականությունը ստեղծել է մի գրականություն, որը ոչ մի կապ չունի ժողովրդի հոգու և մտքի հետ. «...հոգևորականները,—շարունակում է Աբովյանը,— գրել և մշակել են այնպիսի բաներ, որ ոչ մի կապ չունի ժողովրդի և ժամանակի ոգու հետ։ Նրանց ամբողջ հոգևոր գործունեության ուղն ու ծուծը կազմում են աստվածաբանական մտքերը, նույնիսկ պատմության գրքերում կամ այլ բովանդակության երկերում նրանք ամեն ինչ փորձում են վերածել աստվածաբանության»[1]։

Իր ողջ ստեղծագործությամբ, իր մանկավարժական պրակտիկայով Աբովյանը շարունակեց պայքարը գրականության գրաբար լեզվի և կրոնական բովանդակության դեմ։

«Վերք»-ի առաջաբանն սկսվում է մի շատ իմաստալից պատկերով, թե ինչպես որդիական սերը փշրել է Կրեստոս Թագավորի միամորիկ համր որդու լեզվի քսան տարվա փականքը՝ «բնության դրած զնջիլը» և նրան զորավիգ կանգնեցրել հորը, երբ նա (որդին)

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, էջ 46։

վերջինիս պլխի վերև տեսել է մերկացված սուրը։ Միամորիկ որդու վիճակն ապրել է նաև Աբովյանը. ժողովրդին նմանեցնելով օրհասական դրության մեջ գտնվող Կրետոսին, Աբովյանը իր վիճակն էլ նմանեցնում է որդեհատ սիրո զորությամբ լեզու առած նրա քաջ տարվա համր որդու վիճակին։ «Ո՛չ քաջ, երեսուն տարուց ավելի ա՝—գրում է Աբովյանը,— իմ ազիզ հե՛ր, ի՛մ սիրելի ազդ, որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթորկվում ա, գիշեր, ցերեկ լացն ու սուրը իմ աչքիցը, ա՛խն ու ո՛խն իմ բերնիցս չի պակսում, ա՛յ իմ բարյունակից բարեկամք, որ մեկ միտքս ու մուրազս ձեզ պատմեի ու հետո հողը մտնեի։

...Շատ անգամ մեկ Հայ տեսնելիս, ուզում էի՝ էլած շունչս էլ հանեմ, նրան տամ. բայց ա՛խ՝ լեզուս փա՛կ էր, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարճ. գանձ չունեի, որ դրծով ցույց տայի ուզածս, անունս մեծ չէր՝ որ ասածս տեղ հասնի, մեր դրքերն էլ գրաբառ, մեր լեզուն էլ անպատիվ, որ սրտիս հասրաթը խոսքով հայտնեի»[1]։ Իսկապես որ ծանր վիճակ է. հարկավոր է խոսել ազդի հետ, զարգացման բնական ճանապարհից դուրս մղված ժողովրդին արթնացնելու կոչ անել։ Բայց ինչպես այդ ասել. «ինչ լեզվով գրեմ»,— հարցնում է Աբովյանը։

Ժողովրդին, «հարիր հազարին» հասկանալի լինելու տեսակետից է Աբովյանը մոտենում գրաբարի և աշխարհաբարի հարցին։ Աբովյանը, ինչպես նաև հետագայում Նալբանդյանը, գրաբարը համարել են հարուստ ու մշակված լեզու և եթե այնուամենայնիվ նրանք

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 1—2։ Ընդգծումները բնագրումն են։

կուվում էին դրաբարի դեմ, ապա դրա պատճառն այն էր, որ այդ լեզուն չէր համապատասխանում ժողովրդի, ինչպես Նալբանդյանն է ասել, «մտքի կառուցվածքին», դարձել էր նրա (ժողովրդի) համար անհասկանալի։ Գրաբարը այլևս չի կարող հասարակության մեջ հաղորդակցման միջոցի դեր խաղալ, իսկ առանց այդ դերի լեզուն դադարում է լեզու լինելուց և մեռնում է։ Գրաբարը դարեր առաջ դադարել էր կենդանի խոսակցական լեզու լինելուց, նա մեռել էր։ Հարկավոր էր հաղորդակցման նոր միջոց, նոր լեզու. «Մտքերի փոխանակությունը,— ասում է ընկեր Ստալինը,— մշտական և կենսական անհրաժեշտություն է, որովհետև առանց դրան հնարավոր չէ կարգավորել մարդկանց համատեղ գործողությունները բնության ուժերի դեմ մղվող պայքարում, նյութական անհրաժեշտ բարիքների արտադրության համար մղվող պայքարում, հնարավոր չէ հաջողությունների հասնել հասարակության արտադրական գործունեության մեջ,— հետևաբար, հնարավոր չէ հասարակական արտադրության բուն գոյությունն իսկ։ Հետևաբար, առանց հասարակության համար հասկանալի և նրա անդամների համար ընդհանուր լեզվի հասարակությունը դադարեցնում է արտադրությունը, կազմալուծվում է և դադարում է որպես հասարակություն գոյություն ունենալուց։ Այդ իմաստով լեզուն հաղորդակցման գործիք լինելով, դրա հետ միասին հանդիսանում է հասարակության պայքարի և զարգացման գործիք»[1]։

Գրաբարը «հասարակության համար հասկանալի և

---

1 Ի. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», 1951, էջ 50—51։

նրա անդամների համար ընդհանուր» լեզու չէր, ուրեմն և չէր կարող լինել պայքարի ու զարգացման գործիք։ Այս տեսակետից մոտենալով հարցին պարզ է դառնում, որ պայքարը աշխարհաբարի համար Աբովյանի լուսավորական գործունեության ամենահիմնական հարցերից մեկն էր։ Աբովյանն իրավացի կերպով նշել է, որ գրաբարը դարձել է ժողովրդի զարգացմանն արգելակող պատճառ, գրաբարով չի կարելի ժողովրդին կրթել։

Գրաբար գրել նշանակում էր «սիրելի ազգի համար» չգրել, որովհետև «ազգը» նրան չէր հասկանա. «Թեկուզ Ռսերեն, Նեմեցերեն, յա Ֆռանցուզերեն գրած, թեկուզ գրաբառ՝ տասը՝ կըլի որ հասկանային, բայց հարիր հազարի համար՝ թեկուզ իմ գրածը, թեկուզ մեկ քամու ջաղաց։ Ախր որ ազգը էն լեզվովը չի՛ խոսում, էն լեզուն չի՛ հասկանում, սաքի հենց բերնիցդ էլ ոսկի վեր ածի՛ր, ո՞ւմ պետք է ասես»[1]։

Աբովյանը մի պահ տատանվում է «արտի հասրաթը» աշխարհաբար լեզվով հայտնել, որովհետև այն անպատիվ է համարվում գրաբարամոլ «գիտունների» կողմից։ Մյուս կողմից, սակայն, նա քաջ գիտի, որ ժողովուրդը գրաբար չի խոսում, չի հասկանում և չի սիրում։ Ո՞ր կողմը դառնալ. տեղի տալ արդյոք տիրող դարավոր տրադիցիային և, նոր լեզուն անպատիվ համարելով, գրել գրաբար՝ «տասը» հոգու համա՞ր, թե՞ ելնելով ժողովրդի շահերից, գրել աշխարհաբար լեզվով՝ «հարիր հազարի համար»— անտեսելով թե իրեն կծաղրեն*, կարհամարհեն։ Տրադիցիային դեմ գնա-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 4։

* «...ցավն էն ա, որ բազի գիտուն մարդ՝ որ մեկ դարդակ

լու, ժողովրդի համար գործելու նրա բուռն ցանկությունը հանդիպում էր կատաղի դիմադրության։ Անշուշտ արտակարգ առաջավոր միտք էր պետք անցյալ դարի 30—40-ական թվականներին, հայ իրականության պայմաններում, արտահայտելու այն տեսակետը, թե գրականությունը պետք է ժողովրդին ծառայի, նրա սեփականությունը լինի և ոչ թե մի քանի ընտրյալների. «Էսպես բաները մտածելով, օրս ու ամբոխ մաշվել էր։ Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ,— գրում է Աբովյանը։— Չէի իմանում՝ թե սրա չարեն ի՞նչ կըլի»[1]։

Գրաբարը դարձել է հատուկենտ մարդկանց, պահպանողական ու ռեակցիոն մտավորականության սեփականություն, որոնք նկատի ունենալով գրաբարի՝ ժողովրդի համար անհասկանալի լինելը, այն ծառայեցնում են իրենց նպատակներին, կուլտուրայից ժողովրդին հեռու պահելու համար։ Այդ հարցի հանճարեղ բացատրությունը տվել է ընկեր Ստալինը «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» գրքում։ Լեզուն, ասում է ընկեր Ստալինը, իբրև հաղորդակցման միջոց ծառայում է հասարակության բոլոր դասակարգերին և այդ իմաստով նա անտարբեր է դասակարգերի նկատմամբ, բայց մարդիկ, հասարակական դասերն ու դասակարգերը անտարբեր չեն լեզվի նկատմամբ, նրանք ձգտում են լեզուն ծառայեցնել իրենց շահերին։

Մերկացնելով գրաբարի կողմնակիցներին, Աբով-

Քասկիրա էլ, ո՛չ աշխարհաբառ, ո՛չ գրաբառ օրինավոր չի՛ կարող գրիլ, սաղմոսը կարդալիս էլ՝ շատ դիր ու բառ սաղ սաղ ա կուլ տալիս, նա էլ ա մարդի վրա խոսում։ Բերանն ապրի» (Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 289)։

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 3։

յանը ցույց էր տալիս թե ինչպես ռեակցիոն մտավորականության, մխիթարյան կղերամիտ «դիտուններին» համար ժողովրդին հասկանալի լեզվով դրելը դեհկուության նշան էր, իսկ անհասկանալի դրաբարով սխոլաստիկական դատողություններ անելը՝ դիտունության։

Այդ երևույթը հետագայում սպանիչ քննադատության ենթարկեց Մ. Նալբանդյանը. «...ասում են, որ պիտո է մարդ այնպիսի լեզվով խոսի,— դրում է նա,— որ դիմացի մարդը նորան չհասկանա, և որչափ խրթին ու մութը կըխոսեր, այնչափ արժանավոր և քանքարավոր էր հեղինակը։ Սոքա բնության կանոնին չհավանելով, որ դրել է մարդուս մեջ լեզու և բանականություն արդի զգացմունքն ընկերին հայտնելու մասին, յուրյանցից կանոն են հաստատել՝ թե պիտո էր խոսել այնպես, որ դժվար լիներ հասկանալ. ուրեմն ևթե դժվար հասկանալի խոսելը գովելը մի բան էր, բնավ չխոսելը ո՞րչափ լա»[1]։

Բնական է, որ մեծ լուսավորիչը և դեմոկրատը, իր ողջ կյանքի նպատակը ժողովրդին ծառայելու մեջ տեսնող Աբովյանը պետք է մերժեր իշխող տրադիցիան, որքան էլ այն դժվարություններին հետ կապված լիներ։

Աբովյանը մեր կուլտուրայի պատմության մեջ առաջին անգամ աշխարհաբար լեզվով դրելու պահանջը դրեց ու պաշտպանեց ժողովրդի շահերից ելնելով։ Ժողովրդի կյանքը արտացոլող, նրա երազանքներն ու խոհերն արտահայտող և նրա համար ստեղծված գրականությունը նրան հասկանալի լեզվով պետք է լինի. այս տեսակետն է պաշտպանում Աբովյանը։ «Ո՛ղ ինձ այսուհետև տեղետ կանչեն,— բացա-

---

1 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 410։

դանչում է նա,— լեզուս բաց ա էլել՝ ի՛մ ընտիր, ազիզ, ի՛մ սրտի սիրելական ազգ։ Բո՛ղ՝ տրամաբանություն դիտեցողը իրան համքյարի համար դրի, ես, քո կորած, շվարած որդին՝ քեզ համար»[1]։ «Քո լեզուն եմ լսել երեխությունիցս՝ իմ սիրելի ազգ,— գրում է Աբովյանը «Ադնես» պատմվածքի թարգմանությանը կցած առաջաբանում,— քո քաղցր լեզվովն ա սիրաս բաց էլել։ Լեզուն դարպակ բան չի, հոդին ա մարդիս։ Բո՛ղ դու հասկանաս, ու իմանաս, որ քո հետ խոսալը ինձ համար ավելի քաղցր ա, քանց մեծ մեծ գրաբառ կոտրատիլ, էլ սըրտումս դարդ չի մնալ։ Տասը հազարը բո՛ղ հասկանան ու կարդան, մեկ քանի ջուխտ ու կենդ խոսողի ասածին ու ծիծաղելուն գլուխս քաշ արած՝ մտիկ կանեմ։ Ամենի սրտին դիր գալ չի՛ ըլիլ»[2]։

Ու նա դրեց «հարիր հազարի» — հասարակ ժողովրդի համար։ Աշխարհաբար լեզվով գրած իր գեղարվեստական, դիտական ու մանկավարժական գործերով Աբովյանը բարձրացրեց այդ լեզվի հեղինակությունը, ցույց տվեց, որ աշխարհաբար լեզվով կարելի է արտահայտել մարդկային լավագույն մտքեր ու նրբին զգացմունքներ։ Աբովյանը քաջ գիտեր, որ դրանով իսկ նա կռվում էր հետամնացության ու սխոլաստիկայի դեմ, որ ժողովրդին հասկանալի գրականությունը կօգնի ժողովրդական մասսաների՝ առաջավոր հայացքներին հաղորդակից լինելուն, կբարձրացնի ժողովրդի ազգային ինքնագիտակցության աստիճանը, նրա հասարակական դերը։

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 6։

2 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, 1948, էջ 289։

Աբովյանն իրավացիորեն նկատում է, որ ուրիշ ժողովուրդները ևս, պատմական անհրաժեշտության առաջ տեղի տալով, թողել են իրենց հին, մեռած լեզուները և նոր լեզուն դարձրել գործածական. «Մի՞թե միայն հայերը պետք է մյուս ազգերից ետ մնան և թողնվեն հոգևկան խավարի այդպիսի սարսափական կապանքների մեջ»[1]:

Պաշտպանելով աշխարհաբար լեզվի գաղափարը, Աբովյանը նշում է, որ «իմաստն ու մեծությունը», «գանձն ու հարստությունը» չեն իրեն մղել դեպի այդ, այլ ժողովրդի նկատմամբ ունեցած ջերմ սերը: Նոր հայերեն լեզվի դասագրքի («Նախաշավիղ») նպատակների մասին տված բացատրության մեջ Աբովյանը գրում է, որ ոչ թե նորամուծության մոլությունը, այլ հայրենակիցների ընդհանուր բախտավորությունն է շահադրդռել իրեն դիմելու այդ քայլին. «Դեռ երիտասարդությունից եմ գնացել այս փշալից ճանապարհով,— գրում է նա,— և այժմ իմ կոչումը շատ պարզ ապացույցներ է տալիս դրա համար»[2]: «Որքան էլ նախապաշարմունքներն ու անհավատությունները առաջին փորձին որոշ չափով դեմ գնան, այնուամենայնիվ ճշմարտությունը և այդպիսի բարձր նպատակների ձգտումը կհաղթանակեն երջանիկ գալիքի համար»[3]:

Աբովյանը դիմում է ժողովրդին և խնդրում այդ պայքարի մեջ պաշտպանել իրեն. «Թե գիտուն, խելոք մարդիկ ինձ պախարակեն, դու էլա ինձ պահիր՝ սիրելի ազգ,

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, էջ 50:

2 Նույն տեղում, էջ 48:

3 Նույն տեղում, էջ 50:

չունքի իմ ուզածս էն ա, որ քեզ ծառայեմ, քեզ իմ կյանքս տամ, քանի շունչս բերնումս ա»[1]:

Իսկապես դա ավելորդ երկյուղ չէր: Աբովյանը ժողովրդի շահերին ծառայելով, ճիշտ որ շարունակ ենթարկվում էր «խելոք ու դիտուն» մարդկանց հալածանքներին:

Աբովյանը դիտեր, որ «Վերք»-ի լեզուն դեռ կատարյալ չէ, բայց նա ժողովրդից խնդրում է սիրել այդ լեզուն, ինչպես հայրն իր մանկան թոթովանքը, խոստանալով, որ հետո ավելի գրական լեզվով էլ կգրի: Աբովյանն այստեղ ևս ելել է ժողովրդի շահերից, նրան հասկանալի լինելու դիտակցությունից: Շուրջ երկու տասնամյակ հետո Նալբանդյանը, պաշտպանելով ժողովրդին հասկանալի լեզվով գրականություն ստեղծելու անհրաժեշտությունը, քննադատել է Ղ. Ալիշանի «Նահապետի անունով գրվածքը», որը «թեև աշխարհաբառ, բայց շատ է հաղթահարված հին լեզվից» կամ էլ խառնված է «շատ սակավ» գործածվող «տեղական բառերով»:

Նալբանդյանը պաշտպանում է «Վերք»-ի լեզուն: Նա հիմնականում դրական գնահատական տալով Փարիզում հրատարակվող «Արևմուտք» թերթի խմբագիր Ստեփան Ոսկանի հոդվածին, չի համաձայնում երբ նա «Վերք»-ը համարում է ռամիկների համար և ռամկի ոճով[2] գրված գործ: Ըստ որում Ստ. Ոսկանը դա համարում է թերություն. («իրեև գրական շենք մը [«Վերք»-ը—Վ. Պ.] չընծայվիր մեր առջև»): «Ռամկի համար և ռամկի ոճով գրված է այն», ասում է պարոնը: Համաձայն չեմ: Բո-

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 190:

2 «Արևմուտք», 1859, № 7:

լոր ազգի համար է գրված.— ասում է Նալբանդյանը,— այնտեղ կա ուսանելիք ոչ միայն շինականի համար, այլ և քաղաքացու, այլ և հայոց կիսատ-պռատ ուսումնականների համար ևս»[1]։ Մի կողմ թողնելով «Վերք»-ին տրված առհասարակ ճիշտ բնութագրականը, մեզ այստեղ հետաքրքրում է այն դնահատականը, որ Նալբանդյանը տվել է «Վերք»-ի լեզվին։ Հին և մեռած դրաբարը՝ «ազնվական» (ազնվականական դասի — Վ. Պ.) լեզու չէ, ասում է Նալբանդյանը,— ոչ էլ կենդանի ժողովրդական լեզուն «ռամկական, ինչպես մի քանի վայրիվերո մարդիկ ասում են, որոնց մեջ և Պ. Դյուրիի ֆրանսիացին, որ մեր ժողովրդական լեզուն և առհասարակ կենդանի հայկական խոսքը անվանում է jarqon»[2]։ Աբովյանի «Վերք»-ը գրված է կենդանի, ժողովրդական լեզվով։ Ճիշտ է, իհարկե, որ Աբովյանի լեզուն «շատ է հաղթահարված տեղական բարբառից» (Մ. Նալբանդյան), բայց այդ, ինչպես ասել ենք, արված է միանգամայն դիտակցաբար՝ «այդ բանում Աբովյանը ունեցել է յուր մասնավոր խորհուրդը...— ասում է Նալբանդյանը,— դրել այնպես, որ անկիրթ ժողովուրդը չկարծե թե գիրք է կարդում, այլ կարծե թե մի մարդ խոսում է յուր հետ»[3]։

Ասածից պարզ է դառնում, որ սխալ է այն կարծիքը, թե «Վերք»-ը գրված է զուտ բարբառով, այնպիսի լեզվով, ինչպես խոսում են Քանաքեռ գյուղում։ Այդ կարծիքը դժբախտաբար արտահայտվել է նաև սովե-

---

1 Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 1, էջ 280։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

տական աբովյանագիտության մեջ։ Ճշմարտությունն այն է, որ Աբովյանը Երևանի բարբառը ենթարկել է ստեղծագործական մշակման և ոչ թե պատճենել, նատուրալիստորեն վերարտադրել։ Երևանի բարբառի և «Վերք»-ի երկու վարիանտների համեմատությունը ցույց է տալիս, թե Աբովյանը ինչպիսի ջանասիրությամբ է աշխատել «Վերք»-ի լեզվի վրա, բարբառից վերցնելով ընդհանուրին հասկանալի շատ տարրեր և առհասարակ աշխատելով իր լեզուն դարձնել «հարիր հաղարին» հասկանալի ու մատչելի։ Այլ բան է, որ Աբովյանը, օգտագործելով ժողովրդական բառ ու բանը, ժողովրդական լեզվի հարստությունները, դրանց նմանությամբ ոճավորել է իր լեզուն։ Դուցե այդ է պատճառը, որ «Վերք»-ի լեզուն առաջին հայացքից զուտ բարբառի տպավորություն է թողնում։ Մինչդեռ «Վերք»-ում տեղ-տեղ բարբառը այնքան է մշակված, որ հեշտությամբ անցնում է գրեթե մաքուր գրական լեզվի։ Ահա մի օրինակ. «Բո՛ղ ինձ այսուհետև տգետ կանչեն, լեզուս բաց ա էլել՝ ի՛մ ընտիր, ազիզ, ի՛մ սրտի սիրեկան ազդ։ Բո՛ղ տրամաբանություն գիտեցողը իրան համքյարի համար գրի, ես, քո կորած, շվարած որդին՝ քեզ համար։

Ո՛վ թուր ունի, առաջ ի՛մ գլխին խփի, ի՛մ սիրտս խրի, ապա թե ո՛չ՝ քանի բերնումս լեզու կա, փորումս սիրտ, ես լեզվապատառ ձեն կտամ. «Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, Հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»»[1]։

Աբովյանը լեզվի զարգացումը կապում է ժողովրդի կուլտուրայի աստիճանի հետ, երբ բարձրանա ժողովրդի կրթական մակարդակը, այն ժամանակ հնարավոր կլինի նրա ձեռքը մաքուր գրական լեզվով գրած

---

1 Ս. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 6։

ներկեր ևս տալ, «իստակել» լեզուն։ Ավելի պարզ ասած, լեզվի զարդացումը դեպի դրականը պետք է համընթաց գնա ժողովրդի կրթական մակարդակի բարձրացման հետ, որովհետև «մեկ սղոց ընչանք երկար ժամանակ կրթվի ոչ, ուսման չհետևի,— գրում է Աբովյանը,— անկարելի ա թե նրա միտքը էնպես բացվի ու նրա գյորա բառեր հնարի»[1]։ Աբովյանը դեռ «Վերք»-ը գրելու շրջանում մշակած ուներ ավելի դրական լեզու, քան գրանով գրում էր։ «Վերք»-ից առաջ գրված «Նախաշավիղ»-ում կան ավելի մաքուր դրական լեզվի նմուշներ։ Ահա մի օրինակ. «Իսկույն մեկ աղքատ տղա առաջ էկավ, կայծակի պես ընկավ բոցի մեջը և կրակի շեղջը ոանահար անելով՝ գնաց երեխային հանեց և իշխանի մոտ բերեց։ «Բարեկամ,— ասաց իշխանը նրան գրկելով և փաթաթվելով,— դու այսօր այն գործը գործեցիր, որ քեզ ո՛չինչ վարձ չի՛ բավականանալ, բայց ա՛ռ էս փոքր գոմարը և քո աղքատության համար գործ դի՛ր»»[2]։ Նման կտորները և նամանավանդ Ռուսաստի «Նոր էլոիզա»-ից կատարած մի հատվածի թարգմանությունը ցույց են տալիս, որ Աբովյանի լեզուն, տակավին անցյալ դարի 30—40-ական թվականներին ավելի մշակված է եղել, քան տաղանդավոր հետո ստեղծագործող Շահազիզինը, Պատկանյանինը և մի քանի ուրիշ գրողներինը։ Այլ բան է, որ Աբովյանն իր գրական հիմնական երկերը չգրեց այդպիսի լեզվով։ Դա դիտակցական քայլ էր։ Դրա պատճառը, ինչպես նշել ենք, ժողովրդին առավել հասկանալի լինելու ցանկությունն էր։

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 98։

2 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, էջ 38։

ՎԷՊ

ՀԱՅԱՍՏԱՆԻ,

ԱՂՒ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

Հ[illegible]ՐԵՆ

ԹԻՖԼԻՍ:

Ի Տպարանի Ներսիսեան Գիւղից Հայոց
ընծայեցեալ յաշխատութիւն Ա. Վրդ. Գ[illegible]ոյ
Ա[illegible]ծրտունոյ

1858

ազնիւ Հայաստանի» վեպի առաջին հրատարակութեան
անվանաթերթը

Սակայն հարցը առաջին հերթին լեզվին չէր վերաբերում։ Անշուշտ իրավացի է Հ. Թումանյանը երբ գրում է, թե նոր գրականության առաջ գալու հետ է առաջանում լեզվի խնդիրը, գրաբարի և աշխարհաբարի պայքարը։ Պաշտպանելով ժողովրդին հասկանալի լեզվի դատը, Աբովյանը նույն կրքոտությամբ պայքարել է գրականության աշխարհիկ բովանդակության համար։ Նա իր գրական-մանկավարժական պրակտիկայից եկել էր այն ճիշտ տեսակետին, որ աշխարհիկ բովանդակությամբ գրականություն կարելի է ստեղծել միայն ժողովրդին հասկանալի լեզվով։ Աբովյանը խոստովանել է, որ գրաբարը երկար ժամանակ «փակել, բխովել է» իր միտքը, սառեցրել ստեղծագործական ավյունը։

«Վերք»-ում Աբովյանը պատմում է, որ աշակերտների ձեռքը ինչ հայերեն գիրք տալիս էր, չէին հասկանում, նա բարկանում է, որ օտար լեզվով գրած գրքերը աշակերտների անմեղ հոգուն ավելի են «դիր դալիս»։ Սակայն ինքը Աբովյանն էլ տալիս է այդ երևույթի միանգամայն ճիշտ բացատրությունը։ Այդ լեզուներով գրված գրքերում՝ աշակերտները կարդում են «սրտի բաներ»— սիրո, բարեկամության, հայրենասիրության, քաջության մասին, նշանավոր մարդկանց գործերի մասին. «Ո՞վ չի՛ ուզիլ լսիլ՝ թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվն ի՞նչ զատ են,— գրում է Աբովյանը,— բայց մեր լեզվումը՝ թե էսպես բաներ ըլին, թո՛ղ՝ աչքս հաննեն էլ ընչո՞վ էրեխին քո լեզուն սիրիլ տաս»[1]։ Աբովյանն իր հանճարի ամբողջ ուժով զգաց ու հասկացավ, որ հարցը միայն լեզվին չի վերաբերում, այլ ամենից առաջ՝

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 2։

բովանդակությանը, սրտի բաներ գրելուն, աշխարհիկ թեմատիկայի պահանջին։ Հայ գրականության մեջ չկան «սրտի բաներ»։ «...Ի՞նչ կա եկեղեցու վրա յա, աստծու ու սրբերի»— բողոքում է Աբովյանը։ Նա քաջ գիտեր, որ կրոնական բովանդակությամբ գրքերը, եկեղեցական ողբերն ու շարականները, եթե դրանց հեղինակները նույնիսկ շնորհալիները և Նարեկացիները լինեն, ժողովուրդը չի ընդունում ոչ միայն, և ոչ այնքան նրանց գրաբար լեզվի, որքան կրոնական բովանդակության պատճառով։

Հայտնի է, որ հայ գրականության մեջ մինչև Աբովյանը արծարծվել են աշխարհիկ մոտիվներ։ Սկսած 10-րդ դարից մենք ունենք աշխարհիկ բովանդակությամբ գրված բանաստեղծություններ, առակներ, նովելներ։ Այդ տեսակետից նշանավոր է մանավանդ մեր 13—18 դարերի տաղերգությունը։ Հակադրվելով եկեղեցու՝ մարմնականը մեղանչելի համարող վարդապետությանը, այդ տաղերգուները երգել ու գովերգել են իրական կյանքը, բնության գեղեցկությունները, սերը, արծարծել են սոցիալական և քաղաքական մոտիվներ։ Սակայն մեր միջին դարերի գրականությունը մինչև 19-րդ դարի քառասնական թվականները լավ հայտնի չէր ո՛չ Աբովյանին, ո՛չ էլ մանավանդ նրա ժամանակակիցներին։ Այդ գրականությունը չէր տպագրվում, չէր հասնում ժողովրդին։ Այս հարցում մասնավորաբար կատաղի ֆանատիզմ էր հանդես բերում Մխիթարյան միաբանությունը։ Նա պայքարում էր ինչպես աշխարհաբար լեզվի, այնպես էլ գրականության բովանդակության աշխարհիկացման դեմ։ Հարցն ավելի պարզ կդառնա, եթե նկատի ունենանք, որ հայկական կլասիցիզմի ներկայացուցիչները դերազանցապես հոգևո-

բականներ էին և պատկանում էին Մխիթարյան միաբանությանը։

Աբովյանը «Պարապ վախտի խաղալիք» գործում սպանիչ ծաղրի է ենթարկել մխիթարյաններին, մերկացրել նրանց սխոլաստիկական, կյանքի պահանջներին չհամապատասխանող «վարդապետությունը».

Մեկը ունքերը ամպի պես կիտած՝
Աշխարքի բհամ գալն էր նդ պատմում.
Մեկը քիթ ու նոթ քացախացրած՝
Լռվի դուս գալն էր մեկնում, բայց անում։
... Ձախակողմն էլ մեկ ուռած եղի գլուխ՝
Հով տալով ձգվել՝ մղում էր շոր ղուղն,
Թև աշխարքիս վերջն ի՞նչ պետք է ըլի,
Էլ չէր հարցնում՝ թե նեղկա վախտի
Բանն ի՞նչպես կըլի, ու չէ՛ր էլ դիտում։[1]

Աբովյանին խորապես վիրավորել է այն թյուր կարծիքը, թե հայ ժողովուրդը «օրինաւոր բանաստեղծութիւն» չունի։ «Ուրուպացիք զարմանան, թէ Հայք չունին օրինաւոր բանաստեղծութիւն։ Միթէ այս Հոգի օտա՞ր էր նոցա. քա՛վ լիցի»,— գրում է Աբովյանը դերմանացի լեզվաբան Պետերմանին՝ 1835 թվին և չկարողանալով վկայակոչել մեր անցյալ գրականության փայլուն օրինակները (որոնք, ինչպես ասացինք, մեծ մասամբ թաղված էին անհայտության մեջ), նա իբրև ապացույց այն բանի, թե հայ ժողովուրդն ունի օրինավոր բանաստեղծություն, գրում է. «...Այս յորդութիւն. այս անհուն շեղջ միանշան բառից՝ որով յայտնեն նոքա զգացումն իւրեանց, զոր օրինակ՝ զխնդութիւն, զսըրտ-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 251—252։

մութիւն, զսէր, զզանազան պատկերս և ներգործութիւնս բնութեան, այս բարդութիւն բաւական ապացոյց են բանաստեղծական հոգւոյ նոցա»։

Այնուհետև, շարունակության մեջ, Աբովյանն փորձում է բացատրել, թե ինչու հապա չի զարգացել հայ աշխարհիկ գրականությունը, օրինավոր բանաստեղծությունը. «...այլ ասիտո՛ս, զի այս ամենայն բարիք միմիայն ի ձեռս աբեղայից և կրօնաւորաց մնացին, որք արհամարհելով զկեանս եւ զաշխարհ, արհամարհեցին եւ անարգեցին զայն ամենայն, որ բնական է մարդոյ եւ աշխարհի»[1]։ Հոգևորականությունը ծաղրել է այն ամենը, ինչ «բանաստեղծական իմաստ ու զգացմունք ունի, որպես իր դասի համար անվայել ու գռեհիկ բան»[2]։

Հայ ժողովրդի արժանապատվության նախանձախնդիր Աբովյանին շատ է վիրավորել մեր ժողովրդի մասին հայտնված սխալ կարծիքը։ «Վերք»-ի առաջաբանում անդրադառնալով այդ հարցին, նա գրել է. «Է՛ս հո էս՝ Եվրոպիումն էլ որ չէի կարդում բազի գրքերում, թե Հայ ազգը պետք է՝ որ սիրտ չի՛ ունեցած ըլի, որ էնքան բանները դլխովն անց են կացել, մեկ մարդ էլա չի՛ դուս եկել, որ մեկ սրտի բան գրի»[3]։

Աբովյանը հերքում է այդ կարծիքը։ Լավ գիտեմ, որ մեր ժողովուրդը այնպես չէ, ինչպես նրանք ասում են, պնդում է նա, մեզանում էս եղել են և կան շատ

---

1 «Դիվան Ե. Աբովյանի», հատ. 1, էջ 48։

2 Ե. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, էջ 47։

3 Ե. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 2—3։

կտրիճ մարդիկ. սեր, բարեկամություն, քաջություն հասկացողությունները հարազատ են մեր ժողովրդին. «Գեղըցոնց սիրտն էլ ա լիքը էսպես մտքերով», առակ, «մասսալա», սուր-սուր խոսք մեր գյուղացիները հազարներով գիտեն, մենք էլ հայտնի աշուղներ, շնորհալի մարդիկ շատ ենք ունեցել և ունենք։

Աբովյանը սխալ է համարում նաև այն կարծիքը, թե հայ ժողովուրդը ուսումնասեր չի, «կարդալը նրա համար գին չունի»։ Հայ ժողովուրդը թեև դարեր շարունակ ապրել է ստրկական կապանքների մեջ, սակայն չի բթացել նրա՝ «դևպի կրթություն ու կատարելագործություն խոյացող ոգին», հայերի մոտ նույնիսկ առած է դարձել. «ով գրել կարդալ չգիտե — նա կես մարդ է»[1]։

Ժողովուրդը սիրում է կարդալ, ուսումնասեր է, ապրում է աշխարհիկ կյանքով ու հետաքրքրություններով, ասում է Աբովյանը, միայն թե գրականության մեջ այդ չի արտացոլվում, գրականությունը հեռու է ժողովրդից, չի արտահայտում նրա մտքերն ու զգացմունքները։ Աբովյանը պահանջում է կյանք, ժողովուրդ բերել գրականության մեջ։ Բնորոշ է, որ Մ. Նալբանդյանը տակավին իր առաջին գործերից մեկում հերքել է հայ ժողովրդի անուսումնասիրության մասին եղած զրպարտությունը։ Մի այլ տեղ, ավելի հանգամանորեն խոսելով այդ մասին, Նալբանդյանը գտնում է, որ ոչ թե ժողովուրդն է անգրասեր, այլ գրականությունն է սխոլաստիկական, հակաժողովրդական։ Ժողովուրդը ապրում է նոր կյանքով ու շահագրգռու-

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 49։

թյուններով, ասում է Նալբանդյանը, նա կապված է իր ժամանակի հետ, իսկ դրողները իրենց մտածողությամբ և լեզվով աշխատում են ետ դնալ, դուրս չդալ չորրորդ ու հինգերորդ դարերի մտածողության և լեզվի սահմաններից. «Քանի որ մեր մատենագրական գործունեությունը փակված է այն նեղսիրտ և դարաւոր հնության սահմանի մեջ, քանի որ տասն և ինն դարու հեղինակքը չորրորդ և հինգերորդ դարու լեզվով խոսելով, ստիպում են ժողովրդին ևս մոռանալ XIX դարը, մոռանալ շրջապատող հանդամանքները և ետ դնալ, հետանալ մինչև V դարը, ես իմ կողմից կարելի է մեղանչում եմ... կատարյալ իրավունք կը տամ ժողովրդի անդրասիրությանը»[1]:

Ժողովրդի անդրասիրության մասին խոսող մխիթարյան, կլասիցիստական ուղղության ներկայացուցիչները իրենց հանցանքը փորձում են ժողովրդի վրա դնել: Մխիթարյանների «բարոզած» և ստեղծած դրականությունը, ասում է Նալբանդյանը, «աղդի հոգու բխվածքը» չէ, այն կտրված է ժողովրդից: Ժողովուրդը սիրում է, ինչպես Աբովյանն է ասել, սրտի բան, իրեն հարազատ ու մատչելի դրականություն, դրա համար է, որ նա ձեռնե-ձեռ է ման ածում «Ռոպենսոնի պատմությունը», սիրով, արտակարդ հափշտակությամբ է լսում աշուղներին: Աբովյանը, ուսումնասիրելով ժողովրդի հաշակն ու հետաքրքրությունները, նկատել է այդ հանդամանքը և իր դրական հայացքների ու պրակտիկայի հիմքում դրել է ժողովրդին հասկանալի, նրա կյանքն արտացոլող դրականություն ստեղծելու խնդիրը.

---

1 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 63:

«...Միտք արի, միտք արի, մեկ օր էլ ասացի ինձ ու ինձ, արի՛ քո քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն ծալի՛ր, ղրաղ դի՛ր ու մեկ աշըղ էլ դու դառ, ինչ կըլի-կըլի, խանչալիդ քարը հո վեր չի՛ ընկնիլ. դառ վարաղդ հո չի՛ դնալ»[1]:

Ըստ որում աշուղ դառնալու այդ վճռի մեջ ենթադրվում է և աշխարհիկ թեմաներ արծարծել և ժողովրդին հասկանալի լեզվով գրել: Աբովյանն ուղղակի ասում է, որ նրա առջևից Կրեսոսի նման փախչողը հայոց լեզուն էր, իսկ նրա երեսուն տարվա փակ բերանը բացողը՝ աշխարհիկ թեման, աշխարհիկ գրականության անհրաժեշտության գիտակցումը: Աբովյանը հիանալի հասկանում էր, որ միայն այդպիսի գրականության միջոցով կարելի է ժողովրդին մոտեցնել գրականությանը, կռվել նրա հետամնացության դեմ: Ըստ որում Աբովյանը նույնիսկ թվում է թեմաներ՝ սեր, բարեկամություն, հայրենասիրություն, քաջություն, երեվելի մարդկանց գործեր և այլն:

Աբովյանն, իբրև դեմոկրատ գրող, պահանջում էր գրականության մեջ ժողովրդի կյանքը, նրա վիճակն արտացոլել, ժողովրդի ցանկություններն ու իղձերն արտահայտող հերոսի խարակտեր կերտել: Ըստ որում Աբովյանը ոչ միայն պահանջում էր, այլև ինքը առաջինը եղավ, որ ստեղծագործեց այդ պահանջների ոգով: Այդ Աբովյանի պատմական մեծագույն ծառայությունն է: Գեղարվեստական երկի արժեքը որոշող ամենից կարևոր հարցն այն է, թե գրողը որքան խորն ու բազմակողմանի է ընդգրկում կյանքը, որքան ճիշտ է արտացոլում այն: Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն իր

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 4:

ընդգրկած ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական, տնտեսական ու սոցիալական վիճակի, ժողովրդի խոհերի ու ապրումների, նրա կյանքի զարմանալի խոր ու հարազատ վերարտադրությունն է։ Եվ հենց դրանով՝ իր էսթետիկական հայացքներով ու գրական պրակտիկայով Աբովյանը ճանապարհ է ցույց տվել մեր հետագա սերնդի գրողներին, լուսավորել հայ նոր գրականության ուղին։

Իր սկսած գործի արդարացիության, իր պատմական դերի դժվարության գիտակցումը ոգեշնչում էր նրան։ Աբովյանը կռվի էր ելնում գիտակցելով, որ այն դժվարին ու ծանր է լինելու, որ այն անձնազոհություն է պահանջում։ «Ոչ մի դժվարություն չի կարող վախեցնել ինձ և շեղել իմ նպատակից,— ասում է նա,— ես ուխտ եմ անում մինչև շունչս փչելը լինել ազգի հավատարիմ որդի»[1]։

Աբովյանին «դրամանն ու կայծակը» չեն սարսափեցնում, նա գիտի, որ մեծ գործերը մեծ զոհողությունների գնով են լինում. «Հալբաթ մեկ օր էլ արև դուս կգա, էն վախտն կիմանան, թե ուզածդ ի՞նչ ա»[2],— պայծառ հավատով ու լավատեսությամբ բացագանչում է Աբովյանը։

---

1 «Դիվան Ե. Աբովյանի», հատ. 2, էջ 23։

2 Ե. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 191։

Գլուխ III

ԱԲՈՎՅԱՆԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

«Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի առաջաբանում պատմելով «Վերք Հայաստանի» վեպի շատ համառոտ բովանդակությունը, Աբովյանն ասում է, թե «ընթանով կարելի է իմանալ էն ժամանակվա մեր աշխարքի հալը»։ Նույն բանը նկատել է նաև ռևոլուցիոն դեմոկրատ Մ. Նալբանդյանը։ «Վերք»-ը, ասում է նա, «ազգային բանաստեղծության մի հարազատ գաղափար է», նրա մեջ «մարմին է առել... ազգի ներկա վիճակը»։ Ո՞րն էր Հայաստանի այն ժամանակվա «հալը» կամ՝ «ազգի վիճակը»։ «Վերք»-ում պատկերված է 19-րդ դարի առաջին տասնամյակների հայ իրականությունը, հայ ժողովրդի պատմության ամենածանր շրջաններից մեկը։ Ժողովուրդը հեծում էր խանական Պարսկաստանի և «ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական աստիճանի վրա գտնվող» (Մարքս) սուլթանական Թուրքիայի բռնակալական իշխանությունների տակ։ Թուրքիան և Պարսկաստանը, ապրելով տնտեսական և քաղաքական դեգրադացիա, հետադիմական դեր էին խաղում իրենց տիրապետության տակ գտնվող ժո-

ղովուրդների կյանքում։ Իրանո-թուրքական ավազակային արշավանքների և ֆեոդալական բազմաթիվ պատերազմների հետևանքով կրակի էին մատնվում հայկական քաղաքներն ու գյուղերը, բնաջնջվում էր աշխատավոր ժողովուրդը, ոչնչանում նրա ստեղծած կուլտուրան։ Արևելյան Հայաստանում իշխում էր պարսկական վայրագ ռեժիմն ու կամայականությունը։ Սարդարի կամքն ու քմահաճույքն օրենք էր։ Երևանի սարդար Հյուսեին խանը ռուս-պարսկական պատերազմի նախօրյակին դահճի ցինիկությամբ հայտարարեց թե ինքը հայերին կհասցնի այնպիսի վիճակի, որ նրանց յուրաքանչյուր յոթը ընտանիքին մնա մի պղինձ, այն էլ ծակ[1]։ Աբովյանը ցնցող պատկերներով է նկարագրել հայերի անասելիորեն ծանր վիճակը. «Աղչիկն ասես՝ քաշում էին, տղեն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում։ Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը, ո՛չ օղլուշաղը»[2]։ «Ղուշը գլխըններովն անց կենալիս՝ վեր էին քցում, թերռում, պլոկում— ասված է պարսկական գինվորների մասին,— մարդ չէ՛ր կարում՝ տեղիցը եռա»[3]։ Նկարագրելով ռուս-պարսկական պատերազմի կապակցությամբ հայերին բռնի կերպով Պարսկաստան գաղթեցնելու հետ կապված դաժանությունները, Աբովյանը գրում է. «Երանի՛ նրան՝ որ էսպես բան ո՛չ տեսել, լսել ա, ո՛չ էլ կտեսնի, կլսի. բայց

---

1 И. Шопен, Исторический памятник состояния армянской области в эпоху ея присоединения к российской империи, СПБ. *1852*, стр. *874*.

2 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 38։*

3 *Նույն տեղում, էջ 86։*

մեր ողորմելի ազգը՝ հազար անգամ ա տեսել, լսել, քաշել։ Քար չկա մեր երկրումը, քոլ չկա, որ Հայի արնով ներկած չըլի»[1]։

Աբովյանը սոսկումով ու զզվանքով է նկարագրում պարսկական բռնակալության սիմվոլ, հայ և ադրբեջանական աշխատավոր ժողովրդի արյունով շաղախված «Հազար գլխանի դև» Երևանի բերդը. «Էն տեղը (բերդի շրջակայքը—Վ. Պ.) ...ցերեկը, օրը ճաշին էլ՝ ղուշն իր թևովը մոտանալիս՝ սարսափում էր, ուր տեղ որ քար ու հող՝ արնի հոտը մարդի քյալլում էին ցցում»[2]— ասում է նա «Առաջին սերը» պատմվածքում»։

Սակայն հեշտ չէր ոչնչացնել ժողովրդին, ժողովուրդները և ազգերը, ինչպես սովորեցնում է լենինիզմը, օժտված են ասիմիլյացիային դիմադրելու արտակարգ կայունությամբ ու հզորությամբ։ Հակառակ անօրինակ բռնություններին հայ աշխատավոր ժողովուրդը բազմիցս զենք էր բարձրացրել պարսկական և թուրքական զավթիչների դեմ ու հերոսաբար կռվել իր ազատության համար։ Մի բան, սակայն, անկասկած էր, փոքրիկ Հայաստանը միայն սեփական ուժերով չէր կարող ազատվել սարսափելի լծից, իսկ մնալ այդ լծի տակ, կնշանակեր ժողովուրդը ենթարկել ֆիզիկական լիակատար բնաջնջման վտանգին։ Ուստի դեռ շատ վաղուց արծարծվել էր մի հզոր պետության հովանավորության տակ անցնելու հարցը։ Իրոք այդպիսի պետություն հայրենիքի փրկության մասին մտածող հեռատես մարդիկ նկատի էին ունեցել Ռուսաստանը։ Այդ հարցը նոր թափով վերարծարծվեց մանավանդ, երբ 19-րդ դարի առա-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 88։

2 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 8։

ջին տասնամյակում Արևմտյան Անդրկովկասը միացվեց Ռուսաստանին։ Անգլիայի՝ Մերձավոր և Միջին Արևելքի նկատմամբ միահնծան տիրապետություն հաստատելու պլանները տապալելու և Արևմտյան վրաստանի սահմանների անվտանգությունը ապահովելու համար ցարիզմն էլ ցանկանում էր Հայաստանը միացնել Ռուսաստանին։ Ըստ որում անգլիական դիպլոմատիան աղավնու անմեղության նմանվելու ցանկությամբ աշխատում էր իր քաղաքականությունը ներկայացնել իբրև ոսոկ անգլիական շահերի և Պարսկաստանի ու Թուրքիայի պաշտպանություն «ռուսական ագրեսիայից»։ Հակառակ հավաստիացումներին, Անգլիան, ինչպես նաև Ֆրանսիան, փաստորեն օգնում էին Իրանին և Թուրքիային, որպեսզի նրանք ամրացնեն իրենց տիրապետությունը Հայաստանում։

Ժողովրդի ջերմ ցանկությունն էր անցնել Ռուսաստանի հովանավորության տակ. «Տե՛ր աստված՝ դու մեր Ռուս թագավորի սիրտը ուհմ քցես, որ գա, մեզ ազատի՛, ընչանք մահ մի՛ տար մեզ, մինչև նրանց երեսը տեսնինք»[1],— ասում է «Վերք»-ում կյանքի փորձով խամաստնացած մի գյուղացի։ Բարեկենդանին, խնջույքի ժամանակ, գյուղացիները քեֆ են անում, «ուսաց ապդին օրհնում, ղզլբաշին հայհոյում, Աղասուն ու իր ընկերներին կյանք ու արև խնդրում»[2]։ Ըստ որում «Վերք»-ում ցույց է տրված, որ Ռուսաստանի նկատմամբ եղած սերը այնքան խորն է ու դիտակցված, որ «ռսից դոնմիշ» անելու համար սիրաշահելու, կաշառելու կամ սպառնալու պարսկական պետության բոլոր փորձերը անհաջող են անցել։ «Հայ ազգին յա կրակ էին

1 Ե. Արծվյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 33։
2 Նույն տեղում, էջ 325։

խոստանում, յա սուր, յա կոտորում, յա թալանում,— դրում է Աբովյանը,— ինչքան թույն ունեին՝ մեր ազգի գլխին էին թափում։ Յա պատիվ, մեծություն խոստանում, որ խաբեն նրանց, յա պատիժ, պատուհաս տալիս՝ որ վախենան, Ռուսը ձեռք վերցնեն։ Շահիցը, սարդարիցը ֆարման ֆարմանի վրա էր գալիս, բայց Հայոց արդար սիրտը, ուղիղ սերը՝ որ Ռուսաց հետ ունեին, է՛ն ժամանակն էլ նրանց չթողեց, երբ թուրը գլխներին խաղում, որդի ու զավակ գոշըներին, առաջներին սուրն էր քաշվում, յա կրակումն էրվում»[1]։

Պատմական փաստաթղթերը ևս ցույց են տալիս, որ ժողովուրդը ցանկացել է անցնել Ռուսաստանի հովանավորության տակ։ 1805 թվին Երևանի հայ և աղրբեջանական բնակչությունը Վրաստանում գտնվող Մելիք Աբրահամին և Յուզբաշի Գաբրիելին գրած հատուկ դիմումով խնդրում է շտապեցնել ռուսական օգնությունը. «Անհամբեր սպասում ենք ձեր շտապ օգնության,— գրված է այդ դիմումի մեջ,— եթե ուշացնեք, այն ժամանակ մեզ կտանեն և կվնասեն... Ամեն ինչի մասին գրում ենք ձեզ և թողնում ձեր կամքին, եթե մեզ պետք լինի թղթի վրա նկարագրել թե ինչ նեղություններ ենք կրում, այն ժամանակ ոչ թուղթ և ոչ թանաք կբավականանա»[2]։

Ռուսաստանին միանալը այդ պայմաններում Հայաստանի համար միակ հնարավոր ելքն էր։ ՍՍՌՄ պատմության լավագույն դասագրքի կոնկուրսի կառավարական հանձնաժողովի ժյուրիի 1937 թվի օգոստոսի

---

1 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 121։*

2 Акты, собранные Кавказскою археографическою коммиссиею» *(հետագայում՝* Акты*)*, том 2, стр. *627։ Նաև «Փարձ», 1877/78, № 2, էջ 391։*

22-ի որոշման մեջ ասված է, որ սխալ է հարցը քննել պատմական կոնկրետ պայմաններից անջատ և 18-րդ դարի վերջերին Վրաստանի անցումը Ռուսաստանի հովանավորության տակ, ինչպես և Ուկրաինայի անցումը Ռուսաստանի իշխանության տակ, համարել բացարձակ չարիք. դասագրքի «հեղինակները չեն տեսնում,— ասված է այդ որոշման մեջ,— որ Վրաստանի առջև այն ժամանակ կանգնած էր երկընտրանք— կամ կլանված լինել շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի կողմից, կամ թե անցնել Ռուսաստանի հովանավորության տակ, այնպես, ինչպես Ուկրաինայի առջև այն ժամանակ կանգնած էր երկընտրանք— կամ կլանված լինել պանական Լեհաստանի ու սուլթանական Թուրքիայի կողմից, կամ թե անցնել Ռուսաստանի իշխանության տակ»[1]:

Այս ամբողջությամբ վերաբերում է նաև Հայաստանին: Եթե տակավին իր պետականությունը վերջնականապես չկորցրած Վրաստանի առջև դրված էր թուրքական և պարսկական բռնակալությունների կողմից կլանված լինելու կամ Ռուսաստանին միանալու երկընտրանքը, ապա այն ավելի խիստ ձևով դրված էր նաև Հայաստանի, հայ ժողովրդի առջև, որը դարեր առաջ կորցրել էր իր պետականությունը և կանգնած էր ֆիզիկական լիակատար բնաջնջման վտանգի առաջ:

Ռուսաստանի հետ կապելով փրկության հույսը, հայ ժողովուրդը (առաջին հերթին աշխատավոր դյուղացությունը և ոչ էջմիածնի կաթողիկոսությունը, ինչպես աշխատել է ներկայացնել բուրժուական պատմագրությունը) չի խնայել իր ուժերն ու հնարավորությունները

---

1 «Խորհրդային Հայաստան», 24 օգոստոսի, 1937 թ.:

ռուսական զորքին օգնելու հարցում։ «Վերք»-ում ասված է, որ դեռ Ցիցիանովի ժամանակ* հայերն էին ռուսական զորքին «հաց տվողը, ասի քոմակը»։ Ժողովուրդը դենքը ձեռքին հերոսաբար, անձնազոհ կերպով կռվել է իր դարավոր կատաղի ու նենգ թշնամու՝ պարսկական զավթիչների դեմ, դրանով իսկ ավելի բորբոքելով պարսկական վայրագությունները։ Պարսից գահաժառանգ և զորապետ Աբբաս Միրզան Ղազախի աղալարներին գրած հրովարտակում ասում է, որ «Հայերը հավատարիմ են ռուսներին»[1]։ 1826 թվի հուլիսին, երբ այդ նույն Աբբաս Միրզան 60 հազարանոց բանակով հարձակվում է Ղարաբաղի վրա և ծանր դրություն ստեղծում այնտեղ գտնվող ռուսական փոքրաթիվ զորքերի համար, հայ ժողովուրդը զենքով է դուրս գալիս ընդդեմ պարսկական զավթիչների։ Նկարագրելով Խլղարաքիլիսայում տեղի ունեցած կատաղի ճակատամարտերը (Հասան խանը հարձակվել էր Շորագյալի և Փամբակի վրա) Արուչյանը ցույց է տալիս, որ այդտեղ ևս ժողովուրդը հերոսաբար, մինչև վերջին շունչը կռվել է պարսկական զորքի դեմ։

«Հարյուր անգամ Պարսից սևագունդ զորքը դուրս արին, երիշ քաշեցին, ամեն անգամ էլ հարյուրով կոտորվեցան. իրանք իրանց լաշերի վրովը էլի եդ փախան. շունչ առան՝ էլի կրկին եկան, էլ կրկին մեկ բուռը խալխի թվանքի համն առան, էլի ամոթով եդ դարձան։

---

* 1804 թվին ռուսական բանակը, Ցիցիանովի հրամանատարությամբ, ջախջախեց պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզայի զորքերը և պաշարեց Երևանի բերդը։ Այդ ժամանակ, սակայն, Երևանը գրավել չհաջողվեց։

1 Акты, том 2, стр. 565։ Նաև՝ «Փորձ», 1877/78, № 2, էջ 396։

Մ՛չ Նագի-խանն էր կարում իր հունարը ցույց տալ, ո՛չ Օքյուզ աղեն, ո՛չ Սվանղուլի-խանը։ Ղազախ, քուրդ, սարվազ՝ ինչ տղամարդություն ունեին՝ թափեցին՝ ո՛չ նիզամով կարացին, ո՛չ երիշով մեկ քանի հողագործի տուն առնեն։ Որտեղ մոտանում էին՝ տան դռներիցը, սելի արանքներիցը թվանքները էնպես էին ճռռում, որ շատ պարսիկ իր ընկերին էր ոտնատակ տալիս»[1]։

Խոսելով ռուսական զորքին հայ ժողովրդի ցույց տված օգնության մասին, Աբովյանը գրում է. «Ինչ որ Պարսից կռվի ժամանակին Հայք արին... Թե մարդ չիմանա, քարերը վկայություն կտան։ Հալբաթ որ մեկ օր մեկ արդար, անաչառ մարդ Վրաստանու պատմությունը կգրի, էն ժամանակը կերևի, թե Հայք ի՞նչ արին, ի՞նչ հավատարմություն են ցույց տվել տերությանը, ի՞նչ արին են վեր ածել»[2]։

Պատմությունից հայտնի է, որ հայերը մտնում էին ռուսական կռվող ջոկատները, ինչպես և ստեղծում էին հայկական կռվող ջոկատներ, կազմակերպում էին պարսկական թիկունքը, պարենամթերք և տրանսպորտի միջոցներ էին տրամադրում ռուսական բանակին։

Ռուս-պարսկական պատերազմի մասնակից ռուս սպաները ևս պատմում են, որ հայերը քաջաբար էին կռվում։ 1827 թվի հոկտեմբերի 1-ին ռուսական զորքը գրավեց Երևանը, ընկավ անգլիական և ֆրանսիական ինժեներների պլաններով ու ղեկավարությամբ ամրացված և անմատչելի համարվող Երևանի բերդը։ Ժողո-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 3, էջ 99—100։

2 Նույն տեղում, էջ 121։

*լրջի համար դա աննկատելի մի ատն էր. «Թուրք ու Հայ հենց իմացան, թե ատված վեր էկավ իրանց համար»,— գրում է Աբովյանը «բախտավոր հրճվանքով խանդավառված» և նկարագրում «հրեշտակ փրկիչ ռուս ժողովրդի» գենքով կործանվող հայակուլ բերդի պատմութ: Հայ և ադրբեջանական ժողովուրդը յնծութեամբ է դիմավորել ռուսական զորքին, դինվորի համադրնաս հագած ռուս աշխատավոր մարդուն. «Մալդաթի ատար հենց բերդը մտավ թե չէ, հազար տեղից, հազար փանջարից լացն ու արտասուքը էլ չէին թողնում, որ մարդի բերան բաց լրի: Բայց ով սիրտ ուներ, լավ էր տեսնում, որ է՛ն ձեռներն, է՛ն աչքերը, որ քարացել, սառել երկնքին էին մոխիկ տալիս, առանց խոսքի էլ՝ ատում էին, որ դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը Հայերի համար... շատը ընկնում էին սալդաթների ճտովն ու էնպես նվաղած, հոդին բաղված մնում: Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի Հայք իրանց գլուխն էին թրի տեղ թշնամու ձեռք քցել, է՛ս օրը, է՛ս ուրախութիւնը չէին տեսել, չէին վայելել»[1]:

Հ. Թումանյանը, որ հատկապես գրաղվել է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու և «Վերք»-ի պատմականութեան հարցով, բերում է Երևանը գրավելու ժամանակ մղված կռիվներում իր սխրագործութեններով աչքի ընկած գնկաբրիատ Ե. Ե. Լաչինովի վկայութիւնը Հայի ու ռուսի խիստ ջերմ և սրտաշարժ հանդիպման մասին: Լաչինովը «նկարագրում է տաճկա-

---

1 Խ. Աբովյան. *Երկերի լիակատար ժողովածու, հատոր 3, էջ 179:*

կան, պարսկական... դաշանութիւնները,— ասում է Թումանեանը,— պատմում է, թե ինչպես էին նրանց առաջ սարսափահար փախչում հայերը գեղահան ու տեղահան եղած։ Պատմում է, թե ինչպես էին նրանք վազում դեպի ռուսական զորքերը՝ ծեր ու մանուկ, մարդ ու կին, աղաղակելով рус! рус! здрасти! здрасти!... Իսկ մյուս կողմից. «не бойтесь! не бойтесь! Ձեն էին տալիս սարսափահար գյուղացիներին թշնամու դեմ վազող զինվորները և արտացնում էին իրենց վազքը... Նա, Լաչինովը, պատմում է, թե ինչպես սրտառուչ խանդավառությամբ էր դիմավորում իրենց կեղեքված ու տանջված ժողովուրդն ամեն տեղ, ինչպես էր աղոթում, լալիս ուրախությունից, թե նույնիսկ էն երեխան էլ, որ նոր էր սկսել թոթովել, իրենց տեսնելիս ինչպես էր կանչում «здраствуй, здраствуй»։ Էնպես, էն լացախառն ու աղոթախառն «здравствуй»-ներով ողջունում էր բազմատանջ հայ ժողովուրդը ռուսական աղատարար բանակին»*։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը խանդավառել է աշխարհի բոլոր մասերում ապրող հայերին։ Աբովյանի ժամանակակից դրող Մ. Բաղիշեցյա-

---

* Հայ ժողովրդի ջերմ ուսումնասիրության մասին է վկայում նաև ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների մասնակից Ա. Ս. Գրիբոեդովը։ 1828 թվի օգոստոսի 31-ին «Северная пчела» թերթի հրատարակչին գրած նամակում, խոսելով ռուս-թուրքական պատերազմի և Բայազետի գրավման մասին, նա ասում է, որ «անհնար է նկարագրել» ռուսական հաղթող բանակին դիմավորելու գալս եկած «հայերի ցնծությունը»։ (Տես А. С. Грибоедов, Полн. собр. сочинений, С—Петербург, т. I, 1889, стр. 129։

նր հեռավոր Հնդկաստանից ջերմ աչքալուսանք ուղարկեց երևանցիներին. «Աչքներդ լույս,— գրում է նա,— մեր քաղցր աշխարքը Պարսից դառն չարչարանքից ազատվեց»:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական կարևորագույն ակտը այնքան է ոգևորել ժողովրդին, որ նա դրա շուրջը երգեր է հյուսել ու երգել: «Հարիր տեսակ խաղ հայերեն, թուրքերեն (ադրբեջաներեն —Վ. Պ.) Երևանու բաղերն ու ձորերը լսում էին ու հինգ տարեկան երեխեն էլ էսօր ուրախ վախտը ձեռը բերնին ա դնում ու ասում,— պատմում է Աբովյանը,— որ ասածիս ամեն մարդ հավատա, էն խաղերիցը մեկը քոզ օրինակի խաթեր էստեղ գրվի.

...Մենք քամակ քամակի կոանք, վեր կկենանք,
Ըսին մեր աշխարքը, կյանքն ղուրբան կոանք:
Հասան-խանն կասվի պես քարեքար ընկավ,
Շահզադի զոնշունը ցիրուցան էլավ... և այլն:

Երախտապետ հայ ժողովրդի կողմից Աբովյանը շնորհակալության առաջին խոսքն ուղղելով ռուս ժողովրդին, գովում է նրա «քաջությունը, մեծահոգությունը, բարեսրտությունը և մարդասիրությունը»:

Իբրև պարսից բռնակալության դեմ հայ ժողովրդի անհուն ատելության և Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու ջերմ ցանկության արտահայտիչ «Վերք Հայաստանի» վիպում հանդես է գալիս նաև Ազատին: Նա սպանում է Սարդարի հրամանով Թադուհուն «քա-

---

1 Ե. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 177—178:

շնչու» նման ֆաուստներին, շուրջը հավաքում քաջ երիտասարդներին, իր խոսքով շարունակելով պատմիչանական հանդուգն ու անհավատալի կռիվներ մղել Հասան Յանի որդի և հայկական գյուղերը թալանող ու ավերող բղեների դեմ, վերջը միանում է ռուսական զորքին և նրա հետ միասին մտնում Երևան: Աղասին գտնում է ժողովրդի սիրելին, որովհետև կռվում է տանելի դյուրաշի դեմ և «պտմեր նա է դրել, որ ասին դուրան անի»: «Ո՛վ նրա պատճեն իմացել էր, ուզում էր ասներ չուր անի՝ խմի»,— ասում է Արովյանը: Աղասու պատմական հանդիսավորությամբ կատարվող թաղմանը մասնակցում են հայ ժողովուրդը և ռուսական զորքը:

Արովյանը, ինչպես այդ ժամանակի անդրիմովիստական իրականության մյուս նշանավոր դեմքերը (Ճավհավաձե, Ախունդով և ուրիշներ), կովկասը Ռուսաստանին միացնելը համարում էր պրոգրեսիվ երևույթ: Այս հարցում ևս նա հանդես է բերել հայ ժողովրդի պատմության, նրա ժամանակակից վիճակին լավատեղյակ և հեռատես մարդու դիր: Հետաքրքրական է, որ Արովյանը հայ և կովկասյան մյուս ժողովուրդների համար Ռուսաստանի իշխանության տակ անցնելը պրոգրեսիվ երևույթ համարելով, միաժամանակ հատկանշում էր Ռուսաստանի խաղացած պրոգրեսիվ դերը բալկանյան ժողովուրդների նկատմամբ. Սերբիան, ասում է Արովյանը, ազատվել է Թուրքական բռնակալության լծից «օգնությամբ (հզոր տէրութեան) ռուսաց»[1]: Իրեն պատմության լավատեղյակ անձնավորություն, Արովյանը գիտեր, որ Սերբիան, ազատվելով Թուրքական բռնակա-

1 «Գիւան Խ. Արովեանի», հատ. 1, էջ 38:

լության անաստվի ծանր լծից[*], պարզացման ավելի հնարավորություններ էր տանում:

Պատմական խորաթափանցությամբ Աբովյանը դարձավ հայ ժողովրդի ռուսասիրության, ռուսական օրիենտացիայի պաշտպանն ու ներկայացուցիչը, ժողովրդի նվիրական ցանկությունների ու ոգևորների հարատև արտահայտիչը, հայ-ռուս ժողովուրդների բարեկամության առաջին խոշոր ներկայացուցիչը հայ նոր գրականության պատմության մեջ:

Միանգամայն իրավացի կերպով Թումանյանը «Վերք»-ը համարել է հայ ժողովրդի ազգային զգացմունքների համատիպ՝ «հայ ժողովրդի վերքի մեծուկ հետ միասին մի հզոր ջատագովություն ու օրհներգ ռուս ազգին ու իր ուժին»[1]: «Վերք Հայաստանի»-ի սիրված լինելու գաղտնիքն այդ է, և ոչ թե այն, որ նա գրված է աշխարհաբար[2],— ավարտում է Թումանյանն իր միտքը: Աբովյանը եղբայրական վրաց, ադրբեջանական ժողովուրդների և հայ ժողովրդի միությունը ռուս հզոր ժողովրդին միանալու, Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու մեջ էր տեսնում: Իր այդ համոզումը նա արտահայտել է հետևյալ սիմվոլիկ պատկերով.

---

* Բուխարեստի 1812 թվին պայմանագրով Սերբիային տրված իրավունքները Թուրքիան նորից վերացրել էր: 1829 թվի սեպտեմբերին Ադրիանապոլի պայմանագրով Սերբիան՝ Մոլդավիայի, Ղուռնաստանի, Վալախիայի հետ միասին, ստացավ նորից ինքնավարություն:

1 «Սովետական գրականություն», 1941, № 12, էջ 70:

2 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Հ. Թումանյանի Ֆոնդ, գործ № 176:

«...մեկ ահագին չորս ջաղացի ջուր՝ մեկ քանդված բլրի տակից... դուս ա պրծնում կատաղած... կես փայը առու դառած՝ գնում Երևանու դաշտը... որ նրա սև ջրի դառը արտասուքը իր հետ խառնի... գնա... արտում Երասխի հետ՝ Զանգին ու Գառնու գետն էլ մեջ աննն... գնան Քուռն էլ մեջ աննն, իրանց արտասուքը նրանի հետ խառնեն ու տանին, Կասպից ծովի սիրտն ածեն, նրա աղի ջրումը կորչին, Պարսից նավերը ջախջախուրթ աննն, Ռուսաց նավերը իրանց քամակի վրա տանին ու բերեն, որ Ճամփին չհուսահատվի, չհուզարի ու էն իր յարի ուղը մեր աշխարհցը չկորի, որ բալքի մեր հայրենիքը՝ նրանց արծվի թևերի տակին զորանա, մեծանա, դարդերը մոռանա ու էլ եղ՝ իր առաջին փառքին հասնի»[1]:

«Վերք»-ի հավելված «Զանգի»-ի մեջ, անձնավորելով Զանգին և Վոլգան, Աբովյանը Զանգի գետի միջոցով հայ ժողովրդի սիրո և հավատարմության զգացմունքներն է արտահայտում «Քույր Վոլգայի» ուս ժողովրդի նկատմամբ: Նշելով ուս և հայ ժողովուրդների մշտական անխզելի կապի և ջերմ սիրո անհրաժեշտությունը, նա գրում է.

«Ես գիմ Սևանայ օրհնութեան մաղթանս, ես գիմ առաք Մասսայ ողջոյն հայրական տարայց, մատուցից սիրելոյն իմ քեռ, բերից ձեզ զողջոյն նրա ատենաբեր... Բացէ՛ք զճակատ ձեր, ցնծացէ՛ք յամայր. իմ քաղցր վօլգա քոյր հոգայ միշտ զձեր ճար: Ես գի՛մ մտերմութիւն ցուցից նմա համակ, նա գիւր քաղցրութիւն տա-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 113—114: Ընդգծումը բնագրումն է:

ել՝ ձեզ՝ որդեակք: Այս կապ անխզուն, այս սէր սրբապան մնասցէ՝ ի մէջ մեր ի կեանս յաւիտեան»[1]:

Չնայած ցարիզմի դաղութային քաղաքականությանը, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո անպայմանորեն կարևորագույն ու նոր էտապ էր սկսվում հայ ժողովրդի պատմության մեջ, ոչ միայն ժողովուրդը ազատվում էր ֆիզիկական լիակատար բնաջնջման վտանգից, այլև հնարավորություններ էին բանեղծվում երկրի հետագա զարգացման համար: «Ռուսաստանը,— ասում է Ֆ. Էնգելսը 1851 թվին Մարքսին գրած մի նամակում,— Արևելքի նկատմամբ կատարում է իրոք պրոգրեսիվ դեր»[2]: Ռուսաստանն իր տնտեսությամբ, վարչաձևով, կուլտուրայով, զրականությամբ, դիտությամբ անհամեմատ բարձր էր միջնադարյան, ֆեոդալ-խանական Պարսկաստանից: Հայ, ինչպես և առհասարակ կովկասյան ժողովուրդները Ռուսաստանին միանալով ազատվում էին իրանո-թուրքական ավազակային արշավանքներից, պայմաններ էին ստեղծվում ֆեոդալական մանանավածության վերացման համար, որի պայմաններում, ինչպես սովորեցնում է Լենինիզմը, չի կարող խոսք լինել որևէ երկրի տնտեսական-քաղաքական լուրջ զարգացման մասին: Ռուսաստանին միանալուց հետո Արևելյան Հայաստանում սկսվեց կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, հայ ժողովրդի իրրև ազգության կազմավորումը: Ռուսաստանին միացած Հայաստանը դարձավ այն կենտրոնը, ուր սկսեց կենտրոնանալ աշխատավոր մեկ ցրված

---

1 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 3, էջ 199:

2 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том *XXI*, стр. *211*:

Հայությունը, ավելի քան 100 հազար հայեր Պարսկաստանից և Թուրքիայից վերաբնակվեցին Արևելյան Հայաստան: Հայ ժողովուրդը տնտեսական, քաղաքական և կուլտուրական ամուր կապերով կապվեց Ռուսաստանի հետ, հաղորդակից դարձավ ռուսական առաջավոր մտքի նվաճումներին, նրա ռևոլյուցիոն շարժմանը, ցարիզմի դեմ ուղղված իր պայքարը միացրեց նրա պայքարին և իր ավագ եղբայր ռուս ժողովրդի օգնությամբ Հայաստանում ստեղծեց սովետական կարգեր ու վերածնվեց դարձավ կոմունիզմ կառուցող սոցիալիստական ազգ:

Ռուսաստանին միանալը ժողովրդական լայն խավերի ջերմ ցանկությունն էր: Այդ պատճառով էլ կովկասյան ժողովուրդները, նրանց առաջավոր ներկայացուցիչները դեմ էին մյուրիդիզմին, Շամիլի շարժմանը, որը նպատակն էր ստեղծել Հրահրել Ռուսաստանի, ռուս ժողովրդի դեմ և կովկասյան ժողովուրդներին դարձնել եվրոպական ու արևելյան բռնակալական պետությունների ստրուկներ:

Թևև Արովյանը «Վերք»-ը գրել է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց 13 տարի հետո, երբ նրան անծանոթ չէր ցարիզմի դաղութարարական քաղաքականությունը, այնուամենայնիվ իր պատմական վեպում նա հարազատորեն վերարտադրել է ժողովրդի՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու ժամանակվա ցնծագին տրամադրությունները:

Արովյանը, իբրև այդ ժամանակվա կովկասյան իրականության մեջ ամենատարրագացած մարդկանցից մեկը, լավ ծանոթ էր ժողովուրդների պատմությանը: Նա գիտեր, թե եվրոպական և արևելյան բռնակալներն ինչպիսի դաժանությամբ ու բարբարոսությամբ էին վարվում իրենց նվաճած ժողովուրդների հետ և ինչ հետև-



Աբովյանի արձանը Երևանում։
Գործ՝ ժող. նկարիչ Ս. Սահինյանցի և հարթ. Գ. Թամանյանի

վանքներ էին ունենում այդ բոլորը նվաճված երկրների համար: Աբովյանը մանավորապար դղվանքով ու պայրույթով է խոսում եվրոպական «մարդասեր» պետությունների՝ ամերիկյան բնիկ և նեգր ժողովուրդների նկատմամբ վարած մարդակերական քաղաքականության մասին, այդ քաղաքականությունը համարելով «ավազակություն»: «Մէր, խոպոպութիւն պահեն զամենայն դադգս և զպինս ի բարօրութեան» սկզբունքի պաշտպանը դիմակը ցած է առել «կրթված» եվրոպացիների դեմքից: Դրանք, ասում է Աբովյանը, գժվում են «ոսկու թողը» տեսնելիս և չեն ամաչում «նեգեր ապդերին— (այսինքն սև ապդերին) բռնել, ծախել, ինչպես անասունը, որ մարդ լսելիս միսը հալշում ա վրեն... Ամենն էլ (եվրոպացի գաղութարարները— վ. Պ.) ուզում էին էնպես աշխարհ գռնել, որ ոսկու գետ ունենար: Բայց չունքի էապես երկրներ չգտան, բնկան ողորմելի նեգեր ապդի վրա, ու որտեղ որ գռնում էին, հալվարի պես կամ սպանում էին, կամ առաջ անում, տանում ծախում: Մարդի սիրտ կրակ է բնկնում՝ ինչ ժամանակ լսում ա, թէ էս լուսավոր Եվրոպացիքը ի՞նչ են բերել էն խեղճ ապդերի գլխին, որդին հորիցը խլել, աղջիկը՝ մորից, մորը զավակներիցը, որ տանին իրանց փողի ծարավը կշտացնեն: էս էլ քո լուսավոր Եվրոպացին»[1],— դառն ծաղրով բացագանչում է Աբովյանը: Մարկավաճառությունը եվրոպացիների համար հավիտյանս հավիտենից ամոթ կմնա, ասում է նա, արձագանքելով ռուս առաջադեմ մտածողների նմանօրինակ ելույթներին:

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, էջ 237—238: Ընդգծումները բնագրոմն են:

Եվրոպական դաղութարարներից մեկի՝ Նապոլեոն Բոնապարտի՝ Ռուսաստանը նվաճելու պլանների ջախջախումը և ռուսական բանակի Փարիզ մտնելը Աբովյանը համարել է պատմական մեծ իրադարձություն: «Մեծ էր հիրավի ու անմոռանալի Ռուսաց Փարեժ մբռնիլը» ասված է «Վերք»-ում: Համեմատելով եվրոպական դաղութարարների՝ Ամերիկայի բնիկների նկատմամբ վարած քաղաքականությունը Հայաստանը Ռուսաստանին միացնելու փաստի հետ, Աբովյանը գրում է. «Այլ եվրոպացիք Ամերիկա ավերեցին, հողի հավատարեցին. Ռուսք Հայաստան կանդնացրին... Հայք ի՞րը կարեն Ռուսաց արածը մոռանալ, քանի որ շոշաչ ունին»[1]:

Մերկացնելով աղատարարի պողպով հանդես եկող եվրոպացի դաղութարարներին, Աբովյանը հիացմունքով է խոսել «Ռուսաց քաջ սրտի մեծագործության և տղամարդության», ռուս ժողովրդի ազատասեր ոգու և հերոսական պատմության մասին: Տակավին անտիպ «Աղեքսանդր կայսր ի Փարիզի և անկումն Նապալէօնի»[2] հոդվածում Աբովյանը Նապոլեոնին համարում է հանդուգն բռնավոր և մերկացնում է Ռուսաստանի դեմ նրա մղած պատերազմի նվաճողական բնույթը: Եվրոպական ազդերի «խաւարապունդ դորքով» հարձակվելով Ռուսաստանի վրա, ասում է Աբովյանը, «գազանություններ անելով Մոսկվայում» Նապոլեոնը ցույց է տալիս, որ ձգտում է իրեն ենթարկել ամբողջ աշխարհը: Նա ոչ միայն մտածում էր ստրկացնել ժողովուրդնե-

---

1 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 3, էջ 180:

2 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 37:

քին, այլև «արմատախիլ անել նրանց, որոնք օտարին ծառայելու համար չեն ծնված»*: Նապոլեոնին Աբովյանը համարում է խաղաղության դաշինքի խախտող, աշխարհի անհաշտ թշնամի, մարդկային օրենքները արհամարհող մի բռնակալ, որ ուզում է «ստրկության շղթաների մեջ առնել, իրեն ենթարկել տիեզերքը և կառավարել այն միապետական ոգով»:

Ռուսաստանը նվաճելու և «կորստյան մատնելու» Նապոլեոնի ծրագիրը Աբովյանը եղեռնագործություն է համարել: Հայրենական պատերազմի դուրս եկած ռուսական զորքի ու ժողովրդի հարվածների տակ պարտվում են Նապոլեոնի անպարտելի համարված բանակները: Նապոլեոնի «հոգու բոլոր ձիրքերն աճիճատացան,— դրում է Աբովյանը,— և նրա փառքը թեթևացավ սովերի պես հյուսիսային հողմից քշվեց: Նրա ամառ զորապետը զարմանալով բացագանչում է. մի՞թե սա այն մեծ զորավարն է, որից դողում էր Եվրոպան»:

Աբովյանը սիրով, արհնչացումով է խոսում ռուս մեծ և տպատարաղձ ժողովրդի մասին: Նշելով մի քանի ճակատամարտեր, որտեղ ռուսներն իրենց փառքով են պատկել, նա դրում է. «Ռուսները քանի քանի տեսակ չլսված և չտեսնված արիությամբ և քաջությամբ ճակատամարտելով մեծամեծ օրինակ ծառայեցին աշխարհին, որով պանծալի դարձրին իրենց ամբողջ Եվրոպայի կամ ավելի լավ կլինի ասել, ամբողջ աշխարհի առաջ: Հետագա սերունդները անհավատալի հիացմունքով կդրպացին մեր ժամանակակից տարերքությունը, որ անհամեմատելի է նախկին ժամանակների հետ»:

---

* Մատչելիության համար այս հոդվածից քոլոր մեջբերումները կատարում ենք աշխարհաբար թարգմանությամբ:

Արովյանը բարձր է գնահատել 1812 թվի Հայրենական պատերազմի ռուս զորավարների, մասնավորապես հանճարեղ Մ. Ի. Կուտուզովի վերը. «Ռուսաց զորքի ընտիր հրամանատար Միքայել Սմոլենացին (Կուտուզովը—Վ. Պ.) կամիլլոսի նման՝ անհնարին հարվածներ հասցրեց թշնամիների զորախմբին, և երբեմն իրենց լուսավորությամբ գոռոզացող այն բարբարոսների ոսկրներն ու գենքերը փշուր-փշուր էր առիս նրանց խայտառակությունն ու անպատիվ լինելը»:

Եվ այս բոլորը Արովյանն ասել է հակառակ մեծ ազգերին «զուտ անող» եվրոպական բուրժուական պատմագրության, որ ձգտում էր լռության ու անուշադրության մատնել, թերագնահատել ռուս ժողովրդի եվրոպան բռնապարտական չթից փրկելու մեծ միսիան:

Արովյանը ռուս ժողովրդի մասին նույնպիսի հիացմունքով ու սիրով է խոսում նաև իր այլ գործերում: Գավելով «Հին և նախապատ մայրաքաղաքն Մոսկով»-ը, որ իբրև «պոհ մատուցիցաւ բոցոյ», Արովյանը գրում է. «Բովանդակ Ռուսաստան ձգեաց յայսմ վայրի զաւակն վրէժխնդրութեան: Մերք, տղայք և կանայք ապստամբէին զթշնամիս»[1]: «Ֆեոդորա կամ որդիական սեր» դրամայի (1841 թ.) առաջաբանում ևս Արովյանը նշում է, որ «Ռուսք Ֆրանցուզին չարչարցին»:

* * *

Միանալով Ռուսաստանին, հայ ժողովուրդը, ինչպես նշել ենք, կապվում էր ռուս ժողովրդի հետ, հաղորդակից էր դառնում ռուս առաջավոր ու հարուստ

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական Թանգարան. Արովյանի Ֆոնդ, գործ № 27 Ա:

կուլտուրային, դիտությանը, դրականությանը: «Կուլտուրայի ուս վարպետները,— գրում է «Պրավդա»-ն,— Հսկաական ցարական կառավարության դաղութացնող բաղաքականության, միշտ բարերար ազդեցություն են գործել Ռուսաստանում բնակվող մյուս ազգությունների կուլտուրայի վրա»[1]:

Ուժեղ է ուս կուլտուրայի բարերար ազդեցությունը նաև Հայ կուլտուրայի վրա: Պարսկական բռնակալությունից ազատված և Ռուսաստանին միացած Հայ ժողովրդի նոր շրջանի դրականությունն ու կուլտուրան ձևավորվեց ուսական Հարուստ դրականության ու կուլտուրայի ազդեցության տակ: Աբովյանն առաջին մեծ դեմքն է Հայ դրականության պատմության մեջ, որ բարձր է գնահատել ուս-Հայ բարեկամությունը, ուսական կուլտուրան, կրել է այդ կուլտուրայի բարերար ազդեցությունը ու եղել է այդ կուլտուրայի առաջին խոշոր պրոպագանդիստը:

Տակավին անհրաժեշտ չափով ուսումնասիրված չէ ուս Հասարակական առաջավոր մարդի ու կուլտուրայի Աբովյանի Հասարակական-քաղաքական և դրականագիտական Հայացքների վրա ծոցած ազդեցության Հարցը:

Իակ որ այդպիսի ազդեցություն, այն էլ վճռական, եղել է, դա վեր է ամեն կասկածից: Թեև տակավին քիչ են այդ պնդումը Հաստատող առանձին փաստերը, սակայն անհերքելի է ամենամեծ փաստը— Աբովյանի ծառայությունը ուս ժողովրդի ու նրա կուլտուրայի նկատմամբ, ուս լեզվի նկատմամբ: Աբովյանի Հասարակական-քաղաքական ու դրական-մանկավարժական Հա-

---

1 «Правда», от 7 января, 1937 г.

յացքների ուսումնասիրությունն ակնառու կերպով ցույց է տալիս, որ Աբովյան դրողն ու մտածողը ձևավորվել է ռուսական հասարակական առաջավոր մտքի ազդեցության տակ: Բուրժուական դրականապիտությունը, ստորաքարշելով Արևմուտքի առաջ, ճղնել է Աբովյանին կապել միայն Դորպատի և գերմանական կուլտուրայի հետ: Այդ տրադիցիայի հիմքը դրել է Ստ. Նազարյանցը՝ Դորպատը համարելով Աբովյանի «իմացական մկրտության ավազանը»: Սխալ ու վնասակար այս տեսակետը անհրաժեշտ է վերջնականապես մերկացնել: Հայտնի է, որ տակավին մինչև Դորպատ գնալը Աբովյանը եղել է ռուսական օրիենտացիայի պաշտպան, սիրել է ռուս ժողովրդին, նրա կուլտուրան ու դրականությունը, ցանկացել է բարձրագույն կրթություն ստանալ Մոսկվայի կամ Պետերբուրգի համալսարաններում: Դորպատում եղած ժամանակ գերմանական կենցաղի առանձին կողմերի մասին ուսանող Աբովյանի դովասանական արտահայտությունները չեն սասանել նրա քաղաքական օրիենտացիան, չեն փոխել ռուս ժողովրդի ու ռուսական կուլտուրայի նկատմամբ նրա ջերմ վերաբերմունքը: Դորպատում Աբովյանը լսել է դասախոսություններ նաև ռուս դրականության մասին, շարունակել է ուսումնասիրել ռուսերեն լեզուն, հանդիպումներ է ունեցել ռուս դրականության ու կուլտուրայի ներկայացուցիչների հետ, զրույցներ է ունեցել ռուս դրականության և պատմության այլևայլ հարցերի մասին: Աբովյանի կենսագրության մասին խոսելիս ասացինք, որ Հ. Ալամդարյանի տեսչության ժամանակ Գրիբոեդովը մի քանի անգամ այցելել է Թիֆլիսի նորաբաց հայկական դպրոցը, որտեղ այդ ժամանակ սովորում էր Աբովյանը: Անհավանական չէ, որ հետաքրքրությունը ռուս հանճա-

րեղ պրոզի անձնավորության ու ստեղծագործության նկատմամբ առաջացած լինի հենց այդ շրջանում: Հնատպայում, Դորպատում, Կարամզինի որդիների հետ պրուցելիս Աբովյանը խոսել է նաև Գրիբոեդովի մասին. «Ձրույց վասն Պարսից,— գրել է նա 1832 թվի հուլիսի 30-ին, օրագրում,— արհամարհանք վասն նոցա: Գրիբոեդով»[1]: Խիստ կոնսպեկտիվ այս գրառումը հնարավորություն չի տալիս որոշակի կարծիք հայտնել Գրիբոեդովի նկատմամբ ունեցած Աբովյանի վերաբերմունքի մասին: Մի այլ փաստ, սակայն, արդեն ուղղակի կերպով ցույց է տալիս նրա վերաբերմունքը ռուս մեծ պրոզի նկատմամբ. «Սպանութիւն դեսպանին ռուսաց (Գրիբոեդովի — վ. Պ.) ի 31 յունվ. կատաղութեամբ խաժամուժին»[2]:

Դորպատյան օրագրերում և նամակներում Աբովյանը հիացմունքով է խոսում Ժուկովսկու մասին, ռուս ժողովրդի ու նրա հարուստ լեզվի մասին: Հայտնի է, որ Աբովյանը մի քանի անգամ Դորպատից գնացել է Պետերբուրգ, ուր անշուշտ հանդիպումներ է ունեցել ռուս կուլտուրայի ու գրականության ներկայացուցիչների հետ,* ինչպես և խորացել է ռուսերեն լեզվի ուսումնասիրության մեջ: 1834 թվին Ներսես կաթողիկոսին գրած նամակում Աբովյանը ասում է. «Ի հոկտեմբեր

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 16 Ա:

2 Նույն տեղում, գործ № 27:

* Մենք մասնավորապես նկատի ունենք, որ նա պետք է հանդիպումներ ունեցած լինի «Современник» ամսագրի ապագա խմբագիր Ի. Պանաևի հետ (տե՛ս մեր «Աբովյանը և ռուսական» հոդվածը «Խ. Աբովյան», հոդվածների ժողովածու. 1948):

ամսոյ մինչև ցյունվար կամիմ մնալ կամ ի Պետերբուրգ կամ ի Մոսկով առ ի ուսանիլ կատարելապէս ռուս[երէն]»[1]:

Կովկաս գալուց հետո Արովյանն իրեն ավելի է կապված զգացել ռուս ժողովրդին ու կուլտուրային: Այս շրջանում գրած բազմաթիվ նիկերում, նամակներում և կազմած դասագրքերում Արովյանը խանդավառ տողեր է նվիրել ռուս ժողովրդին, նրա հերոսական պատմությանն ու կուլտուրային, լեզվին: Թեև պահպանում են ժամանակի ռուս առաջավոր գրողների ու Արովյանի կապերը հաստատող փաստաթղթերը, բայց անկասկած է, որ այդպիսի կապեր գոյություն են ունեցել: Անհնար է, որ ռուսերեն լավ իմացող, ռուսերեն լեզվով բազմաթիվ աշխատությունների հեղինակ, ռուս կուլտուրայի պրոպագանդիստ Արովյանը ծանոթ չլիներ ժամանակի ռուսական մտքի տիտաններ Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Բելինսկու և մյուսների գործերին: Արովյանի առակները ցույց են տալիս, որ նա անպայմանորեն պետք է ծանոթ եղած լիներ Կռիլովի մասին գրած Բելինսկու հոդվածներին (այդ մասին ավելի մանրամասն խոսք կլինի «Արովյանը առակագիր» բաժնում): Եվ վերջապես մի այլ, թեև կողմնակի, բայց կարևոր փաստ: 1842 թվին Արովյանը դիմել է Պետերբուրգի դրավաճառ և Կայսերական Ազատ տնտեսական ընկերության թղթակից Անդրեյ Իվանովին, խնդրելով իրեն ուղարկել մի շարք գրքեր: Արովյանին գրած պատասխան նամակում Իվանովը գրում է. «Ամենախոնարհաբար խնդրում եմ, որ դուք վստահ լինեք, որ ես կկարողանամ լիովին արդարացնել «Отечественные Зап.» և

---

1 «Գիվան Ե. Արովյանի», հատ. 2, էջ 19:

մյուս ամսագրերի հանձնարարությունը»[1]։ Այս փաստը արժանի է լուրջ ուշադրության։ Մեր կարծիքով հետաքրքրությունը դեպի «Отечественные Записки» ժուռնալը, որտեղ տպագրվում էին նաև Բելինսկու, Օգարյովի, Նեկրասովի գործերը, չէր կարող պատահական լինել։ Մեր հաստատ համոզմամբ ռուս դրականության ու հասարակական-քաղաքական մտքի հետ ունեցած Աբովյանի սերտ կապերը միայն կարող էին նրան բերել դեպի «Отечественные Записки» ժուռնալի նկատմամբ հետաքրքրություն տածելը։ Անհավանական չէ, որ Աբովյանը այդ ժուռնալի միջոցով ևս կարող է ծանոթացած լինել* ռուսական առաջավոր մտքի նվաճումներին ու թեև նա չհասավ Բելինսկու նվաճած բարձունքներին, բայց նա դոնվում էր դեպի այդ բարձունքները տանող ուղու վրա, ինչպես նկատել է սովետական աբովյանագետներից մեկը, նա դոնվում էր Բելինսկուց հետու, բայց ոչ հակառակ դիրքում։

Ջերմորեն սիրելով ռուս ժողովրդին, Աբովյանը հայ նոր դրականության պատմության մեջ առաջին անգամ ռուսական կյանքից վերցրած թեմայով դրամա է գրել («Ջեոդորա կամ որդիական սեր») ստեղծելով ռուս մարդկանց դրական կերպարներ։ Աբովյանի վրա ուժեղ ազդեցություն է թողել ռուսական մայրաքաղաք Պետերբուրգը, վերջինս նա նկարագրել է առանձին

---

1 «Պիվան Ե. Աբովյանի», հատ. 2, էջ 168։

* Անդրեյ Իվանովի՝ Էմիլիա Աբովյանին (Աբովյանի կնոջը) գրած 1852 թվի փետրվարի 19-ի նամակից պարզվում է, որ Աբովյանը տարիներ շարունակ գրքեր է ստացել նրա գրավաճառանոցից։ Անպայման նա ստացած կլիներ նաև իր պատվիրած «Отечественные Записки» ժուռնալի համարները։

սթանչացումով. «Այս ահագին քաղաք հրաշակերտ, որ յառաջին անդ հայիլն՝ յափշտակէ զանանօղն, ուր զամենայն հանդերձս և լեզուս բոլոր աշխարհաց երկրագնդի մերոյ կարելի է տեսանել և լսել, ուր ամենայն փողոց, ամենայն արձան, ամենայն տուն երևին զամենայն ոտկոց մարդկան վատնեալ առ ի հանճարել զայսքան բիւրատեսակ հրաշագործութիւնս»[1]: Աբովյանը նաև բանաստեղծություն է նվիրել «Պետրոկայանին» (Պետերբուրգին): Պետերբուրգումն է գրձյալ, որ Աբովյանն իր ընկերոջ հետ առաջին անգամ ռուսական թատրոնում ներկայացում է դիտել, որը նրա վրա ուժեղ և անմոռանալի տպավորություն է թողել:

Աբովյանը ոչ միայն մոտ է եղել ռուս կուլտուրային, այլև, ինչպես նշել ենք, եղել է ռուսաց լեզվի և գրականության առաջին մեծ պրոպագանդիստը հայ իրականության մեջ: Նրան հրապուրել են ռուս հեղինակները՝ Լոմոնոսովը, Կոլցովը: Վերջինիս նկատմամբ, մանավանդ, Աբովյանը ջերմ սեր է տածել, նրան համարել է «անմահ առակախոս» և երկու անգամ դումար է հատկացրել նրա հուշարձանի կառուցման ֆոնդին:

«Նոր տեսական և գործնական քերականության» մեջ Աբովյանը աշակերտներին քերականական վարժություններ է տալիս քսան Դմիտրիևի «Աղանեակ», Դերժավինի «Ճշմարիտ երջանկութիւն», Լոմոնոսովի «Տաղերգութիւն ըստ Յովբայ» բանաստեղծություններից: Թե Աբովյանը որ աստիճան հարազատ է զգացել ռուս գրականությունն իրեն, ցույց է տալիս նաև «Կարե՞մ սրտիս կսկիծը լեզվով քիզ պատմել» տողով սկսվող

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան. Աբովյանի ֆոնդ, գործ № 57:

բանաստեղծության «Տաղ ի դոյն՝ «Не шей ты мне матушка»» ծանոթությունը: Սրտին մոտ զգալով ռուսական այդ ժամանակ տարածված երգը, Աբովյանը դրա եղանակով բանաստեղծություն է գրել:

«Նոր տեսական և գործնական քերականության» մեջ բազմաթիվ առիթներով խոսելով ռուսական իրականության մասին և օրինակներ բերելով ռուսական կյանքից ու պատմությունից, Աբովյանը հատկապես նշում է Գիտությունների ակադեմիայի դերը ռուս լեզվի զարգացման գործում. «Ակադէմեայն (Ճեմարանն) Ռուսաց,— գրում է նա,— հիմնեալ 'ի 1788 'ի 21 Հոկտ. սկսաւ նոր դար յառաջածել վասն լեզուի և գրականութեան Ռուսաց: 'Ի 1802 ամին ընծայեալ նոր 'ի լոյս զնոր քերականութիւն առաւել ևս պայծառացոյց զլեզուն: Նրանք քերականք այժմեան ժամանակի են՝ պարոն Սոկոլովն, Նիկօլսկիյ, Բօրն, Գրէչ, Վաստոկով, Ջաուեր և այլն»[1]: Հակառակ Արևմուտքի առջև խոնարհվելու և սատրաքարշության վնասակար տենդենցի, Աբովյանը հատկապես նշել է ռուսական գիտության դերը՝ «լօմոնոսով ստեղծ զքերականութիւն իւր, որում հետևեցան Ռոսաէ դերմանացի, Լէլեօցեր»[2]:

Աբովյանը մեծագույն ուշադրություն է դարձրել նաև ռուսաց լեզվի դասավանդման վրա, որը (ռուսաց լեզուն) լավագույն միջոց է ռուսական լուսավորությունն ու կուլտուրան հայ ժողովրդի մեջ տարածելու համար: Նա իր ղեկավարած դպրոցի նպատակն էր համարում «...բնիկների մեջ տարածել օգտավետ և անհրաժեշտ

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 27 Ա:

2 Նույն տեղում:

դիտությունը և նամանավանդ ռուս լեզվի դիտությունը, և դրանով հետզհետե տեղիս ազգերին բարձրացնել բարոյապես և մտավորապես»[1]:

Աբովյանը ռուսաց լեզու էր դասավանդում Թիֆլիսի ու Երևանի գավառական դպրոցներում և իր մանավոր պանսիոնում: Նա աշակերտների համար ռուսաց լեզուն խիստ անհրաժեշտ էր համարում. «...ռուս լեզուն պետք է հիմք լինի դպրոցում դասավանդվող բոլոր մյուս առարկաների,— ասում է Աբովյանը,— և առանց սարդ ու ճիշտ հասկանալու այն, բնականապես առաջ կգա միայն և միայն առարկաների մեքենայական ուսումնասիրություն»[2]:

Սակայն այդ բոլորի հետ միասին մեծ լուսավորիչը պայքարել է հայ վերնախավերի այն զզվելի սրադիցիայի դեմ, երբ նրանք իրրև իրենց դիտունության ապացույց աղավաղում էին և՛ հայերեն, և՛ ռուսերեն լեզուները. «Ախր որ ասում ես փրոֆուլիմպաս *արի*, ափուշնա *եմ*, օփիժարաս *էլա*. փրոշենի *ասի*, սանյարին *շատ ունիմ*, *դուխս* բռուժիրաս *էլավ*, փեզշեսրնի *մարդ ա*, ռազիոյնիկ *ա*, յափերնիկ *օրմին ես*, *գնանք* ֆուլիարաս *ըլինք*, սուրաճիեմեն *եմ դալիս*, փրոիգրարաս *արի*, *համփին* ֆսերքի ուրուլնո *ա*, *շատ* ֆալաիօր պուշիրաս *չի ըլում*: Նվ այլն: Աչքի լիս՝ մի՛ մտածիր թե լսողն ի՞նչ կասի: Իսկ դիտուն, լուսավորյալ մարդը նա է, որ ամեն լեզու քանի կարա, իստակ խոսա: Դու քո լեզուն որ իստակ խոսաս, ինչ վնաս ունի,

---

1 «Դիվան Խ. Աբովյանի», *հատ. 1, էջ 152—153:*

2 *Նույն տեղում, էջ 138—139:*

հենց դիտում ես, խելքդ ձեռիցդ կառնեն, քե սովորած իմաստությունդ ջուրը կրթափի»[1]։

Աբովյանն այդ «դիտուններին» արածը սուր ծաղրի է ենթարկում հետևյալ համեմատությամբ. «Խառնի՛ր քո սիրեկան խաշի հետ՝ ձուկը, շաքար, կանֆետ (շաքարեղեն) չամիչ, չիր, խիղիլալա, տե՛ս ի՞նչ համ կունենա»[2]։ Այսպիսով պարզ է դառնում, որ Աբովյանը մայրենի լեզվի զարգացման հետ միասին դնում է և ռուսաց լեզվի, որպես իսկական կուլտուրայի յուրացման գենքի, հիմնավոր ուսումնասիրման հարցը։

Աբովյանը հայկական դպրոցների և առհասարակ ռուս լեզուն ուսումնասիրողների* համար կազմել է նաև ռուսաց լեզվի քերականության շուրջ 400 էջանոց դասագիրք («Նոր տեսական և գործնական քերականութիւն Ռուսաց վասն Հայոց»)։ Իրրև ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը, Աբովյանը տակավին անցյալ դարի առաջին կեսին հասկացավ, որ ռուսաց լեզուն ու կուլտուրան դուրս են գալիս ազգային սահմաններից, համաշխարհային նշանակություն են

---

1 Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3. էջ 64։ Ընդգծումները բնագրումն են։

2 Նույն տեղում։

* ՀՍՍՌ Գիտ. ակ. Դրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 27 (ռուսերեն առաջարան) և 27 ա (բուն գիրքը)։ Իր այդ գրքի նպատակների մասին Աբովյանը գրել է. «Чувствуя недостаток учебника, я принимался за составление его, в желании доставить тем пользу, как здешним учащимся, так и многим моим соотечественникам, обитающим в Турции, Персии и Индии, которые охотно бы пожелали познакомиться с этим языком, имея в руках хорошее руководство".

ատանում: Նա միաժամանակ լավ հասկանում էր, որ կուլտուրական առաջընթացից նա չմնալու, ժողովրդին կրթելու, դաստիարակելու և ուս ժողովրդի հետ բարեկամություն ամրապնդելու լավագույն միջոցը ռուսաց լեզվին տիրապետելը և այդ միջոցով ուս հարուստ գրականությանն ու կուլտուրային հաղորդակից դառնալն է: Ռուսաց լեզվի քերականության վերև նշված դասագրքի առաջաբանում, խոսելով ռուսաց լեզուն սովորելու մասին, Արովյանը նշում է, որ դրա նպատակն է «Подружиться с духом того народа, котораго языку мы учимся»[1]:

Այդ տեսակետից նայելով հարցին նա հայ ժողովրդի համար ռուսաց լեզուն համարում է լեզուներից ամենակարևորը. «Какой из Восточных или из Западных языков может в этом отношении способствовать нашей нации более всех, как не Русский, котораго польза и качества заставили и образованных народов нашего времени заниматься им, тем более Армян, которые видят всю необходимость изучения его»[2].

Մի այլ տեղ՝ դասագրքի «Յաւելուածին Ռուսաց լեզուի» բաժնում Արովյանն ուղղակի գրում է. «Լեզուն Ռուսաց է մինն յընդարձակագոյն և ամենահարկաւոր լեզուաց ի վերայ երկրի»:

1845 թվի հոկտեմբերի 24-ին տված վերատեսչության պաշտոնական հաշվետվության մեջ Արովյանը դանում է, որ ուս լեզվի գիտությամբ կարելի է կով-

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 27:

2 Նույն տեղում:

հայոյան «ազգերին» բարձրացնել բարոյապես և մտավորապես։ «Ռուս անունը պետք է մեզ համար լինի սուրբ, ինչպես և նրա արյունը, որով մենք ազատվել ենք ընդմիշտ...— գրում է նա,— աշխատենք, ըստ մեր կարողության և հնարավորության, ձեռք բերել օգտավետ գիտություններ, կրթել մեր միտքն ու սիրտը, ձեռք բերել ռուս լեզվի գիտություն և բարի քաղաքացիներ լինել։ Սրանով, հենց միակ սրանով, քան մի ուրիշ բանով, մենք կարող կլինենք միանալ ռուս մեծ ազգի հետ, որի միայն անունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ օտարին, սեր և անձնվիրություն»[1]։

* * *

«Վերք»-ում, իբրև 20-ական թվականների պատմական խոշորագույն իրադարձությունները պատկերող վիպում, Արովյանը, հարազատ մնալով պատմականությանն, ռեալիստորեն արտացոլել է ժողովրդի այդ ժամանակաշրջանի տրամադրությունները, ժողովրդի հավատը ռուսական տիրապետության նկատմամբ, նրա սպասելիքները։ Այդ հանգամանքը շատ լավ է հասկացել Թումանյանը, երբ գրել է, թե «Վերք Հայաստանի» վիպը հայ ժողովրդի բողոքի, «մեծ տանջանքի, մեծ պատերազմի և մեծ հույսերի ժամանակի վիպն է»[2]։ Հայաստանը Ռուսաստանին միացնելու ժամանակ ո՛չ Արովյանը, ո՛չ էլ, մանավանդ, ժողովուրդը չէին կարող պարզ կերպով հասկանալ, որ ցարիզմին հետաքրքրում

1 «Գիվան Ե. Արովյանի», հատ. 1, էջ 158։

2 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Հ. Թումանյանի ֆոնդ, գործ № 176։

էր տիրապետել դեպի Արևելք տանող ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող կետերին և առևտրի ընդարձակման համար շուկաներ, ինչպես և հումքի բազաներ ձեռք բերել։ Նրանք Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու ակտի մեջ իրենց փրկություն էին տեսնում։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո, 30-ական և մանավանդ 40-ական թվականներին, և՛ ժողովուրդը, և մա՛նավանդ Աբովյանը ստիպված էին ցարական կարգերի շատ դառնություններ ճաշակել։ Աբովյանը տեսնում էր, որ ստեղծված նոր կարգերը պարսկական տիրապետության ժամանակների համեմատությամբ շատ առավելություններ ունենալով հանդերձ, աշխատավոր մարդու համար ծանր էին։ Ընկեր Ստալինը գրում է. «Ցարական Ռուսաստանի բազմաթիվ ոչ-ռուս ժողովուրդները կատարելապես իրավազուրկ էին, շարունակ ենթարկվում էին ամեն տեսակ նվաստացումների և վիրավորանքների»[1]։

Ցարիզմից դժգոհ էր ինչպես ռուս, այնպես և հայ աշխատավոր ժողովուրդը։ Ռուս մեծ գրականության մեջ վաղուց էր սկսվել ցարիզմի, ցարական բյուրոկրատիայի մերկացումը։ Պուշկինը, Լերմոնտովը, Բելինսկին հակացարական սուր ելույթներ էին ունենում և հալածվում։

Ցարական կարգերի նկատմամբ Աբովյանի քննադատական վերաբերմունքի տեսակետից հատուկ ուշադրության է արժանի «Հազարփեշեն» երգիծական պոեմը, որը ցարական չինովնիկության, կովկասյան ժողո-

---

1 Համկ(բ)Պ պատմություն։ Համառոտ դասընթաց, 1950, էջ 7։

վուրդների նկատմամբ նրանց շահատակությունների քննադատությանը նվիրված առաջին նշանակալից գործն է հայ գրականության մեջ*:

Աբովյանի գրական և մանկավարժական գործունեությունից պարզ երևում է, որ նա շարունակական կոնֆլիկտի մեջ է եղել ցարական չինովնիկության հետ: Եվ դա բնական է ու հասկանալի: Ազգության գարթոնքի, «ազգը» լուսավորելու և կրթելու, ժողովրդի շահերը պաշտպանելու ուղղությամբ ծավալած նրա գործունեությունը հակադրվում էր ցարիզմի քաղաքականությանը: Ցարիզմի գործակալներն այդ գիտեին և արդելքներ էին հարուցում Աբովյանի գործունեության դեմ, հալածում էին նրան: Նրանք պարզ տեսնում էին իրենց հակառակորդին: Աբովյանը, սակայն, պարզ կերպով չէր գիտակցում այդ հանգամանքը, նա պարզ կերպով չէր տեսնում իր թշնամուն՝ ցարիզմին: Տեսնելով ցարական չինովնիկության շահատակությունները Հայաստանում, ավելին՝ Անդրկովկասում, և դատապարտելով ու մերկացնելով այդ չինովնիկության գործունեությունը, մեր 19-րդ դարի առաջին կեսի գրականության դեմոկրատական թևի մեծագույն ներկայացուցիչը չհասավ ցարիզմի դեմ ուղղակի պայքարի կոչելու գաղափարին, ուղղակի դեմոկրատիզմին: Դրա պատճառը անցյալ դարի 30—40-ական թվականների հայ իրականության հետամնացությունն ու Աբովյանի սոցիալական հենարանի թուլությունն էր: Սակայն, իր գործունեությամբ ու ստեղծագործությամբ Աբովյանը նախապատրաստեց Մ. Նալբանդյանի հանդես գալը:

---

* Պոեմի վերլուծությանը կանդրադառնանք Աբովյանի պոեզիայի մասին խոսելիս:

Նալբանդյանը շարունակեց այնտեղից որտեղ կանգ էր առել Աբովյանը: Մեծ լուսավորչի անհետացումից քիչ ժամանակ անց Ներսես Աշտարակեցին դիմեց ցարիզմին, որպեսզի բանտ նետել տա Նալբանդյանին, ցարիզմի և ռեակցիայի Թշնամուն, որը շատով գործած հայ հասարակական մտքի դեմոկրատական թևի ամենամեծ ներկայացուցիչը, ուսա մեծ վաթսունականների գինակիցն ու գաղափարակիցը:

Գլուխ IV

ԱԲՈՎՅԱՆԸ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԱԿԱԿԻՐ

Աբովյանը ձգտում էր թուրքական և պարսկական լծակալությունների լծի տակ ճնշված, դարեր առաջ պետականությունից զրկված, կուլտուրական զարգացման ուղուց բռնությամբ դուրս մղված ժողովրդին ցույց տալ իր տեղը, օգնել նրա ազգային զարթոնքին։ «Վերք»-ում և առհասարակ իր ողջ ստեղծագործության մեջ Աբովյանը կատարել է ժամանակաշրջանի խոր ու լայն ընդգրկում, քննել է ժամանակի բոլոր հուզող խնդիրները, ժողովրդի կյանքի, կուլտուրայի, սոցիալական ու քաղաքական վիճակի և զարգացման հեռանկարների հարցերը, նրա, իբրև ազգ կազմավորվելու խնդիրը, որը հանդիսանում էր հասարակության սոցիալ-քաղաքական զարգացման ընդհանուր հարցի մի մասը։ Աբովյանը իր ստեղծագործությամբ աշխատում էր, ինչպես ասացինք, խթանել ժողովրդի ազգային զարթոնքին, նրա մեջ վստահություն ներշնչել իր ուժերի նկատմամբ, նրան դաստիարակել հայրենասիրության ոգով։

«Իսկապես ազգային պատերազմների հիմքը,— գրում է Վ. Ի. Լենինը,— պատերազմներ, որոնք տեղի

են ունեցել առանձնապես 1789—1871 թվականների դարաշրջանում,— կազմել է ազգային մասսայական շարժումների երկարատև պրոցեսը, աբսոլուտիզմի ու ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարի, ազգային ճնշումը տապալելու և ազգային հիմունքով պետություններ ստեղծելու երկարատև պրոցեսը, որպես կապիտալիստական զարգացման նախադրյալ»[1]:

Պարսկական բռնակալության լծից ազատվելուց և Ռուսաստանին միանալուց հետո Արևելյան Հայաստանում ստեղծվեցին կապիտալիստական զարգացման, ուրեմն և հայ ժողովրդի իրրև ազգություն կազմավորվելու հնարավորություններ: Այդ հարցի հանճարեղ բացատրությունը տվել է ընկեր Ստալինը:

Ցույց տալով, որ Արևմտյան Եվրոպայում ֆեոդալիզմի լիկվիդացման և կապիտալիզմի զարգացման պրոցեսը համընկնում է մարդկանց որպես ազգեր կազմավորվելու պրոցեսի և ազգային պետությունների ստեղծման հետ, ընկեր Ստալինն ասում է, որ Արևելքում ազգային պետությունների փոխարեն ստեղծվեցին մի քանի ազգություններից բաղկացած պետություններ: Այսպես է եղել, օրինակ, Ռուսաստանում, որտեղ ազգություններին միավորողի դերն ստանձնեցին վելիկոռոսները: Այնուհետև ընկեր Ստալինը բացատրում է. «Պետությունների գոյացման այդ յուրահատուկ եղանակը տեղի ունենալ կարող էր միայն դեռևս չլիկվիդացված ֆեոդալիզմի պայմաններում, թույլ զարգացած կապիտալիզմի պայմաններում, երբ հետին պլանը մըղ-

---

[1] Լենին, Երկեր, հատ. 21, էջ 191:

ված ազգությունները դեռ անտեսապես չէին կարողացել կոնսոլիդացվել որպես ամբողջական ազգեր»[1]։

Այդպիսի հետին պլանը մղված ազգություններից էր հայ ժողովուրդը։ Եվ ահա Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո սկսվում է հայ ժողովրդի՝ իբրև «ամբողջական ազգ» կազմավորվելը, որը ավարտվում է XIX դարի երկրորդ կեսում։

Խոսելով ազգությունների կազմավորման պրոցեսի մասին արևելյան պետություններում, ընկեր Ստալինը դրել է. «...կապիտալիզմն սկսում է զարգանալ նաև արևելյան պետություններում։ Զարգանում են առևտուրը և հաղորդակցության ճանապարհները։ Առաջ են գալիս խոշոր քաղաքներ։ Ազգերը տնտեսապես կոնսոլիդացվում են։ Նա մղված ազգերի հանդիստ կյանքի մեջ ներխուժած կապիտալիզմը խռովահույզ է անում այդ ազգություններին և շարժման մեջ է դնում նրանց։ Մամուլի և թատրոնի զարգացումը, ռայխստրախի (Ավստրիայում) և Դումայի (Ռուսաստանում) գործունեությունը նպաստում են «ազգային զգացմունքների» ուժեղացմանը։ Մնունդ առած ինտելիգենցիան տոգորվում է «ազգային իդեայով» և հենց այդ ուղղությամբ էլ գործում է...»[2]։

Պարսկական բռնակալության լծից ազատվելը և Ռուսաստանին միանալը խթանեց հայ ժողովրդի ազգային զարթոնքին։ Ռուսական տիրապետության առաջին տասնամյակներին Հայաստանում ֆեոդալիզմի քայքայման ու կապիտալիզմի զարգացման պրոցեսը, նոր հարաբերությունների ստեղծումը արտահայտվեց Աբովյա-

---

1 Ի. Ստալին, երկեր, հատ. 2, էջ 355։

2 Նույն տեղում։

նի ստեղծագործության մեջ: Այդ ստեղծագործությունը և հատկապես «Վերք»-ը հայ ժողովրդի ազգային զգացմունքների ուժեղացման և իրրև ազգություն կազմավորվելու նախնական պրոցեսի ամենավառ արտահայտություններից է:

Աբովյանը լուսավորիչ է: Խոսելով լուսավորչի երեք բնորոշ գծերի մասին, Լենինը ասում է. «Ինչպես և արևմտա-եվրոպական լուսավորիչները, ինչպես և 60-ական թվականների դրական ներկայացուցիչների մեծամասնությունը, Սկալդինը կրքոտ հետևամունքով է համակված գեպի ճորտատիրական իրավունքը և նրա բոլոր արտահայտությունները անտեսական, սոցիալական և իրավական բնագավառում: Այս «լուսավորիչի» առաջին բնորոշ գիծն է: Երկրորդ բնորոշ գիծը, որ ուսական բոլոր լուսավորիչների համար ընդհանուր է,— լուսավորության, ինքնավարության, ազատության, կյանքի եվրոպական ձևերի և առհասարակ Ռուսաստանի բազմակողմանի եվրոպականացման նոանդագին պաշտպանությունն է: Վերջապես «լուսավորիչի» երրորդ բնորոշ գիծը ժողովրդական մասսաների, գլխավորապես գյուղացիների (որոնք դեռևս լիովին ազատագրված չէին կամ նոր միայն ազատագրվում էին լուսավորիչների գարաշրջանում) շահերի պաշտպանությունն է, անկեղծ հավատը, թե ճորտատիրական իրավունքի և նրա մնացորդների վերացումն իր հետ ընդհանուր բարեկեցություն կբերի, և դրան օժանդակելու անկեղծ ցանկությունը»[1]:

Լուսավորիչների բնորոշ այս երեք գծերն էլ արտա-

---

[1] Լենին, Երկեր, հատ. 2, էջ 652—653: Ընդգծումը բնագրումն է:

հայտնություն են գտել Աբովյանի երկերում: Սակայն հայ իրականության այդ ժամանակվա յուրահատուկ պայմանների պատճառով լուսավորական շարժման առաջին բնորոշ գիծը (ընդհանուրը ճորտատիրական իրավունքի և նրա բոլոր արտահայտությունների դեմ) նաև յուրահատուկ երանգ է ստացել: Շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի բարբարոսական սիրապետության տակ տառապող հայ ժողովրդի համար սոցիալական հարցերի հետ միասին հրատապ էին նաև օտար բռնակալական լծի դեմ մղվող պայքարի հարցերը: Այդ խնդիրները արտացոլված են Աբովյանի ստեղծագործություններում: Թեև ոչ որոշակի և խորը կերպով Աբովյանը քննադատել է նաև ճորտատիրությունը, այդ մասին խոսք կլինի քիչ հետո:

Աբովյանը գիտեր, որ դարեր շարունակ բռնակալական լծի տակ գտնվող ժողովրդի ազգային ինքնաճանաչության գալը դժվարությունների հետ է կապված:

Էն ի՞նչ շունչ կըլի, որ էս նոր հոգին
Փչի, վերկացնի քնից մեր ազգին.
Էն ի՞նչ ձեռք կըլի, որ մեր աշխարքին
Էլ նոր սիրտ տա ու կանգնեցնի կրկին[1].

խորին հուզմունքով բացատրում է Աբովյանը «Վերք»-ում:

Պարսկական բռնակալության լծի տակ գտնվող Երևանի բնակչության մասին Աբովյանը ասում է՝

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 165:

«Սրանք փեսի տակին են մնծացել»։ Դարեր շարունակ բռնակալության լծի տակ տառապած ժողովրդին լուսավորել ու կրթել հնարավոր է միայն համառ, տևական աշխատանքով։ «Հայոց ազգի ջանի՛ն դուրբան՝ մեկ նրա երեխին ուսում տո՛ւր,— ասում է Աբովյանը,— նրա էն լուսաթաթախ հոդին կրթի՛ր, կրթիլ եմ ասում, թուղթ խաղալ, ֆրանցուզերեն խոսիլ, անդիր բերան անիլ, դլխիցը դուս տալ՝ չեմ ասում ու շարական, փոխ, յա շիլափլավ ուտիլ սովորցնիլ, որ մեզ էստեղն ա քցել, տեսնիմ՝ թե ջան կտա քեզ, թե չէ։ Մինչև դարումքը չդա, ծառը չի՛ ծաղկիլ, առանց ամառի պտուղ չի՛ հասնիլ, դու ուզում ես՝ որ ձմեռվան էն սաստիկ ցուրտ, սառած ժամանակին վարդի հոտ առնիս քո բաղումը, հասած պտուղ քաղես քո բախչումը, էդ էլա՞ծ բան ա, կամ կըլի՞ ըսկի... Խեղճ ազգի հոգին մինչև էսօր քաղել են, հազար տարվա յարա ունի արտումը, որ դեռ չի՛ սաղացել։ Ինքան դառն արտասունք ա կուլ տվել, որ ո՛չ աչքումը լիս կա, ո՛չ բերնումը համ, ո՛չ արտումը եղ. դու հենց ուզում ես՝ որ էստոնք մեկ ահաթումը անց կենա, ի՞նչպես կըլի»[1]։

Աբովյանն իր ստեղծագործությամբ այդ նպատակն է հետապնդում, նա ձգտում էր գրականության միջոցով բորբոքել հայրենասիրական զգացմունք, որպեսզի լսողը, կարդացողը իմանա «քո ազգի սերը ի՞նչ լաղաթ ունի, ի՞նչ զորություն»։

Դրա համար նա սիրում է գովերգել հայ ժողովրդի լավագույն գծերը, նրա աշխատասիրությունը, խաղա-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 61։

պասիրությունը, ըմբռնած ոգին և հերքել «ցնդի ավանդությունները»։

«Շատ մարդիկ էնպես են կարծում՝ թե մեր ազգի անմիաբանությունն է մեր թագավորության վերջանալու պատճառը,— գրում է Աբովյանը։— Քա՛վ լիցի։ Էսպես ասողքը ուրիշ ազգաց պատմությանը ամենևին տեղյակ չեն և ընդվայր տեղը մեր ազգին մեղադրում են[1]»։

Մի այլ տեղ, անդրադառնալով նույն հարցին, Աբովյանը ավելի խիստ է քննադատում հայկական պետականության կործանումը հայի բնավորությամբ բացատրող տեսակետները և փորձում է այդ հարցին գիտական բացատրություն տալ։

«Էն ջրհեղեղը, որ մեր աշխարհը մտավ,— գրում է Աբովյանը,— այսինքն էն գազան ազգերը, որ մեր աշխարովը անց կացան, սար ըլեր, նրանց ոտի տակին կհավասարվեր, ծով ըլեր, կցամաքեր, բայց մեր ազգը՝ սարի տեղակ իր դոշը, ծովի տեղակ՝ իր արինը դեմ անելով, է՛ն հոգին ուներ, որ էնպես զորեղ ազգերը կորան, փշացան, նա էլի իր գլուխը նրանց փոշուցը հանեց, էլի սկսեց զորանալ, բազմանալ»[2]։

Աբովյանը խիստ քննադատության է ենթարկել հավրոպացի այն պատմաբաններին ու ճանապարհորդներին, որոնք իրենց պատկերացնում են երկնքից «միմիայն նրա համար իջած, որպեսզի ուրիշների թերությունները քննադատեն» և «անխղճորեն հարձակվում են» հայ ժո-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5. էջ 87—88։ Ընդգծումը բնագրումն է։

2 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 98։

ղովրդի վրա[1]: Մեր ժողովրդին վարկաբեկելու հարցում դրանց չեն զիջում Հռոմի պապի գործակալ միսիոներները, որոնք չկարողանալով ժողովրդի մեջ «Պապի իշխանությունը ծավալել... իրենց թույնը այդ կերպ են արտավիժում»[2]:

Հակառակ դրանց, Աբովյանը, վկայակոչելով ստեղծված կուլտուրական արժեքները, ճարտարապետական կոթողները, ասում է, որ հայ ժողովուրդը «սեփական աշխատանքով փառքի և մեծության այդ աստիճանին հասած, խաղաղ, հնչ, գործունյա, դաժան ճակատագրով բոլոր մեծ ու անթիվ նվաճողների խաչուղիների վրա դրված ժողովուրդ է»[3], և որքան էլ փոքրաթիվ է հզոր թշնամիների համեմատությամբ, այնուամենայնիվ երբեք չի պակասել նրա արիությունն ու անվեհերությունը, իր անկախությունն ու ազատությունը պաշտպանելու նրա մարտական ոգին[4]:

Հակառակ եկեղեցու հնազանդության քարոզներին ու դրանց թողած վատ ազդեցությանը, ժողովուրդը հեռուսաբար կռվում է բռնակալության դեմ: Սարդարը, ժողովրդի այդ արյունախում թշնամին, ասում է. «Հայ ազգը ո՛չ թրից ա վախենում, ո՛չ թվանքից, ո՛չ թոփից... որդին ես քաշում՝ ինքն ա հետը կրակն ընկնում, հորն ես բռնում՝ որդին ա գլուխը մահի տալիս... Արևի, անձրևի, կոռի, բեգյարի տակին չորացել՝

---

1 ՀՍՍՌ Դիտ. ակ. Գրակ. ինստ. Դրական բանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 23:

2 Նույն տեղում, գործ № 40:

3 Նույն տեղում, գործ № 23:

4 Նույն տեղում, գործ № 40:

չոփ են դառել, էլի որ մեկի մոլին դիպչում ես, ասլան ա դառնում, մարդի պատռում»[1]։

Սարդարին բարկացնում է հայ ժողովրդի տոկունությունն ու մարտական ոգին։ Նա զարմացած է, որ իրենց չի հաջողվում ոչնչացնել հայ ժողովրդին։ Այդ հարցի հանճարեղ լուսաբանությունը տվել է ընկեր Ստալինը. «...Պարսկական և թուրքական ասիմիլատորները,— գրում է ընկեր Ստալինը,— հարյուրավոր տարիներ ծվատում, խոշտանգում ու բնաջնջում էին հայ և վրացի ազգերին, բայց նրանք ոչ միայն չկարողացան ոչնչացնել այդ ազգերին, այլ—ընդհակառակը— հարկադրված եղան... տեղի տալու»[2]։

Աբովյանը հայ ժողովրդի հայրենասիրության ու ազատասիրության համար օրինակներ է վերցնում նաև մեր ժողովրդի պատմական անցյալից։

Խոսելով բռնության, օտար նվաճողների դեմ ժողովրդի մղած կռիվների մասին, նա ցանկացել է խթանել ժողովրդի ազգային ինքնագիտակցությանը, հավատ ներշնչել նրան իր կենսունակության, ուժի, ստեղծագործական կարողությունների, ապագայի նկատմամբ, այսինքն՝ պատմությանը դիմելով նա հետապնդել է միանգամայն արդիական նպատակ։

«Մի երկու խոսք էլ հայոց վրա» գործում Աբովյանը բացատրել է, թե ինչու է ինքը դիմում պատմությանը. «Հային էլ, որ էս օր ասում ես, թե իր ազգը մեծ ա էլել ժամանակավ, երազ է համարում, չի՛ հավատում»։ Դրա պատճառը այն է, ասում է Աբովյանը, որ երկար

---

1 Ե. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 129։

2 Ի. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 395։

տարիներ նա զրկված է պետականությունից և գտնվում է «օտար աղգի ձեռի տակ»: Ժողովրդի հետաքրքրությունն իր պատմության նկատմամբ ազգային գարթոնքի, ազգային արժանապատվության զգացումի ուժեղացման միջոց է, դրա համար էլ Աբովյանը շահագրգռված է, որ ժողովուրդը կարդա «իր ազգի պատմությունը»: «Քանի մարդ անտեր մնա, միտքը խավար, աչքը խուփ, ո՛չ օրինակ տեսնի, ո՛չ իր ազգի պատմությունը կարդա կամ լսի, էնքան կրրդանա, սիրտը կհովանա, ամեն բանից կհետանա»[1]:

Երբ մի դրագետ մարդ պատմում է ուրիշ ազգերի «երևելի» մարդկանց գործերի, քաջությունների մասին, ասում է Աբովյանը, լսողը ինքն էլ է խանդավառվում, ուզում է հետևել նրանց գործին: Ուրիշ ազգեր իրենց նշանավոր, «ազգի համար պիտանի» բան արած մարդկանց պատվում են, նրանց մասին գրում, արձան կանգնեցնում, որ երիտասարդ սերունդը հետևի նրանց օրինակին. «Բայց ա՛խ՝ ո՛ւր մեր ազգի միջի էլած երևվելի անձանց արձանը, կամ պատմությունը, կամ գովասանությունը, թե կային էլ, որը ոտի տակով էլավ, ջնջվեցավ, որն էլ էնպես ա գրած կամ շինած, որ միջումը էն կրակը չի՛ կա, որ կարդալիս մարդի սիրտը վառվի»[2]:

Մեծ հայրենասերին մասնավորապես դայրացրել է հայ բուրժուազիայի մոտ ազգային զգացման բացակայությունը, արտաստահմանյանի առջև նրանց ստրկահաճությունը: Դրանք «ինդլիզի, ֆրանցուզի» մասին պատմելով, «տաք-տաք ուրըշին գովելով», լռում են կամ արհամարհական ձևով արտահայտվում, երբ խոս-

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 96:
2 Նույն տեղում, էջ 97:

քը «մեր» մասին է. «Ինչ ա հայի լեզուն,— ասում են նրանք,— ո՞վ նրանից խեր կտեսնի, ո՞ւմ ձեռը մի փող կընգնի»։ Ազգային արժանապատվությունից զուրկ, հայ լեզվի ու կուլտուրայի թշնամի, միայն անձնական շահի ու կարիերայի հետամուտ այդ «փողակեր, շնակերները» ուզում են, որ հայի «բոքը կտրվի», «հայի անումը որ վրես չէր էլել,— ասում են նրանք,— ես գիտեմ թե ի՞նչ տեղ կըճարեի, ի՞նչ փառքի կհասնեի, քանի խաչ ու կավալեր կըճարեի»։

Դատապարտելով ու մերկացնելով հայ բուրժուազիայի այդ վարքագիծը, Աբովյանը, ինչպես տեսանք, անհուն սիրով, ջերմությամբ է խոսում հայ ժողովրդի աշխատասիրության, տոկունության, մարտական ոգու, հարուստ լեզվի մասին, պահանջում է վեր հանել հայ ժողովրդի պատմության լավագույն էջերը. «Թո՛ղ մեկ քանի բան էլ մեր ազգիցը պատմենք, թո՛ղ ինչպես որ էնպես տաք տաք ուրըշին գովում են, մեր ազգին էլ գովենք, տե՛ս՝ թե էն ժամանակը մեր երեխեքը՝ ի՞նչպես կսկսեն ջանք անել, որ իրանք էլ լավ, ազդաշեն մարդ դառնան, որ իրանցից եղը իրանց անունն էլ մնա ազգի միջումը։ Հենց բերաններս բաց ենք անում, առակ ենք ասում, ուրիշ լեզվից ա, օրինակ ենք բերում, նմանապես, հենց ասում ենք «Եվրոպա, Եվրոպա», բայց մեր վրա խոսալիս, Աստված հեռու տանի, ի՞նչ չենք ասում. բաս մեր երեխեն մեզ կսիրի՞։ Բաս ազգի սրտումն էլ բարի նշան կմնա՞»[1]։

Հակառակ անտոհմ կոսմոպոլիտների, Աբովյանը հորդորում է սիրել հայրենիքը, սիրել մայրենի լեզուն. «Ասենք բլբյուլի լեզուն քաղցր ա, վերու Հավին (խոխոբին), սիրամարգին Աստված գեղեցիկ գույն, սիրուն

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 99։

իներ ու բմբուլ ա ավել,— գրում է Աբովյանը։—Ասենք վարդը շատ գովելի ա, բայց ընչի՞ չի մանուշակը իր հոտը նրան տալիս։ Մի՞թե վարդին տեսնողը՝ մանուշակին չի՛ սիրիլ։ Սարի անհոտ ծաղիկն էլ՝ իրան տեղը, իրան փառքը վարդի հետ չի՛ փոխիլ։ Մի՞թե բլբյուլի լսողը՝ կանարեյկին էլ չի՞ պետք է պահի։ Ամեն բան իր դինն ունի, շաքարեղենը քաղցր ա, ամա հացի տեղը ե՞րբ կբռնի»[1]։

Սակայն պատմական անցյալի մասին խոսելիս, «մեր ազգի արած բաները» պատմելիս և առհասարակ «ազգին գովելու», ազգային հպարտության զգացում առաջացնելու իր ցանկության մեջ Աբովյանը երբեմն ծայրահեղությունների է հասնում, իդեալականացնում է պատմական անցյալը։ Այդ նրա աշխարհայացքի թույլ կողմերից մեկն է։

Դարեր շարունակ բռնակալական լծի տակ ապրող ժողովուրդը, դիմելով ռուսական օգնության, պարսկական բարբարոսական տիրապետությունից ազատվելու ժամը մոտեցած էր համարում։ Այդ հողի վրա ավելի է բորբոքվում աստվածային թշնամու նկատմամբ, հայրենասիրական շարժումը ավելի լայն ծավալ է ընդունում։ Ժողովրդի ազգային զարթոնքը, ազգային ինքնագիտակցության գալը դրսևորվում է հայրենասիրության, օտար լուծը տապալելու համար զենքի դիմելու փաստի մեջ։

«Հայաստան աշխարքը շատ վախտ էր նեղության, ավերման տակ ընկել, ամա էս ամենիցը անց կացավ,—գրում է Աբովյանը։—Սար ու ձոր դառել էր գողի, ավազակի բնակարան։ Ամեն կողմից Պարսիկք է՛նպես

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 63։

տոը բարձրացրին հանկարծ, որ էլ դեմ կենալու ճար չկար։ Բայց է՛ս նեղությունն էր, որ Հայոց էլ է՛ն հոգին էր տվել, որ թե մեկ կողմից իրանց աղգին ոտի տակ էին տալիս, մյուս կողմից իրանք էին թշնամու արինը ծծելով ման գալիս»[1]։

«Վերք»-ը հայ ժողովրդի հերոսապատում է։ Պայքարի ոգին չի մեռել հայ ժողովրդի մեջ, նա զենքի է դիմել և կռվում է իր ազատության համար. ահա «Վերք Հայաստանի» վեպի արտահայտած հիմնական գաղափարը։ Դիմելով ժողովրդին Աբովյանն ասում է.

Շունչդ տո՛ւր, հոգիդ, բայց քո հայրենիք
Մի՛ տար թշնամյաց, ու անաշխարհիկ
Ընկնիլ սարե սար, լինիլ չարաչար
Ծառա օտարաց, կամ գերի անճար[2]։

Եվ ժողովուրդը պատրաստ է շունչն ու հոգին տալ, բայց հայրենիքը ազատել գերությունից. «Մենք որ իրար թասիր քաշենք, իրար բոմակ աննենք, իրար պայծառացնենք, շենացնենք, ծովն էլ տեղիցը վեր կենա մեզ տակովը չի՛ կարա անիլ, ինչ թե Օսմանցին յա Պարսիկը»[3],— ասված է «Վերք»-ում։ Դրա համար ժողովրդին չի պակասում ոչ կամք, ոչ եռանդ. «Լավ արիններս էլ եռ ա գալի, լավ սիրտ էլ ունենք, տղամարդություն էլ՝ որ մեր դուշմանի հախիցը վեր գանք»[4],— ասում են «Վերք»-ի հերոսները։ Սակայն ժողովրդին ոտքի չեն հանել, դեպի մարտ չեն տարել, ընդհակառակը, զենքի դիմելը համարվել է հակաաստվածային բան, դա-

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 121։
2 Նույն տեղում, էջ 94։
3 Նույն տեղում, էջ 60։
4 Նույն տեղում, էջ 81։

տապարտվել է հոգևորականության կողմից։ Այլևս անհնար է շարունակել այդ վիճակը, ժողովուրդը պահանջում է իր իրավունքները՝ չընկրկելով զենքի առաջ։ Կենդանական աշխարհից իսկ վերցրած օրինակներով Աբովյանը ցանկանում է հաստատել զենքի դիմելու, ինքնապաշտպանության անհրաժեշտության գաղափարը. «Սարի հայվանն էլ մեզանից լավ ապրում, հարամուց, ֆորսկանից յա փախչում, յա վրա թռչում, կտրատում, գլուխը պահում.— ասում է «Վերք»-ում մի գյուղացի,— ծոխ բունն էլ որ քանդում ենք, դժվժում, թևին գլխին անում։ Մենք ծոխ ղդար էլ ա չկա՞նք, որ մեր բունը պահենք»[1]։

Ժողովրդի ոտնահարված իրավունքները կարելի է պաշտպանել միայն զենքով, անդամ քնած ժամանակ էլ պետք է «թուր ու թվանքը» բարձի տակ պահել,— ասում են գյուղացիները։

Ապա Աբովյանն անցնում է զենքով իրենց և հայրենիքի պատիվը պաշտպանող հերոսների ու նրանց հերոսություննների պատկերմանը։ Այդպիսի հերոսներից ամենանշանավորը Աբովյանի և ժողովրդի սիրելի Աղասին է, որի կերպարի վերլուծությանը կանդրադառնանք հետո։

Աբովյանը նկարագրում է հայրենիքի ազատության ու անկախության համար մղված պայքարի մի շարք դրվագներ, ցույց է տալիս, թե ինչպես Փամբակի, Լոռու, Մուշի, Բայազետի հայերը, արձակ դաշտերում ու լեռներում մեծանալով և եկեղեցու ու քահանայի քարոզներից հեռու դանվելով, պահում են «քաջ տղամարդության հոգին»։ Դրանց չի վախեցնում վարդապե-

---

1 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 3, էջ 171։

ոի և ավետարանի սպառնալիքը՝ թե արյունահեղության համար դժոխք կգնան։ Դրանք զենքով են դուրս գալիս հայրենիքի թշնամու դեմ. «Մատը բարձրացնողի՝ սաղ ձեռն են բերանը կոխում, հավ թռցնողի՝ գլուխը թրոցնում»։ Այդ է պատճառը, որ թշնամիները նրանցից հեռու են փախչում և չեն ուզում «քաջ լոռըցոց թվանքի դյուլլի կամ մեկ լիտրանոց թրի» ուժը փորձել։ Այդ հերոսներից է Դսեղցի Մեհրաբյան Թումանյան Հովակիմը, որի անունն իսկ «քարեր է սասանեցնում»։ Նրա ոսկորները «պապանների ու հարամու» արյուն թափելով են հաստացել։ Թշնամին սարսափահար փախչում է Հովակիմներից. «Ա՜խ՝ ի՞նչ տեղ են կենում՝ որ էսպես չանեն, էս սիրտը չունենան,— գրում է Աբովյանը,— վարժատան չէին՝ մեռած բառով, անհոգի շնչով, թույլ լեզվով լսել, թե Հայք էլ վաղ թագավորություն ունեին, որ կամ չհավատային, կամ քունները վարպետի անսիրտ պատմության վրա տաներ։ Ամեն քար նրանց համար դիրք ա, ամեն ապառաժ նրանց համար պատմություն, ամեն հին բերդ, քանդված մատուռ կամ եկեղեցի, որ սար ու ձոր լիքն են էս տեղ, նրանց համար կենդանի վարժապետ»[1]։ Իսկ Հովակիմները միայնակ չեն. միայն Լոռու Դսեղ գյուղում ինձ նման հազարավորները կան, ասում է Հովակիմը՝ դիտմամբ գույները խառացնելով։ Այսինքն՝ հայրենիքի փրկության համար մղվող պայքարին մասնակցում է ժողովուրդը և ոչ մի քանի անհատներ։ Որպեսզի այդ պայքարը ավելի համաժողովրդական բնույթ կրի, պետք է լուսավորություն տարածել։ Ժողովուրդը դուրս է եկել բնական ճանապարհից, ասում է Աբովյանը, նա գտնվում է բռնակալականի

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 93։

ջի տակ, հոգևորականությունը աշխատում է նրան հաշտեցնել տարկական կացության հետ: Այդ վիճակը խորապես անբնական է: «Վա՛յ էն ազգին, որ աչքն էնպես դոդում բաց կանի, որ լսի տեղ խավար կտեսնի,— գրում է Աբովյանը:— Աչքը բաց դուլ ճամփեն կիմողա, քարեքար կընդնի: Վա՛յ էն ազգին, որ բնական օրենքը կիմողա, անբնականին կհետևի, որ էնպես խրատ ավող չի ունեննալ, որ նրան հոգի տա և ո՛չ հոգին էլ հանի»[1]: Կրթությունը և լուսավորությունը պետք է ժողովրդին հանեն անբնական վիճակից ու «դուլ ճամփեն» ցույց տան, այսինքն՝ նրան դաստիարակեն հայրենասիրության ոգով, հայրենիքի թշնամիների դեմ կռվելու, հայրենիքի փրկության համար զոհվելու պատրաստակամության ոգով, որովհետև որքան լուսավորվի ժողովրդի միտքը, այնքան նա շուտ կգնա դեպի հայրենիքի պաշտպանության դիրքերը. «Երբոր, որ լավ կարդացող էր էլել,— գրում է Աբովյանը,— երեխեքանց ջոկ, ժողովրդին ջոկ՝ դիշեր ցերեկ խրատ էր տվել, կարդացրել, լուսավորել էր, հմիկ մեր ազգը է՞ս հալին կըլեր, է՞սոնց կընդներ»[2]:

Մարդու կյանքի նպատակը հայրենիքին ծառայելը պետք է լինի. մարդ մեկ անգամ է աշխարհ գալիս, այնպես պետք է անի, որ իր անունը անմահացնի, ասում է Աբովյանը: Իսկ ո՞րն է անմահության հասնելու ճանապարհը. «Քո գո՛րծքը, քո գործքը միայն քո անունը կպահեն: Հայրենասիրությունը միայն քո հիշատակը կտոնի, ազգասիրությունը քո արածը՝ կենդանի կպահի,

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 171:

2 Նույն տեղում:

քեզ սրբի տեղ պաշտիլ կուա։ Հայրենյաց հողը քո անգին ոսկերքը, քո սուրբ գերեզմանը ամեն անցկենդողի առաջին կկանգնացնի ու մատով ցույց կուա. «Թե ուզում ես, քեզ էլ էսպես սիրեմ, գգվեմ, դու էլ ինձ սիրի, ինձ պայծառացրու, ի՛մ սիրելի որդյակ»»[1]։

Այսպիսով, «Վերք Հայաստանի»-ն ոչ այնքան ողբ է հայրենիքի թշվառ վիճակի վրա, որքան «հարամի ղըլըաշի» տիրապետության ներքո գտնվող հայ ժողովրդի ըմբոստ ու ազատասեր ոգու արտահայտությունը, նրա մղած կռվի արտացոլումը։ Պատահական չէ, որ Արովյանը վեպի ենթավերնագրի «ողբ» բառի փոխարեն վեպի ձեռագրերից մեկում գրել է «վիշտ»։ Սակայն այս հանգամանքն էլ եթե նկատի չունենանք, էլի «Վերք»-ը մնում է իրրև հայ ժողովրդի հերոսապատումը։ Հետաքրքրական է, որ առաջին անգամ «Վերք»-ը իրրև միաժամանակ կռվի կոչող երգ է դիտել ռևոլուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը՝ Արովյանի վեպի ամենաճիշտ գնահատողը մինչմարքսիստական հայ բննադատության մեջ։ «Վերք»-ի մեջ, ասում է Նալբանդյանը, «մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը։ Այստեղ, որպես մի կախարդական հայելու մեջ, ցույց է տալիս բանաստեղծը հայոց ազգի ընտանեկան կյանքի անշուք և անմխիթար պատկերները... պարսիկների բարբարոս վարվեցողությունը մեր խեղճ ազգի հետ, մեր ազգի հարստահարված վիճակը»[2], դրա հետ միասին «Վերք»-ը

---

1 Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 196։

2 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 279։

ցույց է տալիս, որ «ո՛չ բոլորովին սառել է» արյունը «Հայաստանի զավակների երակներում», որ կան Աղասու և նրա ընկերների նման «ջերմարյուն» տղամարդիկ, որոնք հայ ժողովրդին կռվի են հրավիրում իր կորցրած իրավունքները և ազատությունը պահանջելու:

Միանգամայն իրավացի է Թումանյանը, երբ ասում է, թե Աբովյանը դուրս գալով «կոտորածների ու տառապանքների տակ հեծող ժողովրդի միջից» տեսել է հայ ժողովրդի ծանր, թշվառ վիճակը, իր մաղձն է թափել բռնության ու անարդարության դեմ և իր հերոս Աղասու միջոցով ըմբոստացման դրոշակ է պարզել ընդդեմ բռնության, «Վերք Հայաստանի»-ով աշխատել է ըմբոստացնել հայ ժողովուրդը: Ուրեմն Աբովյանը մարտի է կոչել, երգել է հայ ժողովրդի մղած պայքարի և քաջագործությունների փայլուն օրինակներ: Հ. Թումանյանը «մեր ազգի սիրած «Վերք Հայաստանի»-ի, որպես ապոլոնյան հայելու մեջ, տեսնում է մի կողմից՝ հայ ժողովրդի վերքը, իսկ մյուս կողմից նրա՝ (ժողովրդի) օտար բռնակալության դեմ մղած պայքարի արտացոլումը: Այդ երկու հարցերն էլ հուզել են Աբովյանին և նա «էս խոր վերքը, իր աչքի տեսած տանջանքն ու տառապանքը, կռիվն ու քաջությունը հրեղեն լեզվով պատմել է մի գրքի մեջ՝ անունը դրել «Վերք Հայաստանի»»[1]:

Աբովյանը բարձր է գնահատել հայ ժողովրդի առաքինությունները, նրա ստեղծած կուլտուրան, լեզուն: Հիանալի ծանոթ լինելով հայ ժողովրդի անցյալին ու ներկային, Աբովյանը ազգային հպարտության զգացումով է խոսում իր ժողովրդի մասին:

Աբովյանի ժողովրդասիրությանն ու հայրենասի-

---

1 «Թումանյանը Ռենպատում», 1939, էջ 203:

յութեանը խորթ են ուրիշ ժողովուրդների նկատմամբ թշնամանք հրահրելու տրամադրութիւնները։

Իր ժողովրդի պատմի նախանձախնդիր Աբովեանը սիրով է արտահայտվել նաև մյուս ժողովուրդների մասին, բարձր գնահատել նրանց առաքինութիւնները, նրանց ստեղծած կուլտուրական արժեքները. իբրև մեծ հայրենասեր ու ժողովրդասեր նա քննադատել է ազգային սահմանափակութիւնն ու անհանդուրժողութիւնը։ Դա ամեն մի ժողովրդական հայրենասիրութեան հատկութիւնն է։ Նացիոնալիզմը շահագործողական դասակարգերի իդեոլոգիա է։ Ժողովուրդների մեջ ատելութիւն ու թշնամանք սերմանելը ձեռնտու է շահագործողներին, ժողովուրդների համերաշխութիւնն ու եղբայրութիւնը՝ աշխատավորութեանը։ Անշուշտ պատահական չէ, որ բուրժուա-նացիոնալիստական դրականագիտութեան քուրմերը, որպեսզի Աբովեանին համարեին մարտական նացիոնալիզմի արտահայտիչ, ամենից առաջ ժխտեցին նրա դեմոկրատիզմն ու հումանիզմը և նրան հայտարարեցին շահագործող դասակարգերի դաղափարախոս։

Աբովեանի հայրենասիրութեան ու հումանիզմի հիմքը նրա դեմոկրատիզմն է, նա հայ ժողովրդի բարեկեցութեան հարցը չի կապում մյուս ժողովուրդների ճնշման ու հարստահարման հետ։ Մեծ լուսավորչի համար կարևորը մարդն է, «իսանաորդին», անկախ նրանից, թե նա ինչ ազգի է պատկանում, ինչ լեզվով է խոսում կամ ինչ կրոն է դավանում. «Թե Թուրք ըլի, թե Հայ, կամ թե Նասրանի, Աստծո ստեղծածն չե՞ն ու մեր պատկերը»,— ասում է Աբովեանը «Աղասու խաղը» պոեմում։ Մարդկային լավագույն գծերը հատուկ են բոլոր ժողովուրդներին, նա այդ լավագույն գծերը տեսել ու դրվատել է

և հայերին հարևան (ադրբեջանական, վրաց, քուրդ) և Հայաստանից հաղարավոր մղոններ հեռու գտնվող (նեգրեր, հնդիկներ, Ամերիկայի բնիկներ) ժողովուրդների մեջ։ Այս հարցում Աբովյանի ելակետը որոշ է՝ նա ատում է ամեն կարգի բռնակալություն և պաշտպան կանգնում ճնշված ժողովուրդներին, աշխատավոր մարդուն առհասարակ։

«Ամերիկու լիս քցիլը» պրոլոգում մերկացնելով եվրոպական «մարդասեր» պետությունների գաղութարարական քաղաքականությունը տեղական ժողովուրդների նկատմամբ, Աբովյանը պաշտպան է կանգնում վերջիններիս։

Աբովյանի՝ իբրև ռուս և հայ ժողովուրդների բարեկամության դրոշակակրի մասին մենք մանրամասնաբար խոսել ենք։ Այժմ համառոտակի կանգ առնենք հայ և Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության մասին Աբովյանի գրածների վերլուծության վրա։

Աբովյանը մասնավորաբար բարձր է գնահատել վրացի, հայ և ադրբեջանական եղբայրական, դարավոր դրացի ու բախտակից ժողովուրդների բարեկամությունը և իր ստեղծագործությամբ մեծ դեր է խաղացել այդ բարեկամության ամրապնդման գործում։ Մոտիկից ծանոթ լինելով այդ երեք ժողովուրդների կյանքին, կուլտուրային, կենցաղին, պատմությանը, Աբովյանը գիտեր, որ այդ ժողովուրդների կյանքն ու պատմական ճակատագիրը շատ ընդհանրություններ ունեն։ Ադրբեջանական, վրաց և հայ ժողովուրդների բարեկամության մասին Աբովյանը խոսել է իր բազմաթիվ երկերում, ինչպես և գրել է հատկապես այդ հարցին նվիրված գործեր («Վերջին հրաժարական քաջազոր արքային Հերակլի»,

«Ձայն աղաղակի որբոց...», «Հազարփեշեն», «Թուրքի աղչիկը», «Սոնայ, տարաբախտ աղջիկն...» և այլն):

Ժողովուրդների փոխհարաբերության հարցը քննելիս Աբովյանի ելակետը տարբեր ժողովուրդների շահերի ընդհանրությունն է և այդ հողի վրա առաջացած նրանց բարեկամությունն ու համագործակցությունը: Ե՛վ հայերը, և՛ ադրբեջանական ու վրաց ժողովուրդները երկար ժամանակ ճնշվել են պարսկական ու թուրքական բռնակալական լուծերի տակ և Ռուսաստանի հովանավորության տակ անցնելով դուրս եկել զարգացման ավելի լայն ուղի: Նրանք ունեն տնտեսական և քաղաքական շատ ընդհանուր շահեր, դարերով դրացի լինելով, նրանք նաև կենցաղով, սովորություններով, կուլտուրայով ունեն շատ ընդհանուր և հարազատ գծեր: Այդ ժողովուրդների մասին խոսելիս Աբովյանը հաճախ է ասում «մեր խալխ», «մեր ասիացիք»:

Բարձր հումանիզմի արտահայտություն է Աբովյանի վերաբերմունքը եղբայրական վրաց ժողովրդի նկատմամբ: Դրա փայլուն ապացույցն է «Վերջին հրաժարական քաջազոր արքային Հերակլի» արձակ գրվածքը և նրան կցված «Ձայն աղաղակի որբոց...» բանաստեղծությունը, որոնց մեջ Աբովյանը հարազատի սրտացավությամբ է խոսում վրաց ժողովրդի մասին, նկարագրում թե ինչպես արյունռուշտ աղա Մամադ խանի՝ վրաստանի վրա հարձակվելու հետևանքով «զորդի ի ծնօղաց», «զհարսն յառագաստէ» գերի է տարվել: Հայ և վրաց ժողովուրդների բարեկամության մասին Աբովյանը խոսում է հատկապես «Հազարփեշեն» սատիրական պոեմում և «Վերք»-ում (Քուռ ու Ձանգու գետերի սիմվոլների միջոցով):

Աբովյանը ժողովուրդների մեջ տեսնում է շահագործող վերնախավ և «վիղն արևավառ» աշխատավորներ։ Իհարկե, Աբովյանը չհասավ դասակարգային պայքարի դիտակցմանը, բայց նա տեսավ, որ տարբեր ժողովուրդների աշխատավոր մարդիկ ենթարկվում են միանման շահագործման ու հարազատ են միմյանց։ Աբովյանը տեսնում էր, որ սոցիալական ճնշումից բացի, ժողովուրդների վրա ծանրացել է օտար բռնակալության ծանր լուծը։ Պարսիկների և ադրբեջանցիների նույնակրոն լինելու հանդամանքը չի խանգարել Աբովյանին հասու լինել այն ճշմարտությանը, որ պարսկական բռնակալության լուծը անտանելիորեն ծանր է նաև ադրբեջանական ժողովրդի համար։

«Վերք»-ում Աբովյանը ցույց է տվել, որ տարբեր կրոնների դավանող Երևանի բնիկ ադրբեջանական ժողովուրդը և հայերն իրար հետ հարազատների պես են վարվում, որովհետև նրանք «մեկ հողի, մեկ ջրի» որդի են, ապրում են նույն պայմաններում, ունեն արտասահական, քաղաքական միևնույն շահերը։ Ղզլբաշի իշխանության տակ տառապում է և այդ լծից ուզում է ազատվել նաև Թուրք աշխատավորությունը. «Երևանու բնիկ Թուրքերը,— ասում է Աբովյանը,— որ Հայի հետ մնկտեղ մնծացել՝ ախպոր պես էին վարվում, Սարդարին, Հասան խանին անիծելով, թքելով, Ղզլբաշի վրա ատամներ ըրճտացնելով՝ քիչ-քիչ քաշվեցին ու դեմը դնում էին, դեմը ասում. «Տե՛ր աստված, ե՞րբ կըլի, որ քո ողորմության դուռը բացվի ու մենք էս անիծած Ղզլբաշի ձեռից մեկ օր ազատվինք»։ Ջունքի սրանք երդնելով՝ չէին ուզում, մեկ օր էլա, նրանց ծառայեն ու շատ անգամ Հայերի հետ միացել, քշել էին

Նրանց, ամա թրի զոռով էկել, էլ եդ երկիրը զավթել էինն[1]։

Արովյանը տեսել է, թե ինչպես հայ և ադրբեջանական ժողովուրդները միացյալ ուժերով կռվում են իրենց բարբարոսաբար ճնշող պարսկական բռնակալության դեմ։ Պարսկական լծի դեմ պայքարող պարտիզան Ազատին սիրելի է նաև ադրբեջանական ժողովրդին։ Հետաքրքրական է, որ հայ և ադրբեջանական աշխատավորությունը, ինչպես նշել ենք, միացյալ մի նամակով խնդրել է շտապեցնել ռուսական օգնությունը։ Ադրբեջանական աշխատավորները ևս պարսկական բռնակալությունից ազատվելը և ռուսական հովանավորության տակ անցնելը ցնծությամբ են դիմավորել։

Ադրբեջանական և հայ ժողովրդի բարեկամության ցուցադրման և Արովյանի խորը հումանիզմի արտահայտման տեսակետից իր նշանակությամբ արտակարգ բարձրարժեք դրած է «Բուրքի աղչիկը» պատմվածքը։

Ամռան շոգից այգում հանգստացող Արովյանը (հեղինակը պատմում է առաջին դեմքով, իբրև իր հետ պատահած դեպք) տեսնում է, որ ադրբեջանական գեղեցկանատանը թաղում է։ Մահացածի հարազատների սուգը խորապես հուզում է Արովյանին. «Էս լացին, էս արտասուքին, էս կծկծալուն, էս մղկտալուն քար չի՛ դիմանալ»,— ասում է նա և դիմում մահացած ադրբեջանցուն հետևյալ արտասուք բառերով։

«Ներողություն հոգուդ՝ հանդուցյալ մարմին, ա՛յ իմ պատկերակից հողածին։ Հավատներս մեկ չի՛, սիրտներս հո մեկ ա, մեր ժամը չէ՛ իր գալիս՝ մեկ երկնքի

---

1 Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 128։

տակի, մեկ երկրի երեսի էիր հո ինձ հետ կենում, մանգալիս. լեղուդ իմը չէ՛ր, պատկերդ, հոգիդ հո իմի՞ցն էր։ Տերտեր չի՛ քեզ թաղում, մոլլեն էլ հո աղոթք անում, չի՛ հայհոյում։ Խաչ, ավետարան չկա վրեդ, միևնույն հողի տակը չե՞ս մտնում, ուր որ ես էլ պտի մտնեմ։ Խունկ ու մոմ չե՛ն վառում, չե՛ն ծխում, մկամ ա՞չք չի՛, որ վրեդ լալիս ա, սիրտ չի՛, որ քեզ համար էրվում ա։ Բաս ես քա՞րի պես պտի քեզ նայիմ, որ քրիստոնյա եմ, ու աչքս չիսկե՞մ»[1]։

Այնուհետև Աբովյանը լսում է «սար ու ձոր մղկըտացնող» մի այլ ձայն։ Պարզվում է, որ ոգացողը մի աղրբեջանուհի է։ Արհամարհելով կրոնական մոլեռանդության հողի վրա սպանվելու վտանգը, նա մոտենում է ոգացող աղրբեջանուհուն՝ նրան օգնելու հատուկ վճռականությամբ. «Բա՛ջի (քույր իմ)... Հայ եմ, նվրոպացի չեմ, քո երկրացի, քո համշարի, մեկ հողի, մեկ ջրի որդի,— դիմում է նա աղրբեջանուհուն, ապա, տեսնելով, որ նա սարսափում է օտարազգի տղամարդու ներկայությունից, շարունակում է,— քո կսկիծը, քո ձենն ինձ էրեց՝ բա՛ջի. ջանս ուզես, քեզ կտամ, գլուխս ուզես՝ կծախեմ, ես չե՛մ եկել, որ քեզ ինջմիշ անեմ, քո յարափալու փարալու սրտին դհա ավելի ցավ հասցնեմ։ Իսանաորդին, որ իսանաորդու սուքը տեսնի ու դարդ չանի, արտասունքը տեսնի ու ինքն էլ լաց չըլի, ձենը, էն ողբալի ձենը լսի ու ինքն էլ չմղկտա, նա էլ ի՞նչ աստված կունենա, ի՞նչ հոգի, ի՞նչ հավատ... Ինձ պատմի՛ր քո սրտի ցավը, թե ձեռիցս գա՝ բա՛ջի, Աստուծո սուրբ անունը գիտենա, կմեռնիմ, քեզ մեկ ճար կանեմ... Բուր խրես սիրտս, չե՛մ հեռանալ, բարով ինձ հետ ածես, չե՛մ

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 25։

ձեռք վերցնիլ, դուդ վրես հետ աննես, էս չոլումը կմնամ, էս օր չասես, էս գիշեր էլ կմնամ, մինչև քո ցավը չիմանամ, չե՛մ հեռանալ, չե՛մ գնալ։ Թե կթիմ ես, արի՛, քեզ պահեմ, թե հիվանդ ես, Ռո՛ղ դամ քեզ ծառայեմ, թե չէ, էդ ջահել, ջիվան հասակիդ, էսպես օրը ճաշին, էս շոգին, որ ջանավարը բնիցը չի՛ դուս գալիս, դուշը տեղիցը չի՛ հառում, դու նստել, սուբ ես անում, ա՛յ իմ սրտի քանդող՝ ի՞նչպես էդպես ձենը լսեմ ու հանգստանամ։ Թե քո հավատը չունիմ, քո պատկերն ունիմ, թե Թուրք չեմ, Հայ, Քրիստոնյա, մկամ Թուրքին Աստված կա, Հային չկա՞»[1]։

Տեսնելով որ պաշտոնական համազգեստով տղամարդը հայ է, իր երկրացի և հավատակից նրա խոսքերի անկեղծությանը, աղբրիջանուհին վստահում է, սկսում է խոսել, բողոքել կնոջ անասելի ծանր վիճակից դեմ։ Պարզվում է, որ նրա դաժան հայրը տնից հեռացրել է կնոջը և աղջկան էլ արգելել է հանդիպել մորը։ Աղբրիջանուհին խնդրում է հեռանալ, որովհետև նրա, իբրև քրիստոնյայի, ոչ միայն միջամտությունը, այլև ներկայությունը իրենց տան դռանը, կարող է աղետալի վախճան ունենալ— կրոնական մոլեռանդությունից կուրացած հայրը կարող էր երկուսին էլ սպանել։ Աղբրիջանուհին հեռանում է, Արովյանին թողնելով ծանր մտատանջության մեջ։ Կրոնը, մտածում է նա, փոխանակ մարդկանց միացնելու, նրանց մեջ սեր տարածելու (այդպիսին պետք է լինի կրոնը ըստ Արովյանի), մարդկանց բաժանել է միմյանցից, մարդու և մարդկային տեղ դրել է կրոնական խտրականություն-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 26—27։

նը, պատճառ է դարձել բազմաթիվ նախատաշարումների ու ընդհարումների. «Որը կրակով էրեց իր նմանին,— գրում է Աբովյանը,— որը թրով կոտորեց, որը չրով խեղդեց, որը կախ տվեց, որին անիծեց, որին նզովեց: Քո՛, ա՛խ, քո՛ խաթեր շունչդ աստվածային, բարեկամությունը հեռացավ, սերը վերջացավ, քնաստությունը արմատացավ, ատելությունը զորացավ»[1]:

Անբնական, մարդու էությունը խեղաթյուրող այդ վիճակը խորապես հուզում է մեծ մարդասերին, ժողովուրդների բարեկամության դրոշակակրին: Աբովյանը քննադատում է կրոնական մոլեռանդությունը, նրա ըստեղծած չարիքները և երազում այն ժամանակվա մասին, երբ մարդիկ կսիրեն իրենց նմանին. «...ա՛խ, ա՛խ, ե՛րբ էս մեր աչքի կապը կարձակվի, ե՛րբ էս մեր կույր, խավար մտքի փարդեն կպատռվի, որ էլի... իրար սիրենք, իրար ընդունինք, ու ինչպես մեկ հոր որդի, երկրումն մեկ սիրտ, մեկ հոգի, մեկ միտք, մեկ տեղ, մեկ դերեզման ունեննանք»[2]:

Աբովյանի այս դատողությունների մեջ, իհարկե, դեռ նայիվ ու սխալ մտքեր, նա կարծում է, թե նոր, ավելի կատարելագործված կրոն է պետք, որ մարդկանց մեջ սեր արմատացնի: Այդ նոր կրոնը, ասում է նա, կարող է մարդկությունը փրկել շատ չարիքներից: Ըստ որում մարդկությունը կարող է այդ վիճակին հասնել երբ լուսավորվի, նրա «խավար մտքի փարդեն պատռվի»:

Անշուշտ այստեղ չափազանցված է ինչպես կրոնի, այնպես էլ լուսավորության դերը: Մեզ համար սակայն

---

1 Ե. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 33:

2 Նույն տեղում:

արժեքավորն այն է, որ Աբովյանը տեսել է կրոնի բացասական հետևանքները, քննադատել է կրոնական մոլեռանդությունը և դրան հակադրել է բարձր մարդկայնությունը: Աբովյանը չհասավ աթեիզմին, նա միայն հող պատրաստեց այդ ուղղությամբ գործող իր հետնորդների համար: Աբովյանն իր ձայնը բարձրացրեց ընդդեմ կրոնական խտրականության և ցույց տվեց տարբեր կրոններ դավանող մարդկանց ու ժողովուրդների խորապես մարդկային վերաբերմունքի և բարեկամության հուզիչ օրինակներ:

Այդ տեսակետից բնորոշ է նաև նրա «Սոնայ, տարաբախտ աղջիկն...» բանաստեղծությունը, որի հղացման պատճառը եղել է Երևանում պատահած մի իրական դեպք:

Ադրբեջանուհի Սոնան չկարողանալով դիմադրել սիրո բուռն ղգացմանը, «սուրբ բնության» ուժին և կարևորության չտալով կրոնական տարբերություններին, ամուսնացել է ոչ հավատակցի, քրիստոնյայի հետ.

Միթէ հաւատն զօրէ զսպել զկիրս բնութեան,
Որ այսպէս ջերմ կապեաց զսիրտ մեր և զարիւն.

ասում է նա: Սոնան երջանիկ է, սիրած երիտասարդի մոտ նա մոռանում է աշխարհի դառնությունները. «Ի դէմս նորա ծագէր ինձ նոր արև՝ անահ», ասում է նա: Սոնայի, խիզախ ադրբեջանուհու այդ խորապես մարդկային արարքը նրա նկատմամբ թշնամաբար է տրամադրում կրոնամոլ հավատակիցներին («Հաւատակիցք իմ ծարաւի իմում արեան»): Սակայն Սոնայի սերը դրժ-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 246:

բախտ վախճան է ունենում, նա լքվում է սիրած տղամարդու կողմից։ Նվ ահա բոլորովին անօգնական, հայածված, նա դիմում է մեչիտ՝ քավելու իր «մեղքերը»։ Սակայն այդ էլ չի հանգստացնում հետամնաց, նախապաշարված և կրոնական մոլեռանդության թույնով վարակված մարդկանց։ Սոնան և մայրը լքվում են, հալածվում, մեերիմ միակ մարդը նրանց պահապան քրիստոնյա Մանուկն է։

Բարի՝ Քո տես, քաղցր՝ ոտնամուտ Քրիստոնէիդ.
Դու միայն մեր դիշերային հիւր շնորհաբեր՝.

ասում է Սոնան։ Թեև Սոնային դավաճանողը նույնպես քրիստոնյա է, բայց ամեն հավատի դավանողների մեջ կան և՛ լավ, և՛ վատ մարդիկ։ Մանուկին Սոնան համարում է քաջ և իրենց ընտանիքին հավատարիմ։

«Խանդի, թե «կրօնի կատաղութեան» հողի վրա, ասում է Արովյանը, անհայտ չարագործները աղբրիջանական կրոնական տոնի՝ նովրուզ բայրամի նախորդ օրը սպանում են Սոնային, նրա մորը և պահապան Մանուկին։ Կրոնական մոլեռանդությամբ կուրացած ամբոխը տեսնելով սպանված Սոնայի դիակը «խնդայր ընդ տեսիլն»։ Կատարված է սոսկալի եղեռնագործություն, սակայն այդ չի շարժում մարդկանց գութը։ Սոնայի շրջապատի հետամնաց մարդիկ չեն կարող հասկանալ նրա խորապես մարդկային արարքը, նրա մարդկային բարձր առաքինությունները։ «Մարդասիրին միայն աչք, սիրտ դնա արտասուէր», ասում է Արովյանը՝ արտահայտելով այն միտքը, թե Սոնայի արարքը կարող է դնահա-

---

1 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 1, էջ 247։

տել միայն նա, ում համար մարդը, «իսանաորդին» վեր է այս կամ այն կրոնը դավանող մարդուց: Աբովյանը ջերմությամբ, սիրով է խոսում տարաբախտ Սոնայի մասին, ըստ որում Աբովյանի համակրանքի պատճառը ոչ այնքան Սոնայի դժբախտ վիճակն է, որքան նրա հերոսական բնավորությունը, մարդկայնությունը: Սոնան մարդն ու մարդկայինը վեր է դասել կրոնից, ընդվզել է կրոնական նախապաշարումների դեմ և զոհվել: Աբովյանը արդարացնում է Սոնային, նրան համարելով «յանպարտ», իսկ նրա սպանողին՝ «եղեռնագործ»:

«Թուրքի աղջիկը» պատմվածքը և «Սոնայ, տարաբախտ աղջիկն...» բանաստեղծությունը կովկասյան ժողովուրդների բարեկամության արտացոլող խորապես հումանիստական ստեղծագործություններ են ու գրավում են բացառիկ տեղ ինչպես այդ ժամանակվա, այնպես և ողջ 19-րդ դարի հայ ու անդրկովկասյան մյուս ժողովուրդների գրականությունների մեջ:

Աբովյանը բազմաթիվ առիթներով արտահայտվել է նաև քրդերի մասին, ինչպես և գրել է հատուկ ուսումնասիրություններ («Քրդեր», «Քրդեր և եզիդներ»*, «Ակնարկ քրդերի ծագման, ազգայնության, լեզվի, սովորությունների և նիստ ու կացի մասին**», «Մի քանի դիտողություններ քրդերի և եզիդների մասին»):***

Հետաքրքրական է, որ Ղզլբաշի դեմ հերոսաբար կռվող Աղասու պարտիզանական խմբում կան նաև քուր-

---

* ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 44: Գրված է գերմաներեն, տպագրվել է Լայպցիգում 1857 թվին Մ. Վագների «Beitrsäqe zur Ethnoqraphee qes Orients» գրքում իբրև հավելված:

** Նույն տեղում, գործ № 43: Գրված է գերմաներեն:

*** Նույն տեղում, գործ № 41: Գրված է գերմաներեն:

դեր, որոնք երդվել են մինչև մահ նրա հետ լինել, կռվել իրենց ընդհանուր թշնամու դեմ: Աբովյանը սիրով է խոսել «պատմության կողմից մոռացված» քուրդ ժողովրդի մասին, նրան անվանելով պատվական, սքանչելի ժողովուրդ. նա նկատել է, որ քուրդ աշխատավորները ևս «նեղված և ջլատված լինելով թուրք կառավարության կողմից... չեն թաքցնում իրենցատելությունը» թուրքական բռնակալության նկատմամբ և «նվիրվածությունը՝ ռուսների հանդեպ»[1]:

Հարևան ժողովուրդների նկատմամբ Աբովյանի ջերմ ու անկեղծ սիրո մասին է վկայում նաև հետևյալ դեպքը: Դորպատում ուսանելիս մի անգամ Աբովյանը լսում է, որ հիվանդանոցում պառկած է իր երկրացի մի չերքեզ:

«Սիրտ իմ լցաւ խնդութեամբ,— գրում է Աբովյանը այդ մասին,— ամենայն երակք իմ խաղացին ջերմ արիւնք ի լսելն իմ զանուն աշխարհակից: Ա՜խ, ջիա՞րդ, քաղցր է հայրենակիցն, ջիա՞րդ աշխարհակիցն. յայսմ չգտանի զանազանութիւն պանդխտան ի հայրենեաց, եթէ մահմեդական իցէ, եթէ քրիստոնեայ, միմիայն զի իցէ աշխարհակից»:

Կարևորը աշխարհակից, հայրենակից լինելն է. ավելին՝ կարևորը մարդն է և ոչ ազգային ու կրոնական տարբերությունները: Անմիջապես հիվանդանոց գնալով և հիվանդ չերքեզին հանդիպելով, Աբովյանը հարազատի սրտացավությամբ խորապես հուզվել է. «Այլ ո՛հ, յանկողնի տեսի զաշխարհակիցն իմ,— գրում է նա...—

---

[1] «Սովետական գրականություն», 1941, № 9—10, էջ 102:

ևս փարէի ղնովաւ, եթէ ոչ լինէին անդ բազում հանդիսականք»[1]։

Ժողովուրդների բարեկամության պաշտպանը մտածում էր օգտակար լինել հայ ժողովրդին բախտակից կովկասյան ժողովուրդներին, որովհետև նա, ինչպես ինքն է ասել, միշտ աչքի առաջ է ունեցել «ո՛չ միայն Հայաստանի, այլև անդրկովկասյան մյուս ժողովուրդների բախտավորությունը»[2]։ Նա շատ լավ հասկանում էր, որ անհրաժեշտ է Կովկասի ժողովուրդներին դաստիարակել փոխադարձ վստահության և սիրո ոգով։ Առանց կրթության և լուսավորության, ասում է Աբովյանը, «...բնիկները պիտի խորթ մնային այն սրբազան կապակցության, որ միակն է, որ կարող է մոտեցնել, միացնել այս բազմացեղ ազգերի զանգվածը և դարձնել մի անդրդվելի բարեկամական սիրով կապված ընտանիք... այդ մի միատեսակ և ընդհանուր լուսավորության կապ է, որ գործում է մեր կիսագնդի կեսը բռնող պետության մեջ»[3]։

Մեծ հայրենասերը ցանկանում էր Ռուսաստանում ապրող բոլոր ժողովուրդներին բարեկամական սիրով կապված, մի ընտանիքում միացած տեսնել. նա դրա համար բավական էր համարում լուսավորությունն ու կրթությունը։

Այդ է պատճառը, որ Աբովյանն իր գրական և մանկավարժական գործունեության ընթացքում աշխատել է օգնել մյուս, մասնավորապես կովկասյան, ժողո-

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 16։

2 Նույն տեղում, գործ № 49։

3 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 154—155։

վուրդների կրթության ու լուսավորության գործին։ «Դիտողություններ նոր հայերեն լեզվի տարրական դրքի նպատակների մասին» գործում Աբովյանն ասում է, որ եթե իրեն հաջողվի «առաջին փորձը («Նախաշավիղ»-ը—Վ. Պ.) կենսագործել», ապա նա իր բոլոր ուժերը կգործադրի ինչպես աշխարհաբարի քերականություն*, այնպես էլ «այլ օգտակար դրքեր կազմելու և թիրես դրանով,— գրում է Աբովյանը,— Կովկասի հայկույս ուրիշ ժողովուրդների համար էլ օգտակար» լինեմ[1]։

---

* Աբովյանը նկատի ունի «Նախաշավիղ»-ի երկրորդ մասը, որի վրա նա արդեն աշխատում էր։ Այդ աշխատությունը, «Նախաշավիղ կրթության ի պէտս նորավարժից» (մասն երկրորդ) վերնագրով, հրատարակվել է Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի 5-րդ հատորում, 1950 թվին։

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, էջ 50։ ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրականության ինստիտուտի Գրական թանգարանում պահվում է Աբովյանի կազմած՝ ադրբեջաներեն լեզվի քերականությունը — «Краткия правила для словеснаго употребления языка Тюрки (татарскаго) на коем говорят на всем Закавказском крае, в Адербейджане и почти во всей Персии». (Աբովյանի Ֆոնդ, գործ № 28)։

Գլուխ V

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՏԿԵՐՈՒՄԸ ԱԲՈՎՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

Ճիշտ չէ Աբովյանի ստեղծագործության և մասնավորաբար «Վերք»-ի մեջ տեսնել միայն արտաքին թշնամիների դեմ մղված պայքարի արտացոլում: Արտաքին թշնամու՝ պարսկական բռնակալության դեմ ժողովրդի մղած ազատագրական կռվի և Ռուսաստանին միանալու պատմական ակտի պատկերումը, անշուշտ, «Վերք Հայաստանի» վեպի հիմնական հարցն է: Սակայն «Վերք»-ը յուրօրինակ պատմական վեպ է: Նյութ ընտրելով մոտիկ անցյալի պատմական խոշորագույն դեպքերը, Աբովյանը արծարծել է նաև իր ժամանակի հարցերը: Ժողովրդի տգիտության, միջնադարյան խավարի ու շահագործողական հարաբերությունների մասին խոսելով և նոր դրականության անհրաժեշտության պահանջը առաջադրելով, Աբովյանը, անկասկած, նկատի ուներ նաև իր ժամանակաշրջանի հայ ժողովրդի կյանքի կոնկրետ պայմանները, որովհետև, եթե խոսքը վերաբերեր միայն պարսկական լծի տակ գտնվող ժողովրդի ֆիզիկական ոչնչացման վտանգից ազատվելուն, ապա այդ վտանգն

այլևս չկար, Արևելյան Հայաստանը մի տասնամյակից ավելի էր, ինչ միացվել էր Ռուսաստանին։ Հայ ժողովրդի կյանքի ներքին, սոցիալական հարցերը Աբովյանի համար նույնպես կարևորագույն ու հրատապ խնդիրներ էին և նա չէր կարող չանդրադառնալ դրանց։ Նա անպայման նկատի է ունեցել և՛ ազգային, և՛ սոցիալական մոմենտները, երբ գրել է, թե «Վերք»-ով կարելի է իմանալ «էն ժամանակվա մեր աշխարքի հալը»։

Հայ նոր գրականության մեջ առաջին անգամ ժողովրդի կյանքը դարձնելով գրականության օբեկտ, նրա շահերը նրան հասկանալի լեզվով պաշտպանելով, բնական է, որ Աբովյանը չէր կարող անտես առնել ժողովրդի սոցիալական վիճակի հարցերը։

Աբովյանը, որ լավ ծանոթ էր պարսկական և օսմանյան բռնություններին, ապա երկար ժամանակ դիտել և ուսումնասիրել էր Ռուսաստանին միացած Հայաստանի վիճակը, մեզ բավականին ստույգ տեղեկություններ է հաղորդում հայ ժողովրդի՝ 19-րդ դարի առաջին կեսի սոցիալական ծանր վիճակի մասին։ Սխալ է աբովյանագիտության մեջ հայտնված այն կարծիքը, թե «Վերք»-ում նկարագրված է գյուղի մի իդեալական վիճակ։ Առաջին հայացքից այդպիսի տպավորություն իսկապես կարելի է ստանալ։ Ճիշտ է, որ «Վերք»-ի առաջին էջերում Աբովյանը և մանավանդ քեֆի նստած գյուղացիները խոսում են գյուղում, որպես թե, տիրող առատության մասին, պնդում թե «մեկ օձի ձուն է պակաս» գյուղացու անից։ Սակայն հենց նույն էջերում գյուղացիների արտաբինի նկարագրությունը («շատի չուխի վրա հարիր կարկատան») կասկածի տակ է առնում այդ բոլորը։ Գյուղում տիրող

«առաստության» մասին մեկ էլ խոսում են «Ծսի հողի» (Ռուսաստանի տիրապետության տակ անցած հայկական շրջանների) գյուղացիները: Մեր կարծիքով առաջին դեպքում գյուղի «առաստության» գովերգությունը հանդիսանում է նոր ձևավորվող բուրժուական հարաբերությունների դեմ եղած օպոզիցիայի, իսկ երկրորդ դեպքում՝ այդ օպոզիցիայի և Ռուսաստանի տիրապետության տակ ապրելը պարսկականից գերադասելու արտահայտություն: Աբովյանը նույն «Վերք»-ի վերջին էջերում, խոսելով Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող գյուղացիության մասին, նշում է, որ նա «օրվա հացի կարոտ է» (190): Նույն Քանաքեռի մասին խոսելով (որի քեթխուդաները այնժամ էին թե իրենց «ամբարնեը» առաստությունից պայթում են) Աբովյանը գրում է, որ այնտեղ «հազար հարուստ տանիցը քառասուն տուն են մնացել, էն էլ աղքատ, ողորմելի, օրեն հացին կարոտ» (194):

Աբովյանի ժամանակակից դրող և մանկավարժ Մեսրոպ Թաղիադյանն իր «Ճանապարհորդութիւն ի Հայս» գրքում պատմում է, որ Երևանի մոտիկ մի գյուղ ուներ լավ հողեր, հարուստ բերք, այնուհանդերձ գյուղացիներն աղքատ էին, որովհետև Երևանի բդեշխ Հյուսեին խանը բաժանորդ էր լինում եկամուտին, հնձի ժամանակ գալիս էր կիսելու իր բաժինը, իսկ մնացորդներից վերցնում էր արքունի հարկը, նրանց (գյուղացիներին) ոչինչ չէր մնում նույնիսկ իրենց «ծախուցն բաւական»: Երբ բերք չէր լինում «երկնառաք» պատուհասների պատճառով, խանը «ղվնասն զանցառութեամբք ժողովրդեանն արկեալ, բռնանայր նոցա անպատմելի խժդժութեամբ, առնոյր գրաւէր իւր որ ինչ 'ի տունս նոցա գտանէր զկահս և զկարասիս, և

ի պակասիլ նոցուն զկանայս և զորդիս նոցա՝ առ ի վճար ընկերական բաժնի իւրում։ Նա շատ և այն էր՝ զի դերևեալ, յայսցանէ գանիւք ծնուցանէր իւր ոսկիս և ի տանջանաց տառապելոցն հաւաքէր արիւն յարբումն իւր. զաշխարհն համօրէն կեղեքանօքն մաշէր և քրտամամբ նոցա կերակէր իւր դաստակերաս ի Ղազրին և ճոխացուցանէր զդանձն»[1]։

Աբովյանը բազմաթիվ առիթներով խոսել է հայ ժողովրդի սոցիալական վիճակի մասին նաև Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացնելուց հետո։ Ճիշտ է, այլևս չէր կարելի գյուղացու կինն ու երեխաները հարկի դիմաց վերցնել, ինչպես պարսկական բռնակալության ժամանակ էր, սակայն գյուղացիության համար ծանր էր ցարիզմի դաղութային լուծը։ Կառավարությանը ներկայացվող մի փաստաթղթում («Հայերի և անդրկովկասյան մյուս ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական հետամնաց վիճակը և այն բարելավելու միջոցները») նկարագրելով ժողովրդի թշվառ վիճակը և դրա պատճառներից մեկը համարելով «նախկին (պարսկական —Վ. Պ.) կառավարությունը», Աբովյանը զգույշ ձևով ակնարկում է, որ գյուղացիության վիճակը ծանր է նաև ցարիզմի պայմաններում. «Անշուշտ ներկայումս, — գրում է նա 1836 թվին,— նրանց (ժողովրդի—Վ. Պ.) վիճակը ամեն տեսակետից ավելի է հեշտացել, քան առաջ, որովհետև այժմ այնպես չեն հալածվում ու ճնշվում, կարիք չունեն այնքան հարկեր տալու և հոգսեր ունենալու իրենց սեփականության նկատմամբ»[2]։ Տակավին 1832 թվին, Դորպատում հանդիպելով երկու

1 Մ. Թաղիադյան, Ճանապարհորդութիւն ի Հայս, 1847, էջ 277։

2 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական բանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 49։ Ընդգծումները մերն են—Վ. Պ.։

որդիները պարսկական գերությունից ազատելու համար ողորմություն հավաքող Ցահրադ Բադալյանին, Աբովյանը, խորապես ցնցված, դատողություններ է անում հայ ժողովրդի ծանր վիճակի մասին. «Զգայարանք իմ փշրեցան, աչք իմ սևացան, դալարեցաւ սիրտ իմ և մտածմունք իմ, թէ մինչ ե՞րբ աղգ իմ այսպէս թափառեսցի և մուրասցի ի տունս այլոց, անզօրացուցին զիս, յերակունս իմ խաղաց արիւն, յաչս իմ ցնդեցան արտասուք[1]»: Աբովյանն այդ հանդիպման մասին գրել է մի բանաստեղծություն, որին կցած ծանոթության մեջ այն միտքն է հայտնում, թե աղքատությունը բավական մեծ ծավալ է ընդունել. «Այնպիսի Ցահրադք յիւրաքանչիւրում աւուր հարիւրաւորք շրջին ի փողոցս քաղաքին մերոյ (Դորպատում — Վ. Պ.)* վասն մշակութեան»[2]: Ապա անդրադառնալով հայ ժողովրդի վիճակին, Աբովյանը շարունակում է. «Զյիշեալ Ցահրադն ևս աղքատութիւնն էր հասուցեալ անդ: Աղքատութիւն, որ ղհաղարաւորս ի պատուական հայրենակցաց մերոց ի վերջին վախճան յուսահատութեան հասուցեալ տանջէ և մաշէ»[3]: Տարիներ հետո, կառավարությանը ներկայացնելու համար գրված մեր նշած նախագծում Աբովյանը նշում է, որ հայ ժողովուրդը, չնայած ամեն տեսակ ջանասի-

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 16:

* Տակավին անտիպ մի գործում, հակադակ գերմանական կյանքը դրախտ համարող ժամանակի բուրժուական պատմագրությանը, Աբովյանը նշում է, որ շատ գերմանացիներ «ամենադաժան ձևով են հայթայթում իրենց օրական հացը»: (ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 49):

2 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 71:

3 Նույն տեղում:

թության ու աշխատասիրության, ապրում է Թշվառ պայմաններում, մատնված է չքավորության ու սովի։ «Սրտիցըդ արյուն է հոսում,— ասում է Աբովյանը,— երբ տեսնում ես նրանց արտաքին հագուստը, որը երկրի շատ վայրերում ավելի շուտ մի ցնցոտիներից կարկատած վերնազգեստի է նմանում, քան հագուստի։ Ամառվա կեսին, երբ արևի ճառագայթները այնպես են տաքացնում քարքարոտ գետինը, որ քիչ է մնում ոտքերդ այրվեն կոշիկների մեջ, հաճախ կարելի է տեսնել, թե ինչպես կանայք և երեխաները, այդ քնքուշ էակները, ոտաբոբիկ շրջում են այս ու այն կողմ»[1]։

Բոլո՞ր էին շահագործվում։ Ոչ։ Աբովյանի սուր հայացքից չի վրիպել, որ սոցիալական շերտավորման ուժեղացման ու խորացման հետևանքով ուռճացած դյուղական ցեցերը, գործակցած ցարական չինովնիկության հետ, դաժանորեն կեղեքում են աշխատավոր դյուղացուն, հափշտակում նրա արյուն քրտինքով վաստակածը։ «Հարիր հազարի», «հասարակ մարդու» շահերը պաշտպանելով, Աբովյանը անողոքաբար մերկացրել է ժողովրդի հարստահարիչներին, նրանց անվանելով հայրենիքի «որդի անուն Թշնամիք նորա, յորոց ի ձեռս տառապի և դժբախտի իմ հայրենիք»։

Գյուղական ցեցերի դեմ դյուղացիական դժգոհությունների ու բողոքի արտահայտություններից է Աստաիսան դյուղի դյուղացիների «լալով ու ողբով» դրած «աղաչանաց թուղթը» առ «միապետ ամենայն ռուսաց»-ին (դիմումը դրել է Աբովյանը, երևի 1838—39 թվերին, ստորագրել են 50 դյուղացիներ)։ Այդ դիմումի մեջ

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 49։

նրանք (գյուղացիները) հայտնում են «ամենաողորմած կայսեր», որ գյուղի կառավարիչ նշանակված Ղազարը «ոչ դադարի» «նեղել, տանջել զմեզ վայրապար»։ Նա բաղմաթիվ կեղծ գործարքներ է կատարում և գյուղացիները բոլորի համար հարկադրված են վճարել, մինչև իսկ «ի կանանց այրեաց առնու հարկս ընդդէմ օրինաց տէրութեանդ»։ Ղազարը նաև ավազակություն է անում. «ի գործ ածէ վասն գողութեան զքանի մի քուրդս, ի ձեռն նոցա գողանայ բազում ինչ և տարեալ վաճառէ յանծանօթ տեղիս»։ Երբ գյուղացիներն ընդդիմանում են այդ բռնության, նա «բերէ Ղազախս ի Մօւրաւէն և այնքան գանէ զմեզ մինչև տարեչափ ժամանակաւ անկանիլ ի մահճիս հիւանդութեան։ Ջի՛ք քան զմեզ ողորմելի ստրուկ և գերի ի ձեռս նորա, ազատեցէ՛ք զմեզ, Ամենաողորմա՛ծ Թագաւոր, յայսմ անիրաւ նեղչէ և ի բռնակալէ մերմէ, զորոյ անօրէնութեանց և ղչարութեանց հազիւ թէ զմի մասն միայն առաջի արարք»[1]։

Գյուղացիները դիմում են թագավորի խղճին, չիմանալով, որ այդ ղազարները (որոնցից հետո միկիտան սաքոներ և բալասան աղաներ պետք է առաջանային) գործում են ցարական չինովնիկության հետ միասին, հենց ցարիզմի քաղաքականության համաձայն։

Սենատոր Գանի հետ կատարած 1838 թվի շրջագայության նկարագրության մեջ Արովյանը խոսում է Գյոկչայի գյուղացիության ծանր վիճակի («անկեալ կան ի վերջին չքաւորութեան»), պետական հարկապահանջու-

---

1 «Դիվան Խ. Արովյանի», հատ. 2, էջ 47։

թյան դեմ նոր բայազետցիների ապստամբության և այդ կապակցությամբ եղած ձերբակալությունների մասին[1]։

Մեծ մարդասերը նկատել ու դատապարտել է մարդուն ճորտային վիճակում պահելը։ Ճիշտ է, Աբովյանը

---

1 *ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 20։*

1837—1838 թ. թ. Գյոկչայի (այժմյան Նոր-Բայազետի շրջան) երեսուն գյուղերում գյուղացիությունը ըմբոստանում է ցարիզմի հարկային քաղաքականության դեմ և հրաժարվում է վճարել չափազանց ծանր հարկերը։ Հայկական մարզի պետ իշխան Բեբուտովը գրում է, որ «կատաղի ամբոխը մելիքներից և տանուտերերից ոմանց չեզոքացրել է և նրանք ոչ մի ազդեցություն չունեն նրա վրա... ժողովուրդը բոլորովին չի հնազանդվում նրանց»։ Բեբուտովի գյոկչա այցելելը և սպառնալիքները գյուղացիներին չեն հնազանդեցնում. «Մենք չենք ուզում մելիքներ, տանուտերեր, շրջանային պետ»,— գոչում են գյուղացիները։ Գյոկչայի գյուղացիության հուզումները արձագանք են գտնում նաև մյուս շրջաններում։ Ինչպես գրել է Անդրկովկասի նոր գլխավոր կառավարիչ Գոլովինը, Գյոկչայում տեղի ունեցող հուզումները «նման գործողության օրինակ են ծառայել ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ մյուս շրջանների համար»։ Ցարական պաշտոնական դրագրություններում նշված է նաև, որ Գյոկչայի գյուղացիները «համարձակվում են Գյոկչայի մահալում ապրող մուսուլմաններին առաջարկել, որ նրանք միանան նրանց և տուրքեր չվճարեն»։ Ցարիզմի հարկային քաղաքականության դեմ ուղղված գյուղացիական մասսայական այս ելույթը Նիկոլայ առաջինի կարգադրությամբ դաժանորեն, զենքի ուժով ճնշվեց։

Գյոկչայի գյուղացիության հուզումների մասին տես պրոֆ. Վ. Ռշտունի. «Հայաստանի 19-րդ դարի գյուղացիական շարժումների մասին» (ՀՍՍՌ Գիտ. ակ. «Տեղեկագիր», (Հասարակական գիտություններ), 1945, № 6) և ՀՍՍՌ Գ. Ա. թղթակից անդամ Մ. Աղայան. «Из истории борьбы азербайджанских и армянских крестьян против феодально-крепостнических отношений в дореформенный период XIX в.», (Նույն տեղում, 1952, № 4)։

չկարողացավ հասնել ճորտատիրական սիստեմի ժըխտմանը՝ բայց նշանակալից է այն հանգամանքը, որ նա, հանուն մարդասիրության, իր ձայնը բարձրացրնց մարդուն անասնական վիճակի հասցնելու դեմ և ճորտին համարնց նույնպիսի մարդ, ինչպիսին որ ոչ ճորտն է. «Մի՞թե ճորտը հայվանից վատ է,— ասված է «Պատմություն Տիգրանի» վեպում:— Նա էլ էնպես մարդ ա, ինչպես եսե: Ինչ անի ինքը, որ ճորտ ա ծնվել: Նրա հերը որ աղնիվ (աղնվական — Վ. Պ.) ըլեր, ու իմը՝ ճորտ, կարելի է ես ըլեի նրա ռահաթը»[1]: Ուրեմն ճորտն ինքը չէ մեղավոր, որ այդ վիճակումն է դանվում, այլ հասարակական պայմանները, նա նույնպիսի մարդ է, ինչպես աղնվականը և չի կարելի վիրավորել նրա արժանապատվությունը:

Աբովյանն իր ձայնն է բարձրացրել սոցիալական անհավասարության դեմ, պաշտպան կանգնել աշխատավոր մարդուն, արդար վաստակի սիրողը և այդ անկախ նրա ազգությունից: «Պատմություն Տիգրանի» վեպում ճորտատիրոջ մոտից փախած ռուս ճորտ գյուղացին ասում է. «Ես հալալ մարդ եմ, էնդուր եմ փախել... Շան հալին եմ նրա ձեռին... Բո՛զ մեկ օր ապանի, ու ինձ անպատիվ չանի: Ես էլ մարդ եմ, հայվան չեմ, որ ինձ ծեծնեն, յա անկարդ խոսք ասեն»[2]:

Աբովյանը քննադատել է նաև առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչներին: Ռեալիստի հայացքով նայելով կյանքին, նկատի ունենալով նաև մյուս երկրների պատմությունը, Աբովյանը տեսնում էր, որ զարդացող բուրժուական հարաբերությունները

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 202:

2 Նույն տեղում, էջ 204:

սպառնում են գյուղացուց խլել «Քաշային հողը», խարխլել նրա տնտեսության հիմքը։ Քաղաքը շահագործում է գյուղին, գյուղացիությունը սկսում է քայքայվել, հիմք է դրվում գյուղի և քաղաքի հակադրության և, իբրև այդ բոլորի հետևանք՝ շահագործվող գյուղացին թշնամանքով է լցվում դեպի քաղաքն ու առհասարակ քաղաքացին։ Աբովյանի երկերում արդար աշխատանքով ապրող գյուղացիները քննադատում են քաղաքը, որտեղ բուրժուական հարաբերությունները ավելի ցցուն ձևով են դրսևորվել, և նողկանքով ազգուն ֆիլիսթիկաներ են ուղղում փողի ու նրա «բարաքյաթի» դեմ։ «Բա՛խտ, բախտ էս ա, փողի բարաքյաթին էլ նայի, նրա կորոդին էլ», շատ անգամ ասում էին գնդղցիք ու գլխները ժաժ տալիս. «ուտել չի՛ կարելի, հագնել չի՛ կարելի։ Էս օր ջերդ լցնենք, էդուց պետք է մատդ լպստես... Թևկուղ փողի համն առած՝ թևկուղ իր միսը կերած, հետաքը մեկ ա... Տաշտումը հաց ունենամ, կարասումը գինի, ջվալումն ալիր՝ հերն անիծած՝ որ չիփ չիփլախ էլ ըլիմ դարդ անեմ»[1]։ Աբովյանի նկարագրած գյուղացին երբեմն ցանկանում է չտեսնել նոր հարաբերությունների գոյությունը, միամիտ կերպով այնպես պատկերացնելով, որ նրա ինքը աշխատում է, ապա կարող է «դդակը ծուռը դնել, քեֆը արամիշ անել»։ Այդ գյուղացուն հարազատ է հայել աշխատանքի պաշտամունքը. «Իր տնկած ծառի տակին քնիլը, իր բհամ բերած պտուղն ուտիլը՝ աշխարք աժի» խանդավառությամբ ասում է «Վերք»-ի հերոսներից մեկը։

Որքան էլ, սակայն, գյուղացին անիծի փողը, իր զայրույթը թափի նրա դեմ, այնուամենայնիվ, նորա-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 22։

ստեղծ հարաբերությունների պայմաններում նա փողի կարիք ունի և բողոքում է այդ փողը իրենից խլող առևտրա-վաշխառուական շահագործման դեմ. «Ճոթ առնելիս հո՝ շատն ուզում ա, մեկ երկու շահի փող ենք դատել, էն էլ նա խլի: Է՛յ դիդի ժամանակ հա. ո՞վ էր տեսել կամ լսել ավալի սֆթա էսպես բաներ... Հըմիկ կովը վեր են քաշում, որ տեսնին՝ քի տակին յարաբ ֆորթ կա՞, քի չէ»[1]:

Աբովյանը հայ դրականության մեջ առաջին անգամ այսպիսի խորությամբ մերկացրեց բուրժուական պրակտիկայի ողջ նողկալիությունը, ցույց տվեց, թե ինչպես նոր ձևավորվող բուրժուական հարաբերությունների հետևանքով խեղաթյուրվում են մարդկային հարաբերությունները, իշխող է դառնում անասնական էգոիզմը, մարդը մարդուն դայլ սկզբունքը, անարտությունը նույնիսկ մերձավորի նկատմամբ: «Փողի սիրեն ճանաչողը ոչ հոգի ունի, ոչ հավատ» ասված է «Վերք»-ում և իրեն օրինակ նորից վերցված է քաղաքը, ուր այդ հարաբերությունները ավելի ռելեֆ ձևով են դրսևորվել: «Հազար տարի էլ՝ որ քո աղիդ սիրելու դռանն էլ՝ շինչդ ծռես, կանգնես, սուրս մեռնես, հազար տարի անօթի փորով զկռտաս, մեկն էլ ա քեզ տուն չի՛ կանչիլ, մեկ սառը ջուր խմացնիլ», «Հերը որդին չի՛ ճանաչում, որդին՝ հորը, ախպերն՝ ախպորը»[2]:

Այդ հարաբերությունները ցայտուն գծերով պատկերված են «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մա-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 23:

2 Նույն տեղում:

«ին» կիսադեղարվեստական-կիսահրապարակախոսական դրծում*։

Բուրժուական հարաբերությունների զարդացման հետևանքով, ասում է Աբովյանը այդ դործում, բարոյականությունը ընկել է, սերն ու համերաշխությունը միանգամայն չքացել։ Անառնվությունն ու խարդախությունը այն աստիճանի են հասել, որ «հարազատ եղբայրներն անդամ միմյանց ոչնչացնել են աշխատում, ծնողներն ու երեխաները միմյանց կործանել են ուզում»։ Աբովյանի նկարագրած երևույթները շատ դծերով հիշեցնում են տասնամյակներ հետո Սունդուկյանի՝ քննադատական ռեալիզմի մեթոդով արած մերկացումները. փող վերցնել մուրհակ տալ և «կեղծ անանկանալ», «կեղծ թղթեր սարքելով» ուրիշի սեփականությունը յուրացնել, փողով փեսացու ճարել. այս բոլորը դարձել են սովորական երևույթներ, ասում է Աբովյանը, «ո՛չ հավատ է մնացել, ո՛չ սեր, ո՛չ էլ հույս։ Մարդուն կոպեկի են ծախում»։ Փողը դարձել է «ամենամեծ արբուքյունը աշխարհի երեսին, երկնային ամենամեծ բախտավորությունը, լավագույն բուժամիջոցը և ինչպես մեզ մոտ շատ ճիշտ ասում են՝ դրախտ ու դժոխք դնելու, ամբողջ աշխարհը հեղաշրջելու, կործանելու և նորից վերակառուցելու միակ միջոցը»։ Մյուս կողմից խիստ ծանրացել է աղքատ, աշխատավոր դասի վիճակը։ Աշխատավոր մարդը, ծայրահեղ աղքատության մատնված, ստիպված է պանդխտել տնից, հայրենիքից. «Ինչ անեն մեր խեղճ մարդիկ, դրա համար էլ պիտի ցրիվ գան աշխարհի չորս կողմը» ասում է կին հերոսներից մեկը։

---

* ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 38։

«Վերք»-ում գյուղացիներից մեկը բողոքում է սոցիալական անարդարությունների դեմ. «Ո՞վ ա գիտում՝ թե էքուց գլխներիս ի՞նչ կգա. մարդի միս են ուտում, արինը խմում. ով ճար ունի իր գլխին ա անում»[1], «ամեն մարդ հենց իր ձին ա քշում, էլ առաջը մտիկ չի անում՝ թե ո՞վ ա կանգնած։ Ճրագը իրան տակին ա լիս տալիս. աշխարքը դմակ, մարդը դանակ. ո՞վ ա հարցնում»[2]։

Շահագործման հետ միասին, տիրող իրականության մեջ խեղդվում ու ճնշվում է ամեն մի բողոք և ըմբոստացում շահագործման դեմ, դրա համար է, որ գյուղացիներից մեկը խորհուրդ է տալիս իզուր չխոսել, որովհետև «դրուտը խոսողի փափախը ծակ կըլի... Ով ասես գլխին կխփի»։

Իրական հարաբերությունների այս ճշմարտացի ըմբռնումից է սկիզբ առնում Պռոշյանի և Սունդուկյանի ռեալիզմը. այս տողերը հիշեցնում են դրանց երկերի հերոսների ասածները։

Քննադատելով փողն ու բուրժուական հարաբերությունները, Աբովյանը, սակայն, իդեալ չի համարել նահապետական գյուղը։ Առնվազն անհերքելի պետք է համարել մեր գրաքննադատության մեջ հայտնված այն միտքը, թե Աբովյանը նահապետականության իդեոլոգ է։ Աբովյանը դեմ էր նոր ձևավորվող հարաբերությունների բացասական կողմերին, ալան-թալանի աշխարհին և իր բողոքը դրա դեմ արտահայտել է աշխատավոր գյուղացու հումանիզմը, ընկերասիրությունը, բարեկամասիրությունը, պարզությունը, արդար

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 26։

2 Նույն տեղում, էջ 27։

վաստակի կուլտը հակադրելով բուրժուազիայի հակահումանիստական, աղճատված ու այլանդակ բնավորությանը։ Այդ նշանակում է, որ Աբովյանը այս հարցում ևս ոչ թե նա, այլ առաջ է նայել և կարողացել է տեսնել բուրժուական հարաբերությունների բացասական կողմերից մի քանիսը՝ մասնավորաբար փողի ու ապրանքի իշխանությունը մարդու բնավորության, նրա հոգեկան աշխարհի վրա։ Ըստ որում Աբովյանը կարողացել է այդ նկատել այն ժամանակ, երբ բուրժուական հարաբերությունները դեռ նոր էին զարդանում։ Աբովյանը իբրև դեմոկրատ, ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերից է քննադատել այդ հարաբերությունները։ Քննադատելով բուրժուական հարաբերությունները Աբովյանը իբրև ելք առաջարկում է դիմել «արդար երկրագործությամբ». «Ոչ կույր բախտ կամ չարչիությիւն, — գրում է նա,— այլ արդար երկրագործությիւնն կարէ հասուցանել զմարդն անհնարին հարստութեան և բախտաւորութեան, եթէ միմիայն մարդն կամեսցի պարապիլ նովաւ»[1]։ Աբովյանը հաճախ է խոսում հայ գյուղացու «խեղաթյուրված գործելակերպի» մասին, դա համարելով նրա աղքատության պատճառներից մեկը. «Շինականք հայոց աշխատասէրք են, միմիայն ո՛չ գիտեն զկերպ աշխատութեան»[2]։ Դորպատից հայրենիք վերադառնալու նախօրյակին գրած «Հայերի և անդրկովկասյան մյուս ժողովուրդների տնտեսական և կուլտուրական հետամնաց վիճակը և այն բարելավելու միջոցները» նախագծում (հայտնի չէ այն ներկայացվե՞լ է կառավարությանը, թե՞

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 20։

2 Նույն տեղում։

ոչ) «Անդրկովկասյան ժողովուրդների հոգեկան վերածնությունը իրականացնելու և արթնացնելու և դրանով նրանց մեջ մի տևական երջանկություն հաստատելու» համար Աբովյանն առաջարկում է քննել երկրի ու ժողովրդի վիճակը, ուսումնասիրել Հայաստանի հողերը, զարգացնել մետաքսի, բամբակի, ծխախոտի և բուսաներկերի արդյունահանությունը, առևտուրը, հողերի մշակման ավելի կատարելագործված եղանակներ ու գործիքներ գործադրել։ Այդ նպատակին հասնելու համար, ի թիվս այլ միջոցառումների, Աբովյանն առաջարկում է Հայաստանում հիմնել մանկավարժական ինստիտուտ, որի խնդիրը լինի «գյուղատնտեսություն և տեխնիկա» առարկաները գործնականապես սովորեցնելն ու կիրառելը։

Իհարկե, Աբովյանի առաջարկների մեծ մասը անիրականանալի էր ցարիզմի պայմաններում։ Շուրջ տասը տարի հետո, մի այլ առիթով խոսելով այդ հարցերի մասին, նա, տարիների փորձը և հիասթափությունը նկատի ունենալով, առաջադրում է շատ ավելի համեստ պահանջներ. «Ամեն տարի մի քանի աշակերտներ ուղարկել դպրոցից (Երևանի գավառական դպրոցից— Վ. Պ.) առևտրական, տեխնիկական կամ երկրագործական դպրոցները, որով հնարավոր կլիներ ապահովել աշակերտի ապագան և ժամանակի ընթացքում բարձրացնել և երկրի արդյունաբերությունը, որ ներկայումս նահապետական վիճակի մեջ է»[1]։

Ճիշտ դիտելով երևույթները ու անողոք մերկացումներ անելով, Աբովյանը սխալվել է, երբ փորձել է ելք մատնանշել։ Նրան թվում է, թե բոլոր չարիքները և

---

1 «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 1, էջ 157։

հասարակական անարդարությունները կարելի է վերացնել լուսավորության միջոցով. լուսավորությունը իր հետ կրերի բարձր մարդկայնություն, ընդհանուր բարօրություն, հայ հարուստները («ճոխք և փարթամք») կօգնեն աղքատներին, կսրբեն նրանց արտասուքները։ Այս մտքերը, մանավանդ 30-ական թվականներին, Աբովյանը շատ է կրկնել։ Սակայն նույնիսկ այն ժամանակ, երբ ինքը ռեալիստական գործերով անողոքաբար մերկացրել է այդ «ճոխք և փարթամք» մարդկանց, չի դադարել իլուզիաներ տածել նրանց աղգօգուտ գործունեության նկատմամբ։ Աբովյանի աշխարհայացքի այդ սահմանափակության ու հակասականության պատճառը ժամանակի հասարակական-տնտեսական պայմաններն էին։ Տակավին անբավարար չափով էր խորացել սոցիալական շերտավորումը, հստակ կերպով չէին դրսևորվել հասարակական տարբեր դասակարգերի անտագոնիզմն ու շահերի անհաշտելիությունը։ Մերկացնելով հոխվերմատներին, հասարակական վերնախավերի այլ և այլ ներկայացուցիչներին, Աբովյանը դրանց դիտում էր իբրև վատ անհատների, և ոչ իբրև դասակարգ ներկայացնող մարդկանց տիպական խարակտերների։ Աբովյանը զժգոհ է տիրող կարգերից, արտահայտվորեն շիտակ ու աղնվամիտ այդ մարդը կերտել է կերպարներ, որոնք ուզում են, որ աշխարհը հայելու պես «դզվի», որ մի փոքր ասեղն էլ «մեկ օրվան ճամփից» երևա, արդարություն լինի աշխարհում։ Արտաքին և ներքին թշնամիներից ու շահագործումից ազատ, լուսավորված դյուղ և կուլտուրական, «արդար երկրագործություն»՝ սեփական հողի վրա։ Այդպիսին են Աբովյանի երազած սոցիալական կարգերը։

Աբովյանի ստեղծագործության հիմնական հարցե-

րից մեկը հոգևորականության և եկեղեցու քննադատությունն է: Ըստ որում այդ հարցը ամենասերտ կերպով կապված է Աբովյանի՝ ժողովրդին հայրենասիրության ոգով դաստիարակելու և կրթության ու լուսավորության տարածելու միտքի հետ: Հայտնի է, որ հոգևորականության քննադատությունը մեր դրականության մեջ սկսվել է հնագույն ժամանակներից: Հայտնի է նաև, որ մեր միջնադարյան տաղերգությունների ու առակագիրների և, վերջապես, հենց անմիջապես Աբովյանի նախորդ գրողների ու բանաստեղծների մոտ կան հոգևորականության շահագործողական էությունը, նրա տգիտությունն ու շահամոլությունը և այլանդակ բարքերը քննադատող շատ գործեր: Աբովյանը ավելի խորացրեց ու ամրողջացրեց այդ քննադատությունը: Հոգևորականության քննադատության հարցում Աբովյանի բերած նորությունն այն է, որ նա դատապարտեց ու մերկացրեց հոգևորականության քաղաքական ռեակցիոն դերը, ժողովրդի ազատագրական շարժումները ճնշելու նրա միտքը:

Ձենք գործածելը, բարոզում է հոգևորականությունը, քրիստոնեի համար հակաաստվածային բան է և է վերուստ խիստ կպատժվի: «Վերք»-ում եպիսկոպոսը, գյուղացիների հետ խոսելիս, աշխարհային փառքը համեմատում է ծաղկի հետ, որ այսօր կա «և ի վաղին ցամաքի»: Այս հարցը «տեսականորեն» ապացուցված համարելով, եպիսկոպոսն սկսում է խորհուրդներ տալ: Խոսելով պարսիկ բռնակալների բարբարոսությունների մասին նա, արտահայտելով հոգևորականության ու նրա կենտրոնի՝ էջմիածնականների տեսակետը, ասում է. «Մենք էլ ձեռներս դոշներիս... նրանց (պարսիկ բռնակալների—Վ. Պ.) առաջին, չա պետք է չոքենք, չա կանգ-

նինք, որ քեֆքնները բամամ ըլի»։ «Քրիստոնեն Քրի կոքն էլ ձեռ չի՛ պետք է առնի, կարճ, որ քար էլ աղան գլխին»։

Այստեղ Աբովյանը, չկարողանալով համբերել, էջատակ ծանոթության մեջ գրում է. «Էս խոսակցությունիցը իմացողը կիմանա, թե ի՞նչ էր մեր խեղճության պատճառը»[1]։ Աբովյանը արտահայտում էր ժողովրդի վերաբերմունքը։ Մի գյուղացի «Վերք»-ում ասում է. «Ո՛ղ ժամ էլ լինի, «ամա Քրի ու Թվանքի փերն օրհնած ա... Քուր որ չունիս՝ գլուխդ կտրում են, օղլուշադդ քաշում, կերածդ հարամ անում, դաստածդ խլում, քեզ էլ նսիր անում... Աղոթքն իր անդը, Քուրն իրը։ Աստված ղշին, հայվանին էլ յա չանկ ա տվել, յա պոզ, յա ատամ, որ չանկռի, հարու տա, կծի, իր գլուխը պահի»[2]։ Պարզ է՝ Աբովյանը հաստատում է զենքի գիմելու անհրաժեշտության դաղափարը։ Ժողովուրդը չուզում հնազանդվել, ստրկանալ, նա պատրաստ է կռվել բռնակալության դեմ. «Լավ արիններս էլ ես ա գալիս, լավ սիրտ էլ ունինք, տղամարդություն էլ՝ որ մեր դուշմանի հախիցը վեր գանք»,— ասում է մի գյուղացի[3]։ Ապա այդ «քյոնդալանա» գյուղացին բողոքում է քրիստոնեական հնազանդության քարոզի դեմ. հնազանդություն քարոզելը հեշտ է, ասում է նա, հնազանդվելը՝ դժվար։ Ըստ որում վնասում դեպքերն այնպես են զարգանում, որ գործողության մեջ ոչնչացնող քննադատության է ենթարկվում հնազանդության ու ստրկամտության քարոզը։ Հնազանդության մասին քարոզներից հետո, եպիսկոպոսի գլխավորությամբ սկըսված եկեղեցական արարողության ժամանակ, Քշնամի-

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 84։
2 Նույն տեղում, էջ 82։
3 Նույն տեղում, էջ 81։

Ները լցվում են եկեղեցի և սկսում կոտորածն ու թալանը, ըստ որում բռնությունների է ենթարկվում նաև Թոփիկոպոսը։ Աբովյանը շատ լավ էր հասկանում հոգևորականության քարոզի ամբողջ վնասակարությունը, քարոզ, որն, ըստ էության, աշխատավորությանը ստրուկաբին Թշնամիներին և ներքին շահագործողներին հնազանդեցնելու համար էր։ Այդ քարոզը, դժբախտաբար, ինչպես նշում է Աբովյանը, ունեցել է իր ազդեցությունն ու վատ հետևանքները։ Կրոնը, ասում է նա, ժողովրդին «մի քանի հարյուրամյակ շարունակ զինաթափ է արել և բոլոր տեսակի բռնություններով ստրկացրել՝ երկրային բարիքների ու տառապանքների փոխարեն խոստանալով ամբողջ երկինքը»[1]։

Մ. Նալբանդյանը, որ բարձր էր գնահատում դրականության հասարակական ֆունկցիան և դրականությունից պահանջում էր ժողովրդին կռվի հանել ամեն կարգի բռնության դեմ, հենց այդ տեսակետից բարձր գնահատեց «Վերք»-ը։ Մատնանշել անելով վեպի այն էջերը, որտեղ Աբովյանը մերկացնում է «թրի կոթին էլ ձեռք չտալ» եկեղեցական վնասակար քարոզը և առաջ քաշում զենքով Թշնամու դեմ դուրս գալու տեսակետը, Նալբանդյանը դա համարում է «սքանչելի վարդապետություն»։ Նա հիացմունքով է խոսում «չնաշխարհիկ Աբովյանի» մասին, որովհետև Աբովյանը, ի Թիվս այլ արժանիքների, իր «հոյակապ խոսքերով» «ընդարձակած ու կերպարանադրծած է այս սքանչելի վարդապետությունը»[2]։

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ ինստ. Գրական Թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 23։

2 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 162։

Աբովյանը քննադատել է աշխարհի ունայնության մասին կրոնական, ռեակցիոն և պասսիվության դասապարտող քարոզը: «Վերք»-ում եպիսկոպոսը գյուղացիներին ասում է, թե քրիստոնյանները երկնքի որդիներ են և ոչ երկրի, թե բնությունը պետք է արհամարհել, մարմնականը մեղանչելի է: Պայքարի մասին միտքը սատանայից է ներշնչված, ասում է նա, պետք է այս աշխարհում չարչարվել, տանջվել, հանդերձյալ կյանքում ավետարանի խոստացած հավիտենական երջանկության հասնելու համար: Աբովյանը ամբողջ հոգով ծառանում է այս քարոզի դեմ: Նա իբրև հումանիստ գրող առաջադրում է երկրային կյանքի վայելման խնդիրը: Մարդու երկրային կյանքը պետք է երջանիկ դարձնել, մարդը այս աշխարհը, բնության աքանչելիքները պետք է վայելի: «Ո՞վ չգիտի, թե ո՛րքան հիանալի ա աշխարը, ի՞նչպես ա մարդիս հոգին քաշում, վերացնում, զվարթացնում,— գրում է նա «Թուրքի աղչիկը» պատմվածքում,— երբ գարնան զովարար հովը փչում, սար ու ձոր իրանց մահվան քնից վեր կացնում, ձին ու սառից հալցնում, նոր հոգի, նոր կյանք տալիս բոլոր բնությանը: Ո՞ւմ սիրտը չի՛ վերանում, զարմանում, աչքը ծովանում, երբ Մայիսի առավոտը փանջարեն բաց անելիս՝ աուրը անմահական հոտով ա լցնում, օթախը՝ երկնային լուսով, անկաջը հաղար տեսակ ձեներով, աչքը հո՝ էն ալվան ծաղիկները ու կանաչ խոտերը որ չի՛ տեսնում, ուզում ա թախտ, աթոռ, փառք, մեծություն, փափուկ տեղ ու բարձ թողա, ու դուս վազի, դեմինն ու հողը լիզի, համբուրի, երեսին քսի, չոքի, Աստված փառաբանի, պառկի անույշ երազ տեսնի»[1]:

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 19։

Այս տողերի մեջ արտահայտված է բուռն սեր կյանքի, բնության նկատմամբ: Առհասարակ Աբովյանի ստեղծագործության մեջ ընդգծված ձևով հանդես եկող բնության պաշտամունքը հակադրվում է եկեղեցու ասկետական, աշխարհամերժ քարոզներին, քրիստոնեական հնազանդության մորալին և մարդուն մղում է ակտիվ գործունեության: Մեծ կարևորը այս աշխարհն է, ուրեմն պետք է պայքարել այս աշխարհում լավ ապրելու, աղատ ու երջանիկ լինելու համար, ուրեմն պետք է կռվել մարդու երջանիկ լինելուն խանգարող ուժերի դեմ, արտաքին և ներքին բռնությունների դեմ: Բնորոշ է, որ Աբովյանի նկարագրած քաջ հերոսները միշտ էլ հեռու են եղել եկեղեցու հոգևոր դաստիարակությունից: Աղատու համար ժամը կամ «դիլի հարսանիքը» նույն բանն են: Փամբակի, Լոռու, Ղարաբաղի, Մուշի, Բայազետի հայերը, «սարում չոլում մեծանալով, շատ տերտերի ու ժամի ձեն չլսելով», պահել են իրենց քաջությունը. «Ու տեղն ընկած վախտը՝ էլ ավետարանի ու վարդապետի խոսք նրանց չէր վախեցնում՝ թե որ արինվեր ածեն, դժոխքը կերթան,— ասում է Աբովյանը,— ու մատը բարձրացնողի՝ սաղ ձեռն էին բերանը կոխում, հավ թռցնողի՝ գլուխը թռցնում»[1]:

Աբովյանը հոգևորականության քաղաքական ռեակցիոն դերի հետ միասին, ինչպես նշեցինք, քննադատել է նաև նրա շահագործողական էությունը: «Վերք»-ում դյուղացիները իրենց բողոքն են հայտնում հոգևորականության դեմ, նույնիսկ բարեկենդանի ուրախ տոնի ժամանակ ծաղրում ու քննադատում նրան: Հոգևորականները տգետներ են, դրի սևն ու սպիտակը «բռանց

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 91:

(հադիվ— Վ. Պ.) են ջոկում», դրանք տեղովը մեկ «մեղքի պարկ են», անգործ պորտաբույծներ, որ ժողովրդին շահագործելով են ապրում։ Տեր Մարկոսը այնպես է մտնում մեռելատուն, «արագ-մագա» ուզում, ասես հոգեառ է և «մեռելի կես հոգին ինքն ա ուզում հանի»։ Դեռ պատանը չկարած, չվացած, շուտով «թաղումելեքն ու կողոպուտն ա ուզում»։ Նա ագահ է, հարբեցող, «տկի հոտն առնելիս, փորը ղվվոց ա ընկնում», «սար ու ձոր տերտերի փոր. ի՞նչ զորթ են ասել՝ է՛։ Բերնին դուրբան, ով էս խոսքն ասել ա, ավետարանի կողքումը պետք է դրած, որ սրանք կարդան ու իմանան,— ասում է Աղաւին։— Քիչ ա մնացել՝ որ մեզ սաղ սաղ ուտեն։ Երեխեքներս չորան դառած ման են գալիս, նրանց դարդը չեն քաշում, որ մեկ այբրին էլ ա, մեկ ճզի բզի սովորցրնեն, հենց իրանց ֆիքրն են քաշում»[1], «կնդանից, դինուց, փողից, ձիուց խոսում», իրանց «փորն ու գլուխը հաստացնում», ապա գալիս մեր «ջանին ընկնում, թե ինչ որ դատել եք՝ էն էլ մեզ տվեք»։

Ժողովուրդը դատապարտում է հոգևորականության պորտաբույծ կյանքը և մեծամեծ պահանջներ առաջադրելը. «Նհախ տեղը՝ դատած մալը ուտիլը ու դարդակ քնիլը, հարամ ա,— ասված է «Վերք»-ում։— Մարդ պետք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ ըլի»[2]։ Հոգևորականության կերածը հալալ չէ, նա պարազիտ է. ահա ժողովրդի, աշխատավոր գյուղացիության դատավճիռը հոգևորականության նկատմամբ։ Ժողովուրդը միաժամանակ տեսնում է հոգևորականության քարոզի ու պրակտիկայի, խոսքի ու գործի ճչացող հակասու-

---

1 Ե. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 3, էջ 14։

2 Նույն տեղում։

Քյոնը. «Դրանց (վարդապետների — Վ. Պ.) բերանից լույս է դուրս գալիս, իսկ սրտներում օձեր են բուն դրել։ Վա՜յ նրան, ով էդ սևագլուխների ձեռքը կընկնի»,— ասված է «Անկարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարաբերական սովորությունների մասին»[1] գործում։ Քահանաների աջը համբուրելիս սիրտը խառնում է, ասում է հերոսներից մեկը նույն գործում։

Այդ սևագլուխ «հայրենատյացքը» նաև կաշառակերությամբ են զբաղվում։ Փողի համար դրանք պատրաստ են ամեն սրբություն ոտնատակ տալ։ Դիակը անթաղ են թողնում մինչև իրենց ցանկացած գումարը ստանան, «մինչև եկեղեցական սրիկաների ընչաքաղցությունը հագեցվի»[2]։

Ժողովրդի շահերի պաշտպանի համար և՛ վաշխառուն, և՛ հոգևորականը շահագործողներ են, հարստահարողներ, ժողովրդի հաշվին ապրող պորտաբույծներ։ Դրանց մասին դյուղացիները ասում են. «Մարդի միս են ուտում, արինը խմում»։

Հոգևորականության քարոզած քրիստոնեական հնազանդության ռեակցիոն ու վնասակար տեսության, նրա սոցիալական պարապիտիզմի քննադատության հետ միասին Աբովյանը հոգևորականներին քննադատել է նաև այն բանի համար, որ նրանք չեն մտահոգված ժողովրդին կրթելու և լուսավորելու հարցով։ Այստեղ Աբովյանը ընկնում է նոր հակասության մեջ, ձեռք է մեկնում նրան, ինչ դատապարտել ու մերժել է։ Աստո-

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական ֆանգարան, Աբովյանի ֆոնդ, գործ № 38։

2 Նույն տեղում։

րեն քննադատելով հոգևորականության տգիտությունը, նրա հակաժողովրդական գործունեությունն ու պորտաբույծ կյանքը, Աբովյանը, սակայն, չի հանդում այն եզրակացության, թե եկեղեցին և ժողովրդի լուսավորությունը հակադիր բաներ են։ Դրա համար էլ նա եկեղեցու սպասավորների՝ հոգևորականության հետ հույսեր է կապում։ Աբովյանը մտածում է, թե հոգևորականությունը կարող է այնպես չլինել, ինչպես որ է, ուստի հոգևորականությունից պահանջում է զբաղվել ժողովրդի կրթության և լուսավորության գործով։ Նա կարծում է, թե իր լուսավորական գործունեությունը կարելի է առաջ տանել էջմիածնի հոգևորականության օգնությամբ ու աջակցությամբ, թեև նրա արած մերկացումները, նրա ռեալիզմը հակառակ եզրակացության են բերում ընթերցողին։ Հոգևորականները, խավարի այդ քուրմերը, որ հասու էին Աբովյանի գործունեության նպատակներին, հանձին նրա տեսնում էին թշնամու և ոչ գործակից։ Աբովյանի դատողությունների մեջ գոյություն ունեցող այս հակասությունը հետևանք էր այն ժամանակվա սոցիալական հարաբերությունների, Աբովյանի սոցիալական հենարանի թուլության։ Նա իր ծրագիրը իրականացնելու համար օգնականների, աջակիցների կարիք ուներ, փնտրում էր այդպիսի ուժեր և որովհետև այդ ուժերը դեռ նոր էին աճում ու հասունանում, դեռ թույլ էին, Աբովյանը նորից դիմում է հոգևորականությանը։

Հետաքրքրական է 1847 թվին Ներսես Աշտարակեցուն գրած Աբովյանի նամակը, ուր նա քննադատում է հոգևորականներին այն բանի համար, որ նրանք, փոխանակ ժողովրդին կրթելու և լուսավորելու, «զդոմշագնօղն մնծացուցանեն և զդոմս անասնոց բարեզարդեն»։

Աբովյանը հայ նոր գրականության պատմության

մեջ առաջին անգամ է հանդես եկել իրրև սոցիալական հարաբերությունների պատկերագրող։ Առաջին անգամ այդ գրականության մեջ նա է քննադատել ցեցերին՝ բյուրոկրատիային, վաշխառուՀյանը, հոգևորականությանը։ Զաղկելով ու դատապարտելով հասարակական պորտաբույծ խավերին, նա պաշտպանել է ժողովրդի շահերը։ Հետագա դրերն բոլոր առաջավոր հայ գրողները, ավելի կամ պակաս չափով, հետևել են Աբովյանին, կրել նրա ազդեցությունը։ Աբովյանի ստեղծագործությունը հանդիսացավ այն հաստատ հիմքը, որի վրա բարձրացավ հայ ռեալիստական գրականությունը։

Գլուխ VI

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ

«Որ մտածենք, թե ի՞նչ նեղության միջի մեր աշխարն էր, ի՛նչպես ամենայն դուռն ու ճանապարհը փակ էին, ու սրան չնայելով՝ էլի ժամանակ առ ժամանակ էնպես մարդիք դուս եկան մեր միջումը, ու է՞ն դործքերը բռնեցին... էն ժամանակը պետք է էնպես անձանց անունը, գերեզմանը տուր Համարինք, նրանց պաշտանք միանգամայն»[1]:

Արովյանի մոտ հաճախ ենք հանդիպում այսպիսի խորհրդածություններին: Հայ ժողովուրդը նույնիսկ «ամենայն դուռն ու ճանապարհը փակ» ժամանակ էլ չի կորցրել արիությունը, հերոսական ոգին, կռվել է թշնամու դեմ: Այդ կռիվներում աչքի են ընկել շատ հերոսներ:

19-րդ դարի սկզբից, երբ ավելի ուժեղ են դառնում Ռուսաստանի օգնությամբ պարսկական և թուրքական լծից ազատվելու հույսերը, նոր թափ են ստանում հայ ժողովրդի հերոսական ընդվզումները, ժողովրդի մեջ

---

1 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 4, էջ 100:

հռչակվում են շատ հերոսների անուններ։ 20-ական թվականներին մասնավորաբար տարածված է եղել Ասրի բեգի և Գիքիի պատմությունը։ Ասրի բեգը և Գիքին, լեռներին ապաստանած ապստամբներ, պարտիզանական կռիվներ են մղել պարսիկ բռնակալների դեմ և օգնել դերության մեջ գտնվող հայերին։ Նրանք եղել են ջերմ ռուսասերներ. Նենգությամբ բռնվելով, նրանք 1820 թվին նետվել են խարույկը*։

Պարսկական բռնակալության դեմ սուր բարձրացրած և ժողովրդի ազատության համար կռվող հերոսներից մեկն է եղել և Աղասին։ Աղասու կերպարով Աբովյանը երկար է զբաղվել։ Դեռ 1830 թվին, Դորպատ տավորելու մեկնելիս, Նոր Նախիջևանում Պատկանյանների մոտ հյուր եղած ժամանակ, նա ասել է, թե մտադիր է Աղասու մասին ազգագրում վնել գրել։ Աղասին պատմական-իրական անձնավորություն է, ինչպես որ պատմական-իրական անձնավորություններ են «Վերք»-ի գրեթե բոլոր պերսոնաժները։ «Մինչև այսօր մեզանից շատերի կարծիքն է, որ Աղասին հեղինակի երևակայության մեջ ստեղծված մի անդո հերոս է,— գրում է Պռոշյանը.— բայց ես դեռ տասը տարեկան մանուկ՝ հորիցս լսել եմ, որ Երևանի առման ժամանակ բերդի փակված դռան բանալու ծակից պարսիկները ատրճանակի գնդակով սպանեցին «Աբովենց տանուտեր Օհանեսի տղա Աղասի աղին. որ ոսի ափիցար էր, պապաղան ազալաթներն ուսին, ու սալդաթների առաջն ընկած բերդի դուռը կտրել էր, թուրքերեն դրսևից գոռում էր, որ անիրավ շուն Հասան խանը բերդի բալնիքները դուրս ղրկի, բերդի դուռը բաց անի»։ Մի կարճ ղրույցից հետո «աղեն անուսա ու որտեղացի

* Այս իրական պատմության հիման վրա Գալուստ Շերմազանյանը 1860 թվին գրել է «Ասրի բեգ և Գիքի» պիեսը։

ելիլա հարցրեց ու ասաց,— շարունակում է հոր պատմածը հաղորդել Պողոսյանը,— երբ որ բերդը կմտնինք ու քիչ կհանգստանանք, դու արի ինձ մոտ, քեզ նշան տալ կտամ... Ասեց, ինձ թողեց ու գնաց բերդի դռան առաջին, դռան էս երեսին անհավատ թուրքի անհավատ փշտովից (ատրճանակից) դյուլլախորով փուվեց»[1]:

«Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի առաջաբանում Աբովյանը պատմելով «Վերք»-ի համառոտ սյուժեն, Աղասու մասին գրում է. «Աղասին մեկ ջահել, հաշիդ քանաքցի հայ էր: Ղզլբաշի ժամանակին սովորություն կար, որ աղչիկ էին քաշում: Մեկ օր էսպես աղչիկ քաշելիս՝ կարիճ Աղասին դուս էկավ, մեկ երկու թուրքի սպանեց ու փախավ Փամբակ: Խղճի հորնըմորը Երևանու բերդումը չորացրին. ինքն էլ՝ Ռուսը որ Երեվան առավ, գնաց, որ հորն ազատի, իրան էլ հոր վրա տվին, սպանեցին»[2]:

Աղասու պատմական, իրական անձնավորություն լինելու մասին Աբովյանը խոսում է նաև «Վերք»-ում: Այդտեղ նա պատմում է, որ իր երեխա ժամանակ Աղասին ծնկան վրա խաղացրել է իրեն և «մխիթարվել»: Աբովյանը պատմում է, որ ինքը տեսել է Աղասու հանդիսավոր մուտքը Թիֆլիս. «Դեռ վարժատան աշակերտ էի ու ինչպես էսօր կենդանի է մտքումս՝ Աղասին ինչպես մտավ Թիֆլիզ: Երևելի իշխանի որդի չէ՛ր, որ նրան մեծ փառքով ներս բերեին, բայց ո՛վ նրա արածը իմացել էր, ուզում էր ոտները ջուր անի՝ խմի: Մեկ թղթի միջում ծալած իրա ոսկորները քսան անգամ հենց

1 «Աղբյուր», 1902, № 3, էջ 133—134:

2 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 189—190:

ինձ ա ցույց տվել, որը որ դանագան տեղ կռվներում կտրել՝ հանել էին»[1]։

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 176։ Աղասու մասին ժողովուրդը հյուսել է դանագան դրույցներ ու ավանդություններ, որոնք նույնպես Աբովյանը «Վերք»-ը գրելիս կարող է օգտագործած լինել։ Այդ դրույցները շարունակվել են պատմվել նաև «Վերք»-ի տպագրությունից հետո։ «Այդպիսի հիշողություններից մեկն է Երևանի նախկին ուսուցչական սեմինարիայի դասատու Շուլգինի 1884 թ. հրատարակած հետևյալ պատմությունը,— գրում է Ա. Դանալանյանը,— որը նա իր աշակերտների օգնությամբ գրի է առել դեպքերին ականատես երևանցի ծերերից և որը մոտիկից հիշեցնում է «Վերք»-ում Աբովյանի պատմածը։ Քանաքեռցի Աղասին լավ հարաբերությունների մեջ էր Սարդարի հետ և հաճախ լինում էր նրա մոտ։ Մի անգամ Սարդարը Քանաքեռ է ուղարկում իր ստորադրյալներին՝ հարևմի համար գեղեցիկ աղջիկներ ընտրելու։ Ընտրվածների մեջ է և Աղասու հարսնացուն։ Լուր առանալով այդ մասին, Աղասին մի քանի քաջերի հետ հարձակվում է Սարդարի մարդկանց վրա և վռնդում նրանց։ Հետապնդումից ազատվելու համար Աղասին թողնում է Քանաքեռը, ընկերներով սկսում է հետևել Սարդարի մարդկանց և խուլ տեղերում վրիժառու լինել նրանցից։ Երբ Պասկևիչը մոտենում է Երևանին, Աղասին ներկայանում է նրան և առաջարկում իր ծառայությունները՝ քաղաքի բույլ ամրացված տեղերը ցույց տալու։ Աղասուց վրիժառու լինելու համար Սարդարը բանտ է նետել տալիս նրա ծերունի հորը և հրամայում է պահակներին սպանել թե՛ որդուն և թե՛ հորը՝ նրն առաջինը փորձ անի հորն ազատելու, իսկ վերջինը՝ փախուստի դիմելու։ Երևան մտնող Պասկևիչի հաղթական բանակի ռուս զինվորների հետ է և Աղասին։ Նա շտապով ցատկում է բերդի պատից և վազում է դեպի բանտը հորն ազատելու։ Սակայն, պահակները, որ դեռ չէին թողել իրենց պահակատեղերը, տեղնուտեղը սպանում են և՛ Աղասուն, և՛ նրա հորը, կատարելով Սարդարի հրամանը («Խ. Աբովյան», Հոդվածների ժողովածու, 1948, էջ 122—123)։

Այդպիսի մի դրույց էլ գրի է առնված 1938 թվին Աշտարակի շրջանում, ըստ որում այդ դրույցից երևում է, որ ժողովուրդը նկատի ունենալով այն հանգամանքը, որ Աղասին Աբովյանի սիրելի

Աղասին եղել է ռուս-պարսկական պատերազմի հաջ հերոսներից։ Այդ պատերազմում աչքի են ընկել շատերը, հենց ինքը՝ Աբովյանը դրանցից ոմանց (Երուսալիմսկի, Սմբատով և այլք) հիշում է վեպում, բայց ինչո՞ւ այդ բոլորի մեջ նա Աղասուն ընտրեց իր վեպի գլխավոր հերոս։ Այդ մասին Աբովյանը հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում «Վերք»-ի առաջաբանում. «Մեկ բարեկենդանի՝ աշակերտներս՝ որ բաց թողի, սկսեցի՝ ինչ որ երեխությունից լսած կամ տեսած բան գիտեի, տակ ու գլուխ անել։ Վերջը իմ ջիվան Աղասին միտս ընկավ, նրա հետ հարիր քաջ Հայի տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին ու ամենն էլ ուզում էին՝ որ իրանց տոը գնամ։ Մյուսները մեծ-մեծ մարդիկ էին, շատն էլ դեռ հլա սաղ սալամաթ՝ փառք աստուծո, Աղասին աղքատ ու մեռած, նրա տո՛ւրը դերեզմանին դուրբան։ Ասեցի կեղծավորություն չանեմ, նրան ընտրեցի»[1]։

Հակադրվելով կլասիցիզմի տրադիցիաներին, իր նախորդ և ժամանակակից այն գրողներին, որոնց գործերի նյութը Հայաստանի հնագույն անցյալն էր, իսկ հերոսները՝ անպայման թագավորներ ու դյուցազուններ, Աբովյանը պատմական վեպի նյութ դարձրեց իր ապրած ժամանակաշրջանի նշանավոր իրադարձությունները, աշխատավոր ժողովրդի կյանքը և գլխավոր հերոս ընտրեց ժողովրդի ծոցից դուրս եկած, ժողովրդի ազատության ու բարեկեցության, հայրենի երկիրը ստելի ղզրաշից ազատելու համար մարտնչած ու զոհ-

---

հերոսն է, նրա շատ մտքերի արտահայտողը, նույնացրել է նրանց, Աղասու մասին իմացածը վերագրել իրեն՝ Աբովյանին։

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 4—5։

ված Աղասուն։ Այդ փաստի մեջ իրենց արտահայտությունը գտան Աբովյանի դեմոկրատիզմն ու ժողովրդայնությունը, միաժամանակ՝ գրական նվաստորությունը։ Ըստ որում, խորապես մտածված այդ ընտրությամբ Աբովյանը ցանկանում էր ասել, որ մարդկային լավագույն գծերի՝ հայրենասիրության, քաջության, անբասիր բարքի, անձնազոհության իսկական ներկայացուցիչը Աղասու պես «հասարակ» մարդիկ են, աշխատավոր ժողովուրդն է։ Այդ ընտրությունը միաժամանակ հնարավորություն էր տալիս Աբովյանին՝ ժողովրդի հետ խոսել ժողովրդի մարդու միջոցով, բնական է, որ նա չէր կարող այդ անել, եթե վեպի գլխավոր հերոս ընտրեր որևէ թագավորի կամ դորեավարի։ Գրական հերոսը ժողովրդից ընտրելու աբովյանական տրադիցիան արդյունավորեց Աբովյանի հետնորդ շատ գրողների ստեղծագործությունը։

Աղասու կերպարը կերտելիս Աբովյանն, ինչպես տեսանք, ունեցել է նախատիպ, բայց դեղարվեստական մշակման է ենթարկել այն*։ Աբովյանը «Վերք»-ում

---

* Ուսումնասիրություններ ցույց է տալիս, որ Աղասու կերպարը խիստ զարգացում է ապրել Աբովյանի մոտ։ «Վերք»-ից առաջ Աբովյանը Աղասու մասին գրել է մի քանի բանաստեղծություն, որոնց մեջ երգել է Աղասու սերը Նազուի նկատմամբ, Մոսիի և Աղասու ջերմ բնկերությունը և այլն։ Նկատելի է, որ Աղասու մասին գրած այս գործերում Աբովյանին կաշկանդում են Աղասու կենսագրության իրական փաստերը, նա իրեն ազատ չի զգում բնդհանրացումներ անելիս։ Աղասու մասին Աբովյանի գրած չափածո ամենամեծ գործը «Աղասու խաղը» պոեմն է։ Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի II հատորում հայտնված է այն կարծիքը թե «Աղասու խաղը» «Վերք»-ի «չափածո նախօրինակն է», «չափածո ուրվագիծը» (էջ 341)։ Այս կարծիքը արտահայտողները գերագնահատում են «Աղասու խաղը» և թերագնահատում «Վերք»-ը։

ասում է, որ աղասինները հայ իրականության մեջ եզակի չեն, նա Աղասու հետ միասին հիշում է «հարիր քաջ հայի տղերք», որոնք նույնպիսի իրավունքով ուզում են նրա վեպի հերոս դառնալ: Քիչ հետո Աբովյանն ավելի պարզ ու որոշակի ասում է ժողովրդին. Աղասին քո որդին է, սակայն նրանից «դհա մեծ, դհա անվանիքը շատ ունիս» միայն դրանք դրականության մեջ տեղ չեն գտել, խրախուսիր իմ գործը, և ես նրանց բոլորին ցույց կտամ քեզ, որ «զարմանաս, թե էնպես որդիք ունեցողն աշխարքում էլ ի՞նչ դարդ կանի»:

Շատ կարևոր է նաև այն հանգամանքը, որ Աբովյանը ընդգծում է Աղասու աշխատավորական ծագումը: Աղասին երևելի իշխանի որդի չէ, նա մեծ է իր գործով, իր ակտիվ հայրենասիրությամբ, բռնակալ ուժի դեմ մղած իր կռիվներով: Նա իր մեջ մարմնացնում է ժողովրդի լավագույն գծերը՝ հայրենասիրություն, հումանիզմ, ուսումնասիրություն, աշխատասիրություն, արդարամտություն, ժողովրդասիրություն: Ժողովրդի այդ լավագույն գծերը մարմնավորելով Աղասին դառնում է հայ դրականության մեջ կերտված առաջին աղջային խարակտերը: Հենց այդ պատճառով էլ իդեալական լինելով հանդերձ Աղասին ռեալիստական կերպար է: Նրա արտահայտած մտքերը բնո-

---

Շատ են էական ու արմատական այդ երկու գործերի տարբերությունները: «Վերք»-ում Աբովյանը իր գլխավոր նպատակն է համարել էպոխայի պատկերը տալ, անկասկած է, որ Աբովյանը շատ մտքեր արտահայտել է Աղասու միջոցով, բայց Աղասու կերպարը չի սպառում «Վերք»-ում արծարծված բոլոր հարցերը: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ «Վերք»-ի Աղասին իր հերթին շատ է տարբեր պոեմի Աղասուց: «Վերք»-ը և «Աղասու խաղը» տարբեր գործեր են և ոչ տարբերակներ:

ղոշ են ժամանակի դյուցազնության համար: Աղասու միջոցով արտահայտված է դյուցազնության առաջավոր մասի բողոքը պարսկական բռնակալության դեմ և նրա դեմ ընդվզելու, կռվի դուրս գալու պատրաստակամությունը: Որքան էլ Աղասին իդեալականացված լինի, որքան էլ նա ու նրա ընկերները բացառիկ հատկություններ ունենան, այնուամենայնիվ, նրանց միջոցով Աբովյանն արտահայտել է պարսկական բռնությունից ազատվելու և Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու պատմական ճշմարիտ հայացքը, դրանով իսկ այդ հերոսները դառնում են տիպական խարակտերներ: Աղասու խոսքերը «հայ ժողովրդի բացարձակ ու բարձր բողոքն է պարսից կառավարության դեմ»,— ասում է Հ. Թումանյանը և դրանով իսկ այն միտքը հայտնում, որ Աղասին ռեալիստական կերպար է:

Ֆառաշների սպանության և մի քանի տարի տևող պարտիզանական կռիվների նկարագրությունից առաջ Աբովյանը Աղասուն պատկերում է Քանաքեռում, ծանոթացնում նրա բնավորության, հայացքների հետ, որով և համոզիչ է դարձնում նրա հետագա քայլերը:

Աղասին մեծացել է ջիրդի ու դինավարժության խաղերի մեջ, ազատ բնության գրկում: Նա բնության սիրահար է, իսկ եկեղեցի գրեթե չի գնում: Երկար ու բարակ ծիսակատարությունները նրա հոգուն ոչինչ չեն տալիս, դրա համար էլ ձանձրալի են. «Է՜հ, ժամ չի՛ դառավ մեր գլխին, մեկ իշի հարսանիք դառավ, տո՜». (9) գանգատվում է նա: «Էս կարգ դնողին ի՞նչ ասեմ. նրա հորն ողորմի, ինքը հացի տեղ խոտ կըլի կռծած՝ քա՜ռ» (10): Աղասին հետու մնալով հոգևորականության՝ հնազանդության քարոզի և սխոլաստիկական միջնադարյան դաստիարակության ազդեցությունից չի աղար-

տել իր բնավորությունը, անբիծ հոգին։ Նա ազատ է հախտապաշարումներից, սնոտիապաշտությունից։ Ազատին բնական առողջ զգացողությամբ հասկանում է, որ եկեղեցական ծիսակատարությունները չեն օգնում մարդու հոգու մաքրությանը. «Ես իմ կարճ խելքովս էնպես եմ իմանում,— ասում է նա,— որ մարդ խոստովանելիս, ինքը պետք է իր մեղքի վատությունը, իր արած չարությունը միտք անի, փոշմանի, ղչջա, Աստծուն խնդրի՝ որ իրան թողություն տա, որ էլ չանի, կարողություն տա, որ իր ճամփեցը չհեռանա, բարի ըլի, թե չէ դռռ անելով, մարդի վրա բերը դնելով՝ անկաջը էսպես բաներով լցնելով՝ սրտիցը ո՛չինչ խաբար չառնելով, ի՞նչ կընգնի մարդի ձեռքը, ո՛չինչ։ Հինգ օր էլ պլուխդ կթարեքար տուր, տարով ծոմ պահի, որ սիրտդ բամուղ չի՛, ի՞նչ օգուտ»[1]։

Ուրեմն ծոմ պահելը, խոստովանությունը և մյուս արարողությունները չեն օգնում մարդու սրտի մաքրությանը, դրանք ավելորդ են. այս է Աբովյանի համոզումը։

Եկեղեցում ձանձրացող, նիրհող Ազատին բնության մեջ իրեն ազատ ու անկաշկանդ է զգում, նա ասում է, որ ինքը ծառից ու դաշտից ավելի բան է սովորում, քան հոգևորականներից, որոնք նստում են «երկա՜ր զուռնա-լամա խոսում, հազար բանի անուն տալիս, հազար հրաշք պատմում, մնջը փուչ»։ Դաշտում Ազատու «սիրտը բացվում» է, թվում է, թե իրեն «դրախտը տարան»։ «Հանդ էր գուս գալի,— ասում է Աբովյանը Ազատու մասին,— իր մասիլն ու պտուղը, դաշտերի ծառն ու ծաղիկը»

---

1 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 3, էջ 13։

երկնքի պայծառ արեգակի, լուսնի, աստղերի լիսը տեսնելիս, նրա հոգին վերանում էր, խելքը թռչում, շատ անգամ աչքերը ծով դառած տեղն ու տեղը մնում կանգնած. հենց իմանում էր՝ թե իրան դրախտը տարան։ Ջեռները քցում, գլուխը բաց անում, երեսը մեկ երկինքը, մեկ երկրի վրա քցում, հոգոց հանում ու ցանկանում էր՝ որ ձեն տա։ «Ա՜խ, ո՞վ ես դու՝ ո՞վ, յարատանիդ դուրբան՝ Աստված, որ էսքան բարիքը ստեղծել ես մեզ համար։ Ա՜խ՝ ինչի՞ չե՛ս քո սուրբ երեսը մեկ օր մեզ ցույց տալիս, որ ոտներդ չնկնինք, մեր սիրտը, մեր հոգին քեզ մատաղ տանք»»[1]։

Անհրաժեշտ է նկատել, որ Աղասու՝ երկնքի հաստեին ուղղած դովքը բուն էության բնույթան, երկրի դովերդության է. «Թե ասեմ երկիրն ա մենակ դեղեցիկ, հազար ծաղկներով, բույսով զարդարված, բաս երկինքը ո՞ւր թողամ, որ ցերեկը ինձ լիս ա տալիս, հանդիս պատուղը հասցնում. դիշերը մութն իմ աչքիցս հեռացնում ու էնպես չադրի պես դլխիս վրա կանգնած՝ անձրև, արև տալիս, որ ես ապրեմ, որդիքս պահպանեմ, աշխարքի պետքը գամ՝ որ մեռնելիս էլ՝ գան հողիս վրա, ինձ մեկ դարդակ ողորմի ասեն»[2]։

Նկեղեցական ծիսակատարությունները քննադատելով, Արովյանը հանդում է քննադատության։ Արարչին ուղղված նրա խոսքերի մեջ ավետարանի պատկերած արարչին հիշեցնող շատ քիչ բան կա։ Բոլոր բարիքների աղբյուրը, մարդու գոյության հիմքը բնությունն է, ասում է Արովյանը, այստեղից էլ անսահման հիացմունք բնության, նրա երևույթների նկատմամբ,

---

1 Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 12։

2 Նույն տեղում։

բնության պաշտամունք: Սա իհարկե աթեիզմ չէ: Հասարակական պայմանների հետամնացության պատճառով Աբովյանը չհասավ աստծու գոյության բացասմանը, բայց սա այն ուղին է, որ առաջնությունը բնությանը տալով, ըստ էության, ճանապարհ է բացում աստծու գոյության ժխտման համար: Այդ ճանապարհով գնալով Մ. Նալբանդյանը հասավ աթեիզմի:

Բնության գրկում Աղասին սկսում է խորհրդածել բնության ու մարդու մասին: Մեծ հումանիստի համար բնության պաշտամունքն ու մարդասիրությունը իրար շատ մոտ դրացումներ են:

Բնությունը մարդու վայելքի համար է, այն մեղանչելի չէ, մարդը պետք է ձգտի նմանվել բնությանը: Բնության մեջ «Հենց գիտես մեկ ձեն, մեկ թև, մեկ աներևույթ հոգի... ինձ ձեն ըլի տալիս,— ասում է Աղասին,— ինձ ձևով ըլի անում, ինձ վրա խնդում՝ թե վայելի՛ր էսոնք՝ հողածին մարդ, բարի՛ կաց, բարություն արա՛, Արարչիդ մեծությունն ու խնամքը ճանաչիր, ծառի պես պտուղ տո՛ւր, ծաղկի պես հոտ, սարի պես աղբյուր, դաշտի պես մասիլ, երկրի պես հաց, երկընքի պես լիս, վայելի՛ր աստուծո բարությունը, ուրշին էլ փայ տո՛ւր. աղքատ տեսնելիս՝ կերցրո՛ւ, կշտացրո՛ւ, ղուշը վրովդ անց կենալիս կանչի՛ր, կուտո՛ւր»[1]:

Աղասին արդար վաստակով է ապրում և դատապարտում է շահագործումը, ուրիշի աշխատանքի արդյունքի յուրացումը: Ահա թե ինչու նա զայրույթով դատապարտում է «նհոխ տեղը դատած մալն» ուտող և «դարդակ քնող» բոլոր կարգի ձրիակերներին: Մարդ

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 12:

պետք է ինքն էլ աշխատի, որ կերածը «հալալ ըլի». այս ճշմարիտ ժողովրդական տեսակետն է արտահայտում նա։

Աղասին գյուղացիների սիրելին է, բոլորը նրա «արևովն են խնդում», «մեկին մեկ փորձանք դիպչելիս՝ կամ մեկ դարդ ունենալիս, իր գլուխը եդ էր դնում, նրա մուրազին հասնում,— ասված է «Վերք»-ում։— Բերնի թիքեն հանում էր, ուրըշին ուտացնում։ Էնքան իր ապրանքին, իր հանդին ու մալին չէր մուղայիթ, որքան իր հարևաններին։ Տանուտերի տղեն էր, աղքատի ու նաչարի ընկերը»[1]։

Աղասին ընկերասիրության արտակարգ օրինակներ է տալիս, նա ընկերոջ՝ Մոսիի վիշտը համարում է նաև իր վիշտը ու պատրաստ է անձնազոհության դիմել՝ «շունչն ու ումբրը» տալ նրան օգնելու համար. «Հերնը մերս դորդ ա՝ մահվան դուռն են հասել,— ասում է Աղասին,— նշանածս՝ ո՞վ ա գիտում, հողի տակին ա, թե երևսին, ամա քանի նրանց ձեռս չի՛ հասել, ե՞րբ կիողամ՝ ձեր մեկի աչքը ցավի, ձեր մեկի մազը թեքվի։ Մինչև ես մեռնիմ ո՛չ, մինչև ինձ թիքա թիքա չանեն, ձեզ կիողա՞մ, որ մեկ դուշ անց կենա գլխներիդ վերա»[2]։

Բնությունն էլ Աղասուն օժտել է ֆիզիկական արտակարգ բարեմասնություններով։ Նա գոմեշի կամ եզան վիզը թև մի հարվածով այնպես է կտրում, որ թրի ծայրը գետին է խրվում։ Թշնամիները նրանից հեռու են փախչում, «ճանճի պես ցրվում»։ Քաջության համար բոլորը նրան Ասլան բալասի են

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 15—16։

2 Նույն տեղում, էջ 156։

կոշում։ Աղասին Թշնամիների դեմ կռվելիս դառնում է կատաղի ու անզիջում։ «Սիրտն էնքան բարի էր,— ասում է նրա մասին Աբովյանը,— որ նհախ տեղ դուշ էլ չէ՛ր սպանիլ, մոջիմը չէ՛ր կոխիլ, ամա հարամի Թշնամու ձեռին տապակվելով դիշեր ցերեկ, որ Թն էնպես էր պատահում, որ Թուրքերն եկել էին բաղը լցվել կամ իրան սպանիլ, կամ իր հարևանին, էն ժամանակը երկնքումը ըլեր, վեր կդար, գեղի էն կողմիցը ձեն տային, իսկույն ական Թոթափել հազիր էր, ու Թն բառով քանը չէ՛ր վերջանում, էն ժամանակը նա իրան Թրի. Թվանքի ու կռան հունարը էնպես էր ցույց տալիս, որ Թշնամին մնում էր կատու դառած, կամ նրա ձեռին, հնձանի տաքարին դուրբան ըլում»[1]։

Աղասին մեծ հոգու տեր, անձնուրաց հերոս է, նա ուրիշներին օգնում է նույնիսկ անձնականը զոհելու, կյանքը վտանգի ենթարկելու գնով։ Այդպես է վարվում նա Թագուհուն բարբարոս ֆառաշներից ազատելիս։ Աղասու մայրը տնից տեղից հեռացած և Թշնամու դեմ պարտիզանական կռիվներ մղող որդու մասին ասում է. «Մեկ հոդի ունեիր հազար աղքատի սրտում, մեկ շունչ ունեիր հազար հիվանդի բերնում»։ Աբովյանը Աղասուն օժտել է այն գծերով, որոնք, նրա կարծիքով, պետք է ունենա իսկական մարդը՝ հայրենասեր, քաջ, կյանքը մարդկանց երջանկության, բարեկեցության, ազատության համար զոհող։ Հետաքրքրական է, որ Թագուհուն ազատելուց հետո, տուն ու տեղից, սիրելի ընտանիքից զրկված վիճակում, ամենադժվար պայմաններում իսկ նա չի զրկ-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 16։

ջում իր արածի համար, որովհետև նա այլ կերպ չէր կարող վարվել։

Աղասին մի նպատակ ուներ. «Մեր ազգը, մեր երկիրը, մեր հավատը ազատ տեսնել», փրկել հայրենիքը պարսկական լծից։ Սրբ Անիում նա քահանայից լսում է Հայաստանի՝ անցյալ դարերում ունեցած պետականության մասին, հուզվում է. «Վա՜յ իմ օրին, արևին. մեր ազգը էսպես քաղաքներ ա ունեցել, էսպես մեծություն ու հմիկ ամենն էլ կորցրել, հարամու ձեռին գերի ա մնացել»[1],— ասում է նա և հանպատրաստից արտասանում վաթանի մասին մի արտառուչ երգ, որի մեջ արտահայտում է իրեն փոթորկող վիշտը.

Երբ կտեսնի՞մ ա՛խ ես մեկ օր էլ,
Մեր սուրբ երկիրը ջնջամուց ազատիլ[2]։

Աբովյանը հայ ժողովրդի թշվառության պատճառը համարում է այն, որ ժողովուրդը հնազանդվել է, «զլուխը դրել թրի տակը», և եթե ուզում է դուրս գալ այդ վիճակից՝ պետք է բարձրացնի գլուխը ու զենքով պաշտպանի իր իրավունքները։ Հենց դրան էլ նվիրված է Աղասու ողջ գործունեությունը։

«Վերք»-ի առաջին էջերում Քանաքեռի առօրյա իրադարձությունների մեջ հայտնի դարձած Աղասին պարտիզանական մի քանի տարի տևող կռիվներում հասունանում է, Քանաքեռի, իր հարևանի և համագյուղացու մասին մտածող ու հոգացող Աղասին սկսում է խորհել Հայաստանի, ողջ ժողովրդի վիճակի, նրա պատմական բախտի, նրան բռնակալական լծից ազատելու մասին։ Քանաքեռ գյուղի սիրելին դառնում է Հայաստան «աշ-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 163։

2 Նույն տեղում, էջ 165։

խարքի աչքի լիսը», համաժողովրդական հերոս։ Աղասու քաղաքական հասունացման կուլմինացիան նրա՝ ռուսական բանակ ներկայանալը և իր պայքարը ռուսական զորքի պայքարին միացնելն է, ըստ որում Աղասին ասում է, որ դա իր վաղուցվա նվիրական իղձն է եղել։ Դրանով իսկ Աբովյանն արտահայտել է պատմական այն ճիշտ հայեցակետը, թե ժողովրդի ազատության համար կռվողները միայն Ռուսաստանի օգնությամբ կարող էին հայրենիքն ազատել պարսկական բռնակալության լծից։ Այդ ճշմարտացի տեսակետի արտահայտումը արտակարգորեն բարձրացնում է «Վերք»-ի պատմականությունը, նրա գեղարվեստական արժեքը։

Աղասու կերպարի մեկնաբանության հարցում հայ գրականության պատմության մեջ եղել են հակասական կարծիքներ։ Ֆիզիկական հսկա կառուցվածքի և հոգեկան արտակարգ բարեմասնությունների համար Աղասին համարվել է ռոմանտիկական կերպար։ Այդպիսի կարծիք հայտնողները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Աղասին, իր մեջ մարմնավորելով ժողովրդի լավագույն գծերը, կերտված է ժողովրդական ստեղծագործության, սիրված կերպարների նմանությամբ։ Աբովյանը Աղասու հերոսականությունը ցույց տալու համար օգտագործել է ժողովրդական ստեղծագործության սիրված հնարներից մեկը՝ հիպերբոլան, վերջինս սակայն Աբովյանի մոտ հանդես է գալիս իբրև գեղարվեստական արտահայտչական միջոց, որը օգնում է վերարտադրելու կյանքի իրական հարաբերությունները։

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Աղասին ուժեղ հուզմունքի պահին երբեմն հասնում է մինչև ուշադնացության, ասել են թե Աղասին լալկան է, և որպես թե դրա պատճառը Աբովյանի «չափազանց դգա-

յուն սիրտ և սենտիմենտալ չիզ» ունենալն է: Այս կարծիքը արտահայտողներին ըստ երևույթին շփոթության մեջ են դրել, «ողբ հայրենասերի» բառերը: Բայց նախ՝ ինչպես հայտնի է, «վերք»-ն ավելի կռվի կոչ է, քան ողբ: «Վերք»-ը, ըստ Հ. Թումանյանի միանգամայն ճիշտ կարծիքի, «և՛ հայրենասերի ողբն է—կսկիծով ու հառաչանքով լիքը, և՛ ապագային դյուցազներդումյուն է, որ ուժ ու հպարտություն է շնչում»[1]: Երկրորդ՝ սենտիմենտալիստ հեղինակների հերոսների արցունքի պատճառը քաղքենիական հոգու մանր «տառապանքներն» են: Աղասու վշտի պատճառը բոլորովին այլ է, նրա տառապանքները իր ժողովրդի կրած տառապանքներն են, նրան հուզողը՝ օտար բարբարոսական լծի տակ հեծող իր ժողովրդի վիճակի, նրա ապագայի հարցերը: Եվ երրորդ՝ Աղասին, ինչպես ասել ենք, հերոսական կերպար է, նա քաջ է, անվախ ու անձնազոհ: Նա Սարդարի ուղարկած ֆառաշներին սպանելուց հետո տարիներ շարունակ հանդուգն, անհավասար ու հերոսական կռիվներ է մղում պարսկական լծի դեմ՝ իր պարտիզանական խմբով սարսափի մեջ պահելով բշնամիներին: Նա դիշերով մեն մենակ մտնում է Անիում բնակած ավազակների խմբի մեջ և սարսափ տարածում: Մանավորապես անմոռաց է մնում նրա մենամարտը Հասան-խանի հետ: Հակասություն չկա Աղասու հերոսականության, նրա ֆիզիկական հսկա կառուցվածքի ու խորը զգացմունքայնության միջև: Ընդհակառակը, Աղասու հերոսական կերպարը լավ է, որ օժտված է զգայուն սրտով և խորը զգացմունքներով: Հայտնի է, որ ժողովրդա-

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Հ. Թումանյանի Ֆոնդ, գործ № 176:

կան ստեղծագործության մեջ շատ վիթխարահասկա հերոսներ ունեն զարմանալի քնքուշ սիրտ և դիտեն խորապես ապալ ու արցունքներ թափել («Մհերի արտասունք դեսին արեց խանդակ ու գնաց»)։ Դա ժողովրդական ստեղծագործության հերոսներին չի զրկնում թուլամորթ, կամազուրկ, լալկան. ընդհակառակը, նրանց մեջ ընդգծում է մարդկայնությունը, հոգու վեհությունը։

Կնոջ, ընտանիքի նկատմամբ ջերմ սերն էլ հակասականություն չի մտցնում Ազատու ամբողջական խարակտերի մեջ։ Մնողներին, կնոջը անօրինակ ջերմությամբ սիրող Ազատին վճռական մոմենտներին դիտ անձնականը զոհել հասարակականին, ընդհանուրին։ Դա ավելի է ընդգծում նրա կերպարի վեհությունը։

[Աբովյանը սիրելի հերոսի նկատմամբ չի թաքցնում իր խիստ ջերմ վերաբերմունքը։ Ազատու մասին խոսելիս նրան անվանում է մեր սիրելի Ազատ։ Խորապես հուզված և չկարողանալով շարունակել, նա կարճ է կըտրում Ազատու ապանության «սարսափելի պատմությունը». «Ա՜խ՝ էլ ի՞նչ գրեմ, ձեռս թուլանում ա, սիրտս արին կաթում... ա՜խ՝ բաս Ազատու սուքն ո՞վ անի, նրա ջիվան ոսքերն ու օրը ո՞վ լաց ըլի։ Ե՛ս, ես ողորմելիս՝ նրա գերեզմանին դուրբան... Բաս սիրտս կհամբերի՞, որ էս օր չուզենամ՝ էնպես հսկա, էնպես աղնիվ, քաջ երիտասարդի վրա հոգիս տամ. բայց չէ՛, ես ի՞նչ եմ, որ Ազատու սուքն անեմ, իմ բերանն ի՞նչ ա, որ լսողի սիրտը շարժի, էրի, խորովի, նրա սուք անողը հետո ֆգա, ես իմ դառը պատմությունն անեմ»[1]։]

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 183—184։

Աղասու դործը, հայրենասիրությունը նրան «սրբի տեղ պաշտիլ կտա»,— ասում է Արովյանը:

Նրան խորապես հուզել է այն հանդամանքը, որ ազատիները, հայ ժողովրդին պարսկական լծից ազատելու համար մղված կռվի առաջամարտիկները, քան արժանավույն չեն դնահատվում, այնինչ նրանց հայրենասիրությունը և ժողովրդասիրությունը ժողովրդի համար օրինակ պետք է ծառայեն:

Գերեզմանը կորած, հողումը թաղված,
Աչքից հեռացած, մտքից մոռացած,
Իրանք անլեզու, աշխարհն անիրավ,
Որ հայոց ազգին անթիվ ու անրավ
Էսպես քաջ որդիք խլեց՝ չկշտացավ:
Ո՛չ մատուռ նրանց գլխին կանգնեցավ,
Ո՛չ արձան նրանց անունը թողեց[1]:

Արովյանի նպատակն է ազգին ցույց տալ նրա արժանավոր զավակների դործը:

Որքան շունչս, արինս դեռ իմ վրես ա,
Ինձ քուն ու հանգիստ, ինձ փառք ու պարծանք
Ես էն կհամարեմ, որ իմ բոլոր կյանքն
Ջոհ տամ իմ ազգին, որ ձեր առաջին
Ես ա՞խ՝ պարզերես լինիմ, երևիմ,
Ձեր գերեզմանին, սուրբ հողին մնանիմ[2]:

«Վերք»-ում դլխավոր հերոսից բացի կան նաև այլ կերպարներ, դրանցից դրականները շատ բաներով, մանավանդ իրենց ակտիվ հայրենասիրությամբ, ինչպես դեմ կենաց ու մահու կռիվ մղելով, նման են Աղասուն: Արովյանը հիանալի կերպով հասկանում էր, որ պարսկական լծից ազատվելը և Թուսաստանին միանալը ժո-

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 188:

2 Նույն տեղում, էջ 189:

դուքդի բուռն ցանկությունն էր, ուստի դլխավոր հերոսից բացի նա այդ սկզբունքի շատ ուրիշ ներկայացուցիչների էլ է պատկերել։ Դրանցից են Մոսին, Հովակիմը, մելիք Հոհաննջանը, Սոսի աղան, Բարսեղ աղան, Արծափենցի Մկրտիչը, պարոն Սարդիսը, վերջինիս որդի Վարդը, որոնք հայրենիքին իրենց կյանքը զոհելու պատրաստակամությամբ խիզախորեն կրուվում են պարսկական զորքի դեմ։ Դրանցից մասնավորապար Հովակիմը կերտված է «Սասնա ծռերի» դյուցազունների նմանությամբ. «Սարերի, ձորերի միջում մեծացած, դազանի ու հարամու արինը թափելով էր նրա ոսկոռները հաստացել,— գրում է Աբովյանը։— Երկու աղամարդ նրա մեջքը չէին կարող խառնել, հինդ մարդ նրա մեկ ձեռը չէին կարող ոլորել... Աժդահա, ու ոչ աղամարդ։ Ջորս գազ ու կես բոյն էր, գազ ու կես թիկունքի լենությունը, դոշը ապառաժի պես հաստ, ամեն մեկ ձեռը մեկ սնի ղադար, ամեն մեկ ոտքը մեկ կաղնու հումկը, շլինքը մեկ ծառի բոլի հաստությունով»[1]։

«Վերք»-ում և մյուս գործերում Աբովյանը կերտել է նաև բազմաթիվ ուրիշ կերպարներ (քեֆխուդաներ, ատնուտներ, Տեր Մարկոս, գիլը Կոստան, Հասան-խան և ուրիշներ)։

Նկարագրածը «տեսցնելու» մեջ Աբովյանը խոշոր վարպետ է։ Բարեկենդանի տոներ է նկարագրում, թե ֆառաշների քանաքեռ խուժելը, ռուսական զորքի երեվան մտնելը, թե Ադասու բաղումը՝ նա միշտ կարողանում է ժողովուրդը հանդես բերել, տեսցնել։ «Վերք»-ը առհասարակ լի է մարդկանցով, ժողովրդով։

---

1 Ն. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 91։

Գլուխ VII

ԱԲՈՎՅԱՆԻ ԱՐՁԱԿԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աբովյանը հայ նոր գրականության մեջ ռեալիստական արձակի առաջին խոշոր ներկայացուցիչն է։ Տակավին հայ հին ու միջին դարերի գրականության և ֆոլկլորի մեջ դրսևորված ռեալիզմի տարրերը Աբովյանի ստեղծագործության մեջ որակ դարձան։ Ինչպես նշել ենք, Աբովյանը «Վերք Հայաստանի»-ն, իր գլխավոր երկը, համարել է Հայաստանի 19-րդ դարի առաջին տառնամյակների վիճակը, «հալը» պատկերող գործ։ «Վերք»-ը ռեալիստական վեպ է համարել նաև ուղղափառ դեմոկրատ Մ. Նալբանդյանը։ «Վերք»-ի մեջ «մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը» ասում է նա[1]։ «Վերք»-ը, շարունակում է Նալբանդյանը, կախարդական, ապրոնյան հայելի է, որի «խորին արժանավորությունն է պատկերացնել ազգի կյանքը նույնիսկ ազգի առաջև»[2]։ Մինչ-

---

1 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 279։

2 Նույն տեղում, էջ 280։

մարքսիստական հայ քննադատական մտքի ամենամեծ ներկայացուցիչը չի սխալվել։ Հայ ժողովրդի 19-րդ դարի առաջին տասնամյակների վիճակը, նրա խոհերն ու ձգտումները, հոգեբանությունը, ապրելակերպը, բարքերը, նրա իրրև ազգ կազմավորվելու նախապատրաստական շրջանը «Վերք»-ը ավելի ճիշտ ու հարազատորեն է արտացոլել, քան պատմափիլիսոփայական շատ ուսումնասիրություններ։ Երևույթների, բնության, հերոսների նկարագրության որոշ ռոմանտիկական երանգը չի փոխում «Վերք»-ի ռեալիստական որակը։

Աբովյանը «Վերք»-ը համարել է պատմական վեպ։ Պատմական վեպի արժեքը որոշելիս առաջին պահանջն այն է, թե նա որքան ճիշտ է արտացոլել պատմական իրականությունը, թե նա պատմական տվյալ իրականությունը ինչպիսի խորությամբ ու լայնությամբ է ընդգրկել ու արտացոլել։ Այդ տեսակետից մոտենալով հարցին պետք է նշել, որ հայ նոր գրականության պատմության մեջ Աբովյանի «Վերք»-ը մնաց աննախընթաց ու չհրկրորդված։ Հայ ժողովրդի սարսափելի վիճակը պարսկական բարբարոսական տիրապետության տակ, այդ տիրապետության դեմ ժողովրդի մղած հերոսական կռիվները, իրրև այդ վիճակից դուրս գալու միակ հնարավոր ելք Ռուսաստանի օգնության դիմելը, ժողովրդի ռուսասիրությունը, Արևելահայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական իրադարձության ճիշտ գնահատականը, նոր գրականության ու աշխարհաբար լեզվի անհրաժեշտության գիտակցումն ու պաշտպանությունը, ժողովուրդների բարեկամության գաղափարը, հոգևորականության, ֆեոդալական հարաբերությունների և նորաստեղծ բուրժուական պրակտիկայի քննադատությունը, ժամանակի այս բոլոր հիմնական հարցերը ու շատ

այլ հարցեր հարաղատորեն արտացոլված են «Վերք»-ում և այն դարձնում են հայ նոր գրականության հիմքն ու ամենառեալիստական պատմավեպը հայ գրականության պատմության մեջ:

Աբովյանը հետևել է ռուսական պատմագեղարվեստական գործերի լավագույն տրադիցիաներին: Անկասկած է, որ նա ծանոթ է եղել Պուշկինի, Գոգոլի, Լերմոնտովի՝ պատմական թեմատիկայով գրած գործերին և դրա հետ միասին ճիշտ ըմբռնելով պատմության մեջ ժողովրդի որոշող դերը, իբրև գլխավոր հերոսներ հանդես է բերել ժողովրդի մարդկանց, ժողովրդին և ոչ պաշտոնական բարձրաստիճան գործիչների (օրինակ՝ կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն). վերջիններս վեպում որոշող դեր չեն խաղում:

Իր հերոսները ժողովրդից վերցնելով, Աբովյանը հնարավորություն է ունեցել պատկերել ժողովրդի կյանքը, բնել ժողովրդի ծանր վիճակի, պարսկական բռնակալության լծից նրա ազատվելու և զարգացման նոր ճանապարհով առաջ գնալու խնդիրները: Գրականությունը պետք է բնի ժողովրդի քաղաքական ու սոցիալական վիճակի հարցերը և ոչ թե դրսից մեզ առանձին «հերոսների» սերային զգացմունքները վերարտադրելով. ահա էսթետիկական այս կարևոր եզրակացությանն է հանգել Աբովյանը: Անհրաժեշտ է նշել, որ Աբովյանի հետևորդ հայ պատմավիպասաններից շատերը չկարողացան հասնել նրա նվաճած բարձրությանը:

Աբովյանի պատմական վեպը հետաքրքրական է նաև այն տեսակետից, որ այն պատկերում է ոչ թե հայ ժողովրդի հնագույն ժամանակների կյանքը, այլ մոտիկ անցյալի կարևորագույն իրադարձությունները: Այս հան-

պամանքը նկատի ունենալով որոշ ուսումնասիրողներ այն կարծիքն են հայտնել, թե «Վերք Հայաստանի»-ն պատմական վեպ չէ: Այս տեսակետը սխալ է. պատմավիպասաններն սովորաբար վերցնում են ժողովրդի պատմության որևէ շրջադարձային, կարևորագույն մոմենտ և արձագանքում իրենց ժամանակի որոշ հարցերի: Այս տեսակետից նայելով խնդրին, որոշող նշանակություն չունի այն հարցը, թե հեղինակը մոտիկ կամ հնագույն անցյալից է նյութ ընտրել: Ավելին՝ հետևելի հասկանալով պատմական վեպով իր ժամանակաշրջանի հարցերին արձագանքելու անհրաժեշտությունը, Աբովյանը, մոտիկ անցյալի իրադարձությունները դարձնելով վեպի նյութ, ավելի շատ հնարավորություն է ունեցել քննել իր ժամանակի սոցիալական, քաղաքական և կուլտուրական կյանքի կարևորագույն հարցերը: Այս տեսակետից էլ Աբովյանի «Վերք»-ը հայ դրականության ամենաինքնատիպ գործերից է:

Աբովյանը իր նկարագրած դեպքերից շատերին ականատես է եղել: 1826 թվին Թիֆլիսից էջմիածին գալիս նա Հանդիպում է սկսված ռուս-պարսկական պատերազմի պատճառով տեղահանված ու գաղթող ժողովրդին. «Դեռ կիսաճամփին էինք, որ Նապի-խանը իր դոնշունովը էկավ, մատավ Ղարաքիլիսա,— գրում է Աբովյանը,— ու սարի գոշիցը՝ ամեն մարդ իր տան կրակի ծուխը տեսնելով, բըմի ծուխն էլ հետն էր դուս գալիս, ու աչքը խփում էր, որ էս կակիծն էլա չտեսնի: Քոչվորի մեկ տուար Ջալալօղլի էր հասել, մեկը դեռ հլա սարի էն կողմն էր: Թուրքերը ջամդաքակեր դիլի պես գլխներիս պոխտ էին գալիս ու սարից, ձորից

Վանքները մեզ վրա կրակում»[1]: Աբովյանը էջմիածնում եղած ժամանակ տեսել է պարտությամբ մատնված և փախչող Հասան-խանին. «Էն ժամանակը ես ինքս էջմիածին էի,— գրում է նա,— որ Հասան-խանը էնպես փախած՝ եկավ անց կացավ»[2]:

Ականատես լինելուց զատ Աբովյանը վեպը գրելուց առաջ շատ հարցեր ամենայն բարեխղճությամբ ուսումնասիրել է: Ինչպես պատմում է Աբովյանի աշակերտ Գևորգ Աբիմյանը, նրա «վարժապետը» սիրել է ժողովրդական տոները, հաճախել է «օրանները», ժողովրդի հավաքատեղիները և ուսումնասիրել ժողովրդի հոգեբանությունը, վարք ու բարքը: Աբովյանը գնացել է Բոլնիս, Քանաքեռին և տեղում գյուղացիներին հարցուփորձել, հարցրել տեղանուններին, Օքյուզ ազգի հարձակման ու «կոլոնիների» կողոպտելու հանգամանքների մասին: Շուլավերում նա հետաքրքրվել է Հասան-խանի ժամանակ շուլավերցի Սոս աղայի և մելիք Հոհաննջանի՝ Քաշվեթի ու Բոլնիսի լեռներում արած քաջագործությունների և ապանության պատմությամբ: Քրդերի կյանքը ուսումնասիրելու նպատակով նրանց մեջ եղած ժամանակ Աբովյանը հետաքրքրվել է Արծափեցի Մկրտչի հերոսություններով:

1838 թվին ակնառոր Գանը ուղարկված էր Անդրկովկասը ուսումնասիրելու: Թիֆլիսից Աբովյանը նրան ուղեկցել է Հայաստանի զանազան վայրերը: Այդ շրջագայության մասին Աբովյանը գրել է ուղեգրական ակնարկ[3], որից երևում է, որ նա շրջագայության ժամա-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ 3, էջ 125:

2 Նույն տեղում, էջ 170:

3 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 20:

նակ առանձին ուշադրություն է դարձրել ռուս-պարսկական պատերազմի վայրերի, պատերազմի ժամանակից մնացած առանձին հուշարձանների վրա; վերհիշել պատերազմի հետ կապված բազմաթիվ պատմություններ։ Այսպես օրինակ՝ հասնելով Խլղարաբիլիտա, նա Գանին պատմել է թե «արենարրու Կատաիալն Երևանի Հասան-խանն» ինչ դաշանություններ է արել այդտեղ։ Ըստ որում Խլղարաբիլիտայի բնակչության կոտորածի նկարագրությունը հիշեցնում է «Վերք»-ի համապատասխան հատվածը։ Ուղեդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Աբովյանը այդ ժամանակ աշխատել է «Վերք»-ի վրա, նյութեր է հավաքել ու մշակել։ «Վերք»-ում նկարագրված դեպքերի և պատմական աղբյուրների համեմատությունը ցույց է տալիս, որ, առանձին դեպքերի աննշան բացառությամբ, Աբովյանը հարազատորեն է պատկերել ռուս-պարսկական պատերազմի դեպքերն ու իրադարձությունները։ Թումանյանը իր տակավին անտիպ «Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն և 1828 թ. ռուս-պարսկական պատերազմը» ուսումնասիրության մեջ համեմատելով զինվորական տարեդրությունների և ռուս-պարսկական պատերազմի ականատեսների ու մասնակիցների հաղորդած տեղեկությունները «Վերք»-ում նկարագրվածի հետ՝ ցույց է տալիս, որ «Վերք»-ը հարազատորեն է արտացոլել պատմական դեպքերն ու պատմական ճշմարտությունը. «Եվ ամենը,— գրում է Թումանյանը,— ինչ որ դուրս է գալիս նրա սրտից, նրա բերնից, նրա գրչի տակից, անկեղծ է, լիասիրտ ու ճշմարիտ, որովհետև ինքը ապրել, աչքով տեսել, ականջով լսել ու պատմել է։ Իսկ նրա տեղ-տեղ չափազանցություններ կան — դրանք էլ հիշատ են բացատրվում։ Չափազանցությունները արված են ցավի

«ազատության տակ կամ ոգևորության տենդի մեջ», իսկ դեպքերն առաջացել են այն հանգամանքից, որ Աբովյանը «Վերք»-ը դրել է «Երևանի պատերազմից 13—14 տարի հետո։ Շատ բան կարող էր լավ չհիշել, այլև դեպքեր ու անցքեր կան, որ նա անկարող էր վերահասու լինել իր ժամանակին իբրև քաղաքական գաղտնիքների, պաշտոնական ծածուկ դրադրությունների [և տվել է միակողմանի մեկնություն]։ Բայց այսուամենայնիվ դրանք քիչ են և անկարող են նսեմացնել նրա արժանիքը հենց պատմական տեսակետից, այնքան՝ հմարտապատում է նա ու հարազատ իր ժամանակին և քաջածանոթ դեպքերին ու դեմքերին»[1]։ Այդ պատճառով էլ «Վերք»-ը հանդիսանում է պատկերած ժամանակաշրջանի ուսումնասիրության հարուստ ու հավատի աղբյուր։

Օգտագործելով եվրոպական և մանավանդ ռուս ու հայ դրականության լավագույն traditions-ները, Աբովյանը ստեղծեց «Վերք Հայաստանի» վեպը, որ, ինչպես ասել է Մ. Նալբանդյանը, «ազգային բանաստեղծության (իմա դրականության—Վ. Պ.) մի հարազատ դաղափար է»։ «Վերք»-ում առաջին անգամ պատկերվեց հայ ժողովուրդը իր անցյալով, ներկայով, մտածելակերպով, հոգեբանությամբ, վարք ու բարքով։ «Վերք»-ում առաջին անգամ կերտվեցին ազգային ամբողջական խարակտերներ։

Աբովյանը մեծ ընդգրկումների ու ընդհանրացումների ընդունակ հեղինակ է։ Պատմական ժամանակաշրջանի լայն ու խոր, բազմակողմանի ընդգրկման և ժամանակի կարևորագույն հարցերն արծարծելու համար

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Հ. Թումանյանի Ֆոնդ, գործ № 176։

նա, բարեխղճորեն ուսումնասիրելով «Վերք»-ի նյութը, գեղարվեստորեն այնպիսի հնարների է դիմել, որ իր նպատակադրումը համոզիչ ձևով վերարտադրի:

Ցանկանալով Հայաստանի «էն ժամանակվա հալը» ներկայացնել, Աբովյանն իր վեպի համար ընտրել է յուրօրինակ կառույցվածք: «Վերք»-ի առաջին գլխում նկարագրելով Քանաքեռը, բարեկենդանի տոնը, ժողովրդի վիճակը, ապա ֆառաշների ապտնությունը Աղասու կողմից, Աբովյանը ընդհատում է գործողությունը, ընթերցողին Քանաքեռից տեղափոխում Հայաստանի տարբեր վայրեր (Երևան, Ախարան, Լոռի, Անի, Ալդարթիխա և այլուր), ապա վերադառնալով ընդհատված տեղին, վեպի վերջում նկարագրում է Երևանի գրավումը Ռուսաստանի կողմից և ժողովրդի խանդավառ դիմավորումը ռուսական զորքին: Այսպիսի կառույցվածք տալով իր վեպին, Աբովյանն անշուշտ ցանկացել է այն ավելի հետաքրքրաշարժ և դյուրընթեռնելի դարձնել: Սակայն այս չէ հիմնականը: Այդպիսի կոմպոզիցիան հեղինակին հնարավորություն է տվել պատկերել ոչ միայն Քանաքեռի, այլև ողջ Հայաստանի դրությունը, ժողովրդի քաղաքական, տնտեսական և սոցիալական վիճակը: Այս հանգամանքը «Վերք»-ը դարձրել է գաղափարապես ավելի հագեցված ու հարուստ և գեղարվեստորեն ավելի արժեքավոր:

Իհարկե Աբովյանը Հայաստանի «հալը» կարող էր պատկերել նաև միայն Քանաքեռի (իբրև կեղեքված ու թալանված հայկական գյուղի օրինակի) ժողովրդի վիճակը նկարագրելով: Սակայն պատմական վեպում Աղասու մղած պարտիզանական կռիվների, ռուս-պարսկական պատերազմի ժամանակ տարբեր վայրերում տեղի ունեցած ճակատամարտերի, «Ռսի հողում»

դանվող ժողովրդի վիճակի և նրանի բերդի գրավման նկարագրությունները անհրաժեշտ են դարձրել նման կոմպոզիցիան:

Պատմականորեն չնայելով դործին և չխորանալով Աբովյանի նպատակների մեջ, մեր քննադատության կողմից հաճախ թերություններ են համարվել այնպիսի երևույթներ, որոնք բնավ էլ թերություններ չեն, նույնիսկ ընդհակառակը՝ ցույց են տալիս Աբովյանի խոշոր մտածող ու արվեստագետ լինելը: Հայ քննադատության պատմության մեջ հաճախ պնդել են, թե «Վերք»-ում բազմաթիվ շեղումները հնդինակի անխոհեմ պահանջության ու վեպի անհշակության հետևանք են, թե պատմական, հրապարակախոսական, լիրիկական շեղումները խախտում են վեպի կոմպոզիցիոն ամբողջականությունը, վեպին հաղորդում ձգձգվածություն, թե այդ շեղումները ավելորդաբանություններ են: Սխալ են այդ կարծիքները: Աբովյանը շեղումներ արել է գիտակցաբար, նա շատ լավ տարբերում է վեպը հրապարակախոսությունից և պատմությունից. «Լավ չի սկսած բանը Թողալ ու էսպես-քարով ասիլ, ես էլ գիտեմ,— ասում է Աբովյանը,— ամա սիրտս չի՛ դիմանում, ի՞նչ անեմ» (60): Աբովյանի վեպի սյուժեն և կոմպոզիցիան շատ են ինքնատիպ: Նվ դրա պատճառը հասկանալի է ու պայմանավորված է «Վերք»-ի բովանդակությամբ: Աբովյանն իր հիմնական նպատակն է համարել խոսել ժողովրդի հետ նրան հասկանալի լեզվով և ամենաբազմազան հարցերի մասին: Ցածր է նրա ընթերցողի կուլտուրական մակարդակը, նրա հետ պետք է զրուցել և ոչ թե նրա ձեռքը վեպի ժանրի բոլոր օրենքներով դրված երկ տալ: Միևնույն ժամանակ անչափ շատ են այն հարցերը, որոնց մասին Աբովյանը խոսում է իր ընթերցողնե-

րի հետ, այդ հարցերից շատերի մասին կարելի էր խոսել հրապարակախոսական հոդվածների, գիտական զրույցների, փիլիսոփայական խորհրդածությունների, մանկավարժական խրատների մեջ։ Աբովյանը հրաժարվեց «Վերք»-ը դրել վեպի ժանրի պայմանականությունները պահպանելով ու ստեղծեց մի յուրօրինակ վեպ, որի մեջ արծարծեց այն բոլոր հարցերը, որոնց մասին նա ուզում էր խոսել «ազգի» հետ, հուզել, սովորեցնել, դաստիարակել նրան։ Ժողովրդին հասկանալի ու գիտանալի չինել. ահա այն հիմնական խնդիրը, որ հետապնդել է Աբովյանը և որով պայմանավորվել է «Վերք»-ի (և ոչ միայն «Վերք»-ի) և՛ բովանդակությունը, և՛ ձևը — ժանրը, կոմպոզիցիան, գեղարվեստական հնարները, լեզուն։ Աբովյանի «երեսուն տարվա փակ լեզուն» նոր է բացվել, նա պետք է «սրտի հասարաթը» հայտնի, դրա համար նա երբեմն դիտակցաբար, իմանալով հանդերձ, որ լավ չի սկսած բանը թողնել ու քարոզ ասել, ընդհատում է սյուժետային դիծը, իրեն հուզող հարցերի մասին խոսում, քննվող խնդիրների մասին իր կարծիքը հայտնում, հերոսներից ոմանց քաջալերում, ոմանց կարծիքները քննադատում և ապա նորից անդրադառնում ընդհատված տեղին. «Վա՜յ ինձ՝ ո՞ւր հասա, ո՞ւր տարավ ինձ իմ կսկիծը, իմ էրված սիրտը,— ասում է նա այդպիսի դեպքերում։— Լեզուս չի՛, որ խոսում ա, հոգիս ա, որ ղռում ա, ազգիս արինը առաջիս թափում, իմ հայրենիքն առաջիս քանդվում, իմ սիրելի ախպոր աղի արտասունքն ու դառը սուգը՝ սիրտս էրում, խորովում։ Ինչպե՞ս բերնիս հուպ տամ. արինս քթովս ա դուս գալիս, աչքս կայծակին տալիս»[1]։

---

[1] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 111։

Հայրենիքի խանդավառ որդին, ժողովրդին անսահմանորեն նվիրված Արովյանը չի կարող էպիկական հանդարտությամբ պատմել, չափի զգացումը պահել, փորձված, ալեկոծված սիրտը բնաբևացնելուց հետո միայն նա կատակով կամ լուրջ զգուշացնում է ընթերցողին, թե անցնում է բուն այժմին. «Ես եղ եմ դառնում, էլի իմ պատմությունն անեմ» (55) կամ՝ «բանը երկարացավ, լսողը չի՛ նեղանա, էլի գնա՛նք մեր դժոխքը» (62)։

Սակայն հետաքրքրական է, թե ինչու Արովյանն իր կարծիքները արտահայտելու, իրեն հուզող հարցերը արծարծելու համար դիմում է նաև շեղումների, չէ՞ որ նա կարող էր այդ մտքերն արտահայտել վեպի հերոսների, ասենք Աղասու միջոցով կամ հանդես բերել որևէ ինտելիգենտ հերոս, որն արտահայտեր այդ մտքերը։ Ինչպես ճիշտ կերպով նշվել է սովետական շրջանի արովյանագիտության մեջ, մեծ արվեստագետի տակտը Արովյանին հետու է պահել այդ միջոցներին դիմելուց, որովհետև դրանով իսկ նա հակառակ կդնար պատմականությյան, հետևաբար և ռեալիզմին։ Այն, ինչ կարող էր տիպական լինել ռուսական և եվրոպական հարուստ կուլտուրայով զինված, անդրկովկասյան իրականության այն ժամանակվա ամենալուսավոր մարդկանցից մեկի՝ Արովյանի համար, տարօրինակ կհնչեր և ոչ տիպական կլիներ Աղասու համար։ Արովյանը հիանալի կերպով հասկանում էր հարցերը և վեպում ինտելիգենտ հերոս հանդես չբերեց, ոչ էլ իրեն հուզող բոլոր հարցերը արտահայտեց անդրագետ Աղասու միջոցով։ Նա իր շեղումներով, փաստորեն, կողմնակի կերպով, մասնակցում է վեպում ծավալվող դործողություններին, հերոսների զրույցներին, այսինքն՝ որոշ իմաստով դառնում է «վերք»-ի

պերսոնաժներից մեկը։ Ճիշտ է նկատված թե դա միակ լավագույն ելքն էր, որ արվեստագետի նուրբ դիտողությամբ գտավ Աբովյանը։ Դա ուժի նշան է և ոչ թուլության։ Դա նվաճում է և ոչ թերություն։

Հեղինակային շեղումներն ու միջամտությունները «Վերք»-ը դարձրել են հայ դրականության ամենից անկեղծ և դուցե նաև այդ պատճառով ամենից շատ սիրված երկերից մեկը։ «Վերք»-ում ներկա է Աբովյանը իր բոլոր խոհերով ու զգացումներով և այդ ներկայությունը ավելի հարազատ է դարձնում վեպը ընթերցողին, ավելի է մոտեցնում հեղինակին ու ընթերցողին՝ ժողովրդին։

Իր ժողովրդի վիճակով խորապես ապրող հեղինակը չի կարող զսպել իրեն և սառնասրտորեն պատմել. նրան, ինչպես և նրա հերոսներին, հատուկ է դյուրազգացությունը։ Պատմելով ֆառաշների վայրագությունների մասին, Աբովյանն իր հոգեկան վիճակն էլ է ցույց տալիս, հաճախ էլ դիմում է «սիրելի կարդացողին» և ցանկանում իմանալ իր պատմածի թողած տպավորության մասին. «Երա՛ր որ լսում ես, սիրտդ ի՞նչ ա ասում, չիգյարդ ի՞նչ» (60), հարցնում է նա ընթերցողից։ Աբովյանի համար խիստ դժվար է Աղասու՝ «էնպես հսկա, էնպես ազնիվ, քաջ երիտասարդի» մահը նկարագրելը. «Ա՜խ, էլ ի՞նչ դրեմ, ձեռս թուլանում ա, սիրտըս արին կաթում» (183), «սի՛րտ՝ տրաքի, սի՛րտ էլ չեմ կարում տանիլ, ո՛վ չիգյար ունի, ինքն իմանա. մնացածը էքուց կդրեմ» (184)։

Նկարագրելով պատերազմի ժամանակ սկսված գաղթի դժվարությունները, Աբովյանը դրում է. «Ա՜խ՝ հոգիս դուրս ա գալիս, ընչի՞ հին դարդերս էլի նորոգեցի, ընչի՞ էս բանին ձեռք տվի» (89)։

Աբովյանի խառնվածքի ու ստեղծագործության համար բնորոշ այս գիծը հանդես է գալիս նրա նույնիսկ ոչ գեղարվեստական գործերում։ Ուղեգրական ակնարկներից մեկում նկարագրելով ռուս-պարսկական պատերազմի ժամանակ տեղի ունեցած Խլղարաքիլիսայի բնակչության կոտորածը պարսիկների կողմից, Աբովյանն ավելացնում է. «Գալաբին աղիք ի լսելն զաղէտասպատում վիճակ ողորմելացս այսոցիկ»[1]։

Աբովյանը միշտ իր հերոսների, ընթերցողների հետ է, միջամտում է, խոսում, խրատում, հարցնում։ Աղասու և Հասան-խանի մենամարտի ժամանակ նա մեղադրում է Աղասուն, որ նա «վարթարաֆ» չի անում, չի սպանում ձեռն ընկած «վիշապին»։ Նկարագրելով Նապոլեոն երեխաների սուգը իրենց մոր վրա, Աբովյանը դիմում է ընթերցողին. «Թե դու էլ սիրտ ունիս, չե՛ս ասիլ թե շինովի ա էս պատմությունը» (105)։

Իր հերոսների վիճակներով ապրելը, նրանց հետ ուրախանալն ու տխրելը նրա գործերին այնքան հուզականություն են հաղորդում, որ «Վերք»-ի շատ էջերում արձակ շարադրանքը վեր է ածվում հանդավոր արձակի։ «Վերք»-ի որոշ էջեր կարելի է կարդալ իբրև չափածո գործեր։ Բերենք միայն մի օրինակ, արձակ տեքստը տողատելով.

Անուշ իմ դու հա՛յր, անգին բարերար,
Իմ կենաց ավոդ, իմ հոգուս դու ճար։
Մկամ տո՞ւնն կարա իմ ոտը փակել,
Մկամ չե՞մ կարա իմ աչքը կապել։
...Ա՜խ՝ հա՛յր իմ, հա՛յր իմ՝ քո ըմբրիդ մեռնիմ,
Առանց քեզ մեկ օր քո՛ղ ես լիս չտեսնիմ[2]։

---

1 ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Աբովյանի Ֆոնդ, գործ № 20։

2 Խ. Աբովյան, երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 98։

Աբովյանի զգացմունքների հեղեղը երբեմն քերականական օրենքների էլ չի ենթարկվում, այդպիսի դեպքերում առաջվում են խիստ երկար նախադասություններ (Աղաստու մոր նամակը և այլն)։ Երևանի բերդը նկարագրելիս Աբովյանը կուտակում է բազմաթիվ հոմանիշ, նույնանիշ բառեր, էպիտետներ, համեմատություններ և երբեմն կազմում քսան, քսանհինգ տողից բաղկացած նախադասություններ։ «Վերք»-ում կան նաև որոշ նատուրալիստական տեսարաններ ու արտահայտություններ, դա մանավանդ աչքի է ընկնում բարեկենդանի տոնի առթիվ կազմակերպված խնջույքի նկարագրության ժամանակ։ Աբովյանի գործադրած դեղարվեստական հնարների մեջ գուցե կան չափազանցություններ, որ պետք չեն, բայց Աբովյանը այդ հարցում ևս հանդես է բերել դիտակցական մոտեցում, ցանկացել է հարազատ մնալ իր նպատակին՝ դրել այնպես, որ ընթերցողը չկարծի թե դիրք է կարդում, այլ թե մի մարդ խոսում է իր հետ։

Հակադրվելով կլասիցիստական անկյանք ու անարյուն դրականության տրադիցիաներին, Աբովյանը գործադրած հնարներով ավելի կենսունակություն, հարուստ զգացմունքներ, դինամիկա, կյանք է հաղորդել իր գործերին և ավելի հյութեղություն ու կենդանի շունչ՝ ներշնչել։

Աբովյանը շատ է սիրում գործողությունները հակադրություններով առաջ տանելու եղանակը։ Դրանով իսկ նա ավելի է ընդգծում իր միտքը։ Պարսկական բռնակալության ամբողջ դաժանությունն ու ղվելիությունը ցույց տալու համար նա մի այդպիսի հակադրություն է գտնում «Առաջին սերը» պատմվածքում։ «Վերք»-ում բազմաթիվ են նման հակադրությունները։ Վերցնենք

հենց առաջին գլուխը՝ բարեկենդանի տոնի առթիվ առաջամանակ իրենց ծանր հոգսերն ու վշտերը մոռացած գյուղացիները ուրախության մեջ են: Ամենուր խնդություն է, երգ, պար, ջիրիդախաղ, կարծես «աշխարքս արքայություն ա դառել, մարդի աչքն էլ ցավ, կսկիծ չի պետք է տեսնի» (36): Բայց խնջույքի լավ ժամանակ «հենց բոնես՝ մեկ ամպ արաքից, երկիրը շարժեց, յա Թոփի, Թոփխանի ձեն էկավ, յա երկինքը փուլ էկավ» (37): Արյունախառն Սարդարի ֆառաշները նկել են «աղջիկ քաշելու», Քանաքեռի ամենագեղեցիկ աղջիկան՝ Թադուհուն Սարդարին նվիեր, նրա կրքերին զոհ տանելու: Տոնը փոխվում է սգի, խնջույքը՝ լացի, ողբերգության: Սարդարի գեմ եղած ատելությունն ավելի է ուժեղանում: Հենց այդ տեսարանում Արովյանը առնչվում է մի ուրիշ հակադրության — Թադուհու մայրը, աղջկան քաշելու ժամանակ վշտից գրեթե խելագարված, խոսում է Թադուհու հարսանիքի մասին, խնդրում ուրախանալ, պարել, «ինֆ անել»: Նման բաղմաթիվ հակադրություններից նշենք մեկը ևս: «Վերք»-ի վերջում պատկերված է, թե ինչպես ժողովուրդը անօրինակ ցնծությամբ է դիմավորում ռուսական բանակին. տապալվել է պարսկական բռնակալության լուծը, տոն է, խնդություն և հանկարծ լսվում է ժողովրդի սիրելի, նրա ազատության համար մարտնչած Աղասու ապանության լուրը: Այս պատկերը մի վերջին անգամ ընդգծում է պարսկական բռնակալության ողջ դարշելիությունը և Աղասու անձնազոհ ու հերոսական բնավորությունը: Աղասու թաղման, պատերազմական գործողությունների, ժողովրդի դաղթի ու մի շարք այլ տեսարաններում դրսևորվել է Արովյանի՝ մասսայական, դինամիկ տեսարաններ ստեղծելու մեծ ուժը: Ի դեպ է նշել նաև այն հանգամանքը, որ նա չի

խոսափում ամենացնցող տեսարաններ նկարագրելուց (սպանություններ, ծնողների սուտ և այլն):

«Վերք»-ում և մյուս գործերում Աբովյանը ցույց է տվել նաև երդիծաբանի տաղանդ: Մեծ գրողը հասկացել է երդիծանքի կարևոր նշանակությունը ու հմտորեն օգտվել է դրանից: Քեֆխուդանների թեֆի և մի քանի այլ տեսարաններում Աբովյանը ստեղծել է խոսքի ու դրության կոմիզմի լավագույն օրինակներ: Անմոռանալի են մնում քեֆխուդանների կատակներն ու զվարճախոսությունները: Ըստ որում, եթե սոցիալապես իրեն հարազատ մարդկանց նկատմամբ Աբովյանը գործադրել է մեղմ հումոր, ապա նրա մերկացումները շեշտակի ու անողոք են դառնում, երբ նա կամ նրա պատկերած հերոսները խոսում են հոգին դրամին վաճառած զարգար Պ-ի («Վերք Հայաստանի»), անարդար վաստակով ապրող Հախվերմապի («Հախվերմապի գովքը») կամ կղերի մասին:

Աբովյան-երդիծաբանը շատ վարպետ ձևով օգտագործել է ժողովրդական բանահյուսության մեջ եղած հումորի և սարկազմի հնարքներն ու ստեղծած պատկերները, սրամիտ արտահայտություններն ու ոճերը:

Բնության նկարագրության հարցում Աբովյանը հայ նոր գրականության մեջ մնաց անկրկնելի: Բնության համապատասխան վիճակի դրացողություն առաջացնելու, բնությունը «տևացնելու» արվեստի մեջ Աբովյանը հասել է արտակարգ բարձր նվաճումների: Քանաքեռի ձմեռվա, Երևանի շոգի, Զանգու դեսի և մի շարք այլ նկարագրություններ մեր գրականության անմոռանալի ու ամենախնքնատիպ էջերից են: Աբովյանի նկարագրած ձմեռը ընթերցողը ոչ միայն տեսնում, այլև զգում է. վեպում նկարագրված ձմեռը ցրտի զգացողություն է

առաջացնում: Ըստ որում բնության պատկերները Աբովյանի մոտ ինքնանպատակ չեն, բնությունը Աբովյանի երկերում կենդանանում է, խորհում, տխրում, ուրախանում, մասնակցում վեպում ծավալվող գործողություններին, պատժում անիրավ կողմին, պաշտպանում անմեղին, ճնշվածին, համակվում վերջինիս արդարությունների: Պշնամու դեմ հայ ժողովրդի տարած հաղթանակի ժամանակ «արեգակը կրակ դառած՝ Ալագյազի կողմից բարձրացավ,— դրում է Աբովյանը:— Աչքերը սրել՝ երկրի մեջն էր ուղում մանի, քարերը ճոթռի, որ պարզ տեսնի մեր ազգի քաջահաղթությունն ու տղամարդությունը: Ամպերի գլխին բոց էր վերածում, որ չհամարձակին նրա երեսը կալնեն ու իրանց տեղը տազարած մնան: Սար ու ձոր սիրտ ու գլուխ բաց էին արել ու իրանց խոնարհությունը, իրանց ծառայությունը ցույց տալիս»[1]:

Ալդարաքիլիսայի բնակչության կոտորածի ժամանակ ոչ միայն մարդիկ են ազում, այլև ողջ բնությունը. «Երկինք, երկիր, սար, ձոր, անկաջ, աչք խփել, յալիս, սուգ էին անում, դոշներին ծեծում, գլխներին տալիս, երեսները պոկում, պոճոկում. ամպք ուղում էին Ալդարաքիլիսեն վերև քաշեն, անդունդք՝ իրանց ծոցը քաշեն, պահեն... Սարերն ուղում էին պարսից գլխին թափին, խո՛ր տանին»[2]:

Հայրենի բնությունը վրեժով է լցված օտար նվաճողների դեմ, կռվում է, օգնում հայերին: Երևանի բերդի տակով հոսող Զանգու գետը իր «ջրի անբերան թրով», «քարի ուրաքով» փորում է բերդի հիմքերը, նա «գիշեր

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 99:
2 Նույն տեղում, էջ 110:

ցերեկ, անքուն, անդադար, գժված, կատաղած նրա (Երևանի բերդի — Վ. Պ.) բաց դռշին, նրա անիրավ սրտին՝ իր սլլոկած ջրի անբերան թրովը, քարի ուրաքովը վեր հառնում, զարկում ա, բայց տեսնելով՝ թե չի կարում ջիդրը հանել, վրեժն առնել, նրան քանդել, դռռալով, դանդաղելով, կական բառնալով, քիչ քիչ ձենը փորը քցում ու մունջ մունջ երեսը կալնում, Չանգիբաասարի ծոցն ա մտնում»[1]։

Հաճախ Աբովյանը վեպում տեղի ունենալիք որևէ իրադարձության նկարագրություն նախապատրաստում է բնության համապատասխան վիճակի նկարագրությամբ։ Բարեկենդանի առնի ժամանակ ընդհանուրին համակած ուրախ տրամադրության համապատասխան բնությունն էլ հանդիսա է ու խաղաղ, արևը դուրս է եկել, օրը տաքացել, «սար ու ձոր արծաթի պես փլփլում, սլսլում են», ընդհակառակը խլղարաքիլիսայի բնակչության կոտորածի ժամանակ բնությունը արտահարդ խռովահույզ վիճակում է. «Բոլոր ամեղերք, հորիզոնք երկնից, գագաթք լերանց, սահանք բարձանց սկսեցին տապալիլ. թխպադին, արջնաթույր, սևաթև ամպն՝ որ բարձրացել էր, հասավ արեգակի մոտ ու արյուն ծովի պես՝ առաջ փոքր ժամանակ կարմրատակեցավ, ապա կուտակվելով, ծալվելով՝ էնպես այլայլունեցավ, սևացավ, մինչև հեռի տեղից տեսնողք էլ՝ էն օրը էնպես էին կարծել՝ որ մեկ տեղ աշխարհ ա կործանվում»[2]։

Աբովյանի երկերը պատկերավոր են, ըստ որում, հակառակ կլասիցիստական անկյանք գրականության

---

1 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ 3, էջ 53։

2 Նույն տեղում, էջ 109։

քարացած պատկերների, Աբովյանի ստեղծած պատկերները դինամիկ են: Դրա համար բավական է թեկուզ հիշել «Վերք»-ի առաջաբանի սկզբում բերված պատկերը Կրնաս թաղավորի և պարսիկ զորականի մասին:

Աբովյանի ստեղծած պատկերների մեջ մեծ տեղ է բռնում հիպերբոլան, որը շատ հարազատ է ժողովրդական ստեղծագործության ոգուն: Աբովյանը խիստ վախճռացումը այսպես է արտահայտում. «Աղասու հոր ոսկերքը սարսափեցան» (44), կամ՝ «շատի պոռշները ահուճաքել՝ արինը շռաալով գնում էր» (38):

Աբովյանը հաճախ է դիմում համեմատություններին, որևէ կոնկրետ վիճակ համեմատելով հայտնի երևույթի հետ ավելի ռելիեֆ է դարձնում այն: Օրինակ՝ հայերի կոտորածի ժամանակ տների մեջ «ծով է դառնում արցունքը», «աշխարքս արինը բռնել, ծով ա դառել» (42), կամ՝ «արինը ծովի պես գնում էր, կանգնում» (103):

Աբովյանի ստեղծագործություններում վարպետորեն օգտագործված են ժողովրդական ոճերն ու համեմատությունները, առածներն ու աֆորիզմները: Ըստ որում նա շատ վարպետ ձևով իր հորինածները ևս ոճավորել է ժողովրդականի նմանությամբ՝ աշխատելով ավելի հարազատ լինել ժողովրդին, ավելի ճիշտ ու պատկերավոր և միաժամանակ մատչելի եղանակով արտահայտել իր մտքերը: Ոճի տեսակետից Աբովյանը հայ գրականության ամենաինքնատիպ հեղինակներից է. դժվար է նրա գրած որևէ նախադասությունը շփոթել ուրիշ հեղինակի գրածի հետ: Նա ստեղծել է իր՝ **աբովյանական** ոճը:

«Վերք»-ի գեղարվեստական արժանիքների մասին մեր ասածներից երևում է, որ այն խորապես մտածված, մշակված գործ է: Ճիշտ է, որ «Վերք»-ը «սրտի խորքից

բխած մի բնական ժայթքումն է», ինչպես ասել է Ղ. Աղայանը։ Այն, իսկապես, սիրան ու հոգին փոթորկող մտորումների արդյունք է և գրված է արտակարգ հափշտակությամբ ու արագ, դա խոստովանել է ինքը Արովյանը «Վերք»-ի առաջաբանում։ Բայց սխալ է սրանից այն եզրակացության գալ, թե հեղինակը մի շնչով վեպը գրելուց հետո այն մի կողմ է դրել, այլևս չի անդրադարձել նրան, չի կարողացել «անգամ ուշիմ կերպով վերանայել իր գրածը», մշակել, հղկել, շտկել, ինչպես Աղայանն է կարծում նույնիսկ «միտք չի ունեցել իր շնորհի գեղեցկության վրա ուշ դարձնելու»[1]։ Գրականության ու գրողի դերի, իր դերի ըմբռնման հարցում հայ մինչռևոլյուցիոն գրականության մեջ շատ քիչ գրողներ կարող են համեմատվել Արովյանի հետ։ Այդ հանգամանքը Արովյանին դարձրել է մեր ամենահետաքրքրական գրողներից մեկը։ «Վերք»-ի և մի քանի ուրիշ գործերի վարիանտների ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե Արովյանը ինչպիսի ջանասիրությամբ է աշխատել իր գործերի վրա, մշակել, հղկել, ուղղել դրանք։ «Վերք»-ի և նրա հետևած «Զանդի»-ի երկու վարիանտների համեմատությունից պարզվում է, որ Արովյանը շատ էական փոփոխությունների ու մշակման է ենթարկել վեպը։

Անշուշտ Արովյանի երկերը, նույնիսկ նրա ամենայավագույն գործը՝ «Վերք Հայաստանի»-ն, ունեն թերություններ։ Երբեմն որոշ տեսարաններ (Մահտեսիի տունը և այլն) ձգձգված են, կան կրկնություններ, հակասություններ։ Այսպես, օրինակ, «Վերք»-ում Աղասին մեկ համարված է անդրանիկ, մեկ էլ նա իր ստացած

---

[1] Ղ. Աղայան, Երկեր, 1940, հատ. 3, էջ 80։

նամակներն է կարդում: Մոսին հայր չունի, բայց վեպի վերջում անակնկալ կերպով հայտնվում է նրա հայրը և ինքնասպանություն գործում: Վերջին հանգամանքի առթիվ Մ. Նալբանդյանը «Վերք»-ի 1858 թվի հրատարակության իր օրինակի էջերից մեկի լուսանցքում գրել է. սա «ինարկե անուշադրություն է Արովյանի կողմից: Նրա սիրտը կրակ է ընկած, էլ ո՞րտեղ աչքին կըդային այսպիսի հանգամանք, մանաց որ իրանից հետո է տպված գործը, դուցե թե ինքը տպեր սրբագրեր այս և ուրիշ մի քանիսը»[1]: Ե՛վ դիտողությունն է ճիշտ, և՛ տրված բացատրությունը: Արովյանի գործի առաջին մեծ քննադատը հիանալի հասկանում էր, որ իր նշած հանգամանքները հայ նոր գրականության հիմքը դնող բարձրարժեք երկի համանակի թերություններ էին:

[1] ՀՍՍՌ Գիտ. ակ. Գրակ. ինստ. Գրական թանգարան, Մ. Նալբանդյանի Ֆոնդ, գործ № 382:

Գլուխ VIII

ԱԲՈՎՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աբովյանի պոեզիան նշանավորում է այն ասպարեզը, որին հասավ հայ պոեզիան անցյալ դարի 30—40-ական թվականներին։ Տակավին ըստ արժանավույն դնահատված չէ Աբովյանի պոեզիան. ավելին՝ այն համարվել է Աբովյանի ստեղծագործության քիչ կարևոր մասը։ Սխալ է այս տեսակետը. Աբովյանի պոեզիան իր արտահայտած գաղափարներով և արվեստով նոր երևույթ է հայ գրականության պատմության մեջ, Աբովյանը հիմնադրեց ոչ միայն հայ նոր շրջանի գեղարվեստական արձակը, այլև չափածոն։ Մեր կարծիքով Աբովյանի պոեզիայի բնորոշման «հոդիբանական հիմքը» «Վերք Հայաստանի» վեպի արտակարգ մեծ արժեքն ու նշանակությունն է։ Ոչ թե Աբովյանի պոեզիան է քիչ նշանակալից, այլ «Վերքն» է արտակարգ երևույթ։

Աբովյանը գրական գործունեությունն սկսել է բանաստեղծություններ գրելով, ապա միայն անցել նաև արձակի։ Պահպանված առաջին բանաստեղծությունները գրված են 1824 թվին, երբ նա 19-ամյա պատանի

էր և իր ուժերը փորձում էր պոեզիայի ասպարեզում՝ «առանց դիտելոյ դեռ ղևանոն բանաստեղծութեան»։

Աբովյանի բանաստեղծությունների մի զգալի մասը գրված է դրաբար լեզվով, այդտեղ էլ նա արծարծել է դեռատանցապես աշխարհիկ թեմաներ։ Սրա արձակում Աբովյանը «Վերք»-ով միկրնդմիշտ հրաժարվեց գրաբարից և անցավ աշխարհաբարի, ապա պոեզիայում նա երկար ժամանակ աշխարհիկ թեմաներ էր արծարծում գրաբար լեզվով։ Անկասկած պոետական պրակտիկան էլ նրան բերեց այն համոզման, որ աշխարհիկ թեմատիկան լրիվ ձևով հնարավոր է արտահայտել և ժողովրդին հասցնել միայն կենդանի ժողովրդական լեզվով։ Դրա համար էլ «Վերք»-ից հետո նա պոեզիայում էլ անցավ աշխարհաբար լեզվին, գրաբար բանաստեղծություններ գրելով խիստ հազվադեպ։

Բազմազան են Աբովյանի պոեզիայի մոտիվները՝ սեր, հայրենասիրություն, ժողովրդի սոցիալական վիճակը, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու և զանազան դեպքերի ու իրադարձությունների առթիվ գրված բանաստեղծություններ և այլն։ Աբովյանի պոեզիայի մեջ նկատելի է հեղինակի մի տենդենցը՝ արձագանքել ժողովրդի կյանքում տեղի ունեցած և իր հետ պատահած կարևոր իրադարձություններին ու դեպքերին (ռուսական բանակի մուտքը Հայաստան և ժողովրդի ցնծագին սրամադրությունը ռուսներին դիմավորելիս, Արարատի գագաթը բարձրանալը, Ալամդարյանի մահը, Աղա Մամադ խանի կողմից Թիֆլիսն ավերելը, Դորպատում իր «աշխարհակից» Ֆահրադ Բադալովին հանդիպելը և այլն)։ Սրան դրան ավելացնենք նաև եվրոպական գաղութարարների, ցարական չինովնիկության, հայ առևտրա-վաշխառուական խավերի և հոգևորականու-

բյան քննադատությունը, պարզ կդառնա, որ Աբովյանը հայ նոր գրականության պատմության մեջ եղել է առաջինը, որ քաղաքացի բանաստեղծի օրինակ է տվել, իր տեսությամբ և պրակտիկայով հիմնավորել է պոեզիայի ակտիվ ու ներգործուն դերի անհրաժեշտությունը:

Մարդու «պրախան ու կյանքը հենց է՛ն ա, ով խեղճ ազգի ցավը կիմանա»,— ասում է Աբովյանը բանաստեղծություններից մեկում: Անկախ ժանրից, վնտ է դրել թե բանաստեղծություն, պատմվածք թե հրապարակախոսական հոդված, գիտական ըրույց թե մանկավարժական երկ, առակ թե բայաթի, նա մի հիմնական նպատակ է հետապնդել՝ հասկանալ «ազգի ցավը», օգնել նրան: Նա, ճիշտ է, տարբեր ժանրերում տարբեր հաջողությամբ, բայց միշտ էլ արծարծել է ժամանակի ամենահուզող հարցերը:

Աբովյանի պոեզիայի հիմնական մոտիվը հայրենասիրությունն է: Նա մարդու կյանքի նպատակը հայրենիքին, «ազգին» ծառայելն է համարել: Մարդկային ոչ մի ղգացում չի կարող համեմատվել հայրենասիրության հետ. «ազգասեր» մարդը պետք է անձնուրաց, հայրենիքի համար զոհվելու պատրաստակամ լինի. ահա Աբովյանի սկզբունքը, որ նա արտահայտել է «Ազգասեր մարդը իր մեռնելու վախտը» բանաստեղծության մեջ:

Ո՛չ երկար ապրելն էր իմ ուզածը,
Ո՛չ լավ օր քաշելն՝ ա՛խ՝ իմ խնդրածը,
Իմ էն քաշած շունչն էլ մահ էր աչքիս,
Երբ չէի կարում պետքը գալ ազգիս[1]:

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 197:

Հայրենիքի նկատմամբ ունեցած ջերմ սերը Աբովյանը երբեմն արտահայտում է մեր ժողովրդի պատմական անցյալին դիմելով, Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ ժողովրդի՝ պարսից բռնակալության դեմ մղած ազատագրական պատերազմը, այդ կռվի հերոսների «մեծապանծ գործքը» դովերգելով։ Ըստ որում պատմական անցյալին դիմելը Աբովյանի համար ինքնանպատակ չէ, պատմության մեջ եղած հերոսական դրվագները, օտար բռնակալության դեմ ժողովրդի մղած հերոսամարտերը դովերգելով, նա ժամանակակիցներին հորդորում է հետևել այդ օրինակներին։ «Կարօտութիւն նախնի վայելչութեանց հայրենեաց իմոց» բանաստեղծության մեջ, որ Աբովյանը գրել է 19-ամյա հասակում, պարսկական բռնակալության լծի տակ հեծող հայ ժողովրդին հիշեցնելով «անցեալ ի հին դարս հաւուց մերոց նախնի» և իր շուրջը «միայն ատերակք» տեսնելով, կոչ է անում հետևել Վարդան Մամիկոնյանի օրինակին, հայրենիքի փառքը փրկել արյամբ։

Կրկնեցի՛ շրջան այնց ժամանակաց,
Զի՝ է մեք վառեցուք ի նախանձ փառաց.
Ժառանգել զանուն մտերիմ որդւոց,
Տալ զկեանս ի զոհ սիրոյ Հայրենեաց։
Մեռանիմ ի քեզ՝ ժամանա՛կ անցեալ՝
Ժամանա՛կ շրոյ իմոյ դիւցազանց.
Օ՛հ՝ ո՞ տայր և ինձ՝ անդ զիմ ջերմ արիւն
Հեղուլ ի յերկրի Վարդանայ յանուն։

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 15—16։

Սխալ է այն կարծիքը, թե Աբովյանի մինչդորպատյան և դորպատյան շրջանի բանաստեղծություններըը գերազանցապես սուբյեկտիվիստական բնույթ ունեն։ Աբովյանի այս նույնիսկ ամենավաղ շրջանի բանաստեղծությունը ցույց է տալիս, որ նրան հուզել են իր ժողովրդի բախտի, նրա վիճակի հարցերը։ Այդ տեսակետից հետաքրքրական է նույն շրջանի նաև մի այլ բանաստեղծություն, որի մեջ Աբովյանը ժողովրդի լուսավորության հարցն է դնում։

Եկեսցէ՞ արդեօք և մեզ ժամանակ,
Չի անցցէ ի մէնջ այս խիստ քո մուրհակ.
Տեսցուք և մեք լոյս ի մերում գնդի,
Զոր ձրի վայելեն համայն ազգք երկրի։

Աբովյանի հայրենասիրությունն արտահայտվել է նաև պանդխտության թեմայով գրված բանաստեղծություններում։ Օտարության մեջ իր առ հայրենիքն ունեցած սերը, ինչպես և առհասարակ օտարության մեջ գտնվող ու հայրենիքի կարոտից տառապող մարդու զգացումներն են արտահայտված «Արհաւիրք պանդխտութեան և խրատք նորա» ու մի քանի այլ բանաստեղծություններում։

Մեծ հայրենասերն ու հումանիստը թշնամի է եղել առհասարակ ամեն կարգի բռնակալության և պաշտպանել է ճնշված ժողովուրդների իրավունքները։ Այդ տեսակետից էլ նա, ինչպես իր արձակ, այնպես էլ չափածո գործերում, քննադատել է Եվրոպայի գաղութային քաղաքականությունը։ Աբովյանին՝ իրրև մեծ մարդասերի՝ հուզում են մարդու ազատության ու երջան-

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 69։

կության հարցերը, անկախ նրանից, թե նա ինչ ազգի է պատկանում։ Եվրոպական գաղութարարները նույնպիսի բռնակալներ են Ամերիկայի բնիկ ժողովուրդների նկատմամբ, որպիսի բռնակալներ են պարսիկ բարբարոսները հայերի նկատմամբ։ «Յալիս ամեհի անդ Միսիսիպի...» բանաստեղծության մեջ պատկերված է, թե ինչպես Միսիսիպին հուզված է, վրդովված, նա «դղրդմամբ» ընդոմ է, իր փրփրած հորձանքներով սպառնալով խորտակել «ղեղերս իւր և զսին»։ Սարսափից քարայրները սասանվում են, ճայթում։

Զձորավայրն ի խոր արհաւիր սոսկաձայն հնչմամբ
Անխառն՝ անարատ գետն սուրբ աշխարհին հերքէ զոռնամուտ
Մարդախառնձ նաւուց՝ որք դիմեն կոխել զիւր գետին մաքուր
Հերքէ և զանսիրտ ջուր Ատլանդիոյ մուտ
Ի ծոց իւր մաքուր, որ բերէ առ ինքն զայն քշուառական հիւրան։

Միսիսիպին, ամերիկյան բնիկների հայրենի գետը, հուզված է հարատած ժողովրդին սպառնացող ծանր արհավիրքի պատճառով, նա բողոքում է այն բանի դեմ, որ եվրոպացի գաղութարարը— «սպիտակ տեսլեամբ քշնամին դաժան»— դալիս է նվաճելու և ստրկացնելու բնիկ ժողովրդին։

Քննադատելով եվրոպական «քաղաքակրթությունը», Աբովյանն անսահման սիրով է խոսում Ռուսաստանի մասին։

Հայ ժողովրդի ռուսասիրությունը, Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու նրա բուռն ցանկությունը արտահայտված են Աբովյանի նաև չափածո ստեղծագործություններում։ «Ննդամիտ զգացմունք...», «Մը-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 260։

տածմունք ի տեսիլ հայրենեաց», «Յաղաւթիւն Հայաստանեայց», «Մուտ Հայկայ ի Հայաստան...», «Մուտ ի Հայրենիս։ Ի 1844» բանաստեղծություններում Աբովյանը խոսում է հայ ժողովրդի կյանքում Ռուսաստանի խաղացած պատմական մեծ դերի մասին և ջերմ սիրով համակված տողեր նվիրում ռուս ժողովրդին։ «Մտածմունք ի տեսիլ հայրենեաց» բանաստեղծության մեջ Աբովյանը, արտահայտելով իր խոր ատելությունը պարսկական բռնակալության՝ «Հարավի խորշակի» նկատմամբ, սիրով է խոսում հայ ժողովրդին մեկնած ռուս ժողովրդի «Հզոր բազկի» մասին.

Այս բազուկ հզօր՝ որ զմեզ տածէ,
Այս հողմ զուարթարար ի հիւսիսան ծագոյ,
Փրկեսցէ՛ ամառ, հարցէ՛, մեղմեսցէ՛
Զայն ջերմ, հրաբորբոք խորշակ հարաւոյ։

Սրբոյն Ռուսիոյ զաւակք բաջաջան
Կրկին կանգնեսցեն զմեր քակ աւերակ։
Արծուոյն հիւսիսոյ ընդ թեւօք սիրական
Կրկին զօրասցուք որպիսս հարազատք[1]։

Արձակի մասին խոսելիս նկատեցինք, որ Աբովյանը խիստ քննադատության է ենթարկել ցարական բյուրոկրատիային։ Նրա քննադատական վերաբերմունքը ցարական չինովնիկության նկատմամբ, որ մասնակի ձևով նկատելի է «Վերք»-ում, զարգանում է «Վերք»-ից հետո գրված «Հազարիւեղեն» երգիծական պոեմում։

Անշուշտ պատահական չէ, որ Աբովյանը «Հազարիւեղեն» երգիծական պոեմը գրել է 1840-ական թթ., երբ

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 216։

ցարական չինովնիկության շահատակություններն անցել էին ամեն սահման։ Հարցն այն է, որ 1840 թվին Անդրկովկասի կառավարման նոր կարգ մտցվեց, որի նպատակն էր, ինչպես դրել են այդ կարգի նախագծի հեղինակները, «Связать Закавказье с Россией гражданскими и политическими узами в единое тело и заставить жителей тамошних говорить, мыслить и чувствовать по-русски».

Այդ նոր կարգի համաձայն Անդրկովկասում ցարական չինովնիկության թիվը կրկնակի ավելացավ։ Ավելի ծանրացան ժողովրդի վրա դրված հարկերը։ Բնական է, որ Աբովյանի սուր դիտողությունից չէին կարող վրիպել այդ նոր երևույթները և մանավանդ ցարական բյուրոկրատիայի արհամարհական վերաբերմունքն ու թալանչիական քաղաքականությունը կովկասյան ժողովուրդների նկատմամբ։ Անդրկովկասյան իրականության լավատեղյակ պետական գործիչ և գրող Ա. Ս. Գրիբոեդովը տակավին մինչև այդ նոր կարգ մտցնելը ասել է, որ Կովկաս եկած ցարական բյուրոկրատիան բնավ չի հետաքրքրվել ժողովրդի ու երկրի վիճակով, նա հետամուտ է եղել միայն աստիճաններ բարձրացնելուն և իր դատապարտելի վարքագծով անբարոյականություն է սերմանել։

Աբովյանը ևս, ինչպես և նրա ժամանակակից ռուս հառաջադեմ գրողը, տեսել է Անդրկովկաս եկած ցարական բյուրոկրատիայի այդ տիպական գծերը և հայ գրականության մեջ առաջին անգամ բարձր արվեստով պատկերել ու քննադատել դրանք։ «Հազարիճեղեն» պոեմում պատկերված է, թե ինչպես աղնվականական հովերով տարված, սալոնների, բալերի ու պարահանդեսների սիրահար ցարական չինովնիկը ծաղրում է կով-

կասյան ժողովուրդների վարք ու բարքը, նրանց պարզ ու շիտակ կյանքը։ Աբովյանն ասում է, որ «Հազարփեշեն» գրված է այն «բարի» մարդկանց մասին, որոնք «մեր խալխին (Կովկասյան ժողովուրդներին — Վ. Պ.) փուդն են դնում»։ Պոեմի առաջաբանում Աբովյանը բացատրում է այդ գործի հղացման պատճառը. «Մ՚վ չի դիտի, որ տեղիցը վեր կենողը հենց մեր խեղճ խալխի վրա ա ոտը բարձրացնում», ծաղր ու ծանակի ենթարկում մեր ժողովրդին, «գրով, լեզվով խայտառակ անում». «կամենալով մեր խալխի բնությունը էնպես իմաստուն մարդկանց բնության հետ մի քիչ համեմատել, էս մեր Հազարփեշեն մեջ բերի»[1]։ Ապա հեղինակն սկսում է նկարագրել մի «իմաստուն» մարդու, որը կովկասցու մասին լսելիս դղվում է, թուք ու մուր թափում։ Մի օր էլ «սատանի քամին» նրան դցում է Կովկասի սարի այս կողմը, ուր ասիացիների կողմից լավ հյուրասիրվելուց հետո այդ «իմաստունը», տմարդի կերպով, «դունչի» կանչելու, ապտևելու, ջարդելու մասին է մտածում, զարմանում, որ կովկասցիներն այնքան շնորհք չունեն, որ ջուրն էլ փողով ծախեն, այլ իրենց հացն ամենքի «առաջն են ածում»։ Ի հակադրություն դրա նա շարադրում է իր իդեալը.

Փող պտի շինած ու ծոցը դրած.
Լավ հարած, մաշած ու կաւնի լծած,
Բալ տալ, բալ դնալ, իր փառքը ցույց տալ,
Մոտովդ անցնելիս, երևդ շուռ տված.
Ինչ ունես, գլխիդ, ոտիդ խարջ արած...
Լավ տեղ ու լավ չին, լավ նշան ճարած[2]։

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 166։

2 Նույն տեղում, էջ 169։

Իսկ և իսկ ցարական չինովնիկի պատկերացում կյանքի մասին: Նա իր պրակտիկայից եկել է այն համոզման, թե անպատիժ կերպով կարելի է կովկասցուն թալանել.

Ասիացի մարդն զակօն ի՞նչ գիտի,
Որ քեզ հետ խոսա կամ համարձակի:
Գլխին տուր, ղրադին կանգնի՛ր, քնի՛ պրա՛,
Ջնդղ լցրու, բո երկիր դնա.
Ո՞վ ա հարցնում, կամ գլուխդ կտրում[1]:

Այս միջոցին էլ նա փորձում է դիմել, հայհոյում է, սպառնում բոլորին «տանի սրտիցն ածի»: Որ «ասիացիներին» համբերությունն սպառվում է, նրանք այդ չինովնիկին այնպես են խփում, որ նա, «հային օրհնելով, վրացուն դովելով», ընկնում է կրակի մեջ: Չինովնիկը իր կողմնակից մարդկանց է կանչում.

Ամա մեր խալխի մուշտու հունարը
Դեռ չէին տեսել, որ իրանց ձեռը
Թոխմախ-գլխներով բալի տակ չըցեն:
Հենց պլտուխները լցրին ուշունցով,
Դուռակ ու շկմա՝ էկան ձեն տալով,
Մեր հայու մուշտին, վրացու քացին
Էնպես Բունդ դիպավ նրանց գլխին, փորին,
Որ ամեն մեկը հազար տեղ շորնց
Թխկաց, ղրխկաց, հազաց ու պառկեց.
Մեկ կողմը շապկեն, մյուսը տրուսկեն
Ցխումն Բավալ տվին, տերները կորցրին:
Նրանք էլ իրանց տլոտ ֆրակով,
Հազար տեղ ցխին պաչ արին սիրով[2]:

---

1 Ե. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ.—1, էջ 170:

2 Նույն տեղում, էջ 173:

Շուտով կռվի վայրն են հասնում նաև դաշտում աշխատողները ու ցանկանում «նահատակ» անել չինովնիկին ու նրա կողմնակիցներին.

Բայց մեր խալխի սիրան կակղ ըլնով,
Նրանց եդ կանգնացրին, վրա թափեցին,
Փիլխոփներին ցխից հանեցին։

Կովկաս եկած այդ դաղութարար չինովնիկը (որը չանելով, թե Կովկասում դինին պահում են տիկում, զայրանում էր), ինչպես և նրա ծեծված ընկերները այժմ սկսում են դավել «սուրբ հազարմեջին»։

Զարմանալի ներդաշնակ է հնչում պոեմի վերջը և առաջաբանում հայտնված այն միտքը, թե երբ «...աստված կաս՝ մեր Ասիացիք էլ քիչ-քիչ աչքները բաց կանեն, էն ժամանակը չեն թողալ, որ ամեն հայվարա մարդ իրանց վրա բերան բաց անի»[2]։ Հետաքրքրական է, որ այդ հայվարա մարդը պատկանում է ազնվականական դասին, որը ստորաքարշություն անելով Եվրոպայի առաջ, ընդօրինակում է ֆրանսիական ու գերմանական կենցաղի հոռի կողմերը և հպարտանում իր «եվրոպացի» լինելով։ Աբովյանն այդ չինովնիկին ծաղրելով, «իմաստուն», «շնորհքի կարաս», «փիլիսոփա», «մարիֆաթի պարկ» ասելով, միաժամանակ «եվրոպացի» է անվանում։ Հետաքրքրական է, որ այդ չինովնիկը ճիշտ և ճիշտ Պուշկինի ժամանակվա ազնվականների նման «բոն ժուր», «դուան տագ» բառեր է խառնում խոսակցություններ։ Աբովյանն այսպիսով պոեմում ընդգծել է նաև

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 173։

2 Նույն տեղում, էջ 166։

սոցիալական մոմենտը. ռուս չինովնիկը արիստոկրատական խավի ներկայացուցիչն է, իսկ ասիացիները՝ աշխատավոր կովկասցիների: Հետևյալ տողերի մեջ, նկարագրելով իր և իր նմանների կյանքը, չինովնիկը մատնում է իր սոցիալական պատկանելությունը:

Սրանց (կովկասցիների — Վ. Գ.) կոպիտ գլխումն դեռ
մեր մարիֆաթն
Հեչ տեղ չի՛ արել, կամ քթին դիպել.
Որ դատած ապրանքդ, մալդ ու դովլաթդ,
Գահնս սև օրին, ձև ջուր ուղեն էլ,
Ընչանք փողը չառնես, նրան տուն չծողաս.
Դռանդ բնկած ըլին, քացով խփես, գնաս[1]:

Հասկանալի է, որ դա ռուս մուժիկի համար նույնպես խորթ, նրան ճշնամի, ֆրանսերեն ու գերմաներեն կոտրատող արիստոկրատական խավից է և ոչ Աբովյանի ու ժողովրդի սիրած ռուս աշխատավոր մարդը: Հասկանալի է նաև, որ ռուս մուժիկն ասիացի աշխատավորների հետ կեղբայրանար ու կհիանար նրանց ազնիվ վերաբերմունքից: Դրա համար էլ պոեմի վերջում ասիացիր ասում են.

Ասացե՛ք տղերք՝ դուք ալլահվերդի,
Յաղշի՞ օլ, ուռա՞, կամ զդրավի.
Բոն ժուրն, դուսն տաղն բանի պետքը չի՞[2]:

Կովկասյան ժողովուրդների ողջույնը, ռուս աշխատավոր մարդու «զդրավի»-ն սիրելի են, ռուս ազնվա-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 169:

2 Նույն տեղում, էջ 175:

կան-չինովնիկի «բոն ժուրն» ու «գուտն տագը»՝ խորթ ու անհարազատ։

Աբովյանը գրել է նաև սիրային բանաստեղծություններ, գովերգել իր «հոգւոյ բաղուհուն» («Ո՞ւր ես գնում, Նազլու ջան...», «Ջանումս ջան չի մնաց, որ իմ ահվալն քեզ ասեմ» և այլն)։

Մի քանի բանաստեղծություններում Աբովյանը ծաղրել է կրթության և լուսավորության Ջնաամի հայ հարուստներին, մերկացրել նրանց բարոյական գազրելի կերպարանքը («Աչքի լույս ջան, գարդ մի անիլ», «Հախվերմատի գովքը»)։

Կյանքի վերջին շրջանում գրած «Յունայնութիւն աշխարհի» բանաստեղծության մեջ Աբովյանը ցույց է տվել հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալական հակասությունները, աշխատավորական խավերի ծանր վիճակը և հասարակական պորտաբույծ խավերի անաշխատ ու ցոփ կյանքը։ Աբովյանն անողոք գրչով մերկացրել է հասարակական այն կարգերը, երբ գաղափարավում ու ծաղրվում են լավն ու գեղեցիկը և ընդհակառակը, արբագործվում՝ վատը և սորը։

Անդ հեղու տնանկն զարտօսր ցաւագին.
Անմխոն զրպարտի յատեան շարաքննին.
Յիմարն ի պատուի, յարդի միշտ փառօք,
Ամբարիշտն բազէ զվարդն կենաց՝ լոկ,
Բարեաց միայն՝ վուշ բուսանի յամայր.
Անդ է նոցա միշտ՝ պատիր այս աշխարճ։

Նախանձն չարագուխ՝ ամենայնուրեք
Շշէ օձանման, ո՛չ խնայէ ումէր.
Ձիր, բանբար, արդիւնք ճշմարիտ քո գին
Մնան միշտ անվարձ և ո՛չ ճանաչին.
Ում բարիս առնիս, զչարն առանաս,
Քարեղէն սրտից զի՞նչ փոյր՝ նոգւոյդ մաչ։

Ջիւր թոյն դառնութեան վատաբան լեզուն
Թափէ ի գլուխ՝ անբախտ խմաստնոյն.
Դատաւորն արդար ո՛չ զոք քննէ.
Միրք միայն խօսքն զամենայն յանձնէ[1]։

Աբովյանը, մանավանդ իր գրական գործունեության առաջին տարիներին, երգել է նաև որոշ կրոնական մոտիվներ։ Երեսնական և մանավանդ քառասնական թվականներին, սակայն, նա հիմնականում հաղթահարել է իր այդ կարգի բանաստեղծություններում արտահայտած տրամադրությունները։

Ինչպես արձակ գործերում, այնպես էլ պոեզիայում Աբովյանը մեծ ուշադրություն է դարձրել ժողովրդական բանահյուսության և աշուղական պոեզիայի վրա։ Աբովյանը դիտեր, որ ֆոլկլորն ու աշուղական պոեզիան արտահայտում են ժողովրդի տրամադրությունները ու հույզերը և դրա համար էլ սիրելի են ժողովրդին։ Նա հայ գրականության պատմության մեջ առաջինն էր, որ գիտակցեց, թե ժողովրդական բանահյուսությունը որքան մեծ նշանակություն ունի նոր գրականության ստեղծման գործում։ Այս հարցում Աբովյանը հանդես եկավ իբրև նորարար և ուրվագծեց հետագա շատ գրողների ուղին։ Աբովյանը, որ տեսել էր, թե ինչպես ժողովուրդը «հայիլ մայիլ» լսում է աշուղներին, չէր կարող ուշադրության չառնել այդ հանգամանքը։ Անշուշտ դրանով է պայմանավորված աշուղ դառնալու նրա վճիռը։ Հետաքրքրական է, որ նա նույնիսկ գրաբար մի քանի բանաստեղծություններում օգտագոր-

---

1 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 1, էջ 229։ Ընդգծումները բնագրումն են։

Ծել է ժողովրդական և աշուղական երգերի հնարները։ Աբովյանը հասկացել է հանճարեղ աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովայի պոեզիայի մեծ արժեքը և նրա երգերի ոգով գրել «Ջանումս ջան չի մնաց...» բանաստեղծությունը։

Ջանումս ջան չի մնաց, որ իմ ահվալն քեզ ասեմ,
Բերանս խոսք չէ գալիս, որ իմ խիալն քեզ ասեմ.
Քուի ու Բոլխանա ես սարրել, քանդկնիր բուրջ ու բագան,
Քանի որ քեզ եմ տեսել, էրվեց, մաշվեց, ա՜խ, իմ ջանս

Դարդիմանդ ես, մի փերր արա, ի՞նչպես էլի էս իմ բանս,
Օշոլիմեն ումուդ չունիմ, դուն ես իմ ճարն ու դարմանս.
Թե ուզում ես դիփունիմեն դուն իլիս իմ սերն ու ջանս,
Էս իմ յարիս մեկ ճար արա, որ սկսեմ լավիցն ասեմ[1]։

Աբովյանը հետաքրքրվել է նաև ժամանակի հայտնի աշուղների ստեղծագործությամբ, մտահոգվել իր ժամանակակից վաղամեռիկ աշուղ Ադրար Ադամի ընտանիքի վիճակով և ձեռնարկել նրա ընտանիքի օգտին հանդանակություն հավաքել, ըստ որում Երևանի հասարակությանն ուղղված հանդանակության թերթի վրա նա գրել է մի բանաստեղծություն, որի մեջ հետաքրքրական է աշուղին տված նրա դնահատականը։

Ադրար Ադամի ասած խոսքերը
Նրա քաղցր լեզուն, սիրուն մտքերը,
Ո՞ր երևանցու անկապումն, սրտում
Հազար ցավ ու կսկիծ էսօր չեն շարժում[2]։

Աշուղին տված այս դնահատականից պարզվում է, որ Աբովյանին գրավողը եղել են նրա «սիրուն մտքերը» և «քաղցր լեզուն», այսինքն՝ ժողովրդին հասկանալի լե-

1 Ե. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 354։

2 Նույն տեղում, էջ 261։

ղուն և նրա սրտին մոտ ու հարազատ աշխարհիկ թեմանները, որոնք ժողովրդի «ցավն ու կսկիծն են շարժում», նրա տրամադրություններն արտահայտում։

Աբովյանը մի քանի բանաստեղծություններում նշում է թե ո՛ր աշուղի, կամ ո՛ր երգի նմանությամբ է ինքը գրել («Քեշիշ օղլու դունով», «Աշըղ Ղարիբի հանդով» և այլն)։

Աբովյանի պոեզիայի և ժողովրդական բանահյուսության մեջ եղած սերտ կապի ապացույց են նաև նրա բայաթիները։ Դրանք ցույց են տալիս, որ բանաստեղծը ծանոթ է եղել և հմուտ ձևով օգտագործել է ոչ միայն հայ, այլև ադրբեջանական ժողովրդի ֆոլկլորը, ստեղծելով ժողովրդական քառյակների ձևով ու նմանությամբ, ոգով ու ոճով բայաթիներ։ Աբովյանը գրել է շուրջ 80 բայաթի, բոլորն էլ աշխարհաբար լեզվով։ Դրանք բարձր արվեստով գրված լիրիկական քառյակ-բանաստեղծություններ են, որոնք զարմացնում են իրենց հուզականությամբ, արտահայտած խոհերի հարստությամբ ու խորությամբ և հանդիսանում են հայ նոր շրջանի պոեզիայի մեծ նվաճումները։ Աբովյանը բայաթիներ գրելով հետապնդել է որոշակի, նրա առհասարակ լուսավորական գործունեությանն առնչվող նպատակ՝ գրականությունը մոտեցնել ժողովրդին. «Բայաթիքը էն մտքով եմ գրել,— ասում է Աբովյանը,— որ չունքի մեջտառմ. հացի վրա թուրքեվար են էսպես բաներ ասում. լավ հայը հայեվար ասի, որ քիչ քիչ լեզուն բաղդրանա, չունքի ոչինչ բան լեզուն էնքան չի քաղցրացնիլ, որքան խաղ ու տաղը։ Հույս ունիմ, որ ուրիշ մարդիկ դհա լավը շինենն»[1]։

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ 2, էջ 189։

Բայաթիներն Աբովյանի հուզված սրտի, նրա հոգեկան հարուստ ու խռովահույզ աշխարհի պոետական արտահայտություններ են։ «Վերք»-ում խոսելով Աղասու՝ հաճախ բայաթիներ երգելու մասին, Աբովյանը դրանով իսկ բացատրել է նաև իր (Աբովյանի)՝ բայաթիներին դիմելու պատճառներից մեկը. «Ո՞վ չի գիտի,— գրում է նա,— որ մարդի սիրտը արնով լցվելիս՝ ո՛չ սուր էնքան քյար կանի, ո՛չ դեղ, ո՛չ քուն, ինչքան բառն ու խոսքը, ու իլլահիմ խաղը, բայաթին»[1]։

Աբովյանը ևս, սիրտը «արնով լցված», բայաթիների մեջ արտահայտել է իրեն հուզող զգացումները։ Ըստ որում իրենց արտահայտած մտքերով ու զգացումներով բայաթիները սերտորեն կապված են Աբովյանի մյուս գործերի հետ։ Բայաթիներից մեկի մեջ մեծ հումանիստն այն միտքն է հայտնում, թե մարդու կյանքի իմաստը լավ գործ կատարելն է, ծաղկի նման հոտաոտալը։

Դաշտի ծաղկի ռանգ ե՞ռանգ
Մեզ նման կարճ է օրն ու կյանք։
Ծաղիկն, որ հոտ չունենա,
էլ ինչ օգուտ ռա՛նգն, ռա՛նգ[2]։

Աբովյանի բայաթիների հիմնական մոտիվներից մեկը սերն է, մաքուր, ջերմ սերը, որը, սակայն, անպատասխան է մնացել, մերժվել է և արտահեղք ցավի պատճառ դարձել։ Այդ բայաթիները համակում են մեղմ թախիծով, նրանց լիրիկական հերոսը փնտրում է իր սրածին, տանջվում նրան տեսնելու ցանկությամբ։

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 144։

2 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 187։ Ընդգծումները բնագրումն են։

Արեխս մի տար, որ էրես,
Ինձ փոթորես, խորովես։
Հոգիս ուզիր, ես քեզ տամ.
Քոզ մեկ տեսնիմ քո երես։

...Սիրտս կաթել ա՝ արին,
Քո մարմինն եմ, քո արին,
Ե՛դ արի, մեկ աչքովդ տե՛ս,
Թե սիրելուդ ի՞նչ արին[1]։

Բայաթիներում Աբովյանն արծարծել է նաև հայ-ցենասիրության, սոցիալական հակասությունների, հասարակության մեջ գոյություն ունեցող անարդարությունների հարցը։ Աշխարհը «դառն ա ու խավար», այն աշխատավոր մարդու համար դարձել է «դանակ ու սուր»։ Աբովյանը պաշտպան է կանգնում հասարակական անարդար կարգերում ճնշվող աղքատին, որը «ոչ օր ունի, ոչ մեկ բախտ»։

Տար էդ հավին՝ ա՛յ ուրուր,
Աշխարքս դանակ ա ու սուր։
Չոռ մարդի բուրն ա կտրում,
Խեղճն ո՞ւր կորչի, ախ՝ ո՞ւր, ո՞ւր[2]։

Այդպիսի խեղճերից մեկն է, որ թողած տուն ու տեղ պանդխտել է մի կտոր հաց գտնելու ակնկալությամբ և օտարության մեջ՝ «ղարիբ երկրում» իրեն ղդում է խոր ձորում ու էրվում, «խորովվում» է հայրենիքի կարոտից։

Նորաստեղծ բուրժուական հարաբերությունների

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 187։ Ընդգծումները բնագրումն են։

2 Նույն տեղում, էջ 190։

պայմաններում հարաստությունը, փողը դառնում են մարդկային բոլոր հարաբերությունների վրա իշխող ուժ, մարդու արժանիքները վերադրվում են հարստության, փողին, դրա համար է, որ հարուստը «ամենի աչքի լիան է», նրա սպի ձայնը բարձր է հնչում, իսկ աղքատը «հազար էլ որ սպը քոքի» նրա սպի ձայնը չի լսվում: Սակայն Աբովյանին չի համակում պեսիմիզմը, նա ինքնախրախուսյա է կարդում.

Մի դարդ անիր, սի՛րտ արա,
Ի՞նչ ես էրվում, սիրտ արա.
Էդքան տանջվիլ պետքը չի՛,
Ինչ ասում են՝ սիրտ արա՛:

Բայթիի, այդ ամենահամառոտ բանաստեղծական ձևի մեջ, մեծ և խոր դիտողումներ ու հարցեր արծարծելու Աբովյանի փորձը անգերազանցելի մնաց երկար ժամանակ, մինչև որ շուրջ ութսուն տարի հետո Թումանյանը շարունակեց Աբովյանի տրադիցիան ու նոր աստիճանի բարձրացրեց հայ բառյակագրությունը:

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 190:

Գլուխ IX

ԱԲՈՎՅԱՆԸ ԱՌԱԿԱԳԻՐ

Աբովյանը հայ նոր շրջանի առակագրության հիմնադիրն է: Առակը նրա ստեղծագործության մի նշանակալից մասն է կազմում. շատ չեն այդ առակները (շուրջ 40 հատ), սակայն մեծ են նշանակությամբ, պատմական դերով: Առակների մեջ փայլել է Աբովյան-սատիրիկի հզոր տաղանդը: Մեծ լուսավորչի կյանքը եղել է զարմանալիորեն նպատակասլաց, նրա յուրաքանչյուր ձեռնարկումը, առաջին հայացքից նույնիսկ քիչ նշանակալից թվացող, հետապնդել է որոշակի նպատակ, կազմել է նրա ընդհանուր գործի մի բաղկացուցիչ ու անհրաժեշտ մասը: Իր առակներով Աբովյանը հետապնդել է նույն նպատակը, ինչ որ, ասենք, «Վերք Հայաստանի»-ով: Տեսնելով, որ գրականությունը կտրված է ժողովրդից, ժողովուրդն էլ գրականությունից և պայքարելով ժողովրդին հասկանալի, նրա շահերն ու ձգտումներն արտահայտող գրականության համար, Աբովյանը, ի թիվս բազմաթիվ այլ ժանրերի, դիմեց նաև առակի ժանրին:

«... Առակները,— գրում է պրոֆեսոր Մ. Աբեղյանը,— դառնում են մի տեսակ միջոց ժողովրդական տարրերը թե՛ ըստ ձևի, թե՛ ըստ բովանդակության մացնելու մեր հին գրականության մեջ, և դրանց միջոցով մեր գրականությունը հետզհետե մոտենում է ժողովրդին, ենթարկվում է աշխարհիկ ոգուն և հոսանքին»[1]: Սակայն ժողովրդական տարրերի մուտքը գրականության մեջ հեշտությամբ չի կատարվել: Հոգևորականությունն արհամարհել ու մերժել է առակները, դրանք համարելով դեղջկական ու անարժեք: Ինչպես դպրանները, այնպես էլ «առաստպետխատաք» (առակագիրները) նույնիսկ հաղորդության անարժան մարդիկ են համարվել: Առակը եղել է ծաղրի առարկա, գրում է Մ. Աբեղյանը. «դի դրա առաստպելն աշխարհիկ բնավորություն ունի. և ևթե եկեղեցականը մշակում է այն, որովհետև քանձրամիտներին (այդպիսի արհամարհանքով են արտահայտվել եկեղեցականները ժողովրդի մասին — Վ. Պ.) ախորժելի է առակների առաստպելը և դրանով հեշտ է սովորեցնել ու կրթել»[2]:

Միանգամայն հասկանալի է, որ ժողովրդի համար առակներ հանդուրժող հոգևորականությունը շատ առակների բացատրության մեջ մտցրել է առակի բուն էությանը հակառակ տարր, առակը մեկնաբանել է ոչ միայն «աշխարհօրէն», այլև «եկեղեցականապէս»: Այս ոլորտով հանդերձ առակը, մասնավորապես ժողովրդական առակը, եղել է ժողովրդի գրականությունը, հիմնականում արտահայտել է նրա իղձերն ու տրամադրու-

---

1 Մ. Աբեղյան. *Հայոց հին գրականության պատմություն*, հատ. 2, 1946, էջ 169:

2 Նույն տեղում, էջ 156:

թյունները։ Այդ հատկություններին, ինչպես նաև իր անմոռության ու մատչելիության պատճառով առակը եղել է ժողովրդի սիրած ժանրերից։

Այդ է պատճառը, որ ժողովուրդը, չհարդալով «եկեղեցու, աստծու ու սրբերի» մասին գրված գրքերը, դրանց մեջ չգտնելով «արտի բան», սիրով լսել ու ինքն էլ պատմել է իր իսկ ստեղծած առակներն ու առածները. «Առակ, մասալա, սուր սուր խոսքեր՝ որ ուղեղաս հո՝ էն հետին ռամիկ մարդը՝ մեկի տեղակ հազարը կասի»[1],— գրում է Աբովյանը։ Իբրև ժամանակի հայ իրականության ամենազարգացած մարդ Աբովյանը հասկացել է այդ և ժողովրդի համար գրականություն ստեղծելիս դիմել է հենց իր՝ ժողովրդի սիրած ժանրին։ Անշուշտ Աբովյանի այդ համոզման գալուն նպաստել է նաև ռուս առակագրության, մասնավորաբար Կռիլովի առակների՝ ժողովրդի վրա թողած ուժեղ ազդեցության. Հանգամանքը. «... Առակը այն պատճառով Ռուսիայում այդպիսի արտակարգ հաջողություն ունեցավ,— գրում է Բելինսկին,— որ ծնվեց ոչ թե պատահաբար, այլ որպես հետևանք մեր ժողովրդական ոգու, որը սաստիկ սիրում է առակախոսություններն ու դրանց կիրառումները։ Ահա ամենահամոզիչ ապացույցը այն բանի, որ գրականությունն անպայման պետք է ժողովրդային լինի, եթե ուզում է հաստատուն ու հավերժական լինել»[2]։

Բելինսկին այս միտքն արտահայտել է 1834 թվին։ Աբովյանը, իբրև ռուս կուլտուրայի ու գրականության հետ սերտորեն կապված մարդ, չէր կարող ծանոթ չլինել ռուս հասարակական մտքի այդ հսկայի ու իր ժա-

---

1 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 3, էջ 3։

2 **В. Г. Белинский.** Соч. в трех томах, т. *I*, *1848*, стр. *47*. *Ընդգծումը մերն է — Վ. Պ.*։

մանակակցի՝ դրական հասարակայնությանը հուզող ինչպես այլ, այնպես էլ այս կարծիքներին: Սակայն սա իրեն ենթադրություն, որը երբեք նույնիսկ չճըշտվի, այնուամենայնիվ մնում է կարևոր այն փաստը, որ Աբովյանը ճիշտ նույն նկատառումներով է դիմել առակի ժանրին, վերջինիս մեջ տեսել է «ժողովրդական ոգու» արտահայտությունը: Առակի ժանրին դիմելու մյուս պատճառն այն էր, որ նա իր այլաբանությամբ հնարավորություն էր տալիս ավելի անվախ քննադատել տիրող իրականությունը. ժողովուրդը, որ դիտեր առակների մեջ ծաղրել ու քննադատել, հեշտությամբ կհասկանար Աբովյանին:

Առակներ գրելուց ու մշակելուց առաջ Աբովյանը շրջել է ժողովրդի մեջ, մասնակցել նրա առնախմբություններին, որպեսզի որոշի նրա նախասիրությունները, իմանա, թե նա ինչ բանից է ավելի «հաղ անում», ինչ թեմաներ, ինչ լեզվով ու ձևով է արծարծում, որ իր ստեղծագործությունը նրա հաշակին և ըմբռնումներին հարազատ ու մատչելի ձևով ներկայացնի:

«Մեր վարժապետն առանձնապես սիրում էր ներկա լինել ժողովրդական առներին— դիտել, ուսումնասիրել՝ երևույթները. բաներ քաղել դրանցից,— պատմել է Աբովյանի աշակերտ Գ. Աքիմյանը...—Խալխի բերանից լսած բաները ժողովելով, ոտանավոր դարձնելով սազացնում էր աշակերտներիս համար»[1]: Աբովյանը, ֆոլկլորը համարելով ժողովրդի հոգևոր կյանքի ու մտածելակերպի արտահայտություն, բնական է, որ առակներ մշակելիս դիմել է ժողովրդի ստեղծած առակներին, հավաքել ու մշակել է «խալխի բերանից» լսածները:

1 «Սովետական գրականություն», 1940, № 9—10, էջ 23—24:

Ըստ որում առաջին հայացքից թիչ է դիտվում թե Աբովյանը որքան մեծ աշխատանք է կատարել ժողովրդական առակները մշակելիս։ Ամենահիմնականը այս ուղղությամբ այն է, որ Աբովյանը ավելի է շեշտել առակներում արտահայտված սոցիալական բողոքը, սիրող խավերի դեմ եղած ծաղրը, առակները դարձրել է գաղափարապես ավելի նպատակասլաց ու հագեցված։ Նա, օրինակ, ի տարբերություն հայ միջնադարյան առակագիրների, մասնավորապես Մ. Գոշի, իր առակները ղերծ պահեց կրոնական իդեոլոգիայի և սոցիալական անհավասարությունն ու շահագործումը արդարացնող, հնազանդություն հորդորող քարոզի ազդեցությունից։ 2) Ի տարբերություն ժողովրդական առակների (որոնց մեջ բարոյախոսությունը մեծ մասամբ անուղղակի ձևով է արտահայտված, այն ընթերցողն է եզրակացնում) Աբովյանը առակի սկզբում, վերջում կամ էլ միջում մի քանի տողով բացատրում է նրա իմաստը, այլաբանությունը իր ցանկացած իմաստով հասկանալ թելադրում, ընթերցողին խրատ կամ խորհուրդ տալիս, դրանով իսկ ավելի ներգործուն դարձնելով առակի ուժը, ավելի նպատակասլաց՝ նրա մեջ արծարծված խնդիրները։ Երբեմն էլ Աբովյանը բացատրում է առակի հղացման պատճառներն ու հանգամանքները, առակը կապում հակառակորդների դեմ մղած իր առօրյա պայքարի հետ։

Ժողովրդական առակներից Աբովյանի մշակած և ինքնաստեղծ առակների մյուս տարբերությունն այն է, 3) որ նրանք գրված են չափածո. Աբովյանը բանաստեղծ առակագիր է։ Անկասկած է, որ նա այդ հարցում հետևել է Կռիլովին։

Եվ վերջապես վերջին տարբերությունն այն է, որ 4)

Արուվյանը հաճախ, փոփոխություններ մտցնելով առակի ժանրի տրադիցիոն ըմբռնման մեջ, ընդարձակում է նրա հնարավորությունները, վերցնում է դրական մյուս ժանրերի մի շարք գծեր (կամ ուղղակի ժանրեր) և ստեղծում, ըստ էության, նորօրյակ առակ: Այսպես օրինակ, ինչպես ճիշտ կերպով նշվել է արուվյանագիտության մեջ, «Էս դրի ճամբի խրատը» առաջաբանի փոխարեն դրված առակում, իր ցանկացած մի քանի հարցերը արծարծելու համար, Արուվյանը էշով ճանապարհ գնացող հոր և որդու «վաղի առակին» միացրել է «Աշխարքի բերան չվալի բերան» առածը և «խոսողին էլ միշտ հասկացող պոի» ասացվածքը:

Հետաքրքրական է նաև Արուվյանի առակների լեզվի հարցը: Գրաբար բաղմաթիվ գործեր գրած Արուվյանը չի գրել ու թարգմանել գրաբար լեզվով առակներ (բացառություն է կազմում Կռիլովի «Стрекоза и муравей» առակի գրաբար թարգմանության անադրությունը): Ղեկավարվելով նույն սկզբունքով, ինչ ինքը պաշտպանում է («խոսողին էլ միշտ հասկացող պոի») Արուվյանը առակներ գրեց և մշակեց աշխարհաբար, կենդանի խոսակցական լեզվով: Ըստ որում Քանաքեռի բարբառի հետ միասին, տիպականացման նպատակով, նրա առակների որոշ դերծող անձեր խոսում են մի քանի ուրիշ բարբառներով (Մուշի, Լոռու):

Խոսելով Կռիլովի առակների մասին, ռուս հանճարեղ մտածող Բելինսկին քննադատում էր այն տեսակետը, երբ առակի դերը սահմանափակում էին բարոյախրթությամբ ու դիդակտիկայով: Այդպես սահմանափակ դեր է ունեցել ռուս առակագրությունը 18-րդ դարում: Կռիլովի առակները Բելինսկին համարում է նոր որակ, առակի ժանրի զարգացման նոր աստիճան, առակ-սա-

ոիրա։ Նա բարձր է գնահատում Կոլցովի այն առակները, որոնց մեջ քննված են ժամանակի հուզող հարցերը։ Այսինքն՝ նա Կոլցովի առակները գնահատում է նրանց ռեալիստական անողոք մերկացումների համար։ «Ի. Ա. Կոլցով» հոդվածում Բելինսկին գրում է. «Շատերը Կոլցովի մեջ ուզում են տեսնել անպայման առակագրի, մենք նրա մեջ տեսնում ենք ինչ-որ ավելին։ Առակը միայն ձև է. կարևոր է այն ոգին, որը ճիշտ այդպես կարտահայտվեր և ուրիշ ձևի մեջ։ Խոսելով Խեմնիցերի և Դմիտրիևի մասին՝ խոսեցինք առակի և առակագիրների մասին։ Կոլցովի առակներն, իհարկե, նույնպես առակներ են, բայց դրանից բացի, ինչ որ ավելի բան են, քան առակներ»[1]։ Եվ ապա՝ «... Կոլցովի առակները լոկ առակներ չեն, դրանք վիպակ են, կոմեդիա, հումորիստական ակնարկ, խոցող սատիրա, մի խոսքով ինչ կուզեք, միայն թե ոչ սոսկ առակ»[2]։

Մեր կարծիքով Կոլցովի մասին ասված այս խոսքերը ամբողջությամբ վերաբերում են նաև Աբովյանին։ Ճիշտ է, Աբովյանը, ինչպես և Կոլցովը, ունի նաև բարոյախրատական առակներ, սակայն դրանց մեջ չէ Աբովյանի ողջ մեծությունը։ Աբովյանն ամենից առաջ մեծ է իրրև իր ժամանակի ամենահուզող հարցերը շոշափող, սոցիալական հարաբերությունների էական կողմերն արտացոլող առակագիր ու այս իմաստով նա ավելին է, քան առակագրի այդ ժամանակվա տրադիցիոն ըմբռնումը։

Անկախ այն հանգամանքից, առակների սյուժեները

---

[1] **В. Г. Белинский.** Соч. в трех томах, т. 2, *1948*, стр. *711*.

[2] **Там же, стр.** *713*.

ինքն է հնարել, թե վերցրել է ժողովրդից կամ այլ աղբյուրներից (ռուս, եվրոպական, արևելյան ժողովուրդների առակներ, հայ միջնադարյան առակագրություն) Աբովյանը, ինչպես տեսանք, մի նպատակ է ունեցել՝ ստեղծել ժողովրդին հարազատ, նրան հասկանալի, նրա շահերին ծառայող գրականություն: Այդ պատճառով էլ նա բոլոր աղբյուրների վրա նայել է ստեղծագործական տեսակետից. «խալխի խոսացած» բաներն է մշակել թե ուրիշ ժողովուրդների առակագիրներից սյուժեներ փոխառել, նա միշտ դրանք զարձրել է իրենը: Դրանք աբովյանական առակներ են, ճիշտ այնպես, ինչպես Կռիլովի փոխառած ու մշակած սյուժեներով առակների մասին ասում են՝ կռիլովյան առակներ: Հետաքրքրական է, որ Բելինսկին առանձին կարևորություն չի տալիս սյուժեներ փոխ առնելու կամ հնարելու հանգամանքին. «Առակի համար սյուժե հնարելը այժմ դժվար մի բան չէ, ասենք պետք էլ չի հնարել՝ վերցրեք պատրաստի նյութը, միայն կարողացեք պատմել ու տեղին օգտագործել: Պատմելը և դրա նպատակը—ահա առակի էությունը. սատիր ու իրոնիա— ահա նրա գլխավոր հատկանիշները: Կռիլովը, որպես հանճարեղ մարդ, բնազդաբար կռահել է առակի դեղադիտական օրենքները: կարելի է ասել, որ նա ստեղծեց ռուսական առակը»[1]:

Ուրեմն, ըստ Բելինսկու, գլխավորը սյուժեի մշակումն ու մեկնաբանումն է: Բնորոշ է, որ նա չի ասում Կռիլովը «թարգմանել է», իսկ նրա ասում է, ապա անմիջապես ավելացնում է. «и переделал»: «Իվան Կռիլովի առակները» հոդվածում Բելինսկին ավելի որոշակի է

---

[1] **В. Г. Белинский.** Соч. в трех томах, т. 2, стр. 716. *Ընդգծումը բնագրման է:*

հայտնում իր այդ կարծիքը. «Բնև նա (Կռիլովը—Վ. Պ.) իր մի քանի առակների բովանդակությունը վերցրել է Լաֆոնտեններից, սակայն չի կարելի նրան անվանել թարգմանիչ. նրա բացառապես ռուսական խառնվածքը ամեն ինչ վերամշակել է ռուսական ձևերով և դարձրել է ոգով ռուսական»[1]:

Նույնը կարելի է ասել Աբովյանի մասին, նա գրեթե ոչ մի առակ չի թարգմանել այդ բառի այժմյան իմաստով, այլ փոխ առած սյուժեները այնպես է մշակել, որ «մեր խալխի սրտովն ըլի», համապատասխանի նրա հասկացողություններին ու մտածողությանը: Գ. Աբիմյանը պատմում է, որ իր ուսուցիչը թարգմանությունները նույնպես «ապազնում» էր, հայերեն էր դարձնում «հոգով, իմաստով»: Այդ «թարգմանությունները» և՛ լեզվով, և՛ ոճով, և՛ բովանդակությամբ խորապես հայկական առակներ են, այնպես են հայացված, մեր «խալխի», ժողովրդի սրտին մոտիկ ու հարազատ դարձված, որ ընթերցողը միշտ չէ, որ կարող է տարբերել (ասենք նա դրանով չի էլ հետաքրքրվում) փոխադրած առակը ինքնատեղծ սյուժեով գրված առակից:

Աբովյանի այդ կարգի «թարգմանությունների» մասին խոսելիս առաջին հերթին պետք է նշել ուս դրականությունից փոխ առած սյուժեների մասին: Աբովյանը հայ նոր շրջանի գրականության պատմության մեջ առաջին անգամ իր հայացքը դարձրեց ուս առակագրության կողմը: Նա ուս առակագիրներից, մասնավորապես Կռիլովից, սյուժեներ փոխ առնելուց ու որոշ առակներ փոխադրելուց բացի, աշակերտել է Կռիլովին,

---

1 **В. Г. Белинский.** О классиках русской лит., *1948.* стр. *93.*

կրել նրա աղդեցությունը: Աբովյանի արածը միանգամայն դիտակցված քայլ էր, ուստ առակագրությունը, հանձին նրա հանճարեղ ներկայացուցիչ Կռիլովի, ստեղծել էր դաղափարապես հադեցված ազգային ու ժողովրդային բարձրարժեք առակներ, որոնք և դրավում էին Աբովյանին:

Նիկոլաևյան ռեժիմի պայմաններում կռվելով ռեակցիոն ուժերի դեմ, աշխարհաբար լեզվի ու նոր դրականության պահանջն առաջադրելով, լուսավորական ու դեմոկրատական դիրքերից քննադատելով միջնադարյան հետամնացությունն ու հասարակական կյանքում եղած անարդարությունները, բնական է, որ Աբովյանը չէր կարող հակառակորդներ չունենալ, սիրվել բոլորի կողմից: Դրա համար է, որ նա «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի չափածո առաջաբանի նմանվող առակում («Էս դրբի ճամփի խրատը»), իր դրքի հետ խոսելով, նրան խրախուսյս է կարդում չվախենալ դժվարություններից:

Գնա՛ իմ խեղճ դիրք՝ դնա՛ մարդամեջ,
Գլուխդ քաշ քցի՛ր, մի վախենար հեչ:
Անկաջդ փակի՛ր, սիրտդ լեն բռնի՛ր,
Ինչ ասեն, խոսեն, տա՛ր ու համբերի՛ր:

Ճամփորդի դլխին շատ փորձանք կգա:
Անձրև, ձին, կարկուտ՝ հաղիր համիշա,
Դուման ու կայծակ, շոր, բուք ու կրակ
Ամեն տեղ կբլին, ամեն ժամանակ:

Ջոպես բանիցը ով շուտ վախենա,
Ու ճամփի կիսիցն վեր կենա, եդ գա,
Ոչինչ չի շահվիլ, դարդակ կմնա:
Փորձանքից՝ մարդը՝ լավ չի նեղանա:

Ի՞նչ ես դարդ անում, որ վրեդ խոսին,
Յա քեզ ծաղր անեն, յա աչքից քցեն:

Ամենի սրտին դուր գալ չի ըլիլ·
Ամենի խաթրը ո՞վ կարա առնիլ[1]։

Աբովյանը հասարակական-քաղաքական պայքարից դատ նկատի ուներ նաև այն պայքարը, որ մղում էր աշխարհիկ, ժողովրդական դրականության և աշխարհաբար լեզվի համար։ Ժողովածուի առաջաբանում նա ասում է, որ «պիտուն մարդիկ», կրոնա-սխոլաստիկական կուլտուրայի ներկայացուցիչները, պետք է պախարակեն իր գործը՝ ժողովրդի ձգտումներն ու խոհերը արտահայտող և ժողովրդի համար ստեղծվող դրականությունը, ուստի և դիմում է ժողովրդին, խնդրում՝ պաշտպանել իրեն այդ «պիտուն ու խելոք» մարդկանցից։

Ժողովրդի համար գործողը միշտ դիմում է նրան, բացատրում իր սկզբունքները, նպատակները և նրա օգնությունն է խնդրում։ Ահա թե ինչու Աբովյանի գեղարվեստական գործերից շատերը (երբեմն նույնիսկ թարգմանությունները) ունեն առաջաբաններ։ Մեծ լուսավորիչն ինքն էր հարթում իր ճանապարհը, առանց նշանավոր զինակիցների, ուստի ստիպված էր շարադրել իր էսթետիկական ըմբռնումները և ապա բացատրել դրանց համաձայն ստեղծագործած իր երկերը։ Դրանով պետք է բացատրել նաև այն հանդամանքը, որ Աբովյանը հաճախ ընդհատելով իր երկերի այուժենները, շեղումներ է կատարում, բացատրում է իր վերաբերմունքը այս կամ այն երևույթի նկատմամբ, հիմնավորում, ամբողջացնում է առաջաբանում հայտնած իր կարծիքները։ Այդպիսի միջոցի է դիմել նա նաև «Էս գրքի ճամփի խրատ» առակ-ըրույցում։ Նկատի ունենալով ժամանակի պայ-

---

[1] Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 2, էջ 191։

ռոնական գիտության ներկայացուցիչներին, գրաբարի պաշտպան խրթնաբար գրողներին, Աբովյանը ծերունու և նրա երիտասարդ որդու ճամփորդության մասին նշած առակը պատմելուց հետո գրում է.

Քար ու չոլ բնկնիլ ի՞նչ մեկ մեծ բան ա,
Ծոր խոր խոսալուցն ավ ի՞նչ կիմանա,
Խոսողին էլ՝ միշտ հասկացող պտի,
Թև չէ փուչ՝ բամին կառնի, կտանի[1]։

Աբովյանին ոգևորել ու խանդավառել է իր գործի մեծության գիտակցումն ու հաղթանակի հավատը։ Նա համոզված է, որ կգա ժամանակ, երբ արև «դուս կգա» և կգնահատվի իր գործը։

Աբովյանը ձաղկել, քննադատել է շահագործման վրա հիմնված հասարակական հարաբերությունները, վերնախավերի անաշխատ կյանքը։ «Էշն ու ձին» առակում նա պատկերել է հասարակական պորտաբույծ խավի անասնական բարքերը, ուրիշի դառածը հափշտակելու և ցոփ ու արբշիռ կյանքով ապրելու նրա պրակտիկան։ Անաշխատ այդ խավը՝

...Դինին քունդով է լագում.
Փորը հաստացրել, մեկ բան միտը չանում,
Լավ ուտում, խմում, նայում իր քնքին.
Գիշեր ու ցերեկ բարձին, դոշակին
Տասը լդրանի ու հինգ գազանի
Գլուխն ու փորը տալիս, որ շնթռի։
Տեղից վեր կենում, սիրտը քացախած,
Ընկնում դուս ու տուն, որ մեկ բեզարած
Պարկ ռաստ բերի, հետը գրից անի[2]։

1 Ե. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 192։

2 Նույն տեղում, էջ 231—232։

Անբան ու պարազիտային կյանքով ապրող այդ վերնախավին հակադրված է իր վաստակով ապրող աշխատավոր մարդը՝

Որ իր արևն ու օրը
Մաշում, սևացնում, հանում հոգին, որ
Մեկ կտոր հացի բալթի տիրանա,
Էն էլ քիթը հանողն հանում ա[1]։

Ըստ որում, շահագործողները միաժամանակ դիմում են բռնի ուժի։ «Կատուն ու մուկը» առակում ասված է.

Անգութ, անիրավ խանի սրտին
Ուրախություն է տանջելն ընկերին[2]։

Աշխատավորի ու պարազիտի հակադրությունը լավ է պատկերված «Խողն ու եզը» առակում։ Խողը պարազիտային կյանքով ապրող հասարակական անաշխատ խավերի սիմվոլն է, խողի նպատակն է քանդել մարդու «տունն ու տեղը», ծծել նրա արյունը.

Ինչ ես հարցնում, մարդ միշտ իր գլխին
Պետք է հանապազ մուղայիթ կենա,
Աշխարքը գմակ, ձեռդ դանակ է,
Որդիանց հասնի, կե՛ր ու փորդ արա[3]։

Անկասկած է, որ այս խողը նախորդն է հետագա ասանամյակների բուրժուական հարաբերությունների ստեղծած խոզաբարո միկիտան սաքոների։

Առակի մեջ արտահայտված է աշխատավոր մարդու կենսահաստոցությունը, ծանր, բայց ազնիվ աշխատանքով ապրող մարդու սկզբունքը։ Դատապարտելով խոզի

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ 2, էջ 232։
2 Նույն տեղում, էջ 267։
3 Նույն տեղում, էջ 234։

անաշխատ ու պարազիտային կյանքը, եղն օրինակ է բերում բնությունից՝ արևը լույս է տալիս, երկիրը՝ հացազարավոր բարիքներ, անձրևը՝ ջուր, մեղուն՝ մեղր, վարդը՝ բուրմունք, ծառը՝ պտուղ և այս ամենն առանց շահախնդրության. իսկական մարդը ևս պետք է անշահախնդիր կերպով նվիրված լինի հասարակությանը, աշխատող, բարիքներ արտադրող լինի:

Խոզը, իր ծայրահեղ էգոիզմով, չի կարող այդ հասկանալ:

Խոզինը ցեխն է կամ մունատա տեղը,
Լավ միտքն երբ կընկնի նրա խելքն, դուդը:
Դու լափողներիդ էդ խրատը տուր,
Որ տնաքանդության աննն, հասնին ուր:
Ես իմ աշխատանքն ձեռից չեմ թողալ,
Քանի շունչ ունիմ ու խեր կարեմ տալ:

Մարդն առանց շահի ակնկալության պետք է ծառայի հասարակությանը, նա պետք է հանրօգուտ ու անձնվեր աշխատող լինի. ահա կյանքի նպատակը: Անկասկած է, որ այստեղ ևս Աբովյանը հանդես է գալիս իբրև դեմոկրատ ու լուսավորիչ:

Աբովյանը նորատեսիլ բուրժուական հարաբերությունների առաջին մեծ քննադատն ու մերկացնողն է հայ նոր շրջանի գրականության պատմության մեջ: Մեծ մարդասերը, ինչպես նշել ենք, տեսավ բուրժուական պրակտիկայի այլանդակ կողմերը տակավին այն ժամանակ, երբ բուրժուական հարաբերությունները նոր էին ձևավորվում: Աբովյանը տեսնում էր, թե ինչպես բուրժուական հարաբերությունների պայմաններում փո-

---

1 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 2 էջ 236:

ղը նենգափոխում է մարդկային բոլոր լավագույն գծերը, եղծում է մաքուր ու բնական հարաբերությունները մարդկանց միջև, թե ինչպես մարդու բոլոր արժանիքները անտեսվում են, երբ նա փող չունի և ընդհակառակը՝ նրա բոլոր ստոր արարքներն արդարացվում՝ երբ փող ունի: «Փողն ա բան տեսնում էս մեր աշխարքումն». ժողովրդական այս ասացվածքը Աբովյանը դարձրել է «Երկաթակեր մուկն ու աղքատ Հարուստը» առակի բնաբան: Հարուստի որդու «փորի բարեկամ» ընկերներն ամենօրյա խնջույքների մեջ նրա ունեցվածքը վատնելուց հետո լքում են նրան, հեռանում և նույնիսկ դադարում բարևելուց, ծաղր ու ծանակի ենթարկում, երբ նա ասում է, թե իր մաշիկը մուկն է ծակել: Իրերի բերումով նորից մեծ հարստության տիրանալուց հետո, երբ նա նույն մարդկանց շրջանում ասում է, թե մուկը կրծել է երկաթե խոփի կեսը, բոլորը հաստատում են, թե «կըլի, շատ կըլի»: Կեղծ են, դրամի վրա են հենված մարդկանց հարաբերությունները, այս միտքն է արտահայտում Աբովյանը.

Քանի փող ունիս, մուկը երկաթ կուտի,
Չեսըդ պակսելիս՝ մաշկիդ չի՛ դիպչի:

Նույն հարցն է արծարծված «Հացակեր փեշը» պատկում. «անիրավ աշխարհում» գնահատվում են ոչ թե իսկական արժանիքները, այլ հարստությունը, լավ հագուստը: «Սարում և ձորում» մեծացած մի մարդ քաղաքում արժանանում է ընդհանուր հարգանքի, մեծ փառքի «չունքի փալանը նոր էր ու թազա» — հագուստը նոր էր ու շքեղ: Փորձով համոզվելով, որ նրանք իր հա-

1 Ե. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 211:

դուսան են մնծարում և ոչ իրեն, նա փեշը դեմ է անում ափսեին ու ասում.

Փե՛շ՝ հայ կե՛ր, քեֆով, ի՞նչ ես վախենում,
Քեզ են էս պատիվն տալիս էս մարդիք,
Ինձ հո չեն սիրում էս շատ պատվելիք։
Կե՛ր ու գլուխդ ա՛ռ, փախչինք սրանցից։
Քե չէ՝ սրված հացն կտանին մեզանից.
Դու որ կտրատվիս, ոչինչ դարդ չունեմ,
Ես կմնամ ցնումն, էտուց ես փախչիմ[1]։

Ըստ որում բնորոշ է, որ «սարում, չոլում» մնծացած մարդն այդ ճշմարտությանը հասու է լինում քաղաքում, ուր փողի ուժն ավելի զգալի է, նոր հարաբերություններն ավելի ռևեճ են գրանցվել։ Պատահական չէ, որ առակի հերոսը քաղաքից փախչում է դեպի գյուղ։

Մարդին մարդ շինողն որ շորն է էլած,
Գնա՛նք մեր սարը, անիծվի էս հացն[2]։

Ինչպես տեսանք, Արովյանը լայնացրել է առակի ժանրի ընդգրկման սահմանները։ Հետևելով ռուս առակագրության և մասնավորապես Կռիլովի ստեղծած տրադիցիաներին, նա առակը դարձրեց պայքարի հզոր զենք։ Արովյանն առակների սյուժեներով երբեմն շատ վարպետ ձևով կապում է քաղաքական և գրական հակառակորդների դեմ իր մղած պայքարի հետ, ինքնակենսագրական մոմենտներ է մտցնում առակներում։ Վերջին կարգի առակները փաստորեն առակ-պոլեմիկաներ են։ Պարբերական մամուլի բացակայության և իր հայացքները

1 Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 213։

2 Նույն տեղում։

ուղղակի ձևով արտահայտել չկարողանալու պատճառով նա բնության առակի միջոցով պոլեմիկա վարելու ձևը:

Աբովյանը քննադատել է փողն իբրև ստված պաշտող և կրթության, լուսավորության թշնամի ոգեհ հարուստին, ծաղրել նրա կարծիքը ուսման ու ուսումնականների մասին.

Շնորք, մարիֆաթ որ խեր ունենան,
Մինները պետք է փիլիսոփ դառնան:
Մենք որ չենք սովրում, օսա՞լ ենք ապրում,
Ա՛նրանք՝ մեր գրության շահից ազատում[1]:

Անհետաքրքրական չէ այն հանգամանքը, որ ուսուցիոներ դեմոկրատ Մ. Նալբանդյանը ևս նկատել է ժամանակի հարուստների համար սիրական այդ դիծը և ծաղրել «հիմարաց՝ ուսման վրա ունեցած կարծիքը»:

Իր ծաղրած, կրթության ու լուսավորության թշնամի մարդիկ հալածել են Աբովյանին. նկատի ունենալով իր գործերի ու գործունեության մասին այդպիսի մարդկանց թշնամանքը և հալածանքները նա «Աղվեսն ու գելը» առակում գրել է.

Վա՛յ էն մարդին՝ որ էնպես տեղ բնկնի,
Որ գրի, արդի մարիկ ավող չըլի:
Մարդի՝ սաղ սաղ էլ որ ուտեն, ապանեն,
Մեկ սիրտ չի ցավիլ, կաշին էլ հանեն[2]:

Մեծ լուսավորիչն ստիպված էր գործել հենց այդպիսի միջավայրում. դրա համար էլ նա իր առակների ժողովածուի հենց առաջին առակում պատմելով մի

1 Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 232:

2 Նույն տեղում, էջ 226:

ծեր մարդու և իր չահել որդու — ուրիշներին լսելու պատճառով կրած անհաջողություններին մասին, իր դրքին խորհուրդ է տալիս տակալ, չհուսահատվել, «բերանը պատռած հայվարա մարդի» խոսքին ուշադրություն չդարձնել։

Ինքնակենսագրական տատղձ ունեցող դրվածներից նշանավոր է «Էշն ու բլբուլը» առակը, որի բացատրականի մեջ Աբովյանը առակի հղացման մասին գրում է. «Էս ներքևի դրած առանավորը Էնպես» մարդի վրա է դրած, որ ա՛չ դիր դիտի, ա՛չ դրի գործություն ու դրողի վրա էլ՝ բերանը կցրվի։ Իմ աշխարհարար դրածների դլուխը՝ շատ անգամ է էսպես բան տեսել, մարդի միտք չեն հասկանում, հենց իրանց իրանց խոսում են... մարդի սրտին դարդ է գառնում, երբ Էնպես օքմին էլ ա խոսում մարդի վրա, որ իր անունը դրուստ գրիլ չի դիտի»[1]։

Աբովյանը առակի միջոցով իր բողոքն է հայտնում տգետ երկաբանջների դեմ, որոնք գրողի վրա «բերան են ցրվում» առանց նրա միտքը հասկանալու։ Առակում Աբովյանն ակնարկում է, որ «թուր ու թվանք» չունի, ոչ էլ պետք է «արդա» դրել, այսինքն՝ իշխանության միջամտությանը դիմել, ուստի ընտրում է պայքարի այդ ձևը՝ սատիրան։ Մի այլ տեղ, ըստ երևույթին այս նախաբան-բացատրականի առաջին վարիանտում, Աբովյանն ավելի կոնկրետ ու որոշակի է արտահայտվում առակի հղացման մասին. «Իմ աշխարհարար դրած բանների մեկը,— գրում է նա,— ընկել էր մեկ պատվելի մարդի ճանդ, որ ոչ աշխարհարար դիտի, ոչ դրարար։ Նա սկսել էր դրածիս փուշ դնել, իրանից ավել պակաս խոսալ։ Ի՞նչ անես, փինաչու մա-

[1] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 239։

ասելն միտս ընկավ, որ ուզում էր մեկ անվանի պատմերահանի քաշածի ծանուցյունը ցույց տա։ Ես պատկերահանի նման մտաը չէի, որ ասեմ. «փինաչին թող իր մաշկի կարկատանը քննի, մաշկիցը բարձր չի խոսա». ասանը նստած՝ շատ որ միտք արի, հենց զալամը ձեռս առա, էս ոտանավորը դուս եկավ»[1]։

Անունը «դրուատ դրել» չիմացող, բայց ավել պակաս խոսող «պատվելին» փինաչին է, իսկ Աբովյանը՝ անվանի նկարիչը, որի ստեղծագործությունը, աշխարհաբար գրվածքները, ենթարկվում են ոգետ փինաչիների քննադատությանը։ Առակի մեջ Աբովյանը դիմում է էշի և սոխակի այլաբանությանը. էշը չի կարող իմանալ, թե վարդը (այս դեպքում գրողի ստեղծագործությունը) «ինչ գատ ա», նա իր «մունգատ դնչով» «անմեղ վարդի թուփը, կոկոնն բռնեց, մշրեց ու գռաց», ասում է Աբովյանը։ Էշը վարդի թշնամին է, նրան անհասկանալի են սոխակի (հեղինակի) ծանր ապրումներն իր ստեղծագործության այդպիսի «իշային» գնահատականի պատճառով։ Սոխակն այն միտքն է հայտնում, թե քանի փուշ ու էշ կան աշխարհում, վարդը անտեր կմնա, ուստի նա վարդին հորդորում է թև առնել և իր հետ թռչել-հեռանալ։ Գրողը, սակայն, համաձայն չէ սոխակի վճռին։

Իմ սիրուն բլբյուլ՝ մի՛ էդքան ցավիր.
Կա՛ց մեր միջումը՝ քո վարդը գովի՛ր,
Էշը թրթռան ա իր ծնունդն առել,
Էլի թրթի ետոն նա կուզի առնել,

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 357։

Քեզ վարդ, մանիշակ, քեզ ծառ ու ծաղիկ
Աստված փայ տվել, բլբո՛ւլ դեղեցիկ։

Նույն հարցերը տարբեր ձևերով ու կապակցությունների մեջ արծարծվում են նաև մի շարք այլ առակներում («Զղարի շունը ու ֆիլը», «Սոխակ ու սխտորը», «Անցվորականքն ու շունը»)։ Այն հանգամանքը, որ Աբովյանն ինքնակենսագրական մոմենտներ է մտցնում առակի մեջ (ավելի մեծ չափով, քան հայ որևէ այլ առակագիր) չի իջեցնում այդ առակների արժեքը, որովհետև նա այդ «անձնական» մոմենտները բարձրացնում է տիպականի աստիճանի, անհատականի մեջ արտացոլում է իր ժամանակաշրջանի համար բնորոշ երևույթները։

Քննադատելով ու մերկացնելով ժողովրդի թշնամիներին, աշխատավորության վատակը լափլիզող ձրիակերներին, Աբովյանը դատապարտել է հասարակական պասիվությունը, բռնակալ ուժի առաջ սարկաբար խոնարհվելը և ժողովրդին ակտիվության կոչ է արել։ Մարդկային արժանապատվության պաշտպանը լավ գիտեր, որ հնազանդությունը տանում է դեպի սարկություն։

Մարդի առաջին քանի որ կուչ գաս
Դրվախդ կնստի, քե լավ խամանա[2]*.*

ասում է Աբովյանը «Նըն ու շունը» առակում։ «Ժանդ փուշը» առակում, մերկացնելով ուրիշների «առնը քան-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 243։ Ընդգծումը բնագրումն է։

2 Նույն տեղում, էջ 223։

դելով» իրենց սիրտը հովացնող մարդկանց, Աբովյանը դրանց համեմատում է ժանդ փշերի հետ և առակին հաղորդելով օրվա ցավերին արձագանքելու ֆունկցիա, ընդհանրացնում է այդ երևույթը, դա համարում է տիպական։ Չլքը այդ ժանդ փշերը «կրակի տալու» մեջ է։ Չարը պետք է պատժվի, այս միտքն է հայտնված նաև «Առյուծն ու մոծակը» առակում. իր ուժին վստահ, խեղճի վրա ծիծաղող առյուծը խստորեն պատժվում է։ Ներքին թշնամիներից և շահագործումից ազատ մնալու համար անհրաժեշտ է, որ ժողովուրդն այդ թշնամիների ու շահագործողների ձևերը զենք չտա, նրանց նենգամամբ զգաստ լինի. այդպես են դատում կացնից ազատվելու մասին մտածող աշխատավոր մարդիկ.

Մենք որ կոթ չտանք, կացինը կարա՞
Մեզ վնաս տա, կամ հնչ մեզ մոտենա։
Բո՛ղ իմացողը ինքը իմանա,
Ու նհախ տեղը կացնի կոթ չտա։
Ին չէ սկիզբը իրան կկարի
Հետո փոշմանելն բանի պետքը չի՛։

Աբովյանը գրել է նաև մի շարք խրատական, բարոյակրթական բնույթի առակներ, որոնց մեջ ծաղրել և քննադատել է պարծենկոտությունն ու դոռոզությունը («Բարդին (չինարին) ու վազը», «Աղի գնացող աշարը», «Արաբերը»), խորամանկությունը («Ջրղնխը»), վատ դաստիարակությունը («Ջու դողացողը»), հիմարությունը («Ճղնավորն ու արջը»), խաղամոլությունը («Ջարմանալի մարդիկը») և մի շարք այլ արատներ ու պակասություններ։ Անկասկած այս կարգի առակները չու-

---

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 214։

նեն նախորդների արժեքը, նրանց մերկացնող ուժը, սակայն կարևոր են այն տեսակետից, որ դրանց մեջ դրվատվում ու պաշտպանվում են մարդկային բնավորության լավագույն գծերը։

Աբովյանի առակներն ունեն պատմական բացառիկ մեծ նշանակություն։ Դրանք նոր ստեղծանի բարձրացրին հայ առակագրությունը։ Այդ հանդամանքն ավելի ակնառու կլինի, եթե նկատի ունենանք այն ժամանակը, երբ դրանք գրվել են։ Այդ առակներով Աբովյանը դրել է հայ նոր գրականության հիմնապատերից մեկը։ 19-րդ դարի հայ գրականության մեջ մինչև Աբովյանը, ինչպես և նրանից մի քանի տասնամյակ հետո, առակը չի ունեցել այն նշանակությունն ու դերը, հասարակական այն ներգործուն ուժը, ինչ որ ուներ Աբովյանի ժամանակ։ Ժողովրդի մտքերն ու տրամադրությունները նրան հարատած ոգով, մաուչելի ձևով և լեզվով արտահայտելով՝ Աբովյանը գրականությունը ժողովրդին ծառայեցնելու փայլուն օրինակ տվեց իր հետնորդ գրողներին։ Նա իր առակներում արծարծեց ժամանակի հրատապ խնդիրները, արտացոլեց հասարակական կյանքի բազմազան երևույթները, առակը դարձրեց պայքարի զենք, իր լուսավորական-դեմոկրատական գաղափարների պրոպագանդայի միջոց։

* * *

Մեծ է Աբովյանի դերը, նրա ծառայությունները հայ գրականության ու հասարակական մտքի պատմության։ Հայ նոր գրականության ու մանկավարժության հիմքը դնելով, կռվելով ռեակցիայի ու բռնության դեմ, պաշտպանելով հայրենասիրության, հումանիզմի, ժո-

ղովուրդների համերաշխության բարձր ու վեհ դաղափարները, Աբովյանը հող պատրաստեց հետագա սերունդների գրողների համար և ինչ չկարողացավ ասել նա, ասացին նրա հետնորդները, հետագա սերնդի լավագույն ներկայացուցիչները:

«Անցյալի մեծ արվեստագետները պատկանում են աշխատավոր ժողովրդին,— գրում է մեր պարտիայի կենտրոնական օրգան «Պրավդա»-ն,— նրանց ջանքերը դուր չեն անցել, նրանք առաջադրել են լավագույն մրտքեր, որոնք օգնել են ժողովրդին առաջ ընթանալու և դրանով իսկ գոնելու ազատագրման ուղի»:

Բազմաթիվ են Աբովյանի առաջադրած «լավագույն մտքերը». դրանցից մանավանդ նշանավոր է ռուս և հայ ժողովուրդների բարեկամության գաղափարը. «Ռուսաց քաջ հոգին էր, որ մեզ ազատեց», գրում է Աբովյանը և սրտի խորքից կոչ անում հավիտյան անխզելի դարձնել ռուս մեծ ժողովրդի և նրա օգնությամբ ֆիզիկական բնաջնջումից ազատված երախտապետ հայ ժողովրդի բարեկամությունը. «Այս կապ անխզուն, այս սէր սրբրատան մնասցէ ի մէջ մեր ի կեանս յաւիտեան»:

Անցել է ավելի քան հարյուր տասը տարի այս բառերը գրելու ժամանակից. այդ կապը դարձել է ավելի «անխզուն», այդ սերը՝ ավելի «սրբազան», քան կարող էր պատկերացնել մեծ լուսավորիչն ու դեմոկրատը: Ռուսաստանին միացած հայ ժողովուրդը, հաղորդակից դառնալով ռուսական կուլտուրային ու գրականությանը, նրա ռևոլյուցիոն մտքին ու շարժումներին, Լենինի— Ստալինի մեծագործ պարտիայի ղեկավարությամբ և ռուս ժողովրդի օգնությամբ, ընդմիշտ տապալեց ճնշման ու բռնության լուծը և սովետական ժողովուրդների ընտանիքում վերածնվեց ու դարձավ սոցիալիստական ազգ:

Այժմ իր երջանիկ հայրենիքում ազատ ու ստեղծագործ կյանքով ապրող ժողովուրդն անհուն սիրով է հիշում ժողովրդին անձնուրացորեն նվիրված մարտիկ, ռուս և հայ ժողովուրդների բարեկամության առաջին մեծ դրոշակակիր Խ. Աբովյանի նվիրական անունը:

1951 թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ I

Աբովյանի կյանքը և գրական-մանկավարժական գործունեությունը 9

Գլուխ II

Աբովյանը հայ նոր գրականության հիմնադիր . . . 64

Գլուխ III

Աբովյանը և Ռուսաստանը 89

Գլուխ IV

Աբովյանը հայրենասեր և ժողովուրդների բարեկամության պրոպագանդիր 123

Գլուխ V

Սոցիալական հարաբերությունների պատկերումը Աբովյանի դեղարվեստական արձակում 155

Գլուխ VI

«Վերք Հայաստանի» վեպի կերպարները 180

Գլուխ VII

Աբովյանի արձակի դեղարվեստական առանձնահատկությունները 199

Գլուխ VIII

Աբովյանի բանաստեղծությունները 220

Գլուխ IX

Աբովյանը առակագիր 239

Խմբագիր՝ Է. ԹՈՓՉՅԱՆ
Տեխն. խմբագիր՝ Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Է. ԱՐԱՔԱՋՅԱՆ

Վ/Տ. 07624։ Պատվեր 313։ Տիրաժ 2000։

Հանձնված է արտադրության 10/IV 1952 թ.։
Ստորագրված է տպագրության 5/XI 1952 թ.։
Թուղթ՝ 60×92 1/16, տպագրական 16,5 մամ., + 5 ներդիր
Հրատարակչական 9,6 մամ.։

Հայպոլիգրաֆհրատի I տպարան, Ալավերդյան փ. № 65,
Երևան, 1952 թ.։

ՎՐԻՊԱԿՆԵՐ

էջ	տող	տպված է	պետք է լինի
17	ներք. 4.	յոմ	քաոնյոմ
26	ներք. 14.	նախատրարմ	նախատրարմ՝
161	վերք. 17.	արարք	արարաք
200	վերք. 9.	երազը	երանդը
260	ներք. 4.	պրականուբ յան	պրականուբ յանը

[594]

195 լ՝. ե հոդի կոչ ։

Pl

24. ցոյցասրեի հեր Հերհարսոմ
113. Omer Jan և ուս Ծուկ Հիսո տեր.

7, 27, 32, 32-49, 101-2, 113, 115, 117, 1
ռուս. մոդ. ռուս
204, 207, 210,
Լեզ-կ-ա՝

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220031527

II
31527